

ՄԱԿՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա. Պ Ի Ր

№ 11 1889

ՆՈՅԵՄԲԵՐ

1889 № 11

Ա Ռ Ա Զ Ի Ւ Տ Ա Ր Ի

| | կրկես |
|--|--|
| 1 Ա. Բ Ա Յ Ո Ւ Խ Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք | 1673 Պանդիստմիւմ լինդիբը: |
| 2 Հ Ա Յ Ե Ւ - ի ց՝ Մ Ա Ն Ո Ւ Խ Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք | 1683 Կորած բաղդ (բանաստեղծութիւն): |
| 3 " " " " " | 1684 Փալուն աչերափդ... (բանաստեղծ.): |
| 4 Մ Ա Ն Յ Ո Վ Ո Ն Ե Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք | 1685 Անիմները կրևանեամ նահանգում: |
| 5 Հ Ա Յ Տ Ա Մ Ո Ն - ի ց՝ Ա Ր Ժ Ի Ե Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք | 1703 Արաստան ձազիկ (բանաստեղծութ.): |
| 6 Հ Ա Յ Ե Ւ - ի ց՝ Ա Ր Ժ Ի Ե Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք | 1704 Նորա իմ կիսանքը... (բանաստեղծ.): |
| 7 Բ Ա Շ Ե Ւ Զ Ա Վ Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք | 1705 Ակարչի նատակները: |
| 8 Ա Ս Ա Ր Դ Ա Խ Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք | 1710 Աց թխարաց Հաղասանին (շար.): |
| 9 Բ Ա Լ Ո Վ Ա Խ Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք Զ | 1737 Ծնկերիս երզը (բանաստեղծութիւն): |
| 10 Ա Բ Ե Վ Ա Խ Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք Մ | 1738 Ազգակին վեպ (շարտանակտիւն): |
| 11 Գ. Բ. | 1762 Վաղուց անցել են... (բանաստեղծ.): |
| 12 Բ Ա Ր Թ Ո Ւ Գ Ա Ր Ե Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք Յ Ո Ւ Հ Ա Խ Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք | 1764 Գոզրացական զրոսանք: |
| 13 Պ Ա Լ Ե Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք Ե Ր Ա Խ Ա Տ Ի Ք | 1780 Յուզեիր, զու խմ սի՞րա... (բանաստ.): |
| 14 Պ Ա Լ Ե Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք Յ Ո Ւ Հ Ա Խ Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք | 1781 Տհնչ հայրենիքի (բանաստեղծութ.): |
| 15 " " " " " | 1782 Ծնկերոջ (բանաստեղծութիւն): |
| 16 Գ Ա Ո Ւ Յ Ե Ֆ Յ Յ | 1783 Բարի պատուզ (պատկեր): |
| 17 Ա Պ Ո Մ Ո Ւ Խ Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք Հ Ա Մ Ո Յ Ա Կ Ի | 1814 Ա պ ի ւ հաճանգիսից: |
| 18 Ա. Ա. Ա. Վ Ե | 1821 Գրախօսութիւններ: |
| 19 | 1829 Ողիմակցութիւններ Արաւանձմանից: |
| 20 Զ. | 1846 Քաղաքական ահսութիւն: |
| 21 Խ Ո Ր Բ. | 1859 Խմբագրութեան կազմից: |


Յ Ա Յ Տ Ա Խ Ա Տ Ի Ք Ա Խ Ա Տ Ի Ք

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ա. Գ. Ա Զ Ե Խ Ե Ա Ն Յ Յ Ա Խ Ա Տ Ի Ք

Տպոգրաֆիա Ա. Դ. Ռումինաց, և Գօլ. քրօն. օճ. թ. N 41.

1889



ՄՈՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԱՄՍՈՎ ԳԻՐ

№ 11 1889

ՆՈՅԵՄԲԵՐ

1889 № 11

ԱԹԱՋԻՆ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1889

Дозволено цензурою Тифлісъ. 6-го Ноября, 1889 года.

Типографія М. Д. Ротинянца на Гол. просп. домъ № 41.

„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

1890 թ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՑԻԱԾ է:

Այս համարով բոլոր բաժանորդներին ուղարկում են ծրարներ, պատրաստի բաժանորդաթերթերով միասին: Ամեն բաժանորդին ուղարկում ենք այդ ծրաբներից 3—3 հատ՝ յայտարարական թերթերով հանդերձ:


«ՄՈՒՐՃ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՒՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՐՈՒԲՐԻ:

Ուսուցիչների և ուսանողների համար տարեկան գինն է՝ 9 րուբի առաջինների համար, 8 րուբի երկրորդների համար: Ընդունեում՝ է բաժանորդագրութիւն նաև մաս մաս, երեքական րուբիով, առաջին կիսամեակում բոլորը վճարելու պայմանով:

Խմբագրատունը գտանուում է Գանովեան փողոցում, նախկին տուն Ա. Յովհաննիսեանի:

Հասցեն՝ Տիֆլիս. Редакция журнала „МУРЧЪ“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase). Rédaction du journal «MOURTCH».



ՊԱՆԴԻՏՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Պանդուխսոր նա է, ով իւր ծնւած տեղում չէ բնակւում, ենթապրելով, որ նա իւր ծնւած աեղի համայնքի անդամն է: Ով իւր համայնքից հեռու է կենում—նա սպանդուխս է:

Կարելի՞ բան է արդեօք, որ մի երկրում, ուր գոյութիւն ունին երկրագործութիւն, խաշնարածութիւն, առևտուր, արհեստներ, ուսում և առհասարակ այն բոլորը, ինչ իւր հետ կարող է բերել քիչ թէ շատ բարձր կուլտուրական կեանքը, որ մի այդպիսի երկրում հարկաւորութիւն չը զգացվի շատերի կողմից իրանց համայնքից հեռանալ:

Փորձը, բոլոր կուլտուրական ազգերի փորձը ցոյց է տալիս, որ այդ անհնարին է: Պանդխսութիւնը, իբր երևոյթ, մի անհրաժեշտութիւն է:

Պանդխսութիւն—այդ նշանակում է հողից հեռանալու իրաւունք: Այդ իրաւունքը չեն վայելել շատ նոյն իսկ կուլտուրական ազգերի որոշ գասակարգերը, գլխաւորապէս դիւղացիները, որոնք գարերով եղած են ճորտութեան դրութեան մէջ: Ճորտերը կալած էին հողի հետ, նրանք չը պիտի թողնէին իրանց ծնած տեղը: Պանդխսութիւնը լինելու իրաւունքը նրանք չեն վայելում: Պանդխսութիւնը սօցիալական ազատութեան հետևանք է:

Այն երկիրներում, ուր ճորտութիւն չը կար և այն գասակարգերի համար, որոնք քաղաքացու իրաւունքներ էին վայելում, պանդխսութիւնը դժւարացրած էր անցաթղթերի և առհասարակութիւնական այնպիսի պահանջների հետ, որ միայն քչերը կարող էին վայելել համայնքից հեռանալու իրաւունքը: Եւ ահա՛ թէ ինչու պանդխսութեան իրաւունքի լիակատար վայելումը՝ քաղաքացիական ազատութեան հետ կապւած է:

Պանդխտութիւնը իրաւունք է, քաղաքացիական իրաւունք, նա անհրաժեշտ է:

Ծնւած տեղից հեռու բնակւում են նաև ոչ-պանդուխտները, այն է՝ գաղթականները և սորուկները: Գաղթականները նրանք են, որոնք միանգամայն կորում են իրանց սկզբնական համայնքից: Իսկ սորուկները օտարութեան մէջ լինում են միսիան որպէս վաճառականութեան առարկայ, որպէս կինդանի ապրանք:

Պանդուխտը դուրս է եկել իւր ծննդավայրից՝ վերադառնալու մոքով, գաղթականը—այլ ևս չը վերադառնալու մաքով. իսկ սորուկ գերին իրաւունք չ'ունի իւր բնակւելու տեղի մասին որ և է կարգադրութիւն անելու:

Դրանք են ահա՛ այն առենասկզբնական, կարելի է ասել, զիտելիքները, առանց որոնց չի կարելի որ և է գատողութիւն տալ պանդխտութեան իննիրի մասին:

Հայկական կեանքը ստեղծել է ծննդավայրից հեռանալու երկու տեսակները միայն՝ գաղթականութիւնը և պանդխտութիւնը: Գաղթականութիւնը մեզանում ունեցել է երկու ծագում՝ բռնի գաղթականութիւն և ազատ գաղթականութիւն: Իսկ այդ ազատ գաղթականութիւնը կրկին երկու պատճառներ է ունեցած՝ կամ ժողովրդի խոսութիւնը, որ նոյնն է թէ հողի պակասութիւնը և կամ անտէրութիւնը, քաղաքական խառնակութիւնը, քաղաքական հալածանքը:

Գաղթականութեան իննիրը այլ իննիր է. նա աւելի կապ ունի հայ ազգի քաղաքական վիճակի հետ, որովհետեւ հայերի մէջ գաղթականութիւնը այդ բնաւորութիւնն է կրում զիսաւորապէս: Հայերի գաղթականութիւնը քիչ թէ շատ նմանութիւն ունի եւրոպական գաղթականութիւնների հետ 16, 17 և 18 դարերում, երբ քաղաքական հալածանքները, զիսաւորապէս կրօնական պատճառներով, հազարաւորներին զրգեցին դէպի գաղթականութիւն: Ներկայ դարում հրէաներն են կրել նոյնակիսի վիճակ:

Պանդխտութիւն, գաղթականութիւն—դոքա խօսքեր են, որոնց իմաստը ցայժմ բացառրւած չէր մեր զրականութեան մէջ: Այդ իսկ պատճառով մեզանում խօսել են պանդխտութեան իննիրից, երբ հարկաւոր էր գաղթականութեան մասին խօսել և խօսել են

գաղթականութեան մասին, երբ հարկաւոր էր պանդխառութիւնից իսուել: Եւ մեզանում ոչ միայն խօսքերն են շփոթել իրար հետ, այլ և երեսոյթները: Պանդուխտ և գաղթական իրար հետ շփոթելով, այդ երկու երեսոյթները միմիակ երեսոյթ համարելով, շատ բնական է, որ դոցա առիթով տրւած բացատրութիւնները, խորհրդածութիւնները զուրկ են եղած որոշութիւնից, պարզութիւնից:

Գաղթականը կարող է գաղթել մի տեղից միւս տեղ՝ իւր հայրենիքի սահմանների մէջ. նա կարող է գաղթել մի տեղից միւս տեղ՝ իւր հայրենիքի սահմաններից դուրս: Հայ ազգը ճանաչել է թէ մէկը և թէ միւսը:

Պանդուխտը նա է, ով ժամանակաւորապէս միայն թողել է իւր ծննդավայրը. նա էլ, ինչպէս և գաղթականը, կարող է լինել պանդուխտ իւր հայրենիքի սահմանների մէջ և պանդուխտ՝ իւր հայրենիքի սահմաններից դուրս: Դուրսը կամ մէջը լինելը ոչինչ չեն փոխում այն բանից, ինչ մենք ասացինք պանդուխտի և գաղթականի ինչ լինելու և նրանց մէջ եղած զանազանութեան մասին:

Գաղթականութիւնը, որպէս վերը ասացինք, հայերի մէջ զբլիւառապէս քաղաքական գաժան հանգամանքների ծնունդ է: Բոլորովին դորա հակաւակն է պանդխառութիւնը, որը ոչ թէ բուն քաղաքական, այլ սօցիալական և տնտեսական հանգամանքների ծնունդ է:

Ներկայումս Եւրոպացում թէ պանդխառութիւնը և թէ գաղթականութիւնը հաւասարապէս սօցիալական-տնտեսական հանգամանքների արդիւնք են: Միմիայն Գերմանիան ամեն տարի տալիս է գաղթականների մի թիւ, որը երբեմն մինչ երեք հարիւր հազարի է հասնում. դոքա մեծ մասամբ դնում են Ամերիկա՝ ընդ միշտ այնական մնալու մտքով: Դոքա թողնում են իրանց գերմանական հպատակութիւնը այն երկրի քաղաքացի գառնալու համար, ուր նոքավերջնականապէս հաստատում են: Գաղթականների նոյնպիսի մեծ թիւ տալիս է ամեն տարի Անգլիան և Իրլանդիան միասին. աւելի յուղադ թւով, բայց նմանապէս զգալի չափով գաղթում են ամեն տարի նուալիայից և այլ երկիրներից:

Բայց նոյն այն Անգլիան.—Իրլանդիան, նոյն Գերմանիան, նոյն Իտալիան, նոյն Բելգիան, նոյն Աւստրօ-Ռւնդարիան և ուրիշներ մեծ թւով

պանդուխտներ ունին ոչ միայն հէնց իրանց սահմանների մէջ, այլ սահմաններից դուրս, օտար երկիրներում: Ներկայումն այն երկիրը, որը իրաւամբ կարող է պանդուխտների կասփիկական երկիր անուանվել, Ֆրանսիան է, այն Ֆրանսիան, ուր միլիոնի չափ կամ աւելի գերմանացիք, բելգիացիք, իտալացիք և այլ ազգերից զիստորապէս բանւորներ են կենում միմիայն աշխատանքի համար, օրսկան պարէնը հայթհայթելու համար: Նոքա կտրւած չեն իրանց մայրերից, նոքա պահպանել են իսկական հայրենիքի հպատակութիւնը, չը նայած որ նոցանից շատ շատերը երկար տարիներով այդ օտարութեան մէջ են: Բայց նոքա դեռ գաղթականներ չեն, նոքա պանդուխտներ են, որովհետեւ ժամանակաւորապէս միայն կտրւել են իրանց ծննդավարից, դոնէ այդպէս է նոցա զիտաւորութիւնը:

Բայց անհամեմատ աւելի պանդուխտներ կան միենոյն երկրի սահմանների մէջ նոյն խակ իրանց երկրացիներից: Մանաւանդ մէծ քաղաքներում, ինչպէս Մօնտեա, Պետերբուրգ, Բերլին, Վիեննա, Պարիզ, Լօնգոն և շատ ուրիշ քաղաքներ վըստում են մարդիկ, զիստորապէս բանւոր գասակարդից, որոնք եկած են հարեան գաւառներից կամ նահանգներից, բայց միայն ժամանակաւորապէս, թէպէտ և շատերին չի վիճակւում իրանց ծննդավարը վերադառնալու բաղդը:

Ահա' այդ պանդուխտներն են, որոնց մենք կարող ենք տալ ներսի կամ ներքին պանդուխտների անունը, հակառակ այն պանդուխտներին, որոնք օտար երկիրներումն են և որոնց կարելի է տալ դրսի կամ արտաքին պանդուխտների անունը: Եւ, ի հարկէ, ներսի պանդուխտների թիւը ամեն երկրում անհամեմատ աւելի է, քանի դրսի պանդուխտների թիւը:

Եւ այդ կողմից, ուրեմն, պանդիստութիւնը նմանում է գաղթականութեան, քանի որ գաղթականութիւնը կարող է պատահել միենոյն երկրի սահմանների մէջ և կարող է պատահել սահմանից դուրս: Կայ ներքնազաղթ և արտաքին գաղթականութիւն - իմ-միզրացիա և էմիզրացիա: Միայն թէ այս վերջին խօսքերը այդ մոքով չեն գործածւում: Ռուսիացի համար, օրինակ, իմիզրացիան (ներքնազաղթը) այն է, երբ ուրիշ երկիրներից Ռուսիա են գաղ-

թում, իսկ էմիգրացիան կոչւում է այն, երբ ուղղակի այդ երկրից գաղթում են ուրիշ երկիրներ և կամ ուրիշ նահանգներ:

Պանզիստութեան խնդիրը, որպէս տեսնում է ընթերցողը, որքան էլ լինի, տարբեր է գաղթականութեան խնդիրց. զոքա ունին նմանողութեան կէտեր, բայց միւնոցն բաները չեն: Բացի նորանից, որ գաղափարապէս նոքա տարբեր են, նոցապատճառներն էլ կարող են տարբեր լինել, ինչպէս և տեսանք վերև:

Հայոց ազգը ներկայումն այդ երկու խնդիրներն էլ մեր առջեւ է դնում. որովհետեւ ներկայումն էլ, որպէս և անցեալում, նա շատ թէ փոքր շափսերով շարունակում է գաղթել, և, որպէս անցեալում, ներկայումն ևս նա տալիս է պանդուխտների մեծ կոնախնդենտ:

Խնչպէս պէտք է վերաբերւել դէպի այդ երեսոյթները, ուրախալի՞ երեւոյթներ են նոքա թէ ավսրալի, պէտք է արգեօք նրանց զէմն առնելու միջոցների վերայ մտածել, թէ ընդհակառակը՝ պէտք է ջանալ Խրախուսել, շարի՞ք են ներկայացնում նոքա, թէ բարիք և, վերջապէս, ի՞նչպէս պէտք է նայել խնդրի վերայ:

Ահա՝ այն հարցերը, որ ինքն ըստ ինքեան յարուցանուում են, ահա՝ այն հարցերը, որոնց պատասխանը ընթերցող հասարակութիւնը սպասում է գրականութիւնից, բայց մանաւանդ՝ մամուլից:

Այդ հարցերի պատասխանները մենք կը տանք, բայց միայն այն ժամանակի, երբ խնդիրը ամեն կողմից լուսաբանած կը լինի «Մուրճ»-ը: Դեռ այս բոլիճն այն, ինչ հարկը պահանջում է ամենաանհրաժեշտ կերպով,—զա՝ խնդրի ուսումնասիրութիւնն է: Գոհանալ մի երկու դիսողութիւններով և կամ կրկնել մի քանի ֆրազ-ներ ու խնդիրը յարուցւած և ուսումնասիրւած համարել—«Մուրճ»-ը չի կարող այդ նորա բռնած լնթացքին հակառակ է:

Գաղթականութիւնը պանդխառութիւնից ջոկ բան լինելով, նաև այդ խնդիրները մենք ջոկ ջոկ կ'ուսումնասիրենք: Այն, ինչին նուիրում ենք ներկայ յօդւածը՝ պանդխառութեան խնդիրն է, որի ուսումնասիրութեան համար զեռ ևս հարկաւոր է հող պատրաստել: Եւ առ այժմ մեր հոգու այդ է:

Պանդուխտը, որպէս ասւեց յօդւածիս սկզբում, նա է, ով իւր ծննդալայրից հեռու է բնակում, բայց որը իրաւապէս կտրւած չէ իւր համացնքից:

Արդ, ո՞վքեր են այդպիսի պանդուխտներ մեզանում, հայերիս մէջ:

Պանդխտութեան դիմում են մեզանում զանազան դասակարգի մարդիկ.

1. Ուսանողներ:

2. Վաճառականներ:

3. Արհեստաւորներ:

4. Գիւղացիներ:

Ամբողջ բարձր հայ ուսանողութիւնը պանդխտութեան մէջ է: Վաճառականների մի մասը գործում է և կարող է գործել միայն պանդխտութեան մէջ:

Արհեստաւոր դասակարգի մի փոքր մասը պանդխտութեան մէջ է:

Գիւղացիների մի մասը պանդխտութեան մէջ դեգերում է քաղաքներում, որպէս բեռնակիր ու բանւոր:

Այդ բոլորից ամենամեծ թիւը պանդուխտների տալիս է գիւղական դասակարգը: Բայց, բացի այդ թիւից, գիւղացի պանդուխտները ներկայացնում են մի առանձնայտուկութիւն, որը յատուկ չէ միւս պանդուխտներին: Եւ այդ առանձնայտուկութիւնն է, որը գիւղացի պանդուխտներին զնում է մի առանձին զրութեան մէջ:

Ուսանողը միանդամայն անհրաժեշտութիւնից ստիպւած պանդուխտ է: Մեր երկրում չը կան համալսարաններ և այլ բարձրագոյն դպրոցներ, որ կարելի լինի ձեռք բերել այն, ինչին ձգտում են ուսանողները: Եւ, բացի դորանից, ուսանողը պանդխտութեան մէջ միմիայն շարունակում է այն, ինչ սկսել է թէ իւր հայրենիքում և թէ իւր հայրենիքից զուրս: Այստեղ նաև աշխատակը միանդամայն որոշ է, որոշ է նաև ձգտումը, որոշ է նուև միջոցը: Ուսանողական պանդխտութեան մէջ կայ կատարեալ գիւղակցութիւն:

Վաճառական դասակարգը պանդխտութեան մէջ միմիայն ընդարձակում է իւր ունեցած գործը. վաճառականների պանդխտութեան մէջ կայ գիւղակցութիւն, կայ մի ձգտում, լաւ թէ վատ, այդ առ այժմ մի կողմը պիտի թողնենք: Վաճառականը պանդընտութեան մէջ այլ բան չէ որոնում, քան ինչ որոնում էր իւր

հայրենիքում, և իւր նողատակին համելու համար նա չի դիմում մի այլ արհեստի, քան առեւտուրին: Միևնոցն վաճառականը Սուկւայում, Թիֆլիսում, Մարսկում, Պօլսում այլ մարդ չէ, քան ինչ նա է Գանձակում, Նուխում, Երևանում, Ագուլիսում:

Արհեստաւորը պանդխոտութեան մէջ արհեստաւոր է մնում և կամ նոյն իսկ պանդխոտութեան մէջ արհեստ սովորում՝ իւր ապրուսոք մինչ իւր կեանքի վերջը այդ արհեստով հայթհայթելու համար: Դորա մէջ կայ մի ձգառում, նա կեանքի կոյր խազալիք չէ: Նա ուզում է արհեստ սովորել և սովորում է, և որտեղ էլ հաստատուելու լինի, իւր ծննդավագրում, թէ ուրիշ տեղ—նա ուզում է լինել և մնում է նոյն արհեստաւորը:

Այդպէս չէ զիւղացի-երկրագործ պանդուխոտը. զիւղական շրջանից դուրս—նա այլ ևս երկրագործ չէ, այլ բեռնակիր է Թիֆլիսում, Պօլսում, Բաթումում, Բաքուում: Նա բանոր է գործարաններում և կամ երկաթուղու զծի վերայ. նա դանապան է, նա ծառաց է մի տան մէջ, նա բաղնիների ծառացող է: Բայց երբ նա, այդ զիւղացի-երկրագործը, դուրս եկաւ իւր զիւղից, նա դեռ ևս հաստատ չը զիւղէր թէ նրան ի՞նչ է սպասում դուրսը. նա հաստատ զբութիւն չունի զրսում: Նա գնաց փող աշխատելու, բայց թէ ի՞նչ վիճակ է սպասում նրան՝ զրանից նա զրեթէ բոլորովին անտեղեակ է:

Եւ յետոյ, թողնելով զիւղը, պանդուխոտ զիւղացին իւր ձեռքից առ միշտ բաց :ի թողնում իւր հողագործութիւնը. դոնէ նա այն մտադրութիւնով :ի թողնում զիւղը, որ քաղաքում առ միշտ մնայ բանոր, ծառաց, բեռնակիր և այն. այլ նա իւր աչքում մնում է նոյն զիւղացին, որը վաղ թէ ուշ կրկին պիտի վերադառնայ զիւղը և զիւղական կեանքով ապրէ:

Եւ հէնց այդ է պատճառը, որ շատ սակաւ պանդուխոտ զիւղացին թողնում է իւր զիւղը անով-աեղով: Պանդուխուները մեզանում զրեթէ միմիացն տղամարդիկ են. կանաչք և երիտասարդները մնում են տանել, սպասելով պանդխոտութիւն գնացած հօր, ամուսնու կամ եղբօր վերագարձին:

Գիւղացի-երկրագործ պանդուխոտը պանդխոտութեան մէջ :ի շարունակում իւր արհեստը և շրջում է անորոշութեան մէջ:—Ահա՝

այն հանգամանքներից մէկը, որով գիւղացի պանդուխարը մէծապէս տարբերւում է ուսանող, վաճառական, արհեստաւոր պանդուխարից:

Պանդխառութեան ինդիրը մեզանում ծագել է յատկապէս այդ կարգի պանդուխաների նկատմամբ, չը նայած որ, ինչպէս տեսանք, պանդուխաները մէզանում միացն բեռնակիրները, բանւորները և ծառաները չեն, այլ և ուսանողները և վաճառականներից, արհեստաւորներից շատ շատերը:

Ինչի՞ցն է այդ: Մենք կը պատասխանենք.—այդ նրանիցն է, որ մշակների ու բանւորների պանդխառութեան երեսովը շատ աւելի բարդ է, շատ աւելի կազ ունի գեռ ևս լաւ չը ճանաչւած տնտեսական ու սօցիալական պայմանների հետ, քան այդ կարելի էր առել միւս կարգի պանդուխաների մասին:

Ինչո՞ւ է ուսանողը, կովկասեցի ուսանողը պանդուխառ: —Ամենապարզ պատճառով, որ բարձրագոյն ուսումը կարող է սուցւել միմիացն բարձրագոյն դպրոցներում, որոնք չը կան մեր երկրում: Եթէ մի անգամ արդէն բարձրագոյն ուսումն ստանալու ձգուումը ընդունւած է որպէս յարգելի ձգուում, իսկ կարիքը՝ անհրաժեշտ, այս դէպքում այն հանգամանքը, թէ ուսանողը պէտք է պանդխառութիւն քաշէ—երկրորդական հանգամանք է: Պատճառները այս դէպքում միանգամցն պարզ են. որքան և ցաւալի լինի, որ ներկայ պայմաններում ուսանողը պէտք է պանդխառութեան վիճակին մատնեի, աւելի ևս ցաւալի կը լինէր, եթէ պանդխառութիւնից վախենալով, երիտասարդ մարդիկ փախչէին բարձրագոյն ուսում ստանալուց: Այն բարձր ինտերեսը, որ ունի մի երկիր բարձր ուսում սուացած մարդիկ ձեռք բերելով, միանգամցն երկրորդ պլանի վերայ է զնում ուսանողի պանդխառութեան վիճակը: Նպատակը, անհրաժեշտութիւնը և պատճառների պարզութիւնը թող չեն տալիս, որ, ուսանողների մասին խօսելիս, նոյս պանդխառութեան վիճակը առաջին ինդիր դառնայ. և եթէ ցանկալի էլ է բարձրագոյն ուսումնարաններ մեր երկրի համար ունենալ, դորա առաջին և գլխաւոր պատճառը գեռ այն չէ, որ մեր ուսանողները պանդխառութիւն չը քաշեն:

Այս մէկ օրինակից արդէն պարզ երեւում է, որ պանդխառութեան ինդիր ծագեցնելու համար, գեռ բաւական չէ, որ պանդուխաներ լինին, այլ հարկաւոր է, որ այդ պանդխառութիւնը կամ

յառաջացած լինի բարդ պատճառներից, որոնք բաւականաչափ չեն ճանաչած և կամ երեսոյթը ինքն ըստ ինքեան ճանաչած լինի որպէս անկանոն, հիւանդու, վեասակար:

Արդ, գիւղացի-երկրագործ մարդկանց պանդխոտութիւնը, բնականաբար, զարթեցնում է զիտողի մէջ քաղմաթիւ հարցեր.—ինչո՞ւ այս մարդը, իւր դաշնու ու հօտք թողած, եկել է այս քաղաքը բեռն կրելու. երեխ նա բաւականաչափ հող չունի վարելու. երեխ պարտքի մէջ է, իսկ գիւղում բաւականաչափ վաստակ չ'ունի. երեխ նա ամեն բան ունի, բայց երեւակացել է թէ քաղաքներում՝ ոսկին երկնքից է վայր ընկնում. երեխ նա շացել է քաղաքների մասին պատմած զրոցներից. երեխ պարծանք է համարել քաղաքում մի քանի տարի կենալը. բայց կարելի է, որ այս տարւայ հունձը այնքան վատ է եղել, որ ճարը կտրած դէպի քաղաքն է դիմել բեռնակրութիւնով կամ ծառացութիւնով մի քանի բուբլի վաստակելու համար. կամ զուցէ նա զգւած է տեղական հանդամանքներից և ուղեցել է քաղաքում մի որ և իցե կերպով իւր գլուխը պահել, միան թէ ապրի քաղաքի աւելի ազատ պայմանների մէջ. բայց կարելի է, որ նորա քաղաք գալը եղած է մի համաձայնութեան հիման վերայ, որի զօրութեամբ մնացած եղբայրները պէտք է տան և դաշտի հոգսը քաշեն, իսկ միւսը, իրեւ աւելորդ այդ բանի համար, աւելի օգտակար կարող է լինել դրախ աշխատանքով:

Մենք այս հարցերը կարող ենք շարունակել շատ և շատ երկար. և հազիւ թէ դրանով կարողանանք թւել այն բոլոր պատասխանները, որ մէկը կարող է ստանալ նոյն այդ պանդուխաններից, եթէ տարիներ շարունակ ամեն յարմար առթից նա օգտախ նոցապանդխոտութեան պատճառների մասին հարց ու փորձ անելու:

Ուսանողի, վաճառականի, արհեատաւորի պանդխոտութեան վերաբերութեամբ մէկի մէջ աւել, միւսի մէջ պակաս զիտակցութիւն կայ, կրկնում ենք մէնք. այդ պատճառով նոքամեր մտքում այնքան հարցեր չեն զարթեցնում. մինչդեռ գիւղացի-երկրագործ պանդուխանի առջե մեր միտքը պաշարւում է տասնեակ հարցերով: Խնչո՞ւ: — Յրովհեան մէնք ենթադրում ենք, որ գիւղացին տպէտ է և զործում է խարելով իւր հաշիւների մէջ: Այդ ենթադրութիւնը կարող է ուղիղ դուրս գալ, բայց նա կարող է և սխալ դուրս դալ. բայց ակն-

յայտնի է, որ քանի խնդիրը բազմակողմանի կերպով ուսումնասիրւած չէ, խնդիրը ինքը ենթազրութիւնների վերայ է միայն հիմնած:

Այդ խնդրի միակողմանի ուսումնասիրութիւնը կարող է մնալ անօգուտ և դուցէ չարիքների էլ տեղիք տայ: Ուսումնասիրութեան ժամանակ պէտք է աչքի առջև ունենալ ոչ թէ մի, այլ զանազան տեսակէտներ: Խսկ այդ տեսակէտները դեռ ևս չէ մշակած մեր գրականութիւնը: Այն՝ ինչ մենք կարողացել ենք լսել դորամասին՝ կարելի է ամփոփել այսպէս. զիւզացին տղէտ է և լիմար, որ թողնում է գիւղը—քաղաքի համար. նա այստեղ փչանում է, իսկ իւր ընտանիքին չարիքներ հասցնում, թողնելով իւր դաշտն ու արտերը և ընտանիքը անհոգ գրութեան մէջ: Պէտք է այդ մարդկանց հասկացնել, որ վերապատճան իրանց գիւղը և որ գիւղից նոքա այլ ևս չը դուրս գան:

Մենք համարում ենք այդ տեսակէտը միակողմանի, զատողութիւն՝ սահմանափակ, եզրակացութիւն՝ վաղաժամ, հետևանքը՝ ապարդիւն, մոքի, զիտողութեան և հետազոտութեան հօրիզոնը և ծաւալը նեղացնող, սեղմող: Էնդարձակել այդ խնդրին վերաբերեալ տեսակէտները, որոշել այս վերջինները—կը լինի պանդիտութեան խնդրին նւիրած մեր հետևեալ յօդւածի առարկան:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

ԿՈՐԱԾ ԲԱՂԴ

Հ Ա Յ Ն Ե-Ից

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Սոխակը երգում էր ալգում,
Բացւում էր սիրուն վարդենին,
Եւ դու իմ գըրկումըն.... յիշում եւ
Քո ջերմ համբոյրներն, իմ անգին:

Բայց վարդըն աշնան թառամեց,
Վազուց է չը կայ և սոխակ.
Դու էլ ինձանից հեռացար,
Եւ ես մընացի միայնակ:

Երկար են և ցուրտ գիշերներն.
Ե'կ, սիրտըս զարկում է ուժգին.
Ա'խ, միթէ օրհնեալ օրերից
Միայն ցընորքներ մընացին:

Վօսկւու. 1889 թ.:

* * *

ԼԵԽՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Փայլուն աչերովդ, աննըման գու կոյս,
Դու գըրաւեցիր իմ զօրեղ հոգին.
Հրապուրիչ ես գու, ինչպէս արշալոյս,
Որ շողշողում է ծովի երեսին:

Իմ ուշ ու միտքն իւր հետը տարաւ
Երկնային տիպարն այն գեղեցկութեան...
Այս, միթէ հընար չը կայ ինձ բընաւ,
Հրեշտակ իմ, սիրուդ ես արժանանամ:

Մօտեցիր, հոգեակ, նորոգիր իմ կեանք,
Ես թեւեր կ'առնեմ և կը բարձրանամ,
Եւ դէպի տանջանք, դէպի տառապանք
Այնպէս անվեհեր ես կը սըլանամ...

Իմ ծանը բեռլն բարձւած ուսերիս,
Սիրելիս, այնքան կը թեթեանայ.
Եւ քո պատկերըն՝ կանգնած առաջիս
Դըժւար ժամերումս ինձ հոգի կը տայ:

Մասկուա. 1889 թ. 8 սեպտ.

ՈՉԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՌՅԱՍԱՐԱԿ

ԵՒ

ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՈՐԱՊԵՍ 1)

Հրապարակական Դասախոսութիւն

ԳԱԲՐԻԵԼ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆԻ.

Կարդացւած Երեւանի Քաղաքային Ակումբի դահլիճում 1889 թ. ապրիլ ամսում։

I

ՅԱՐԳԵԼԻ ՏԻԿՆԱՅՔ ԵՒ ՊԱՐՈՆԱՅՔ.

Եթէ ես, չը նայած մեզ զբաղեցնող լինդի մասին իմ ունեցած տեսական և գործնական չնչին տեղեկութիւններին, թողլ եմ

¹⁾ Մենք օգտւել ենք գլխաւորապէս և ի միջի ալոց առա դրբերից, որոնցից վեր ենք առել լաճախ ամբողջ կտորներ և օրինակներ։

«Արտակարան»—հին և նոր։

«Պուրան»—Մահամմէդի։

Спенсеръ, Социология.

Quetelet, La phisique sociale.

Вульфертъ, Антропологическая школа.

Дриль, Малолѣтніе преступники.

Леоновичъ, Адаты кавказскихъ горцевъ.

Вамбери, Путешествія по Востоку.

Гиргасъ, Права христіанъ на Востокъ.

Кистяковскій, Курсы Уголовного права.

Шопенъ, Очеркъ Армянской Области և ալին։

տալիս ինձ ձեզանից մի փոքր ժամանակ խլելու, այդ անում եմ անհրաժեշտութիւնից հարկադրած:

Եմ վաստակը, որ ահա այսօր ձեր բարեմիտ ունկնդրութեանն է ներկայանում, միակ նպատակ ունի՝ հրաւիրել գարձնելու ձեր ուշադրութիւնը մեր նահանգի մէջ կատարւող ոճիրների վերաց: Միակ փափազ է, որ հասարակութիւնն իւր խօսակցութեան նիւթ դարձնէր այս մեզ հետաքրքրող խնդիրը. եթէ ինձնանից առաւել նախապատրաստած անձինք դասախոսութեանս առթիւ հասարակութեան մէջ արտացայտեն իրանց առաւել ուղիղ և առաւել բազմակողմանի հայեացքները, դորանով միանգամայն ես գոհացած կը լինիմ և իմ դասախոսութիւնն իւր նպատակին հասած:

Ամեն ինչ աշխարհում շարժողութեան մէջ է և ձեւակերպութեան ենթակաց: Մոլորակները, երկիրը, օդը և ամենամանը ինչոքորեաները ձեւակերպում են, քայլացում են և նրանց տեղը մի այլը՝ նորն է բունում: Բայց սրանք բոլորը տիեզերք ատեղծողի կամաց համաձայն ձեւակերպւելով՝ ամեն կերպ ձգում են միեւնոյն ժամանակ չենթարկել այդ փոփոխութեանը, չը քայլացւել, այլ պահել statu quo-ն: Մարդը չէ կամենում մեռնել և ճճիների վերածւել. սրանք էլ իրանց կարգին չեն կամենում մեռնել և այլ տեսակ որդունքների վերածւել: Այսու հանդիրձ բնութեան մէջ ամեն ինչ մաքառում, կուռում է այն բոլորի գէմ, որ քայլացում է իրան—սպաշտապանում է իւր գոյութիւնը, որ և ամեն կերպ աշխատում է երկարացնել: Այս կուրի մէջ վատնուում են բնութեան ամեն ինչի ուժերը, վատնուում են և մարդու ուժերը: Այս կոփելը մի անհրաժեշտ օրէնք է մարդու և բնութեան էութեան, և առանց նորան անմակարերելի է որ և իցէ մի գոյութիւն: Եղանակը ու կենդանիների զատ զատ սեռերն ու տեսակները, մարդկացին հասարակութիւնները, իւրաքանչիւր մարդ առանձին վերցրած, զբաղւած են այդ կռով, ընդդիմագրում են այն բոլորի գէմ, ինչ որ քայլացում է իրանց գոյութիւնը և սորա մէջ էլ կայանում է կեանքը: Մարդս մինչև անդամ դիտութիւններ է ստեղծել, որոնք խիստ մանրամասն ուսումնափում են այն ամենը, ինչ որ քայլացում է հասարակութեան ու մարդու կեանքը և դանում են այդ ամեն ինչ քայլացողի, կործանողի գէմ մարտնչելու խելամիտ ձեւեր ու միջոցներ: Մեզանից իւրաքանչիւրի

և բոլոր հասարակութեան զօրութեան այսպիսի քայքայող տարրերից մէջն է՝ ոճիրը, որի գէմ մարդս կռիւ է մղում՝ իւր ստեղծւած օրից։ Մարդու մէկը օրէնքներ է սահմանում իւր հարեանների հետ խաղաղ կենակցութիւն ունենալու համար, տնտեսօրէն հոգում, կարդաւորում է իւր կացութիւնը, շրջապատում է իրան անդորրութեամբ. բայց ահա՛ լոյս է ընկնում մի ուրիշը, որ քանզում, տապալում է նորա օրէնքները, նորա բոյնը, սպանում է նորան, նորա որդոցը մուրացկանութեան մէջ է զցում՝ ոչնչացնելով, կործանելով նորա անդորրութիւնը, կարգաւորութիւնը ու բաղդաւորութիւնը—ահա՛ ի՞նչ է ոճիրը։

Խարոցական աշխարհի բոլոր երեսոյթներից, ասում է Guerry, հասարակութեան համար ամենից վնասակարները, որոնց զիտենալլ ներկայացնում է ամենամեծ օգուններ և որոնք ընդհանրապէս պէտք է կարելոյն շափ լաւ պարզաբանւած լինին՝ այդ ոճիրներն են։ Պատոնը ոճիրը համարում է ոճրագործի համար՝ հոգու հիւանդութիւն, քաղաքացիների համար՝ ախտ, ամբողջ պետութեան համար՝ տանջանք։ Ոճիրների կործանիչ զօրութիւնը այնքան մեծ է, որ շատ զիտնականներ, խիստ արդարացի կերպով, բազմաթիւ ազգութիւնների ոչնչանալլ վերագրում են այն ոճրագործութեանը, որը նրանց մէջը կայ։ Որպէս զի հեռու չը գնանք, տեսնենք մօտաւորապէս ի՞նչ անտեսական ու բարոյական վնաս է հասնում մեր ամբողջ նահանգին ոճիրներից։

Ոճրագործը զրկում է հասարակութիւնը երբեմն ամենալնարի քաղաքացուց, ներս է մուծանում ինչպէս իւր, այնպէս և օտար ընտանիքի մէջ տանջանքներ, զարգացնում է մարդկանց մէջ շարութեան զգացմունքներ, հասարակութեան մէջ թշնամանք և խոռոչութիւն։

Մեր նահանգում կան մօտ հազար բանտարկեալներ։ Եթէ հաշենք, որ նոցանից ամեն մէկը օրեկան ամենասակաւը կ'աշխատեր 30 կոպ., կը աեսնենք, որ մեր հասարակութիւնը զրկում է այդ տարեկան 108.000 բուրլի աշխատանքից, բացի սորանից ծախսելով ամեն մի բանտարկեալի վերայ օրեկան 10 կոպէկ, այն է՝ տարին 36.000 բուրլի։ Բացի սորանից, պետութիւնը ծախսեր է անում բանտերի վերաց, դատարանների, դատաւորների, ոսափիկանու-

թեան և զանազան պետական այլ օրգանների վերայ, որոնք մասամբ գոյութիւն չեն ունենաց, եթէ մեր հասարակութեան մէջ տարածւած չը լինէր ոճրագործութիւնը:

Այժմ աւելի մօտիկից նայենք, թէ ի՞նչ բան է ոճիրը: — Այն գործողութիւնը, որը՝ կատարելով մարդան ցնում է որոշ նորմազից, հանոնից, օրէնքից, համարւում է յանցանք, ոճիր¹⁾: Այդ նորմաներն են որ և որոշում են թէ յանցանք, ոճիր է արդեօք եղած, կատարւած գործողութիւնը թէ ոչ: Այդպիսի նորմաներ լինում են կրօնի պատերները, բարոյականութեան, պետութեան, ընդհանուր բարք ու վարքի օրէնքները և այլն, որոնք և շատ անգամ չեն համաձայնուում միմեանց հետ. այս պատճառով՝ յաճախ ինչ որ ոճիր է կրօնի տեսակէտից, նոյնը չէ պետութեան տեսակէտից: Բացի տրանից այդ նորմաները, ինչպէս և միւնոյն ժողովրդի, ազգի ամեն բանը, պատմութեան ընթացքում փոփոխում են. այսպէս շատ բան, ինչ որ Ռուսաստանում իշխանական ժամանակամիջոցներում ոճիր չէր համարում, այժմ ոճիր է համարում և ընդհակառակը: Այդ նորմաները, օրէնքները անհրաժեշտօրէն կապւած են ազգերի ամբողջ աշխարհայցողութեան հետ. այս պատճառով երբ մենք կամենանք իմանալ արդեօք յայտնի գործողութիւնը ոճիր է համարում յայտնի ազգութիւնը թէ ոչ, պէտք է ծանօթանանք նորա այն գլխաւոր և հիմնական աշխարհայցողութեան հետ, որ ունի նա տիեզերքի կառավարւելու կարգաւորութեան վերաբերութեամբ: Բայց երկրագնդիս բոլոր ազգերի աշխարհայցողութիւնները մի առ մի դիտել մեզ անհնարինէ, ուստի և մենք կ'որոնենք զարգացման այնպիսի որոշ աստիճաններ, որոնք ընդհանուր են բոլոր ազգերի մէջ և կը տեսենք մի քանի ազգերի աշխարհայցողութիւնները այս աստիճանների վերայ:

Դառնանք առաջուց՝ մարդու կիսալայրենի զրութեանը և սորա համեմատութեամբ որոշենք թէ այդ միջոցում ի՞նչն էր ոճիրը: Վայրենու աշխարհայցողութեան մէջ երկու տարր կայ՝ շահ և վախ. և սորա հիման վերայ, նորա կարծիքով, իւր կատարած ամեն գործողութիւն, որ իրան շահաբեր է, յանցանք չէ: Զեն յարգւում ոչ

¹⁾ Մէջք յանցանք ասելով հասկանում ենք քրեստուուք, délit, ոճիրը — преступление, crime.

անձնական և ոչ գոյքի ու կայքի իրաւունքները։ Տոպէական հոգեկան էմօցիան՝ շարժումը զրեթէ միակ շարժիչ տարրն է վայրենու։ տարր, որ կանդ է առնում միայն վախի առաջ։ Ահա՝ մի քանի օրինակներ, որոնք ցոյց կը տան թէ ի՞նչ աստիճանի մ.ր հայեացքով վրդովեցոցիչ արարքները վայրենիների աչքում ոճիրներ չեն համարւում։ Այս օրինակները վեր ենք առել Սպենսերի «Ընկերագիտութիւնից»։

1) Նաբաթացի թափառականները պինդ և անցողզողդ սկզբ բունք ունին՝ բաց ամայի արօտատեղի դարձնել բոլոր այն երկիրը, ուր որ իրանք կը բնակւին. Նրանք այս ձեւի գործողութեան վերաց նայում են իրեւ. մի կրօնական պարուարութեան վերաց։

2) Հայրերը վաճառում են իրանց աղջիկներին, տղամարդիկ իրանց կանանցը փոխում են կովերի, շորի, պղնձեաց սպարանջանների հետ։

3) Փիջիացիների պատերազմը կախւած է մարդակերութեան հետ և ամեն մի տղամարդ կարող է սպանել և ուտել իւր կնոջը, եթէ միայն ախորժակը տայ։

4) Վայրենիներից շատերի որդիքը սպանում և ուտում են ծերացած ծնողներին։

5) Երբ լինում են չորս կամ հինգ եղբայր և երբ նրանցից մեծը ամուսնական հասակին հասնելով՝ ամուսնանում է, կինը յայտնում է իւր իրաւունքը և միւս մնացած եղբայրների վերայ՝ նոցա իրան ամուսիններ ճանաչելու. այդպէս էլ՝ երբ կինն է ունենում մի քանի քոյրեր, սրանք ամուսնական հասակին հասնելով, հերթով դառնում են իրանց մեծ քրոջ մարդու կամ՝ մարդկանց ամուսինները։

Այսպիսի փաստերը ոճրային չեն համարւում ոչ միայն վայրենիների մէջ, այլ շատ յաճախ անգամ՝ պատմական գիմացկութեան օրէնքի հիման վերայ¹⁾ և այնպիսի ազգերի մէջ, որոնք կանգնած են քաղաքակրթութեան առաւել բարձր աստիճանի վերայ, ինչպէս, օրինակ, հոռմայեցիք ու հելլէնացիք։

Մոմղէնն ասում է. — Հոռմէական ընտանիքի անդամները զըրկւած էին օրինական իրաւունքներից. կինն ու մանուկը նրանց համար նոյնքան քիչ նշանակութիւն ունէին, որքան և ստրուկը կամ ցուլը։

¹⁾ Законъ историческихъ переживаний.

Հայրը կարող էր գուրս ձգել իւր երեխային։ Նա իրաւունք ունէր և պարտաւոր էր զատելու իւր ընտանիքի անդամներին և այնպիսի պատիժներ տալու, որպիսին ինքն էր յարմար դատում, չը խուսափելով մարմնական պատիժներից նաև մահու դատապարտելուց։ Նա իրաւունք ունէր նմանապէս վաճառելու իւր երեխային։ Յունաստանում մարդ կարող էր կաակել իւր աղջիկը, ինչպէս և իւր կինը։

Վերոյիշեալ և սոցա նման օրինակները թէև ցոյց են տալիս, թէ ո՛րպիսի հասկացողութիւնների ակը են կիսավայրենիները, բայց և չեն հերքում այն փաստը, որ նրանք էլ այնու ամենայնիւ ոճիրների մասին ունին հասկացողութիւն թէկուղ շատ նեղ և սկզբնական։ Ոճիր է համարում վայրենին ամեն վնասակար գործողութիւն՝ ուղղւած այն հակի դէմ, որի առաջ վախ է զգում ինքը։

Ալաբամում համարեա թէ սպանում էին մի եւրոպացու այն պատճառով, որ նա ոճիր էր գործել, այն է մի բորենի էր սպանել. իսկ ալաբամցիների զօրագլուխ մայրը, նրանց հասկացողութեամբ, եղել է կին-բորենի, այսինքն՝ իւր մահից յետոյ նորա մայրը դարձել էր բորենի։

Հին նաբաթական դաշնադրութեան օրէնքներից մեկը քրէական յանցանք է յայտարարում ցորեն ցանելը, տուն շինելը կամ ծառ տնկելը։

Մարդկային քաղաքակրթութեան երկրորդ աստիճանը, ազգերի պատմութեան մէջ, կրօնի զօրանալու շրջանն է կազմում։ Դիաենք կրօններից երեքը՝ եբրայականը, քրիստոնէականը, մահմեդականը և այն, ինչ որ համարւում է ոճիր այս կրօնների տեսակէտից։

Այս բոլոր երեք կրօնի մէջ ընդհանուրն այն է, որ յացանի երեղոյթի ոճրայնութիւնը դատուում է աստուածային յացտնութեան հիման վերայ։ Աստուած անմիջական կերպով խօսում է Մովսիսի հետ, Մահմեդի հետ. «Եւ ասում է Տէր Աստուածը Մովսիսին», «Եւ ասում է Տէր Աստուածը իւր առաքեալ Մահմեդին»։ — ահա՛ այն խօսքերն, որ շարունակ գործ են ածւում զուրանի սուրան երում և Հին Կրտակարանի գլխներում։ իսկ Փրկիչն Խնքը Աստուած է, մարդկեղէն մարմնն առած՝ մարդկային ազգի փրկութեան համար շրջում է Հրէաստանում և աստուածային օրէնքներն է քարողում։ Իսկ տարբերութիւնն այս կրօնների այն է, որ եբրայականութիւնն ու մահմեդա-

կանութիւնը ոճիր համարում են զլիսաւորապէս մարդու գործողութիւնները, իսկ քրիստոնէութիւնը՝ մարդու խոկումները, մտածմունքները, զգացմունքները։ Այս հիման վերայ քրիստոնէական վարդապէտութիւնը շատ համառօա կերպով մատնացոց է անում մեղանչական գաղափարների, ոճիրների վերայ, իսկ մահմեղականն ու երրայականը կենցաղի մէջ են մտնում, որոշում են մարդու ամեն մանր-մունր վարմունքները։ այս պատճառով և ընկնում են աւելորդ ձեւականութեան մէջ։ Այն, ինչ որ հակառակ է յայտնի ձեւականութեան—յանցանք է։ ևս ձեր ուշադրութիւնը հրաւիրում եմ այս ձեւականութեան վերայ, որովհետեւ Երեանի նահանդի յանցանքները դիտելիս, դուք միշտ հանդիպելու էք այս խնդրին։

Ահա՛ թէ ի՞նչ է հրամացում Տէրը (Գիրք Դ. Կտացւոց, գլ. 17.)։

1. Խրայէլեան տանիցն ով որ արջառ կամ ոչխար և կամ այծ բանակի մէջ կամ բանակիցը զուրս մորթէ և չը բերէ Եհովացի խորանի առաջ Եհովացին զոհ մատուցանելու համար ժողովքի խորանի դուռը, արիւն պիտի համարւի այն մարդու համար։ նա արիւն է թափել և այն մարդն իւր ժողովրդի մէջից պիտի կորչի։

2. Կամ եթէ կը մերձենաց որ և իցէ անմաքուր բանի կամ անմաքուր գաղանի դիակի կամ անմաքուր տաւարի դիակի կամ անմաքուր սողունի, չ' իմանալով նորան, նա անմաքուր է։

3. Յալոնի՛ր քահանաներին, խօսում է Եհովան Մովսիսին, որ նրանք չը պէտք է ածիլեն իրանց զլիսները, խուզեն իրանց մօրուքի ծացրերը և չը պէտք է վէտեր շինեն իրանց մարմնի վերայ։ Որովհետեւ այսպիսի արարքները—ոճրացին են—աւելացնենք մենք մեր կողմից։ Սոյնպիսի ձեւականութիւն, թէեւ ոչ սոյնանման համակարգ և ճշգորէն մեկնաբանւած, մենք տեսնում ենք և դուրանում և մահմեղական օրէնսդէտների երկերում։ Բացի ձեւականութեան յայտնի պահանջներից և՝ աւողջապահութեան յայտնի պահանջները դրւած են կրօնական օրէնքների շարքում, որոնց չը կատարելը համարւում է յանցանք և պատճեռում է։ ևւ խօսում է Եհովան Մովսիսի հետ։

1. Ասա՛ Խրայէլի որդիներին, որ բնաւ արջառի կամ ոչխարի, կամ այծի ձարս չ'ուտեն։

2. Որովհետեւ ով որ կ'ուտի Եհովացին պատարագ մատուցւած

անասունի ճարպից, պիտի կորչի այն անձը իւր ժողովրդի միջից:

3. Զոհ մատուցած օրը և հետեւեալ օրը պիտի ուտի և երրորդ օրւայ մնացածը կրակով պիտի այրւի: Ով որ երրորդ օրը նորանից ուտի, նա պիտի կորչի ժողովրդի միջից:

Տնտեսավարական ամենահասարակ պահանջները կրօնական օբէնքների շարքն են բարձրացած:

Գիրք երկրորդ օրինաց Մովսիսի.

1. Բրդից և քաթանից միասին գործւած այլախառն հանգերձ չը հազնես:

2. Եղի գունչը չը կապես կալ կալսելիս:

Ոճիր են համարւում նոյնպէս հասարակական սովորութիւններին հակառակ գործողութիւնները:

1. Կնոջ վերայ չը պէտք է լինի տղամարդի հագուստ և ոչ ել տղամարդը հագնելու է կանացի շորեր:

Բայց երացեցիք ունին և ժամանակակից հասկացողութիւնների նման հասկացողութիւն ոմիների վերաբերմամբ:

Ոճիրներ պաշտօնավարութեան դէմ:

1. Դատաստանի մէջ անիրաւութիւն չ'անես և ոչ կանգունի, ոչ կշռոքի և ոչ չափի մէջ:

2. Դատաստանի մէջ անիրաւութիւն մի՛ անիր. աղքատին երեսպաշտութիւն մի՛ անիր և ոչ մեծին շողոքորթիր. զրացուդ արդարութեամբ դատի՛ր:

Ոճիրներ սեալ հականութեան և անձի դէմ:

1. Եթէ մի անձ մեղանչէ և Եհովայի դէմ յանցանք գործէ և իւր զրացուն խարէ իրան յանձնւած աւանդի համար կամ իւր ձեռքը տւած բանի համար և կամ մի յափշտակւած բանի համար, կամ՝ իւր զրացուն խարդախութիւն անելու լինի, կամ մի կորած բան գտնէ և ուրանայ ու սուտ երդում ուտի՛ անիծեալ է ազդպիսին:

2. Անիծեալ է իւր զրացու սահմանը փոխողը. անիծեալ է կոյրին ճանապարհից մոլորեցնողը, աղանդիտի, որբի և որբեացրիին ծուռը գատողը. անիծեալ է իւր զրացուն ծածուկ մեռցնողը, իւր օբէնքները չը կատարողը: — Եւ բոլոր ժողովուրդն ասէ՝ ամէն:

Իմ առաջ բերած ոճիրների բոլոր տեսակները ըստ երացականին, բոլորովին նոյնն են հանդիսանում և ըստ Խալամի. ուտի և ա-

ւելորդ եմ համարում առաջ բերել նոյնանման օրինակներ և դուրանից կամ մահմեդական օրէնսգէտներից:

Բայց այս երկու կրօնի հայեացքների մէջ մի կարևոր երկողթ կայ, — այդ այն է, որ կասարւած գործողութիւնը միայն որոշ վարդապետութեան հետևողների վերաբերմամբ է հանդիսանաւմ ոճիր, իսկ ուրիշների վերաբերմամբ այդ ոճիր չէ ներփականում:

Գիրք երկրորդ օրինաց, գլ. 23. — Քո եղբօրը շահով մի՛ տալ՝ ոչ արծաթ, ոչ ուտելիք և ոչ որ և իցէ այլ բան, որ շահով տրւում է, իսկ օտարականին տուր շահով:

Առւրան—սուրա VIII. — Մահմէդ առաքեալ է Աստուծոյ: Նորա ընկերները զարհուրելի են անհաւատոնների համար և հեղութեամբ լիմիմեանց համար: Դու կը տեսնես նրանց ծունկ խոնարհած, ձեռքները տարածած՝ Աստուածային օրհնութիւնը և հաճութիւնը հացելիս: Նրանք ացդակս են ի ցաւ անհաւատոնների:

Զիմմին (քրիստոնեայ) պէտք է զանազանների մահմեդականից հագուստով, հեծնելու համար գործածւող անասուններով ու թամբերով: Նրանք իրաւունք չ'ունին ձի գործածելու բացի այն դէպքերից, երբ օգնելու կը լինին մահմեդականներին անհաւատոնների դէմկուելում: Բայց ալդ օրինակ դէպքից, նրանց արգելում է հեծնելու համար որ և իցէ անասուն գործածելը: Եթէ հիւանդութեան և այլ կարւոր պատճառով նրանք ստիպւած են լինում էշ հեծնելու, այն ժամանակ սիրտի իջնեն իրանց մահմեդական խմբի մօտից անցնելիս. Նրանց գործ զրած թամբերն պէտք է լինին այն տեսակներից, որ դնում են էշերի վերայ (Առիթլանք):

Բոլորովին այլ հայեացք ունի քրիստոնէական տեսակէտը ոճիր վերայ: Այս կրօնի հիմնական սկզբունքը՝ մարդու հոգեկան հաղորդակցութիւնն է Աստուծոյ հետ: Եւ այս հաղորդակցութիւնը պարզ է և ոչ մի ձեւականութիւնների հետ չէ կապւած: — Մտածել Աստուծոյ մասին, տածել սէր դէպի նա և դէպի մարդը լնդհանրապէս առանց խսրութիւն զնելու դաւանութիւնների և ազգութիւնների մէջ՝ նշանակում է լինել քրիստոնեայ:

Այս հիման վերայ, ըստ քրիստոնէականին, չը կայ ոճիր կրօնական ձեւականութեան պահանջների դէմ, տնտեսավարութեան, հասարակական վարուց դէմ, այլ կամ ոճիրներ—վատթար զդացմունքներ, դէշ խոկումներ, մեղսալից ձդառւմներ: Ահա թէ

Պօղոս առաքեալն Հռոմայեցիներին ուղղած թղթերի մէջ ի՞նչպէս է թւում ոճիրները:—«Նրանք լցւած են ամեն անիրաւութեամբ, պոռ-նրկութեամբ, անզգամութեամբ, աղահութեամբ, չարութեամբ, լի են նախանձով, մարդասպանութեամբ, կուով, նենգութեամբ, չարա-բարութեամբ. քսուներ, բամբասողներ, աստուածատողներ, թշնա-մանողներ, ամբարտաւաններ, գոռողներ, չարահնարներ, ծնողներին անհնազանդներ, անմիտներ, ուխտագրուժներ, անդութներ, անհաշտ-ներ, անողորմներ. Նրանք Աստուծոյ իրաւունքները հասկանալով՝ որ այսպիսի բաներ գործողները մահու արժանի են, դարձեալ ոչ միայն այս բաները անում են, այլ և անողներին էլ գովաբանում են»:

Որ քրիստոնէութիւնը ոճրայնութեան խնդրի վերաբերմամբ աչքի առաջ ունի միայն հոգեկան խոկումները, մարդու շարժաւիթ-ները, երկում է Պօղոս առաքեալի հետեւալ խօսքերից.—«Նա է հրէայ, որը ներքուստ այսպէս է—սրտով, հոգով և ոչ թէ գրով: Պէտք է հնազանդել ոչ միայն պատժելու երկիւղից, այլ և խղճմբ-տանքի թելագրումից»:

Մարդու ամեն մի արարք չը պէտք է Աստուծոյ տնօրինութիւն-ներին հակառակ լինի՝ համաձայն նորա իմաստուն կարգաւորու-թեան—հակառակ գիտւածում՝ այն յանցական է: Յրինակ.—ո. Պօ-ղոս առաքեալն ասում է.

1. Ամեն ոք պէտք է հնազանդ լինի՝ բարձրագոյն իշխանու-թիւններին, որովհետև չը կայ իշխանութիւն, որ Աստուծուց չը լինի. եղած իշխանութիւնները Աստուծուց են սահմանաւծ:

2. Ըստ այսմ իշխանութեանը հակառակողները, հակառակող են Աստուածային տնօրինութեան:

Նատ երկար կը քաշէր, եթէ ես կանգ առնէի հելլէնացիների ու հւոմայեցիների յանցանքների վերայ: Ես միայն ցոյց կը տամ այս ազգերի աշխարհացեցողութեան բնարոշ գծերը և Նրանց յատուկ հայեացքները յանցանքների մասին՝ սոյն տեսակիտից:

Հին հելլէնն ապրում էր պետութեան համար, որ և բռնում էր նորա ամբողջ կեանքը, ուղղելով նորա գործունէութիւնը և որո-շելով թէ ի՞նչն է բարոյական և անբարոյական, ի՞նչը ոճրային և ոչ ոճրային հելլէնի համար: Ըստ ասութեան Արիստոտէլի, թէ մարդս հասարակական կենդանի է, կարելի է և եզրակացնել

թէ մարդս ապրում է հասարակութեան, պետութեան համար։ Այսպիսի հայեացքի համեմատ, հելլէնի համար ամեն մի արարք յօգուտ պետութեան բարոյական էր, իսկ ի վնաս պետութեան—անբարոյական—ոճրացին։ Հելլէնական ամենամեծ իմաստահէր Պլատոնը քարոզում է կանանց լնդհանրութիւն, խորհուրդ է տալիս սպանել վատառողջ երեխաներին և ծեր ծնողներից ծնւածներին և այսպիսի արարքների մէջ ոչինչ ոճրացին բան չէ նշմարում, որովհետեւ սոքա օգտաւէտ են պետութեանը։ Սպարացիք սովորեցնում էին իրանց որդիներին գողանալ, որ ացտպիսով զարգացնեն իրանց ճարպիկութիւնն յօգուտ հայրենեաց համար պատիրազմի։

Այլը առաջ բերած հայեացքներից յետով, մեղ պէտք է կանգ առնել այն խնդրի վերաց, թէ որո՞նք են այն պատճառները, որոնց հետեանքը ոճիր է հանդիսանում։ Այս խնդրի վերայ՝ մարդկացին քաղաքակարթութեան նշուլելուց մինչև այսօր, բոլոր գիտնականները՝ քրէագէաները, հոգեբանները, իմաստասէրները, ընկերաբանները իրանց ճիզն են թափել։ Ներկայումս այս խնդրի վերաբերմամբ կատաղի կոիր է մղում, որին մասնակցում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհը։

Դիտնական աշխարհում ամենամեծ գիւղը՝ երկողթների համագոյութեան և հետեւողութեան, այն է՝ պատճառականութեան օրէնքն է։ Այս օրէնքի միտքն այն է, որ ամեն մի երկողթ բնութեան մէջ ունի իւր պատճառները, որոնցից նա կախւած է ամբողջովին և դէպի որը վերաբերում է իրեւ հետեանք։ Այժմ խնդիր է առաջանում. որո՞նք են այն երկողթները, որոնց հետեանքը ոճիր է հանդիսանում։ Այս խնդրի վերաբերմամբ եղել են և կան գանազան հայեացքներ։ Մենք չենք ցիշիլ միջնադարեան իրաւագէտներին, որո՞նք ասում էին, թէ ոճիրները գեերի ծնունդ են, և ոչ էլ 18-րդ դարի գիտնականներին, և իմաստասէրներին, որո՞նք ոճիրները դուրս էին բերում մարդկանց մէջ բնականապէս ծագած պայմանի դրժելուց, երբ նրանք սոք են կոխում հասարակութեան մէջ, այլ մատնացոց կանենք արդի գիտութեան երկու զիւաւոր ուղղութեան՝ դասական ոճրագէտների (կլասիկական) և մարդագէտների (անտրոպոլոգների) ուղղութեան վերայ։ Թէև այսպիսի բաժանմունք իսկապէս առաջ բերել կարելի չէ, բայց մենք այդ անում ենք զիւրըմբոնների

անելու և չը տարածւելու համար, որ անհրաժեշտ է մեր հանգամանքներում:

Դասական ոճրագիտները (կրիմինալիսոները) ասում են, թէ մարդս ունի ազատ կամք, կարող է գործել և չը գործել ոճիրներ և, ապացոյցի համար, դիմում են ինքնազիտողութեան, մեզանից ամեն մէկի ներքին փորձառութեան: Եւ որովհետեւ մեզանից ամեն մէկը կարծում է, որ ինքը ազատ է կատարելու կամ չը կատարելու որոշ գործողութիւնը, ուստի և արանից նրանք եզրակացնում են, որ ոճրի պատճառը՝ մարդի չար կամքն է:

Բոլորովին ուրիշ բան են ասում մարդաբանները. Նրանք ասում են, որ մարդս չ'ունի ազատ կամք, որ նա առուկ է բնութիւնից ժառանգաբար սոսացւածքին և որ մի անդամ այսպէս սուեղծւած լինելով՝ նա սէտք է կատարի որոշ երևոյթը: Նրանք մի փոքր մօտենում են նախասահմանութեանը (Ճակատագրին): Ահա թէ ի՞նչպէս է խօսում խնդրիս մասին այս դպրոցի պարագլուխ լամբրօզն.

«Ա, երջ ի վերջոյ յանցանքը, ինչպէս վիճակագրական, այնպէս և մարդագիտական հետախուզութիւնների հիման վերաց հանդիսանում է ինչպէս մի ֆենոմեն, ֆենոմեն անհրաժեշտ՝ ինչպէս բեղմնաւորութիւնը, ծնունդը, մահանալը, հոգեկան հիւանդութիւնները, դէպի որոնք յաճախակի վերաբերում է այն, ինչպէս մի տխուր բաղդատական համանմանութիւն: Այս պատճառով բնազդաբար դաժան կենդանիների և բոյսերի ակտերի և մարդու ոճրագործութեան մէջ եղած տարբերութիւնը բոլորովին ջնջում է և կենդանական չարութեան ֆօրմուլան այս մոտքով դոց է տալիս նոյնութիւն և համանմանութիւն, որի մասին չին մոտածում նորան յաճախ գործածող անձինք:

Ոճրագիտ մարդագիտները ասում են, որ կայ միջին մարդ, որին կարելի է համարել կանոնաւոր և յանցանքներ գործելու հակումն չ'ունեցող հաց ացդ միջին մարդ ասւածը կարող է գոյութիւն ունենալ միայն մեր ենթադրութեան մէջ, իսկ կեանքի մէջ ընդհանրապէս գրեթէ բոլոր մարդիկ շեղում են ացդ ենթազրելի միջին մարդուց: Այս շեղումներն պակասութիւններ են և անձի հիւանդութիւններ են համարւում: Ոճրացին հակումն մարդու և

ամեն յացնի՝ ոճիր՝ արդիւնք են մարդու հիւանդութեան։ Այս հիւանդութիւններն ստացւում են ժառանգաբար կամ պատահաբար։ Այնպէս որ ոճրագործը հանդիսանում է իբրև մի թշւառ գործիք իւր կազմւածքի։ Մարդագէտներն այս հայեացքը հաստատում են ուսումնասիրելով ոճրագործներին բանտերում, հիւանդանոցներում և այլ տեղերում, և երեւում է, որ նրանք, ոճրագործները, ամենքը գրեթէ ունենում են որ և իցէ պակասութիւն, լինում են արբեցողներ, անառակներ, էպելեպտիկներ և այլն։ Այս ամենն առաւել հասկանալի կը լինի հետեւալ փաստերից, որոնք ցոյց են տալիս անկանոնաւորութիւններ ոճրագործներից մեծագոյն մասի բնաւորութեան մէջ։

«Լիովին արժանահաւատ, զանազան հեղինակների ժողովածքազմաթիւ փաստերը, ասում է Դրելը, ամենեին թոյլ չեն տալիս անդամ չնչին կասկած ունենալու այն բանում; որ մի տեսակ անձինքների մէջ առաջանում է մի օտարոտի ձգտում դէպի արիւնը, դէպի օտարի տանջանքներ տեսնելը, և այդ ձգտումը տիրում է նրանց ամբողջովին, առաջնորդում է նրանց մտածողութիւնը, ուժաթափ է անում մոտապատկերների ներգործութիւնը և աննկատ կերպով տիրապետում է նրանց բոլոր մտաւոր, բարոյական էութեան վերաբ։

1. Ես ինքս ձեռք եմ կարկառում իմ կեանքին վերջ գնելու, գրում է մի 25 տարեկան ջահէլ ինքնասապան, որովհետեւ ես հաւատացած եմ, որ վաղ թէ ուշ ես ապականելու էի իմ լնտոսնիքը։ Խնձ տիրում է մի տարօրինակ, հանգատութիւնս աւերող խելացնորութիւն՝ ես ծարաւի եմ արեան և յատկապէս մարդկացին արեան։

2. Բիւֆֆօնը պատմում է, որ մի անդամ մի մշակ դիմում է իրան և հարցնում, թէ չը գիտէ՞ արդեօք մի տեղ արիւն, այն էլ իւր փափուկ սիրելի կնոջ և մանկան արիւնը թափելու անդիմադրելի ցանկութեան դէմ։

3. Պունիկ կնոջ մէկը պատմում է եղել, որ անասելի բաւականութիւն է եղել զդալիս երեք մարդու մահւան պատճին նայելիս։

Այսպիսի արիւնծարաւութիւնն ու դաժանութիւնը գրեթէ միշտ կապւած է սեռական շրջանի քայքայումների և սաստկացրած գրգուումների հետ։

1. Ցղի կանաց և ծննդկանների հողեկան խանդարմունքների

միջոցին — ասում է Լուազօ — նկատում է տիսրական գաղափարների գերակշռութիւնը հանդերձ սպանութիւն գործելու մղումով:

2. Կոմն զլ Նարօէ, իւր բաւականութիւնը զօրեղացնելու համար՝ իւր սեռական արբշութիւններին զուգակցում էր տանջանքներ ու ապանութիւններ:

3. Մի զինուոր մի անգամ տեսնելով մի գեւահաս աղջիկ, քարշում, տանում է իւր որջը, բռնաբարում է նորան, յետոյ սպանում, այլանդակում է նորա սեռական անդամները, ծծում է արիւնը և վերջապէս դուրս է քարշում սիրոը և ուսում:

Մեծ քաղաքներում այնքան սաստիկ տարածւած օնանականութիւնը ևս ծնող — պատճառ է ահազին քանակութեամբ յանցանքներին:

Եթէ համեասութիւնը ներէր, ես առաջ կը բերէի անհամար սոսկալի օրինակներ, որոնք ցոյց կը տային թէ մեր դպրոցներում տարածւած յայտնի բարոյական հիւանդութիւնները (ախտերը) ևս կործանիչ ներգործութիւն են ունենում մեր հասարակութեան վերայ և մեծացնում յանցանքների թիւը:

Դ. - ր Վիրդիլիօն ասում է, որ յանցաւորները զանազանուում են միւս մարդիկներից ինչպէս իրանց զգացմունքների շրջանում, նոյնպէս և կամքի ու մոտախոհութեան: Նա միւնոյն ժամանակ մատնացոյց է լինում նաև նրանց, ըստ երևոյթին, ցածացած զգայականութեան, նրանց եսականութեան վերայ, նրանց բարոյական զգացմունքների բացակայութեան, բորբոքւած և ճնշւած զրութիւնների նկատելի փոփոխութեանց վերայ, նրանց համոզմունքների և հայեացքների տարօրինակութեան, նրանց գործողութեան շատ անգամ կամակոր և աննպատակ բնաւորութեան վերայ, քանի մի ոճուական ձգտութիւնների և էպելեպտիկական սկզբնաւորութեանց գործողութիւնների նմանութեանց վերայ:

Բացի բնական, հոգեկան և մոտաւոր հիւանդութիւններից, մարդագէտները ոճիրների պատճառ համարում են կազմածքով վայրենիներին նմանիլը, թէև քաղաքակրթւած մարդկային հասարակութեան լինին ծնունդ: Վայրենիներին յատուկ վարմունքների զգացմունքները, ասում են նրանք, յատուկ են և այն կազմածքներին: Այս ամենն ապացուցանում են այսպիսի փաստերով:

Պրօվերօ Լամբրօզօն հետազոտելով 101 գանկ խտական յան-

ցագործների, 27 գանկ հոտուենգոտների՝ և 43 գանկ հոգեպէս հիւանդների՝ գալիս է այն եղբակացութեան, որ առաջինները շատ բաներով նման են զունաւոր ցեղի ներկայացուցիչների գանկերին և ներկայացնում են նշանաւոր զարտուղութիւններ, շատ անգամ միենոցն անհատի մէջ ևս պատահող:

Լամբրօզօն չը բաւականանալով գանկերի հետազօտութեամբ և խուսափելով կշտամբանքից որ իւր եղբակացութիւնները հիմնուում են բացառապէս դիակների չափելու վերաց, ներկայացնում է նմանապէս և 1279 իտալական կենդանի յանցագործների՝ մասամբ իւր և մասամբ այլ բժիշկների ուսումնասիրած մարդաշափական ու դիմագիտական հետազօտութիւնների արդիւնքները: Այս արդիւնքները (օրինակ՝ աւելի յաճախ քան թէ կանոնաւոր մարդկանց գանկի պատահող սուբմիկրօցեֆալիս, գանկի ասսիմետրիա, սոտէպ շիլերը, սաստիկ զարգացած ծնօտները, ականջների զարտուղի կազմութիւնը, յանցառ միրուքը, սեռերի նշանաւոր նմանութիւնը, գէպի յետ թեքւող ճակատը, բբերի անչափակից լացնանալը, մկանների նւազ ու մերդութիւնը և այլն) բերում են նորան այն եղբակացութեան, որ եւրոպացի ոճրագործները իրանց տիպով մօտենում են աւստրալիացիներին և մոնղոլներին:

Լամբրօզօն, իբրև որոշիչ չատկութիւն ոճրագործների խելքի, մատնացոյց է լինում նրանց խելքի փոքր եռանդի և սորանից բզիսած անլրնլունակութեան վերաց գէպի նատական ու տեղական աշխատանքը: Ապա նա ցոյց է տալիս ոճրագործների օտարութի դիւրահաւասութիւնը և թեթևամոռութիւնը, նրանց նւազ տրամաբան և անխոհեմ լինելը, որ և երեւում է հէնց նոյն խակ ոճիրների երեւան գալու ձևերի մէջ:

Բացց շատ գիտնականների ու փորձառուների կարծիքով, ինչպէս դասական ոճրագէտների, այնպէս և մարդագէտների պատմածները միակողմանի են: Խնչպէս մէկի, նոյնպէս և միւսների ձեռք բերած փաստերն ու օրէնքները պէտք է ներս մտնեն քրէական իրաւանց մի նոր և աւելի ընդարձակ տեսութեան մէջ: Այս նոր տեսութիւնը խսկապէս իմաստասիրութեան և այլ ոօցիալական գիտութիւնների հետ զուգընթացաբար կը հետևի էկլեկտիկական ուղղութեան: Այս տեսութեամբ յանցանքը, ինչպէս և բնութեան ամեն երեսից,

որքան նա մատչելի է մեզ գործնական ու փորձնական հետազօտութեան սահմաններում, միասին հիւսւած և փոխադարձաբար միմևանց վերայ ներգործող անթիւ, անհամար պատճառների արդիւնք է:

Այսպիսի տեսութեան համար արդին մասամբ նիւթ պատրաստած են վիճակագիրները և զիտաւորապէս Քէտլէ (Quetelet):

Այս տեսութեամբ յանցանքը, ինչպէս և ամեն ուրիշ երևոյթ, ենթարկւում է բնութեան օրէնքներին և կազմում է լնդհանուր տիեզերքի շարժողութեան մի շառաւիզը: Կայ մի նախահաշիւ, առում է Քէտլէ, որ վճարում է սոսկալի կանոնաւորութեամբ: դա՝ բերգերին, տաժանակրութեան և կառափինարաններին հատուցանւող հաշիւն է: Մենք կարող ենք առաջուց համարել թէ քանի անհատ կը ներկեն իրանց ձեռքը մերձաւորների արեամբ, ինչքան թունաւորողներ, խարդախներ կը հանդիսանան, ինչպէս և առաջուց կարելի է ասել, թէ որքան կը ծնւեն և որքան կը մեռնեն: Հասարակութիւնը կրում է իւր մէջ բոլոր կատարելիք յանցանքների սաղմերը: Նա նախապատրաստում է նրանց, մեղաւորը միայն կատարող դործին, զէնքն է: Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ բազմաթիւ պարագաներ ազգում են ոճրագործութեան վերայ Առաջ բերենք այս հանդամանքներից մի քանիսը:

1. Հասակն, ըստ Քէտլէի, ամենամեծ ազդեցութիւն ունի ոճրագործի վերայ: Դէպի 25 տարին է ամենաշատն ոճիրների զարգացման համար: Բայց այս տախիմ-ը զանազան յանցանքների միաժամանակ չի լինում: Ամենից վաղ ժամանում է նա հեշտասիրական ոճիրների համար, յետոյ գողութեան, ապա կողոպտելու, սպանութեան ու թունաւորելու. իսկ ամենից ուշ՝ կրակ տալու համար:

Յայտնի հասակ մտնելու շրջանում, երբ այդ զուգակից է յայտնի նշանների հետ, աղջկերանց մէջ զարգանում է երբեմն անհիմն ձրգում դէպի սպանութիւնը: — Այդ Հիւպոկրատն էր զեռ ասում:

2. Սեռը նոյնպէս աղջեցութիւն ունի ոճրի վերայ: Ըստ Քէտլէի, ինչոչ կատարած մի ոճին ընկնում է տղամարդի չորսը. ընական թուլութեան պատճառով, կանաչք աւելի ոճիր գործում են ունեցածի քան թէ անձնաւորութեան դէմ: Դիւգալլը ենթադրում է, որ կանանց պոռնկութիւնը նոյնահաւասար երևոյթ է (առաւել ուղիղը՝ էկլիվալինտական) տղամարդկանց մուրացկանութեան:

3. Եղանակը և տեմպերատուրան ևս ցոյց են տալիս իրանց ազդեցութիւնը: Ըստ Քէտլէի, ամառը և հարաւում առաւել ոճիրներ լինում են անձնաւորութեան դէմ, իսկ ձմեռը և հիւսիսում գոյքի դէմ: Այս հասկանալի է, որովհետեւ տաքութեան ներգործութեան տակ կրքերն առաւել սաստիկ են զարգանում, իսկ ցրափ ներգործութեան տակ առաւել կարիք է զգացուում անունդի, հագուստի, կացարանի մէջ և այլն:

4. Հարբեցողութիւնը ոճիրների վերաց ունի առանձին ազդեցութիւն, բայց որովհետեւ իմ ձեռքի տակ չ'ունիմ վիճակադրական հետևութիւններ, ուստի և ես կ'օգտուիմ մարդագէտների կարծիքներից:

Ալկօհօլի գործածման ազդեցութիւնից, ինչպէս ցոյց են տալիս կլինիկական զիաոզութիւնները, սովորական հարբեցողների մէջ զարգանում է անհաւաստալի սոսութիւն, երեսպաշտութիւն, անփութութիւն, անտարբերութիւն դէպի շրջապատողը, բնազդականութիւն, զիւրագրգութիւն, կոպատութիւն, զաժանութիւն և ընդ ամին վախկոտութիւն, տաղակոտութիւն, այսու և հակումն դէպի թափառկոտութիւն, ծայրացեղ նւազած հանդուրժութիւն և համբերողութիւն, անհետեղականութիւն, հակումն դէպի աննպատակ չար ու վնասակար գործողութիւններ, տրամադիր անառակութեան և ոչ մի բարոցական պատուարի առաջ կանգ չ'առնող ծայրագոյն անձնարձակութեան, վատթար միտումներ, թուլաբընութիւն, անվճռականութիւն, տրամադիր ինքնասալանութեան, ընտաննեկան և հասարակական զգացմունքների անկումն և այլն և այլն:

Բժ. Քէլիակովն Խարուսակի ու Մօսկացի բանտերում ուսումնասիրելով մարդասպաններին, ասում է, որ մեր ազանիչների 50% ից աւելին մշտապէս ի չարն են գործ զրած եղել ոգելից խմբչքները:

Նիւթական գրութիւնը ահագին ազդեցութիւն ունի ոճիրի վերաց: Աղքատութիւնը պատճառում է հոգեկան անկանոնութիւն, որից և ոճիրներ են առաջանում: Իսկ հարստութիւնը աւելորդութիւններ է սիրում, որոնք նոյնպէս մեծացնում են ոճիրների թիւը: Մանաւանդ, ըստ Քէտլէի, աղքատութիւնն որպէս հետևանք անչափ շռապութեան, մի հասարակութեան մէջ սաստիկ մեծացնում է ոճագործութիւնը:

Առհասարակ ոճրագործութիւնը կապւած է պատմութեան հետ, կապւած է աղջային բնաւորութեան, հասարակական ու պետական կեանքի, ժողովրդի պարապմունքների և շատ այլ բաների հետ:

Աւելորդ չեմ համարում աւելացնելու, որ ոճիրը կապւած է մարդու յառաջադիմութեան հետ, և քանի որ գոյութիւն կ'ունենաց մարդկացին յառաջադիմութիւնը—գոյութիւն կ'ունենան և ոճիրները, քանի որ յառաջադիմութիւնը երկու տարր է ենթագրում՝ հինը—արդէն ձեւակերպւածը, յայտնի օրէնքների, կանոնների վերածւած, ձուլւածը և նորը—հինը քայլքայող—կործանողը: Հինը ոճրային է՝ նորի տեսակէտից և նորը՝ հինի տեսակէտից: Կաթողիկութիւնն իւր տեսակէտից արդարացի կերպով կալանաւորեց Լիւտերին, Գալիլէյն: Այսպիսի գաղափարներ եղել են, կան և կը լինին մարդկութեան հետ միասին, կը յարուցանեն պատերազմ, յեղափոխութիւն, կոտորածներ, որոնք Ստեղծողի կամաց համեմատ ընթացակից են մարդկութեան հետ: Մեր ջանքը պետք է կայանաց նորանում, որ կարելին չափ նւազեցնենք ոճիրների թիւը և նրանց յատկութիւնը (բնաւորութիւնը). բայց վերջնականապէս ոչնչացնել անկարելի է, մանաւամնդ որ նրանցից շատերը կատարւում են իբրև անհրաժեշտութիւն: Ահա՛ այն ամենն, ինչ որ ես կարեւոր համարեցի ասելու ոճիրների մասին ընդհանրապէս:

(Ար շարունակուի)

ՍԻՐԱՍՈՒՆ ԾԱՂԻԿ

(ՄՕՐԻՑ ՀԱՐՏՄԱՆԻՑ)

Ա բ ծ ի ւ ե ա ն ի

Ես իմ սիրած չքնաղ ծաղկին նալեցի
Եւ իմ աչքին բացւեց գիւթիչ մի աշխարհ.
Տեսալ հովտում սպիտակ տնակ հայրենի,
Շուրջը փռւած մարգագետին ծաղկավառ։

Եւ ես նստած այդ տնակի դըռան մօտ,
Գգւում էի կրծքիս սեղմած մանուկին.
Իսկ գու իբրև զաւակատէր մայր գթոտ,
Ժպտում էիր, ով իմ քաղցրիկ ամուսին։

Բայց ահա նա թոշնեց խղճուկ իմ ծաղիկ,
Ո՛հ, էլ զուր եմ գարձեալ նալում ես նորան...
Էլ չեմ գտնիլ, ես ալդպիսի քնքուշիկ
Մի այլ ծաղիկ — նա միակ էր, աննման...»

Մասկու, 10 հոկտեմբերի, 1889 թ.

* * *

ՀԱՅՆ Է-ԻՐ

Արծիւեանի

Նոքա իմ կեանքը հալ ու մաշ արին,
Անխնայ տանջեցին իմ խղճուկ հոգին—
Ոմանք իրանց կոյր, անզուսպ նախանձով,
Ոմանք դատարկ սէր ինձ պարզելով:

Նոքա իմ հացը թոյնի փոխեցին,
Խմած ջրիս հետ լեղի խառնեցին—
Ոմանք իրանց կոյր, անզուսպ նախանձով,
Ոմանք դատարկ սէր ինձ պարզելով:

Բալց նա, ով ողջից առաւել մաշեց
Իմ սիրտն ու հոգին, կեանքս աւերեց—
Նա երբէք սիրոյս չեղաւ համազգաց,
Եւ ոչ էլ զգաց դէպի ինձ նախանձ...

Մասկու. 8 մարտի, 1887 թ.

ՆԿԱՐՉԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԳԼՈՒԽ ԲԱՇԽՆՁԱՊ, ԵԱՆԻ

I.

ՍԻՐԵԼԻ ԸՆԿԵՐ Ա.

Դարձեալ կ'անցնեն տասնեակ տարիներ, բայց՝ գեղարւեստի նշանակութիւնը համարեա միւնոցնը կը մնայ մեր ժողովրդի մէջ։ Գուցէ ապագայ սերունդը բազդ ունենայ տեսնելու մեր երկրում գեղարւեստը ծաղկած զբութեան մէջ, գուցէ դա էլ մի պահանջ զառնայ մեր ամբոխի համար։ Դու վերջին նամակիդ մէջ մեղադրում ես մեր հասարակութեանը, որ նա անտարբեր է դէպի գեղարւեստը, որ նա անուշադիր է թողնում այն բազմաթիւ ընդունակ երիտասարդներին, որոնք չ'ունենալով միջոց իրանց ընդունակութիւնը մշակելու ու կատարելագործելու, մնում են անյայտութեան մէջ, իսկ եթէ անհատներին յաջողում է այդ ցաւալի իրողութեանը չ'ենթարկելու, դա էլ նրանց բազդիցն է։

Այս', սիրելի՛ս, քո կարծիքների վերջին կարը շատ ճիշդ է, բացց քո նախատինքը հասարակութեան վերաբերեալ, իմկարծիքով, սիալ է։ Ես չեմ կարող մեղադրել հասարակութեանը։ Եւ իրաւ, ի՞նչ իրաւունքով պէտք է պահանջել հասարակութիւնից այն, ինչ որ նա չի ստացել ոչ ոքից։ Մենք Ասիայումն ենք, մեր ամբոխը կրթւած է Ասիայում, ասիական եղանակով։ Նա գեղարւեստի վերայ շատ մութ գաղափար ունի, կամ աւելի լաւ է ասել, բալրովին չ'ունի։ (Խօսքա ընդհանուրութեան մասին է, անհատներին մի կողմն եմ թողնում, նրանք բայց առաջառութիւն են կազմում)։

Կովկասեան բնութիւնը այնքան հարուստ և այնքան բազմակողմանի է, որ երկրագնդիս բոլոր երկիրների բնութեան հետ կարող է յաջողութեամբ մրցել. ունի մինչև անգամ մի առաւելութիւն, զա՛ նորա կուսական, մարդու ձեռքով չ'աղաւազւած դրութիւնն է:

Դու զարմանում ես, որ թէպէս մեր երկիրը ընդունակ է տաղանդներ արտազրելու, սակայն մինչև այսօր չի դուրս եկել ոչ մի հանճարեղ գեղարւեստագէտ, երաժշտ, նկարիչ, քանդակագործ, գերասան... Ինչո՞ւ ես զարմանում կամ վրդովւում: Գեղարւեստը զարգանում է քաղաքակրթութեան և յառաջադիմութեան հետ միասին, և չը կայ մի յառաջադէմ երկիր կամ քաղաք, ուր զարգացած չը լինի գեղարւեստը:

Մենք ոչ թէ գեղարւեստների ոչ մի տարրական ուսումնարան չ'ունինք, այլ նոյն խոկ մեր զպրոցներում այն նշանակութիւնն ունի նկարչութիւնը, ինչ որ ունի վայելագրութիւնը: Եթէ մի քանի դուրոցներում նկարչութիւնն էլ միւս առարկաների շարքունն է, զա՛ իմ կարծիքով՝ միմիսայն ձեի համար է: Մեր միջնակարգ ուսումնարաններում վաղուց նկարչութեան դասեր գոյութիւն ունին, բացց այնտեղից դուրս եկած բազմաթիւ աշակերտները ոչ թէ միայն նկարել չը գիտեն, այլ մինչև անգամ գաղափար չ'ունին նկարչութեան մասին, չը նայած, որ վկայականներում այդ առարկացից 4 կամ 5 ունին: Քանիցս անգամ առիթ եմ ունեցել լսելու մեր քաղաքակրթուած համարւող երիտասարդներից, թէ ինչպէս մի տեսակ ինքնաբաւականութեամբ պարծեցել են՝ „րօնի հիւշում“:

Ահա այս տեսակ հայեացք ունի մեր հասարակութիւնը գեղարւեստի վերաբերեալ: Թողնենք Կովկասեան բոլոր գաւառները և վերցնենք լուսաւորութեան ու յառաջադիմութեան կենդրոն Թիֆլիսը: Կրկնում եմ, վերցնենք Թիֆլիսը և գեղարւեստին վերաբերեալ մի թեթև ակնարկ զցենք, և դու խսկոյն կը համոզւես, որ մեր ժողովրդի ճաշակը այնքան կոսղիտ է, որ անընդունակ է որոշել գեղեցիկը տգեղից: Լուիր ինձ:

Յիշո՞ւմ ես երբ, մօտ եօթ տարի տրանից առաջ, քեզ հետ միասին բարձրացանք Թիֆլիսի Ոհեթղեհէմ հինաւուրց եկեղեցին և տաք տաք վիճում էինք հայկական ճարտարապետութեան մասին: Յիշո՞ւմ ես, ինչպէս, ի միջի այսոց նկատեցինք, որ «Ոհեթղեհէմը»

միակ հայոց եկեղեցին է Թիֆլիսում, որ ամբողջապէս կառուցւած է Ալգետի կապտագոյն գեղեցիկ նրբասաշ քարերից: Յիշո՞ւմ ես նոյնպէս պատերի վերացի արձանագրութիւնները և մի քանի մանր քանզակները, որոնք վկացում էին մեր նախնեաց օրինակելի սերը և ջերմեւանդութիւնը դէպի եկեղեցին: Եթէ այժմ դաս և տեսնես, անշուշտ կը հիասթափւես, որովհետեւ ցաւալի տեսարան կը ներկայանայ քո առաջ: Բոլոր նրբասաշ ամբապինդ քարերը, բոլոր քանդակները ու արձանագրութիւնները ծածկւած են թանձր սպիտակի իւղաներկի տակ: «Ճեթզեհկմը» այլ ևս իւր բարձրութիւնից այն վաղեմի վսեմ սպառութիւնը չի գործում: Այժմ նա դառել է թղթից շինած մի թեթև խաղալիք:

Այս տեսակ բազմաթիւ օրինակներից մինն էլ պատմեմ քեզ: Մեր հանգստարանները օրէց օր զարդարում են եւրոպական ձեռով թանկագին արձաններով թէ մարմարինից և թէ Ալգետի ու Քութայիսի գոյնզգոյն քարերից: Բայց մեր առաստածեռն պարոնները, իրանց հանգուցեալների համար ոչինչ չը խնայելու համար, չեն բաւականանում խեղճ քանիակագործի ճարուարութիւնով, որ անթիգարդեր է դուրս բերել կոպիտ քարի միջից: Մեծ մասամբ քանդակագործի արհեստանոցից դուրս բերելուն պէս՝ յանձնում են ներկարարներին, որոնք այս գեղարւեասական աշխատութիւնը անողորմաբար թաղում են իրանց փայլուն իւղաներկի տակ:

Մաի՞ր մեր արիստոկրատների սալօնները և կը տեսնես թանկագին կապերտների և ուրիշ կահ կարասիքի թւում օլէօգրաֆիական անձունի նկարներ, որոնք անշուշտ որ և է ամսագրի պրէմիաներ են: Եւ այս մի քանի կոպէկ արժէք ունեցող նկարները դրւած են թանկագին ոսկէզօծած շրջանակների մէջ: Այս իրողութիւնը պարզ բացարում է սալօնատէր պարոնի հասկացողութիւնն ու ճաշակը: Նա կախ է անում պատկերներ լոկ նորա համար, որ նոյնը տեսել է ուրիշի դահլիճում: Խոկ ինչ վերաբերում է շրջանակին, պէտք է ենթադրել, որ անձամբ գնացել է արհեստանոց, ընտրել է լաւ տեսակը և պատւիրել է:

Այս օրինակը մէջ բերեցի մի բան պարզելու համար, այն է, որ ասիական ժողովուրդը մի շինւածք, հիւսւածք, քանդակւած և այն գնահատելու համար գլխաւորապէս տեղեկանում է, թէ ի՞նչ

նիւթից է բաղկացած։ Նիւթը, որից կազմւած է առարկան, առաջին և գլխաւոր տեղն է բռնում նորա համար, իսկ արւեստն ու մարտարութիւնը, միաքն ու բովանդակութիւնը՝ երկրորդական։

Ես չեմ կարող մեղաղել, որ նա չի հասկանում թէ մի երաժշտական, նկարչական կամ քանդակագործ կան հեղինակութեան մէջ կարելի է կարգալ, ինչպէս դրքի մէջ մի ամբողջ բանաստեղծութիւն, մի ողբերգութիւն, մի կատակերգութիւն և այլն։

Բայց մեր ժողովուրբը շատ ընդունակ է առնեն բան շուտով հասկանալու և ըմբռնելու, բայց չ' որ նախ անհրաժեշտ է ցոյց տալ ու հասկացնել։

Ո՞վ մեզանից առիթ չէ ունեցել լսելու մեծ հմտութեամբ և զգացմունքներով լի նւազածութիւնը տեղական պարզ գործիքների վերաց, կամ ո՞վ մեզանից չի լսել մետաղական ազնիւ, հարուստ ձայնը զիւղական խնճոյքներում։ Վերջապէս ո՞վ մեզանից չի հանդիպել բնական երաժիշտների, նկարիչների կամ քանդակագործների։ Մեր հրաշալի բնութիւնը չի զլանում ատեղծելու գեղարւեստագիտներ, բայց մենք՝ անշնորհակալ զաւակներս մեր անհասկացողութեան շնորհիւ սրանց մեւցնում ենք։

Բայց գուշ չը կարծես, որ միմիայն մենք ենք այս տեսակ ցաւալի իրողութեան մասնաւծ։ Այժմեան ամեն մի յառաջադէմ և քաղաքակրթւած ժողովուրդ մի ժամանակ փորձել է այս բոլորը նոյն իսկ անմահ Խափայէլը, Լէօնարդօ-դավինչին և միւս հանճարները, որոնց վրձինի արտադրութիւնը այժմ միլիօնների հետ չեն փոխի, իրանց կենդանութեան ժամանակ, մօս չորս հարիւր տարի առաջ, հրաշքներ են դորձել զանազան տաճարների պատերի վերաց, չնչին վարձատրութեամբ։ Միենցն վիճակի մէջ են եղած հանճարեղ քանդակագործներ ու երաժիշտներ։ Բայց այժմ այն ամբոխը, որից նոքա դուրս են եկած, այնքան յառաջադիմութիւն է արել, որ օրէց օր բազմացնում է գեղարւեստների դպրոցները, գեղարւեստը զիստութեան հետ զուգընթաց տանելու նպատակով։ Նոքա քաջ համոզւած են, որ իսկական քաղաքակրթութիւնը միմիայն ուղեղ զարգացնելով չի ձեւք բերում, այլ անհրաժեշտ է նաև հոգու և զգացմունքների ներդաշնակ զարգացումը։ Եւրոպական բոլոր միջնակարգ և սոորին ուսումնաբաններում անհրաժեշտ առարկաց է նկար-

չուժիներ: Եւ այս բոլորը ոչ թէ այն մաքով է, որ իւրաքանչիւր աշակերտ նկարիչ դառնայ, այլ նրանց զգացմունքներն ու նաշակը զարդացնելու, նրբացնելու նպաստակով է:

Եթէ մենք ձգտում ենք եւրոպական ձեռվլ լուսաւորւելու, ուրեմն նախ հարկաւոր է այս ձգտումը կատարելութեան հասցնել:

Ուրեմն, սիրելի՝ լնկեր, յուսանք, որ ապագայում մեր ժողովուրդը նոյնպէս բազդ կ'ունենայ նոյն վիճակին հասնելու, իսկ առաջժմ դանկանք, որ եթէ ոչ գեղարւեստական դպրոցներ ունենանք, որոնց մասին մտածելլ ցնորք է, այլ մեր միջնակարգ դպրոցներում գիտակցօրէն աւանդուի նկարչութիւնը:

Այս անգամ խնդրեմ բաւականացի՞ր այսքանով, իսկ միւս անգամ լիովին կը պատասխանեմ քո բոլոր նամակներին:

Քո

Գ. Բ.

ԱՅՑ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(հայ տուրիստի յիշողութիւններից)

ԼԵՒՈՆ ՍԱՐԳԱՆԵԱՆՑԻ

IV.

ՏԱՄՆՈՒԹ ՕՐ ԿԱՅՐԻՆՈՒՄ

...Բնակեալ ի կեռնա խըրեանց
երբեւ ի թանձրամած խոսւարի
և ոգեքն արգելեալը ի մարմնի
երբեւ զիւնդանի ի զերեզմանի...

ԵՊ.ԻՇ.Լ:

(Եարունակութիւն¹⁾)

Հետեւեալ օրը Սանասարեան վարժարանից ուղարկւած էր կօշ-
կակար Էֆէնդին՝ «մի կերպիւ» ինձ հասկացնելու, որ այլ ես չ'այցե-
լեմ այդ ուսումնարանը... Աւելորդ աշխատանք. արդէն ես ինքս
այդաէս էի վճռել:

Տեսնելով որ բոլիս-էֆէնդիների աներեսութեան ոչ վերջ կայ և
ոչ սահման և իմ անցաթուղթս, չը նայած իրանց խոսոումներին և
իմ պահանջներին, չեն վերադարձնում՝ ես անձամբ գնացի ուսուաց
հիւպատոսարանը և բացատրեցի, թէ ինչո՞ւ այդպէս ուշ եմ կատա-
րում պարտականութիւնս: Հիւպատոսարանի կողքին տաճկական
պահականոցն է, որի մօտով անցնելիս՝ ինձ նկատեց Ալի Էֆէնդին և
երբ ես մտայ հիւպատոսարանը, նա երևի հասկացաւ բանը ին-
չումն է:

1) Տե՛ս «Մուբաք»-ի 4, 5, 7 և 9 համարները:

Ես արդէն վերապարձել էի և նստել ընթերցարանում, երբ յանկարծ դուռը բացւեց և ներս մտաւ թրի աղմկալի շառաչիւնով մի երկարահասակ տաճիկ պաշտօնեաց՝ «բաշ-բօլիսլո», որին հետեւում էր՝ խորամանկ ժայիտը հաստ կարմիր թշերին՝ իմ բարեկամ Ալին: Բաշ-բօլիսլը խրոխտ և կասկածու հայեացք ձղելով վրաս, անցաւ առաջիցս և նստեց մի քանի քայլ ինձնից հեռու: Խոլոր ներկայ գլուխողները յարգանքով ողջունեցին նորան: Յովհաննէս աղան իսկոյն վազեց նորա մօտ, պատուիրեց ծառային, որ տուրծ բերեն և մեծ ուշադրութեամբ ու պատուանքով սկսեց լսել բաշ-բօլիսի խօսքերը: Խօսակցութիւնը իմ մասին էր. բաշ-բօլիսլը պատուիրումէր, որ այսուհետեւ էլ նոր եկած հիւրերի գալ—գնալու մասին միշտ իմաց տայ Յովհաննէս աղան պօլիցիացին. գովից նորա ճշգութիւնը և յայտնեց իւր յոյսը, որ այսուհետեւ էլ նոյն կերպ կը վարւի: Այդ խօսակցութեան ժամանակ՝ Ալի էֆէնդին խորհրդաւոր ժայիտը երեսին մօտեցաւ ինձ և յանձնեց անցաթուղթս:

Երբ ես գնացի ուսասաց հիւպատոսարանը, ինձ յայտնեցին, որ Տաճկաստանում ճանապարհորդելու համար պէտք է և տաճկաց տեղական վարչութիւնից թուղթ ստանամ: Բայց ես դեռ շատ քիչ բան էի տիսել էրզրումում. և այն պայմանները, որ առեղծել էին ինձ համար Սանտասարեանները և պօլիցիան, աւելի դժւարացրել էին իմ գործը. ամենքը խորշումէին, փախչում ինձնից, իբրև «միւզիր»-ից (արգելած կառավարութիւնից): Գոնէ ազգացին դպրոցներն էլ է տեսնեմ, մտածեցի ես. և խրառած փորձից՝ վճռեցի նախ և առաջ ներկայանալ ո. առաջնորդին և թովուութիւն ինդրել:

Երեկոյեան ընթերցարանում ինձ ցոյց ուեցին առաջնորդարանի ծառայողներից մէկին: Ես տեղեկացայ նորանից թէ ե՞րբ է սըրբագանը ընդունում և ինդրեցի նախապէս իմացնել նորան, թէ վաղը կը գամ այցելութեան:

Միւս օր առաւտեան վերջացնելով թէախմութիւնս՝ ի հարկէ, ցերք երներիս ներկայութեամբ՝ իջայ որ գնամ առաջնորդարանը: Մուրագ էֆէնդին հետեւեց ինձ և երբ սանդուղքների գլխին ես կանգնեցի որ նա առաջ ընկնի, բօլիսլ նոյնպէս կանգնեց և ասաց.

— Ո՞ւր էք գնում, էֆէնդմ, ես ձեզ ճանապարհ կը զցեմ:

— Շնորհակալ եմ: նեղութիւն մի՛ բաշէք, ես ճանապարհը դէ-

պի առաջնորդարանը ճանաչում եմ. ասացի ես և գորս եկայ հիւրանոցից: Այն ժամանակ Մուրազը սկսեց հետեւել ինձ, պատկառելի հետաւորութիւն պահպանելով, և հասցրեց այգափէս ուղղակի մինչև առաջնորդարանի գուոր: Նա և Ալին պահում էին օրագիր (ժուրնալ) իմ բոլոր արածներիս:

Տարձրանալով ազօտ լուսաւորւած սանդուղքների զլուխը, ես տեսայ մի քանի դւներ, բայց ոչ մի մարդ: Աջ զրան ցետեից լրսւում էին ձայներ, ես բայց և տեսայ մի անեակում գեղին կոճակներով մի քանի ֆէսաւոր մարդիկ, որոնք ազմկալի ձայնով տաճիերէն էին խօսում: Այդ ժառաներից մինչ գնաց և յայտնեց առաջնորդին իմ մասին ու վերադառնալով, ներս հրաւիրեց նորա սենակը:

Մեծ լուսաւոր սենեակի մի ծայրում երկաթէ սօրան էր, իսկ հակառակ՝ զրասեղանը. պատերի բոլոր երկարութեամբ թափս էր, մութաքաներով ծածկած: Գրասեղանի մօտ տնկւած էր մի երկարավիզ երիտասարդ. նորա դէմ ու դէմ՝ թափտի վերայ, պատուհանի մօտ նստած էր առաջնորդը—Արխտակէս եալիսկոպոս Դերձակիեանը: Դա մի երկարահասակ նիշար ծերունի էր՝ զլիսին զրած ծածկասանի հայ հոգեւորականների սիրած շառաւիզանման ծալքերով, տափակ, կոնաձև զլիսարկը և հագած մորթիի ասուաւով հին վերարկուն: Սրբազանը գուլպաներով ծալապատիկ այնպէս էր նստած, որ մի ծունկը ծառացում էր նորան իբրև գրասեղան:

Իմ ողջոնս ընդունելով նա, առանց փոխելու իւր յարմար զիրքը, ինդրեց նստել իւր մօտ և պատերեց յոյն ծառային զայֆէ: Նա մի քանի րոպէ ևս պարապեց որպէս զի զործը վերջացնի, այսինքն՝ իւր ծնկի վերայ դարսած պաշտօնական թղթերը մի մի ձեռք քաշի և տայ զրասեղանի մօտ կանգնած երիտասարդին՝ ազգային վարչութեան քարտուղարին:

—Մեր կառավարութիւնից թուղթ՝ ունի՞ք աս կողմերս ճանապարհորդելու, զիմեց ինձ սրբազանը արձակելով քարտուղարին:

—Ոչ, ես ունիմ ուուսաց անցածուղթ, որը տեսել են և կնքել նախ՝ Դարսի տաճկական հիւպատոսը և յերայ՝ Զվինի Շաքսատունը. Կարին համելուց ել տեսել է այսուղի պօլիցիան:

— Կարեոր է մեր կառավարութենէն ալ թուղթ վերցնել. հիմիկ աստեղ կը պահանջեն: Ո՞րտեղից ձեր հրամանքը կուգաք:
— Երևան—Էջմիածին—Ղարսից:
— Ի՞նչպէս է Վեհափառը, ի՞նչպիսի զբութեան մէջ է Մայր-Աթոռը:
— Վեհափառը Թիֆլիս է գնացել Կալսեր ներկայանալու: Էջմիածնում ոչինչ նորութիւն չը կայ:

Արիստակէս եպիսկոպոս Դիրձակեանը պատկանում է իւր ուղղութեամբ Յարութիւն պատրիարքի խմբին. մոլեռանդ թրքասէր և Հակա-Ներսիսական ու հին աշխարհայեցողութեան աբեղաներ, որոնց մտաւոր մնունդը ժամադիրքն է աւել, իսկ դաստիարակութեան միջոցը՝ ծառացի կամ փոքրաւորի պաշտօնն է եղել մի որ և է վանականի մօտ:

Իւր կոյր թրքամոլութեամբ և մի քանի «սովորական» յասկութիւնների համար՝ նա անժողովրդական մի անձնաւորութիւն է և զարմանալի է, որ Կարնոյ առաջնորդական աթոռի սկս մի կարեոր պաշտօն նորան է յանձնաւած: Կարինը, գտնւելով Թիւրքիացի համարեա միակ փոքր իշատէ կարգին խճուղու վերայ, այնքան անջատւած չի լոյս աշխարհից, ինչպէս Վանը, Մուշը, Բաղէշը. ուստի գործելու աւելի յարմարութիւններ ունի: Կարնոյ առաջնորդութեան ենթակայ են 5 վիճակներ—Կեղի, Բասեան, Դերջան, Խընուս և Սպեր. ամենն էլ անխնամ, թափուր, անկարգ վիճակի մէջ. վանքերը քանդաւած ու կողովստւած, եկեղեցիները անշուք և տգէտ քահանաներով լիքը. զիւղերը գուրի ուսումնաբաններից. ժողովուրդը լքեալ, վհառած, անսկաշտպան:

Ժողովրդի սիրտը վշտացած էր նա մանաւանդ վերջերում պատահած մի քանի դէսքերի առթիւ. մի քանի հայ աղջիկներ, 14—15 տարեկան, բռնի կերպով կիսամութիւն են ընդունում: Դոցանից մինը որ բերւած է լինում Կարին, փախչում է տաճիկների մօտից առաջնորդարանը, առաջնորդի ոսքերն ընկնում, աղաչում, պաղաստում՝ ազատել իրան անօրէնների ճիրաններից: — «Կտոր կտոր արէ՛ք ինձ, բայց մի՛ յանձնէք տաճիկներին, աղերսում է խեղճ աղջիկը. բայց առաջնորդը կրկին կառավարութեան է յանձնում աղջկան, չուղենալով իրան մասին եղած կառավարութեան վատահութիւնը նսեմացնել, չընացելով, որ նոյն իսկ տաճկական օրէնքով անչափահասը չի կարող հաւատափոխութեան դիմել:

Էլ չեմ ասում մի քանի անմեղ տեղը բանարկւած հոգևորականներին ազատելու մասին։ Մի քահանայ, Պօլիս վերադառնալիս, խուզարկւում է և մօտը գտնուում Մայր-Արաքսի երդը տպագրւած։ բանարկւում, հարցաքննուում է քահանան և «զաւիտենական» աքսոր» ուղարկւում։ Յերթե զիւղի ծեր քահանայի մօտ իջևանում է մի ուռասահպատակ հայ։ Այդ զիւղի թիւրք աղաներից մէկը, որ անձնական թշնամութիւն է ունենում քահանայի հետ, գնում է ամբասանում կառավարութեան առաջ ծերունուն, ասելով՝ թէ քահանայի մօտ այդ ուռասահպատակը ժողովել էր իւր շուրջը զիւղացիներին և զրգուում նրանց տէրութեան զէմ։ Գիւղացիներից մօտ 40 հոգի իրանց ծեր քահանայի հետ բերուում են կարին և լքցընւում բանով։ Մի քանի ամիս տեսում է նրանց չարչարանքը. քահանան մերձամահ հիւանդանում է այդտեղ և երբ զիւղ են հասցնում, մեռնում է։ Այս և նման գէպքերում դեռ գուցէ մի քանիները արգարացնեն առաջնորդի անտարբերութիւնը, բայց հազիւ նոյնը կ'ասեն վերև բերած օրինակում, ուր խնդիրը մինչև անդամ կրօնական է։

Թողլաւութիւն ստանալով այցելել ազգային դպրոցները, ես հեռացայ սրբազնի մօտից։ Նախասենեակում ինձ շըջապատեցին ծառաները, որոնք վիճում էին իրար հետ մի հարցի մասին։

—Ահա՛ էֆէնդին կ'ասի, զիմեց տաճկերէն նրանցից մէկը ինձ։ Ես ասում եմ, որ հացոց կաթուզիկոսը զնացել է տեսնելու մեր սուլթանի հետ Ստամբոլ, իսկ ահա սա վիճում է ինձ հետ, թէ Թիֆլիս է գնացել ոռուսաց թագաւորին տեսնելու...։

Յոյն ծառան լսել էր մեր խօսակցութիւնը և պատմել միւսներին, բայց խեղձերի գլխում քաղաքական—աշխարհագրական տեղեկութիւնները շատ մուգն էին...։

Սանդուղքների զլիվին ինձ ազատում էր սիրալիր ժայիտը երևին քարտուղար էֆ., որը յայտնեց իւր «բերկրանքը», որ պատիւ ունի ծանօթանալինձ ապէս...։ Հետ և այն, և այն. մի խօսքով՝ այնքան սիրալիրութիւն ցոյց տէց խօսքերով, որ ես զեռ կարինում ոչ ոքից չեի տեսնել. տեղը յարմար էր և...թաքուն...։ Իսկ յետոյ միւսնոյն պարոնը, ինձ տեսնելիս, երեսը շուռ. էր տալիս և ցոյց տալիս իրան-բոլորովին անծանօթ։

Առաջնորդարանից, մի առանձին մուտքով, առանց կրկին գուրս զալու փողոցը, ուղղակի մոտաց բակը, ուր Կարինի մայր վարժարանն էր: Վարժարանի մուտքին շարւած էին աշակերտների կօշիկները և հողաթափները: Լայն բացւած դուռը ուղղակի բակից տանում էր վարժարանի բաւական մեծ նախասենեակը, որից զանազան դռներ էին շինած դէպի առանձին դասասուները: Դրան մօտ կանգնած «տնտեսը» (Ժառան) իմաց տւեց տեսչին, որը ընդունեց ինձ և տարաւ ուսուցչանոց: Պ. տեսուչը ծանօթացրեց սենեակում գտնող վարժապետների հետ: Այնքան խեղճ, ողորմելի էին այդ ձեռները ծալած, հլութեան կնիքը երեսներին և աղքատ հագնւած մարդիկ, որ մարդ դժւարանում էր հաւասար, թէ դոքա վարժապետներ են:

Կարնոց ազգային մայր վարժարանի ուսուցչական խումբը բաղկացած էր 12 մարդկանցից: Տեսուչը՝ պ. Եղիշէ Դուրսունեան, որ Վենետիկի Մխիթարեանների մօտ էր ուսած և ս. Մ. եպ. Օրմանեանի հետ միասին Հայաստանեաց եկեղեցու զիրկը վերադարձած ու կրկին աշխարհական դարձած, մի համակրելի անձնաւորութիւն էր. բացի տեսչութիւնից, նա դասառու էր Գրանսերէն լեզուի և ընդհանուր պատմութեան: Պ. տեսուչը ստանումէ ամենամեծ ո.ոճիկը, այսինքն՝ 500 զուրուշ ամսական (մօտ 45 բուրլի). բացի տեսչից և մանկավարժ պ. Վ. Փ.-ից, որ զուրս է եկել Եջմիածնի ձեմարանի 4-րդ դասարանից և համարւում է, և իրաւացի, Կարնոց ազգային վարժարանի ամենալաւ ուսուցիչը՝ մնացեալ բոլորը աւարտել են իրանց ուսումը կամ նոյն ուսումնարանում կամ Մշոյ ս. Կարապետի վանքում: Ուսուցիչների ո.ոճիկը 50 զուրուշ ամսականից (4 ր. 50 կ.) հասնում է 450 զուրուշ (36 բուրլի). բացց այդ «պատկառելի» գումարը միայն ստանում է արժանաւորագոյնը «Ուսումնական Խորհրդի» (Համեմատի՛ր մեր «Հոգաբարձութեան» հետ) աչքում: Այդ բաղդը ունի հայկաբան Պ. պատելին, որ իւր ուսումը աւարտել է ս. Կարապետի վանքում և իւր հլու, համբ ու բարեպաշտ բարքով ու խոնարհ գլուխ տալով խորհրդականներին, համարւումէն բանց աչքում վարժապետի մի կատարելատիկ. իսկ ընդհանրապէս՝ ամսական 50, 100, 120, 150 զուրուշն է համարւում վարժապետի վարձը: Որքան և սակաւ լինի Թիւրքիայում փողը և արժան ապրուսուը, այնու ամենայնիւ՝ 5 կամ 10, 16 բուրլիով անհնարին է ապրել և ընտանիք սկահել, այն էլ Կա-

րինում, ուր համարեա կէս տարի սաստիկ ձմեռ է լինում, և վառելիքը թանգ: Ել ո՞ր միջոց ունեցող մարդը 5—10 րուբլիով ուսուցչութիւն կ'անի: Եւ ճարահատեալ այդ խեղճերը, իրանց ընտանիքը պահելու համար, ապրում են սաստիկ զրկանքներ կրելով, իսկ նրանց կանաչք լւացարարութեամբ են աշխատում մի քանի զուրուշ ևս, որպէս զի մի կերպ քաղցածութիւնից և ցրտից ազատեն իրանց մանուկներին:

Կարնոյ ազգային մայր վարժարանը ունի հետեւեալ բազմազան բաժանմունքները. մանկանոց, ծաղկոց, առաջին, երկրորդ և երրորդ ընտելարան, առաջին և երկրորդ նախակրթարան և մի կրթարան: Աեց տարեկանից ընդունում է երեխան և պատանեկան հասակում աւարտում: Նրանք սովորում են կրօն, հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն, թւարանութիւն, հայրենագիտութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն և ընդհանուր պատմութիւն. իսկ թէ ի՞նչպէս են անցնում՝ այդ մասին մեծ պահանջներ չի կարելի անել ի նկատի առնելով, թէ ուսուցիչների պատրաստութիւնը և թէ կարգին դասագրքերի և նպաստների բացակայութիւնը. միակ դասագիրքը պ. Տէր-Ղևոնդեանի «Մայրենի և զունակ է տաճկահայոց բարբառի վերածած»: Սանասարեանք ոչինչ օգնութիւն չեն հասցնում այդ ուսումնարանին ոչ խորհրդով, ոչ դործով:

Աշակերտներից ամենահարուստները տալիս են մի ոսկի տարեկան: Մայր վարժարանում սովորող աշակերտների թիւը 425 էր. համարեա բոլորը արհեստաւորների և աղքատ ծնողների գաւակներ: Բաւականին լոյս, ընդարձակ դասատուններում, կանոնաւոր նատարանների վերաց նատած էին աշակերտներ, որոնցից շատերը ցնցուիներով էին ծածկւած, իսկ ընդհանրապէս բոլորն էլ առանց կօշիկների և միմիան գուլպաներով: Յատակի մաքրութիւնը երեխանների առողջութիւնից վեր դասելով, Ուսումնական Խորհրդի ազգասէր է Փէնդիները կարգադրել էին (Նրանք ուսումնարաննական ամեն գործի մէջ խառնում են), որ աշակերտները իրանց կօշիկները հանեն ուսումնարանի դրան շէմին:

Նոյն դաւթում, առաջնորդարանի տակ դանւած սենեակներում՝ եթէ կարելի է այդ խոնաւ, ցուրտ, մուժ, կեղտոտ և փոքրիկ նկուղներին ացդափսի անուն տալ՝ գտնւում են նաև մօտ 200 խեղճ մասուկներ՝ մի քանի ողորմելի վարժապետների հսկողութեան տակ:

Տեղ չը լինելու պատճառով, արել են այդ երեխաներին այդ հորժատունները և ոչ զասատունները, իսկ ազգային շինութիւնը Սանասարեան վարժարանի մի մասն է այժմ կազմում:

Թաղային խորհուրդը ուզումէ եղել յետ առնել Սանասարեան տեսչութիւնից իւր այդ շինութիւնը, բայց մի քանի ազդեցիկ ազգայիններ, որոնց որդիք Սանասարեան վարժարանում են ուսանում, զօրծին ուրիշ ձեւ ուինս Այն ժամանակ Մարեան Դէորդ անունով մի վաճառական յարնեց առաջնորդին իւր պատրաստականութիւնը՝ կառուցանել մի թաղական վարժարան իւր ծախքով: Դէտք էր «գրաւոր զբկել իւր փափաղը» ազգային քաղաքական ժողովին, որը կը կարդայ բարերարի նպատակը և կը սկսի խորախորհուրդ կերպով մտածել, թէ ո՞ւր պէտք է բանալ թաղային վարժարանը և, երկար չը կարողանալով այդ ծանր խնդիրը լուծել, մոռացութեան կը տայ նորան: Դէորդ աղօ Մարեանը կրկին զիմում է ժողովին և խնդրում, որքան կարելի է շուտ տալ իրանց որոշումը, որպէս զի քանի ողջ է զպրոցի բացւիլն տեսնէ. (բարերարը ծեր և հիւանդ մարդ է): Վերջապէս յաջողումէ բարերարին գնել ուսումնարանի համար մի տուն 600 ոսկով, ուր պիտի տեղափոխաւեին այդ նկուզների մէջ թափւած երեխաները:

Կարինում կայ և մի մասնաւոր մարդու գպրոց, որ կուսակցական ոգու ծնունդ է, և Ազարեան թաղային վարժարանը, բայց դրանց անձամբ չը տեսայ: Առաջինը մօտ 150 աշակերտ ունի, իսկ երկրորդը 120: Այս թաղական վարժարանից աւարտածները մտնում են մայր վարժարանի երրորդ «լնուելարանը»:

Աղքային աղջկանց վարժարանների հետ էլ ցանկանալով ծանօթանալ, ես խնդրեցի մի պարոնից, որ ինձ ցոյց տայ ճանապարհը: Մեծ գծւարութեամբ նա համաձայնեց. այն էլ ուղիղ ճանապարհով վախենալով ինձ տանել, ընտրեց ծուռ ու մուռ, խուլ փողոցներ, որպէս զի չը նկատեն թէ ինքը ինձ հետ ման է գալիս:

Աղջկերանց վարժարանը մի երկարկանի քարեայ հասարակ շինութիւն է, ընդարձակ սենեակներով: Բարձրանալով երկրորդ յարկը, ուղղակի մոտանք դաշլիճը, որի տախտակամած՝ յատակին նառած էին գուլպաներով մի խումբ աղջիկներ մի վարժուհու հակոզութեան տակ, և ձեռաղործութեամբ էին պարապում: աեղ չը կար զասատնում

զրանց համար: Իմ առաջնորդս ինձ տարաւ ուսումնարանի տեսչի մօտ, որին կոչում էին պատւելի: Դա մի երկարահասակ ծեր մարդ էր՝ ծոււած մշջքով և ծանր լսողութեամբ: Հազին ունէր աւ երկար խալաթ: Նա նատած էր սեղանի մօտ մի ուրիշ նիհար և աւելի ջահէլ մարդու հետ միասին, որ նոյնպէս երկան բայց գոյնդզոն խալաթ էր հագած, մշջքին հասո զօտի կապած, զլսին զրած փէս շուրջը ահազին փաթթոյ և սուր քթին՝ ակնոցներ: Առաջի պատւելին հայերէնի, իսկ երկրորդը՝ կրօնի ուսուցիչներն էին:

Վարժուհիք նոյն ուսումնարանում են աւարած իրանց ուսումը. ողորմելի՛ պատրաստութիւն: Թրել, կարգալ, թւել և ձեռագործ. — ահա՛ ինչ են սովորում աշակերտուհիները, որոնց թիւը մօտ 400 էր:

Կարինի ազգային վարժարանները համեմատած Թիւրքաց-Հայաստանի ուրիշ ազգային վարժարանների հետ, գեռ փառք են: Միացեալ Շնկերութեան դպրոցներն էլ գեղեցիկ բացառութիւն չեն կազմում, և զարմանալու էլ չէ. պօլսեցիք նոյն իսկ իրանց համար կարգին վարժապետներ չ'ունին, Հայաստան ուղարկածները ինչ կը լինին: Ամբողջ Թիւրքիայում հայերը չ'ունին մի վարժապետանոց. տէրութեան ուսումնարաններն էլ զեռ իրանք կարօտութիւն ունին կարգ ու կանոնի, և զեռ հայոց ուսումնարանները նրանց համար իրբե օրինակ կարող են ծառացել. ուրեմն ո՞րտեղից սպասել, որ Թիւրքաց-Հայաստանի թշւառ ուսումնարաններում ուրիշ վարժուհիք կամ ուսուցիչներ լինին, բայցի եղածներից: Յոյս կարելի էր ունենալ կամ Սահասարեան վարժարանի վերաց կամ Տրավիզոնի ազգային ուսումնարանի. առաջինը միջոց ունի և մարդիկ, բայց ինչ որ սպակասում է... իսկ երկրորդը միջոց չ'ունի, բայց կարող էր վարժապետանոցի գաղափարը իրադորձել՝ մօտիկ լինելով ուսումնահայերին, որոնք և՛ ուսումնարաննական դործում թիւրքահայերի համար կատարեալ եւրոպացիք են: Եթէ Թիւրքաց-Հայաստանի ուսումնարաններում վերջին ժամանակներս նկատումէ փոփոխութիւն արտաքինում և փոքր իշատէ թարմութիւն ու կանոնաւորութիւն զասաւանդութեան մէջ՝ այդ համարեա բացառապէս պէտք է վերագրել սուսահայոց դպրոցներից ընկած ճառագայթներին: Թիւրքաց-Հայաստանում՝ սուսահայոց դպրոցներից կիսաւարոր աւելի յարդանք ունի, քան Պօլսից եկած քաղ-

մահմուտ ալաֆրանկաները։ Քանի որ ներկայ սպայմաններում ոչ
Պօլում, ոչ Տրապիզոնում և ոչ Երզրումում վարժապետանոց կաց,
ալէտք էր աշխատել Էջմիածնի ճեմարանում և Ներսիսեան գպրա-
նոցում Թիւրքաց-Հայաստանի զանազան կողմերից բազմաթիւ որդե-
գիրներ լնողունելի Անհիմն է, թէ այդ ուսումնաւարտները չեն վե-
րապառնալ հայրենիք։

* * *

Մի երկու օրից չետոց և այցելեցի և ամերիկացի միսիօնար-
ների գպրոցը բողոքական հայերի համար։

Հայ-բողոքականների գպրոցը, ժողովարանը և միսիօնարների
բնակարանը գտնուում են Կարինի ամենաամեծ փողոցի վերաց, ուր և
զանազան հիւպատոսարաններն են զետեղւած։

Փոքրիկ ժողովարաննեն կից շինուածէ մի մեծ, երկարկանի, փա-
ռահեղ՝ Կարինի համար ի հարկէ քարեաց շինութիւն, որի ներ-
քին յարկում գտնուում է Երզրումի միակ գրավաճառանոցը, ուր բա-
ցի միսիօնարների հրատարակած աստուածաշնչերից, աւետարան-
ներից և զասագրքերից աւելի ոչինչ չը կայ։ Նոյն յարկում է զե-
տեղւած և մի բողոքական հայ հիւսնի արհետանոցը։

Գեղեցիկ մեծ զաները ուղղակի փողոցից տանում են այդ շի-
նութեան ներսը, ուր երկու սենեակում ուսումնարանն է զետեղւած։

Ներքեւի յարկի մի մեծ, լուսուոր, սպիտակ պատերով և մաքուր
տախտականածով սենեակում մանկական պարտէղն էր։ Սենեակի
ձականին մեծ տասերսվ գրւած էր մի ինչ որ նախազառութիւն ա-
ւետարանից, իսկ մեջտեղում «ո» տառի ձևով նեղ երկան սեղան
էր, որի շուրջը նստած էին երկու սեռի փոքրիկ, 4—7 տարեկան, մա-
նուկներ, որոնց հետ պարապում էր պարզ մաքուր հաղնւած մի
հայ օրիորդ, որ ինձ ընդունեց և խնդրեց նստել։ Այդ ուաձեւ սեղանի
սկզբում զրւած էր մի փոքրիկ դաշնամուր, որի առջև՝ ուրեմն այդ-
պիսով տասյւած քառանկիւնի մէջ՝ նստած էր ինքը վարժուհին՝
անզլիսական մի նոր մանկավարժական զիրք ձեռքումը բռնած և բարձր
ձայնով հայերէն զանազան վարժութիւններ անում մանուկների հետ։
Այդ սեղանից աջ զրւած էր մի աւելի փոքր սեղան, որի շուրջը,

առանձին, նստել էին շատ փոքրիկները՝ 3—4 տարեկան երեխաներ՝ և մի մեծ աղջկաց հսկողութեան տակ լուս խաղում էին. իրանց առջև դրած մանր գնդակները շարում էին թելի վերաց և օղակներից զանազան ձևեր շինում և այլն:

Վարժուհին պարապում էր աւելի մեծերի՝ 4—7 տարեկան մասուկների հետ: ո-ածե սեղանի երեսը բաժանւած էր շախմատի տախտակի նման քառանկիւնների: Վարժուհին պատկրեց երեխաներից մէկին մօտենալ իրան և վերցնելիրանից արկղիկները ու բաժանել երեխաններին: Երեխան կատարեց այդ բոլորը մեծ կարգապահութեամբ: Մասուկներից իւրաքանչիւրը զրեց իւր առջև ստացած արկղիկը և սպասում էր վարժուհու հրամանին: Երբ բոլորին բաժանելով փոքրիկ աղջկեր նստեց իւր տեղումը, վարժուհին պատշիրեց բանալ և շուռ տալ արկղիկը: Երեխանները կատարեցին բոլորը միաժամանակ և իւրաքանչիւրի առջև գարսւեցին զանազան մեծութեան տախտակեաց աղիւսներ: Վարժուհու հրամանին լսելով թէ այս ինչ գծի վերաց զրեցէք մի աղիւս, նորանից աջ, նորանից ձախ, վրան և այն՝ երեխանները շինեցին մի ծխնելոյզ: Երբ վերջացը ին, վարժուհին հարցրեց—ձեր շինածը ի՞նչ է. և բոլորը միասին պատասխանեցին՝ «Ճինելոյզ»: Յետոց հրամայեց կարգով գարսել և կարգով գնել արկղիկի մէջ ու կողպել, և կրկին բաժանողը հաւաքեց արկղիկները: Այս բոլորը կատարում էր մեծ զիսցիսլինայով: Վարժուհին նոյն աղջկաց միջոցով բաժանեց երեխաններին պողապատեաց մեծ և փոքր օղակներ, որոնցից կրկին վարժուհու հրամանի համեմատ իւրաքանչիւր երեխան գնելով այս կամ այն գծի վերաց մեծ կամ փոքր օղակը՝ զանազան ձևեր էր ստանում: Այդ վարժութիւնները ընտելացնում էին երեխաններին կարգ ու կանոնի, աջ, ձախ, վերև, ներքեւ որոշելու և սկզբնական թւերին: Երեխանները հաճութեամբ էին ամենը կատարում:

Երբ այդ էլ վերջացաւ, վարժուհին նոյն ձևով մանուկներին բաժանեց բրդեաց գոյնզգոյն գնդակներ: Երեխանները հետևելով վարժուհուն, որը նոյնպէս ձեռքին ունէր մի գնդակ կարճ թելից կախած, միսեցին ճօճելով գնդակը ներդաշնակ երգել, նախ հայերէն, յետոց անգլիերէն, մի պարզ երգ գնդակի մասին, որի մէջ երդող բովանդակութիւնը և՛ ահմանում էին և՛ կատարում իրանք:

Ժողովելով գնդակները, վարժուհին կրկին նստեց իւր տեղում, առաւ ձեռքը համբիչը և սկսեց մի մի ձգել, իսկ երեխաները բոլորը միասին թւել 1, 2, 3, 4 մինչև 100, նախ հայերէն, յետոյ անզլիերէն ու տաճկերէն:

Այդ սիրուն, մաքուր, զւարթ երեխաներից միայն 7 էին բողոքական հայ ծնողների զաւակներ, միւսները՝ 30 հոգի՝ հայ-լուսաւորչականների որդիք էին:

Առհասարակ այդ մանկական պարտէզը լաւ տպաւորութիւն արեց. միայն անախորժ էր մանուկների մէջ արդէն ցանւող անդիմանութիւնը և սէրը դէսի Հիւսիսային Ամերիկան, որի քարտէզը բողոքականների զպրոցում առևէն մի զասատան մէջ անհրաժեշտութիւն է, ինչպէս և աւետարանից բերած մի որ և է նախադասութիւն պատի վերաց: Հիւս. Ամերիկան հայրենիք է համարւում հայ բողոքականների համար: Գոնէ այսպէս են ցանկանում միստիօնարները:

Բարձրանալով երկրորդ յարկը, մեծ շքեղ սենեակներից միայն մէկում տեսալ զասատուն. միւսները լիքն էին խոտով և իրար վերաց թափւած կահ կարասիքով: Ուտուցիչը մի ֆէստոր երիտասարդ բողոքական հայ էր անզլիացու արտաքին ձեւերով: Դասատան մէջ նըստած էին 28 հայ-բողոքական աշակերտներ՝ սկսած 9 տարեկանից մինչև 18 տարեկան հասակը: Առաջի կարգի նստարանների վերաց նստած էին մէծերը, որոնցից չորսը կանգնել էին պատից կախ երկու գրատախտակների մօս և չորսն էլ մի և նոյն ալգերական խնդիրն էին լուծում, լատիներէն նշանագրերի տեղ հայերէնը գործածելով: Յետեկ կարգում նստած փոքր աշակերտները պատկանելով ուրիշ բաժանմունքին, իրանց գործով էին զբաղւած կամ անզործ էին: Այդ ուտուցիչը և մի ուրիշը զասախոսում էին ահա ի՞նչ առարկաներից. Սուրբ Գիրք, հայերէն, տաճկերէն, Փրանսերէն, անզլիերէն, ալգերաց երաժշտութիւն, ընդհանուր պատմութիւն, քաղաքական աշխարհագրութիւն՝ զլիսաւորապէս Հիւսիսային Ամերիկա: Բայց ո՛քան ողորմելի էին աշակերտների պատասխանները. զարմանալի՛ խառնաշբաժութիւն ու քառ էր աիրում նրանց զլիսում և առհասարակ ողորմելի էր միստիօնարների այդ միջնակարդ ուսումնարանը Կարինում. նա մինչեւ անզամ ստոր էր ազգացին վարժարանից. ահազին

փառաշխեղ շինութիւն, մեծ նիւթական միջոցներ և ազգայիսի ուղնութիւնն... Ես մեծ կարծիք ունեի բողոքականների վարժարանների մասին և մանկական պարտէզը յայտնի չափով այդ արդարացնում էր, բայց բուն վարժարանները՝ թէ տղայց և թէ աղջկանց՝ ո՞րքան ողորմելի էին: Այդ ուսումնարաններում իշխում է մի շատ անհամակրիլի ուղղութիւն—բողոքական աշակերտաների մեջ զարդացնել առելութիւն գէպի լուսաւորչականները, անտարբերութիւն գէպի ամենը, ինչ որ հայկական է և ձգում գէպի անգլիականը, գէպի բողոքականների Քանանացոց երկիրը՝ Հիւսիսացին Ամերիկան, որը սովորում են այդ «բողոքական քրիստոնեանները», ինչպէս սովոր են իրանց անուաննել բողոքական-հայերը, համարել իրանց հայրենիք: Այդ մոլութիւնը այնքան խոր արմատ է ձգում բողոքական հայերի մէջ, որ օրէցօր աւելանում է ցանկացողների թիւը զաղթել Ամերիկա: և այս գէպում անսեռական նեղ ստիպողական դրութեան միանում է և կատարեալ սաւնութիւն գէպի պատմական հայրենիքը:

Բողոքականների մէջ, ի հարկէ, կան այնպիսինները, մանաւանդ երիտասարդութիւնից, որնք բողոքական լինելով հանդերձ չեն մոռանում իրանց հայ լինելը. բայց այդպիսիններին չեն սիրում բողոքական-քրիստոնեանները Այդ գեղեցիկ սակաւաթիւ բացառութիւններից էր այս դպրոցի նախկին երիտասարդ ուսուցիչը՝ Աբրահամ Սեքլեմեանը, որ այժմ նատած է Կարինի բանտում: Նորա մեղքը ծիծաղելի էլ է պատմել. աշակերտաներից մէկը՝ 16 տարեկան Սլաք բատը՝ մի հայրենասիրական ոտանաւոր է ունենում զրած: Արձակուրդներին է թէ երբ, չեմ յիշում, այդ տղան զնում է, նրգնկայ՝ ծնողների մօտ: Աստիկանութիւնը, ինչպէս վերջին ժամանակներս սովորական երևոյթ է գառել Թիւրքիացում, խուզարկում է պատանութիւնները, որոնց մէջ գանում է վերոցիշեալ ոտանաւորը: Տղային կալանաւորում են ու հարցաքննում և իմանում, որ ոտանաւորը ուսուցիչը ուղղած է եղել: Խսկոյն հետազրում են Կարին՝ կալանաւորել Սեքլեմեանին: Ուսուցիչը հասկացնում է, որ տղայի ոտանաւորին նա նշանակութիւն չի տւել, իբրև երեխացական մի խակ գրւածի, և ուղղել է միացն չը կոտրելու համար աշակերտի սիրուլ: Այնքան հաւատացած է եղել Սեքլեմեանը իւր անմեղութեան մէջ, որ, թէև միջոց ուներ փախչել Տաճկաստանից մինչև դատաստանի տակ

լնկնելը, բայց այնու ամենայնիւ մնացել էր, անհաւատալի համարելով, որ իրան մի այդպիսի նույն գործի համար ծանր պատիժ համար, և սխալեցաւ. մի քանի ամիս բանտարկութիւնից յետոց տաճկական «արդար գատաստանը» վճռեց նորան «ուղարկել յաւիտենական աքտոր»: Իսկ 16 տարեկան Ամբատին շղթայակապ, իբրև զարհութելի մի աւագակ կամ ծանր քաղաքական յանցաւոր, տարան քաղաքից քաղաք, մի վատասողջ բանտից միւսը, մինչւ որ խեղճը՝ չը դիմոնայով այլ ևս՝ հիւանդացաւ և մեռաւ:

Ես տեղեկացաց վարժապետից, որ ժողովարանի գաւթումն էլ կայ մի ուսումնաբան, ուր իրեխաները պատրաստում են այս, աւելի բարձր, զատաստան համար: Նա զրեց աշակերտներից մէկին ինձ հետ, որ ցոյց տայ ճանապարհը:

Անցնելով ժողովարանի բակի զանազան ծակու ծովկերով, հասանք մի սենեակ, որտեղ դիմաւորեց ինձ մի բողոքական հայ կին քանոնը ձեռքին. գա վարժուհին էր: Աղօս լուսաւորւած սենեակի պատուերից մէկին կամած էր նոյնալիս մի ինչ որ նախադասութիւն Սուրբ Գրքից և Հիւսաւային Ամերիկացի քարտէզը Երեք պատուերին, յատակից կամած տախամակեաց նեղ թափաների վերայ ծալալատիկ նասուաել էին աղջիկներ ու տղաներ՝ իւրաքանչիւրը իւր տանից բերած շրի կտորը ձգած իւր տակ: Երեխաների համար իբրև սեղան իրանց ծունկերն էին ծառայում:

Անդհանուր պարապմունք ասածը չը կար. վարժուհին իւրաքանչիւրի հետ առանձին բան էր անցնում: Ամերիկացի միսախոնարներին շատ քիչ է հետաքրքրում ուսումնաբանների յառաջդիմութիւնը կամ բարեկարգութիւնը. նոքա տեզացի հայ բողոքականներից դուրս եկած վարժապետներին կամ վարժուհիներին են յանձնում ուսումնարաններին բոլոր ծանրութիւնը, հարստահարելով նրանց աշխատութիւնը, իսկ իրանք, միսախոնարները, ստանալով ահազին ոռոճիկ և վարելով վարթամ կեանք՝ միայն ժամանակ առ ժամանակ Ամերիկաց, իրանց ընկերութեան, հասցնում են վիճակագրական տեղեկութիւններ, ուր ցոյց են տալիս՝ թէ ո՞րպիսի հսկացական քայլերով է յառաջ զնում Հայաստանում պրօպագանդան և լուսաւորութիւնը:

Սենեակում քառասունի չափ երեխաց կային 6—9 տարեկանն Այս տեղ աւարտած տղաները մտնում են բողոքականների մեր արդէն տեսած

գպրոցը, իսկ աղջիկները՝ աղջկանց ուսումնարանը, ուր կը գնանք հիմա։ Զարմանալի է, որ ունենալով այնպիսի ահազին փառահեղ, համարեա զատարկ շինութիւն, զատառունները առանձին առանձին տներում են ցրւած։

Ժողովարանի գառթից զուրս եկաց իմ փոքրիկ ուղեցոցիս հետ և խնդրեցի տանել բողոքականների աղջկանց ուսումնարանը, որ փողոցի հակառակ կողմում էր, մի երկյարկանի շինութեան մէջ։

Դասաւնում զրած էին կանոնաւոր նստարաններ, պատին կպցրած սուրբ նշանաբանը և Հիւսիսային Ամերիկայի քարտեզը։ Դասաւոան մէջ մօտ 12 մէծ մէծ աղջիկներ կային։ Սեղաններից մի քանիսը զատարկ էին, որովհետեւ աշակերտներից կէսի հետ միւս սենեակում երկու փարժուհիներից մինչը հիմա անգլիերէն էր պարապում, իսկ ուր մէնք մտանք՝ ալդեբրացի զաս էր։ Պատից կախած երկացն գրատախառի առաջ կանգնած էին Յ օրիորդներ, աղքատ ու անկարգ հագնեւած, և բոլորն էլ միաժամանակ լուծում էին մի և նոյն աղջեբրական խնդիրը։ Վարժուհին գիրքը ձեռքին թելադրում էր. աշակերտուհիներից մէկը խնդիրը լուծում էր բարձր ձայնով, միւսը գրում էր, կրկն ջնջում, երրորդը աչքի տակից նայում էր իւր կողքին կանգնողի գրածի վերաց, իսկ միւսները ինչ որ խզբզում էին. մի խօսքով՝ կատարեալ քառ էր և ոչ գասաւանդութիւն, մէկը վարժուհու թելադրութեամբ լուծում էր խնդիրը, իսկ միւսները չը լուծած և չը հասկացած ջնջում էին իրանց գրածները. կրկն նորն էր թելադրում և լուծում նոյն խառնափնծոր եղանակով։ Նրանց տեղերում նստած աշակերտուհիներից մի քանիսը աշխարհազրութեամբ էին պարապում, միւսները բոլորովին այլ գործով։

Ես զարմացած էի մնացել։ Դասաւունը մտաւ վարժուներից միւսը, բարեկեց և սկսեց բարձր ձայնով ինձ հետ խօսել, թէկ մի և նոյն ժամանակ նորա ընկերուհին անընդհատ շարունակում էր իւր ալդեբրական հմտութիւնները ցոյց տալ։

Երկուսն էլ հայուհիք էին՝ Խարբերդի և Արաբկերի միսսիոնարական կոլեջներից։

— Ի՞նչ առարկաներ էք անցնում, հարցրի ես ինձ հետ խօսողից։

— Սուրբ Գիրք, անգլիերէն, տաճկերէն, հայերէն, զաղղիերէն, ալդեբրա, երկրաչափութիւն... .

— Իսկ հայոց պատմութիւն և Հայաստանի աշխարհագրութիւն:

Տեսնելով, որ զժւարանում է պատասխանել Հարցիս՝ աւելացրի.

— Իսկ ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն անցնո՞ւմ էք:

Վարժուհին չեր հասկանում թէ ի՞նչ է նշանակում «ընդհանուր պատմութիւն»...

— Այո՛, մի-մի կը կարդամ նրանց հետ գրքեր, ուր հռովմաեցոց մասին ալ բաներ կան...

Այդ վարժուհիները շատ ողորմելի էին իրանց զարգացմամբ և աշխարհայնցողութեան նեղութեամբ։ Կարելի էր խղճալ այն աղջկերանց, որոնց գլուխը մտցնում էին խառն ի խուռն ամեն բան, բաց ոչ այն գիտելիքները, որ հարկաւոր են նրանց կեանքի համար և ոչինչ զարդացում չին տալիս։

Աշակերտուհիներից լուսաւորչականներ համարեա չը կային։ Առհասարակ միստինարները իրանց գալրոցներում միմիայն ստոր դաստիներում և մանկական պարտէղներում են ընդունում մեծ պատրաստականութեամբ հայ լուսաւորչական երեխաններ, յուսալով նոցա մանուկ խելքերում ցանել իրանց սերմերը և այգպիսով կրօնափոխութեան պատրաստել։ — բայց աւելի բարձր գալրոցներում՝ կոլեջներում՝ ընդունում են արդէն նրանց, որոնք ենթարկում են կրօնական պրօպագանդացին։

Աշակերտուհիների թւում կար մի բողոքական ոռւսահայ ծնողների աղջիկ, Եջմիածնի պատերի տակ գտնւող Սամազար հայ բողոքականների գիւղից... Կրօնափոխութիւնը մեր կրօնական կենդրոնի շրջակայքից է սկսել... Մինչդեռ մերայինք նիրհում էին տգիտութեան, ծուլութեան և անտարբերութեան մէջ, ամերիկացի միստինարները, սկսելով արդէն այս զարուս երեսնական թւականներից իրանց գործունէութիւնը Հայաստանի մէջ, կամաց կամաց բայցին Հայաստանի զանազան կողմերում ժողովարաններ ու ուսումնարաններ և պատեցին անտէր երկիրը մի ամուր ցանցով։ Անդիհական գեսպանները միշտ հովանաւորում էին նրանց, տաճկաց կառավարութիւնից արտօնութիւններ ձեռք բերում նրանց համար և նպաստում, որ հայ բողոքականները, անջատ-

ւելով հայութիւնից, կազմեն մի առանձին քաղաքական մարմին, և յաջողեցին:

Թիւրքաց-Հայաստանում միսախօնարների զլսաւոր կենտրոններն են՝ Խարբերդ, Երզրում, Վան, Էրժըլիս, Սրաբկեր: Գլսաւորուտումնարանները, որոնք պատրաստում են վարժապետներ, վարժուհիք և քարտզիներ տեղացի բողոքական հայերից՝ գտնուում են Խարբերդում և Սրաբկերում: Այնթափում միսախօնարները ունին մի բժշկական կոլլէժ: Խնչքան և պակասութիւններ ունենան ացդ վարժապետներ ու քարտզիներ պատրաստող ուսումնարանները (կոլլէժ), բայց էլի գոյութիւն ունին մեր մայր երկրում, իսկ մենք այդ էլ չ'ունինք:

Առհասարակ ամբողջ Փոքր-Ասիայում ցրւած են միսախօնարները և ունին այնպիսի հզօր միութիւն և կազմակերպութիւն, որ աւելի են նման տէրութեան, քան այն կառավարութիւնը, որինն է երկրը: Միսախօնարները իրանց գերիշխող և անմատչելի են պահում, և բողոքական հայ հասարակութեան վերաց նայում են իբրև աւելի ստոր, հպատակ գասահարզի վերաց, երբէք նրանք հայ բողոքականներին չեն տալիս մեծ պաշտօններ, երբէք իրանց որովոց չեն ուղարկում հայ բողոքականների համար բացած դպրոցները, որովհետեւ իրանք լաւ գիտեն թէ ի՞նչ խղճալի բաներ են այդ դպրոցները: Սահնալով ահազին գումարներ, նրանք քրիստոնեաց հայերի մէջ տարածում են քրիստոն էպութիւն, չը համարձակելով նոյնը անել տաճիկների, քրդերի և յոյների մէջ: Փողով գրաւելով դէպի հաւատափոխութիւն՝ անբարոյականացնում են ժողովուրդը: Վատաքանելով բեմից հայոց եկեղեցին իրանց հաւատացեալների աշքում, բաժանում են հարազատ եղբայրներին իրարից: «Ամերիկա» և «անդլիական լեզուն» փոխարինում է մատաղ սրտերում «Հայաստան» և «մայրենի լեզու» գաղափարներին:

Այն, ինչ անում է անդիմական հիւպատոսարանը բողոքականութեան նկատմամբ, նոյնը կատարում է Փրանսիականը կամը կաթոլիկների համար: Եզուխները գեռ XVII դարում մտել են Հայաստան, բայց միայն զարուս երեսնական թւականներին կաթոլիկական պրօպագանդան հասաւ իւր կատարեալ զարդացման և կաթոլիկ հայերը բաժանեցին իրանց հայրենակից լուսա-

ւորչականներից քաղաքականասիս ու կազմեցին առանձին քաղաքական-կրօնական հասարակութիւն։ Այսպիսով փոքրաթիւ հայութեանը Տաճկատանում երկու մեծ քաղաքական հարւածներ հասան։ մեկը՝ կաթոլիկների անջատումը հայ պատրիարքարանից, միւսը՝ բողոքական-ներինը։ Հայերը միշտ զուրկ են եղել քաջական տակածից ու հետառեսութիւնից, և լուսաւորչական, կաթոլիկ ու բողոքական հայերի քաղաքականասիս անջատումը իրարից և բոլորովին ջոկ ջոկ հասարակութիւններ կազմելը՝ բաղմաթիւ ապացոյցներից նորագոյնն է։ Կաթոլիկ հայը իրան «Փրամնդ» է, համարում՝ Ֆրանսիան իրա հայրենիքն է երեակայում և ընդհանուր հայկական գաղափարներից բոլորովին իրան հետու է պահում։ Այդ է պատճառը, որ վերջին տարիները թիւրքաց կառավարութիւնը ամեն կերպ պաշտպանութիւն է ցոյց տալիս նրանց ի վեսա լուսաւորչական հայերին, որովհետեւ Փրէներին և հայ կաթոլիկ կղերին յաջողւել է համոզել տաճիկներին, թէ կաթոլիկութիւնը կը ապանի ազգայնութեան գաղափարը հայերի մէջ։

Ինձ չը յաջողւեց անձամբ տեսնել կաթոլիկաց դպրոցը Կարինում։ այդ պատճառով միայն կարող եմ հազորդել այն, ինչ իմացաց տեղն ու տեղը արած հարց ու փորձից Հայ-կաթոլիկների կամ Շիղվիթաց դպրոցում տոլորում են 125 աշակերտ, որոնցից 95-ը հայ-կաթոլիկ են, իսկ 24-ը հայ-լուսաւորչական, 4-ը յոյն և 2-ը տաճիկ։ Դոլրոցի ուսման շրջանը 6 տարի է։ Ունի 7 ուսուցիչ, որոնց չորսը եզուխտ են, 2-ը հայ-կաթոլիկ վարդապետ և մեկը տաճիկ և խօջա։ Աւանդում է հետևեալը՝ քրիստոնեական, ու գիրք, աւետարան, սրբազն պատմութիւն, ծաղիկ սուրբ դրոց, հայերէն քերական, «զուարձալի ընթերցանութիւն մանկանց», «հեղաքարան—ընթերցարան», «հրահանգ աշխարհաբարէ գրաբար և գրաբարէ աշխարհաբար», զուարձալի բառականական, համաձայնական, քերականական և տրամաբանական», խօսելու վարժութիւն, «ձեւախօսութիւն», տօմարակալութիւն, փրանսերէն, տաճկերէն, թւաբանութիւն, ալգէրբա, պատմութիւն, աշխարհագրութիւն, գեղագրութիւն, գծագրութիւն և երդ։

Աւսումը ձրի է տրւում։ միմիայն տարին մեկ անգամ վառելիքի համար վող են հաւաքում՝ բայ կարողութեան։ Այնելով աւելի մատչելի և կանոնաւոր ազգային դպրոցներից՝ եղութաների ուսում-

նարանը կամաց կամաց զբաւում է և լուսաւորչական ծնողների ուշադրութիւնը։ Նոր սերունդը, ինչպէս կաթօլիկ նոյնազէս և բողոքական, գուրս գալով այդ եզու իտների կամ միսահօնարների դադրոցներից, արդէն վարակւած է լինում՝ ասկաւ բացառութեամբ՝ հայատութեամբ, անտարբերութեամբ դէպի հայկական խնդիրները և նեղ աղանդական աշխարհայեցողութեամբ։ Կաթօլիկների բունը Տաճկա-Հայաստանում Խոսորջաւրն է, որ գտնուում է երզրումի սանջակի հիւսարևմտեան մասում՝ Քիազիմ Աէզէում, Արզուինից ոչ անքան հեռու։

Ես արդէն վերադարձել էի խանը և, նստած նորա երեւելի ճաշարանում, վայելում էի ախալցիսացի խոհարարի «զզրթման», երբ սահդուղքների վերայ լաւեց ազմուկ, ծիծաղ և ուրախ բացականչութիւններ ու մի քանի բովելից յետոց ճաշարանը մտաւ նոր-Նախիջևանու բարբառով խօսող մի տղամարդ։ Դա այն ուխտաւորն էր, որ իմ գալուց մի քանի օր առաջ անցել էր ս. Կարասիս։ Ուխտաւորը մօտ 50 տարեկան նիհար մարդ էր, մեծ քթով, սև հաստ բեխերով և թրաշած դէմքով։ Հազին ուներ մուշտակ և երկար կօշիկներ, գլխին մորթէ գլխարկ։ Նա Տրապիզոնով եկել էր և նոյն ճանապարհով պիսի յետ գառնար։ Այդ նոր-Նախիջևանցին մեծ կալւածատէր էր ու անասնապահ։ որդի չ'ուներ և եկել էր, որ ս. Կարապետը նորան օգնի։ Այդ ուրախ պարզ մարդը ճանապարհորդում էր բոլոր սպառաստութիւններով։ Հետը վերցրել էր մեծ պաշար՝ խաւիար, պանիր, թէց, շաքար, թէցաման և այլն։ Նա չափից գուրս ուրախ էր, որ անվանգ «վերադարձաւ կրկին երզրում» և գովում էր իւր հմուտ զլավուզին (առաջնորդ), որը մի չափահաս, առնական գէմքով հայ-լազ էր՝ հին մեծ մեծ առաջանակները ցցած իւր լայն զօտիում և կողքից կախած երկացն իեռ թուրլը։

—Հաձէ, ախսպարս, եցազըմ, չօխտան պրօքալատալսա, զաքուսկա, վօժքա, փաղտվաց, ասպահթան բան չեմ կերէ, չօրտ վազմի տակօց խօլոգ, դիմում էր նա ուրախ ձայնով հիւրանոցատիրոջ և խոհարարապետին։ Նա չէր ուզում ընդունել թէ ոուսաց բառերը, որ նորա նախադասութիւնների մեծ մասն էին կազմում, Տաճկաստանում չեն հասկանալ։

Նոր-Նախիջևանցին մի քանի օր մնաց երզրումում հանգստանա-

լու, որ կրկին ճանապարհ ընկնի ծրապիզօնով իւր տուն։ Այդ հասարակի, բարեպաշտ մարդը սաստիկ խարւած էր համարում իւր կարծիքի մէջ վանականների մասին։ Ա. Կարապետի վանքը, չը նացած որ մեծ կալւածներ ունի, երկու գիւղ, կրպակներ ու տներ զանազան տեղերում, չը նացած նւիրառութիւններին և այն եկամուտներին, որ ստանում է ուխտաւորներին ծախած մատաղացուներից և մոմից, այնու ամենայնիւ մի աւերակ է ճեղքւած զմբէթով, թեքւած խաչով, ուխտաւորներին յատկացրած զզւելի նկուզներով։ Բացի այդ զետ պարտքի տակ էլ է... նւիրառութիւններ ստանում են ժողովրդից և կալւածներ ունին մեր վանքերը, բայց... պարդապետք տխմարք... ոսկեսէրք, նախանձոտք... գալ եղեալ՝ զիւրեանց հօսս զիշատելով...»

Եւ ինչ է արել թիւ թքահայոց ազգային վարչութեան կենտրոնը՝ Պօլիսը՝ Թիւ թքա-Նայաստանի համար, թէ հոգւորականներ պատրաստելում և թէ վանքերի ու եկեղեցիների զրութիւնը կանոնաւորելում, որ հիմա ինչ պահանջենք Թիւ թքա-Նայաստանի քահանաներից կամ վանականներից։ Պօլիսը, ճիշդէ, անլոնունակ է ու ահաս մասամբ, ուրովհետեւ գտնւում է այնպիսի երկրում, ուր ճշմարիտ կարգ ու կանոն, զիստութիւն ու լուսաւորութիւն ասածները մուտք չեն կարող ունենալ. մինչև որ նոյն քաղաքական—հասարակական դրութիւնը տելի, մինչև որ չը հեռացնի գլխաւոր արդելքը, որ ամուր կաշկանդել է թիւ թքահայոց կեանքի բոլոր կողմերը՝ անկարելի է չառաջադիմութիւն սպասել։ Այդ հասկացել էր մի մեծ, այժմ պատմական անձնաւորութիւն, որի թզուկ յաջորդների նեղ, խաւար արեղայտկան մաքերին անըմբոննելի են նախորդի լայն ծրագիրը. այդ յաջորդները չունին նախորդի զիւրազզաց ցաւող սիրու, որ արիւն-արտասուրք թափէին տեմնելով ու լսելով իրանց չարառանց ժողովրդի թշւառութիւնը ու տառապանքը և պաշտպան հանդիսանալին ընկած վիրաւորւածին...

Բարեպաշտ ուխտաւորը այնքան հիասժափւած էր և վատ կարծիք կազմած ս. Կարապետի հայրերի մասին, նրանց տղիսութիւնը և շահաբաւթիւնը տեսնելով, որ երսում էր թէ երբէք մի վստահանալ այսուհետեւ որ և է մեծ նւիրառութիւն անել այդ վանքի օգտին։ Նա ցոյց էր տալիս մի քանի թանկազին քարեր, որ վանքի օգտին։ Նա ցոյց էր տալիս մի քանի թանկազին քարեր, որ

զարեան զգեստներից ու խաչերից և վաճառել ուխտաւորներին, հնի տեղը գնելով գրնզգոյն ապակիների կտորներ: Վանքը ունի մասազայուներ ուխտաւորներին վաճառելու վանքի օգտին, սակայն այդ ազբիւրը վանականների զբանի սեպհականութիւն է. էլ չեմ ասում կալւածների և պաղի անուանւած տուրքի մասին: Եւ մի վանք, ունենալով այդ նիւթական ազբիւրները՝ պարագեր ունի, ոչինչ արած լինելով ոչ միայն շրջապատող զիւղացիների որդոց կրթութեան համար, այլ նոյն իսկ ուխտաւորների յարմարութեան: Խնչպէս որ հարստանալու կամ ապրուստ ծարելու համար մարդիկ ընտրում են մի որ և է զործ՝ օրինակ, վաճառականութիւն: կամ արհեստ նոյնադիս են նայում և մեր վանականները իրանց ընտրած ասպարէզի վերայ. վանքի եկամուռներից ով ինչքան կարող է օգտառմէ: Միամուռթիւն կը լինէր մտածել անդամ, որ մեր վանականներից մեծ մասը աշխարհացին հողսերից հեռանալու և ասուածաշաշտութեան կամ ազգին ծառացելու նպատակով լինէին մտնում վանքերը. սեպհականութիւն ունենալու սերը նրանց մէջ մինչւ անդամ աւելի է զարգացած քան մեր աշխարհականների մէջ, և յաճախ է պատահում նրանց մահից յետոյ գտնել մի որ և է տեղ պահած կամ մարմնի վերայ կառած մի քանի հազար ոսկիներ: Եւ ինչ բարզական ու մտաւոր գարգացում ունին խեղձերը, որ գաղափարական հրապարներ ու ձգոու մներ ունենան կեանքում...

* * *

Թիւրքաց տեղական վարչութեան վեհերաս կասկածոսութիւնը օրէց օր սաստկանում էր և անտանելի գառնում ոչ միայն իմ, այլ և այն փոքրաթիւ անձանց համար, որոնց հարկ էր լինում ինձ հետ տեսնել կամ խօսել: Կասկածանքի բարդւելու պատճառը նախ յացանի Պօղոս Սարաֆեանի մասնութիւնն էր, թէ, «այդ ուստահացը անձանօթ վարժապետ մընէ, կասկածաւոր մէկնէրեւեր է, անոր համար Սանասարեանք իրանց լուրջը չին ընդուներ. հսկեցէ՛ք թէ որոնց հետ կը տեսնեի». իսկ երկրորդ՝ տաճիկների սեպհական կասկածանքը, թէ, «չիցէ՛ զայց հարժման մի սլրուպազանդիստ է», բայց առաւել, որ «զա ուսա գեներալ-իմաշաէ, որ ծպաեալ շրջում է մեր երկրում ու ազ-

մագիստրական նպատակով»։ Եւ քաղաքագետ Մուրադ էֆէնդին արդէն նախազգծել էր իմ ապագայ մարշրուտը այսպէս։ «այդ զօրապետը էրզրումից կը գնայ Մուշ կամ, եթէ այգահս չը յաջողւի, նախ ծրապիգօն, յետոյ Ստամբուլ, Թումելիա, Եգիպտոս, յետոյ կ'ամսցնի Մուշի և Տիգրանակերտի ու Վանի կողմերով ու Պարսկաստանով Թումիա։ Թէ ես «Ճապուեալ ո.ազմագէտ» եմ, բոլիսները աւելի համոզւեցին, երբ ոռուսաց հիւսկառուր ինձ սիրալիր ընդունելութիւն դոց տւեց մեկնելու օրիցս մի քանի օր առաջ։

Այդ է պատճառը, որ բոլոր ժամանակը բալիսները իրանց զրագանի «ժու բնախներում» մեծ ճշգութեամբ արձանագրում էին իմ մասին բոլոր տեղեկութիւնները — ե՞րբ ո՛ւր գնացի, ո՞ւմ տեսայ, ո՞ւմ հետինչ խօսեցի և այն։ Ով որ չը նայած այդ բոլորին համարձակուում էր ինձ հետ խօսել, ենթարկուում էր նկատողութեան և ապառնալիքի։ Այդպէս, մի պարսկահպատակ երիտասարդ, որ վարժապետութիւն էր անում Կարինի ազգացին զպրոցում, փորձեց ընթերցարանում մի երկու անգամ խօսել հետո։ Առաջի անգամ Ալին ուղարկեց մի հայերէն զիտցող տաճիկ, որ գայ մեր կողքին նատի և լսի մեր խօսակցութիւնը. իսկ երկրորդ անգամ ինքը ընդմիջն մեր խօսակցութիւնը, կանչելով երիտասարդին իւր մօտ և յանդիմանելով, թէ ինչո՞ւ է խօսում այդ «միւղիր»-ի հետ. մի՞թէ չը գիտէ, որ կասավարութեան աշքում ոռուսահայը մի շատ վտանգաւոր մարդ է. այդ անզգուշութեան պատճառով հիմա ինքը երիտասարդը, թող յացոնի լինի իրան, կասկածանքի տակ է և կը կանչւի սարացը հարցաքննելու։

Խեղճը այլայլած աշխատում էր համոզել, թէ մեր խօսակցութեան մէջ ոչինչ կասկածելի բան չը կար և թէ խօսում էինք բելլիարդի մասին։ Բայց գծւար էր համոզել «բալիսներին», որոնք բաւական չէ որ դրաւմ ինձ վերաց հսկում էին, այլ և ժամանակ առժամանակ յանկարծակի մտնում էին կամ իրանք կամ իրանց ուղարկած մարդիկ սենեակս, որպէս զի տեսնեն ինչ եմ անում և ո՞վ կայ մօտա։ Այնպէս որ ես հարկադրւած էի յետոյ՝ ազատելու համար ինձ այդ անկրոշ այցելուներից՝ վակւել ներսից։

Կասկածանքը մինչեւ անգամ ընկնում էր հիւրանոցատիլոջ վերաց, որը ի հարկէ ստիպմամբ պէտք է որ և է յարաբերութիւն ունենար իւր «միսամբիրի» հետ։ բայց խեղճին մի

կողմից՝ բօլիսներն էին զգուշացնում, իսկ միւս կողմից իւր ընկերները, որոնք մաս ունեին հիւրանոցի շահերում: Այդ ազաները ամբաւական էին ու տրանջում հիւրանոցատիրոջ վերաց, որ մի կասկածաւոր մարդու ապատարան ուեց իւր «հօթելում» և այդպիսով իրանց վերաց էլ դարձրեց կառավարութեան կասկածանքը: Բաշ-բօլիսը սպառնացել էր նրանց ասելով, «Հանդիսան կացէք, թէ ոչ նէնդաղի աքսոր կերթաք»: Ընկերները մինչեւ անգամ հարց էին բարձրացրել բաժանուել, եթէ ես շարունակեմ մնալ «հօթելում»:

Իմ անունով եկած հեռազրի բովանդակութիւնը և իմ պատասխանս հասցրել էին վալիին: Ես ոչ մի նամակ չը ստացալ, թէ և մի քանի գթառութլիո (տղահանձած) նամակներ էին ինձ դրել: Դիցուք ինձանից յետոյ կարող էին ստացւած լինել, բայց մի՞թէ պատի պարտականութիւնն չէր վերադարձնել ուղարկողներին, երբ ստացողը այլ ես տեղումը չի:

Սանասարեանց և պօլիցիացի այդ բոլոր վարմունքից յետոյ զարմանալի չէր, որ Կարինում ոչ մի հայ երկիւղից չէր համարձակում ինձ հետ տեսնել կամ խօսել, իսկ եթէ ծանօթէ, դլուխ տալ անգամ: «Ուուսահացի» ամեն քայլը նրանց բոլորին հետաքրքրում էր, բայց իւրաքանչիւրը լաւ գիտէր թէ որքան կը վնասաւի կառավարութիւնից, եթէ որ եւ է յարաբերութիւն ունենայ հետք:

Եթէ ես երգրումից Մուշ ուղեւորւէի, նոյն երկիւղը կը լինէր այն գիւղացիների համար, որոնց մօտ ես պէտք է իջեանէի: Անցեալ տարի, երբ Կարինի ուուսաց հիւլասոս Նենեուը կատարում էր իւր սովորական պտոյուը երգրումի վիլացիթի զանազան կողմերում, բազմաթիւ հայ գիւղացիք տաճկաց կառավարութիւնից կալանաւորւեցին և խստիւ հարցաքննեցան, որովհետև, իրը թէ հիւլասոսին տեսնելով ասել էին. «ահա՛ մեր երկրի տէրը»:

Մինչեւ երգրում համելս տեղական վարչութիւնը ի հարկէ ոչինչ կասկածանք չէր կարող ունենալ վերաս, որովհետև չը գիտէր էլ իմ մամին, բայց երգրումում լնիլունելով ինձ, իրրե մի շատ վասնզաւոր մարդ, այնուհետև նա հետամուտ էր իմ ամեն քայլափոխին: Դուցէ եթէ բօլիսների սխալը չը լինէր որ ես «Ճալտեալ գեներալ» եմ, պէտք է առանց այլւայլութեան ինձ խուզարկէին ու բանտարկէին, ինչովէս արել էին անցեալ տարի ալ. Ա. Փ.-ին, որին

շղթայակապ ուղարկել էին Երզրումից Վան, ուր բանափց ազատուել էր միմիայն ռուսաց հիւպատոսարանի ծառայող Ն. բէգի բռնի ռժժով և սպառնալիքով:

Այն ինչ որ փորձեցի, տեսաց ու լսեցի Երզրումում, և մի քանի այլ հանգամանքներ, ասիսկեցին ինձ մտածել՝ կարճացնել իմ ացցելութիւնս Թիւրքաց-Հայաստանին և վերադառնալ Կովկաս, թէ և մի յարմար առիթ պառահեց Երզրումից Վան գնալու։ Այդ առիթը ներկայացնում էին Կարինի բանտում իբրև քաղաքական յանցաւորներ բանտօարկւած 4 վանեցիներ. հայրը իւր երեք որդոց հետ, որոնցից մեծը մօտ 22 տարեկան մի երխտասարդ՝ Պօլսից Կարին հասած ժամանակ խուզարկւում է և երբ նորա նամակների մէջ զտնւում է հայրենասիրական մի ոտանաւոր, կալանաւորւում է ու բանտ գցւում, բացց որովհեաւ նամակագրութիւն է ունեցած լինում իւր հօր և կրտսեր եղբայրների հետ, այդ պատճառով տաճկաց տեղական վարչութիւնը կասկածելով մի՞ գուցէ նրանք էլ ոտանաւորի ոգուն համակրում լինին՝ իսկոյն հեռագրում է Վան և երեքին էլ բերում են ձգում իրանց հարազատի մօտ։ Ամիսներով տեսում է քննութիւնը։ Մի ոլուստիցի հայ փաստաբան էֆէնդի կարողանում է անմեղ հօր և երկու պատանիներին արդարացնել, խոկ ոտանաւորի զժբազդ հեղինակը դատապարտում է օյաւիտենական աքսորի։

Ես տեսաց հօրը և երկու պատանիներին, որոնք նոր էին բանտից գուրս եկել և իմ համարիս կից սենեակում էին ապրում։ Ողորմելի՛ է այն վարչութիւնը, որ այդպիսի խեղճ, թրքասէր անգամ, մի վաճառականից և դեռ երեխաց ու բոլորովին անզարգացած պատանիներից երկնչում է։

Ահա, բանտից այդ ազատուածներն էին, որ պատրաստում էին «կաթրչիների» ձիերով վերագառնալ Վան՝ իրանց կարօտեալ և սգաւոր ընտանիքի մօտ։ Նրանք պէտք է զնային ձերային ճանապարհով, այսինքն՝ պէտք է Երզրումից գնային Հասան-Ղալա և այնուեղից Ալաշկերտ, Արճէշ և յետոց Վանի ծովի ափով հասնէին Վան, 15 օրւայ մէջ։ Հաղորդակցութեան նախաջրհեղեղացին դրութի՛ւն...

Յիշելով սահմանագլխին Վանի ռուսաց փոխ-հիւպատոսի վարմունքը ինձ հետ և խօսքերը, բացի այդ գիտենալով, որ Վանում առաւել ես մեծ և թիւրքերի կասկածանքը և աւելի զարգացած

մատնութիւն ու լրաեսութիւնը՝ ես չը փոխեցի իմ վճիռս՝ վերագառնալ կովկաս:

Նոյեմբերի 18-ն էր, երբ ես գնացի հիւպատոսարանը անցաթուղթս նշանակել տալու և խնդրելու, որ վերցնեն նաև թիւրքաց վարչութիւնից անցաթուղթ, ինչպէս սահանջում էր տաճկաց վարչութեան նորագոյն կարգագրութիւնը:

Հիւպատոսարանում ինձ յախնեցին, որ գեներալ-կօնսուլլ յանկացել է ինձ աեսնել և խնդրել է իւր մօտ:

Ալեքսէց Տօմանովից ՚Իենեալ իւր շքեղ բնակարանում ընդունեց ինձ ամենասիրալիր կերպով: Նասուրախ եղաւ մանաւանդ երբ իմացաւ, որ նոյն համալսարանից և նոյն բաժանմունքից եմ, որտեղ և ինքն էր աւարտել 30 տարի առաջ: Մեծ հետաքրքրութեամբ հարցնում էր նոր պրօֆեսաօրների և առհասարակ ալմա mater-ի և բնական գիտութիւնների նորագոյն գրականութեան մասին:

Ալեքսէց Տօմանովից յախնեց իւր ափսասանքը, որ ես նախ քանի իրագործել իմ զիտաւորութիւնս չեմ զիմել իրան նամակով ու տեղեկացել Տաճկատանի ներկայ հանգամների մասին: Նա յախնեց, որ ինքը միմիայն այն ժամանակ կարող էր պաշտօնապէս ինձ աջակցութիւն ցոյց տալ, եթէ ես ուղարկւած լինէի ուռսաց որ և է զիտական ընկերութիւնից, սակայն այն էլ չէր ծածկում, որ այն ժամանակ գուցէ ևս առաւել մեծ լինէր իմ վերայ տաճկաց հսկողութիւնը: Նա ցոյց տւեց, ի միջի այլոց, մի հետազիր ուռս-տաճկական սահմանադլիսից՝ Ոլթւայ կողմէրից՝ որ խիել էր տաճիկներից բանտարկւած մի ուռսահայ: Ի վերջոց շատ ափսասաց, որ ես այնքան ժամանակ լինելով էրզրումում, չեմ գնացել նորա մօտ և խնդրեց կիւրակի օր իւր մօտ ճաշի:

՚Իներալ-կօնսուլի ինձ արած լնդունելութիւնը առաւել ես հաստատեց էրզրումի վարչութեան կասկածանքները իմ մասին և նա կրկնապատկեց իմ վերայ եղած հսկողութիւնը: Տօլիսները արգէն զիտէին, որ կիւրակի օր, նոյեմբերի 20-ին, ես հրաւիրւած եմ ճաշի, իսկ 21-ին որոշած եմ ճանապարհ լնկնել էրզրումից:

Թէւ Կարինից ծրապիզօն իմացին ճանապարհ կայ, բայց պօտացին հաղորդակցութիւն կայարաններով, ձիերով և այլն՝ բնաւ: Ամսուլ կարելի է ճանապարհորդել կամ վորդոնով կամ կառքով: Բայց ամբողջ Կարինում, ինչպէս անապարհորդել կամ վորդոնով կամ կառքով:

կար վարձով տրւող, այն էլ մի շաբաթ՝ առաջ տարել էր նոր նաև խիջևանցի ու խտաւորը: Մինչև անգամ եթէ գտնւ էր կառք, հիմա երկիւղալի էր անխւային հաղորդակցութիւնը այս ճանապարհներով, որ ծածկւած էին արգեն ճինի թանձր խաւով: Մնում էին սովորական միջոցները՝ կաթրէները և ուղարկի քարաւանները:

Ես խնդրեցի Յովհաննէս աղայից վարձել ինձ համար մի կաթրէի երկու ձովվ, որովհետեւ իմ ձիս Կարին հասնելուն պէս վաճառել էի, միմիայն պահելով մօսա թամբը, առաջուց զիսենալով, որ այլասդէս պէտք է անսանելի «սեմարների» (բարձր փալան) վերայ ցցւեմ:

Հաջի-Պազարը բերաւ լազոսանցի մի երիտասարդ ու քաջառողջ հայ կաթրէի, որ $1\frac{3}{4}$ ուկով (մօտ 17 րուբլի) խոստանում էր ինձ հացանել 8 օրում Տրապիզոն: Երկուշաբթի նոցեմբերի 21-ին առաւօտք պէտք է ճանապարհ ընկնէի, իսկ նախորդ օրը հրաւիրւած էի հիւպատոսի մօտ ճաշի:

Այդ օրը առաւօտեան ես գնացի Կարնոյ հացոց միակ եկեղեցին: Քոլիսներից մինը եկաւ և դաւթում ապասեց մինչև իմ դուրս գալու:

Ահագին եկեղեցին լիքն էր աղօթողներով, որոնք ֆէսերը զլիսներին, ծալասպատիկ նստոտած՝ իւրաքանչիւրը իւր մի կար շորի վերայ և կողքին դրած հողաթափները՝ բարձր յօրանջում էին և աղօթքից խօսքեր արտասանում: Եկեղեցու յետեւի մասում խիստ վանդակապատի ետեւից, ինչպէս գազանանցի վանդակներում բանտարկած գաղաներ, կանգնած էին «էհրամների» (բրդեայ բարակ ծածկոց) մէջ փաթաթւած Կարնոյ հայ կանացք:

Եկեղեցու դաներից մինչև փողոցի գարբասները շարւած էին մի շարք աղքատներ, զլիստորապէս թիւրքիր: Ես բաժանեցի մօսս եղած զուրուշները և լսեցի նրանց օրհնանքը. երեխ այդ թիւրք աղքատները միակ մարդիկն էին Կարինում, որ ցանկանում էին իմ մնալս Կարինում...

Նշանակած ժամին գնացի հիւպատոսի մօտ. քոլիսները մեծ ու շաղրութեամբ զիտում էին թէ ով բացի ինձնից պէտք է հրաւիրւած լինի ճաշին. տարաբաղդաբար, բացի հիւպատոսից և իւր պատանի մի աղքականից աւելի ոչ ոք չը կար:

Ճաշի ժամանակ հիւպատոսը, ի միջի այլոց, սարսափելի բաներ էր պատճում այն ճանապարհի մասին, որով ես պէտք է անցնէի:

Երեկոյեանէրբ վերադարձաց սենեակս, մի քանի ժամանակից յետոյ լսեցի հիւրանոցի փակած զրան առջև աղմուկ, կոխւ. մէկը ուզում էր մտնել հիւրանոցը, իսկ զրան մօտ հսկող բօլիսները ընդդիմանում էին նորան: Վերջ ի վերջոյ մի քանի օպինդ» խօսքերից յետոյ մտաւ հիւրանոցը ոռւսաց հիւպատոսարանի «կաւասը» և յանձնեց ինձ անցաթուղթս և երզրումի տաճկական պօլիցիալից ստացած «թեսքերէն»:

Ամեն բան կապկապելուց յետոյ և կաթրչուս պատւիրելով ժամանակին արթնացնել ինձ, ես պառկեցի և անցկացրի վերջին գիշերը Կարինում:

(ԿԸ Հարուեակւի)

ԸՆԿԵՐԻՍ ԵՐԳԸ

Զ. ԲԱԼՈՒՂԵԱՆՑԻ

Ինչպէս ճամբորդը, շոքից տառապած,
Առնում է հանգիստ մի ըոպէ ստւերում,
Ճընշող դարդերը մի կողմը թողած՝
Առուակի անոյշ կարկաջին լըսում:
Եւ, ըոպէական մի քաղցըը անդորը
Իւր սըրտի մէջը յանկարծ ըզգալով՝
Նա փայփայում է, կարծես, մի ցընորք...
Ցընորք,—ոը չը կալ ճամբան աւազով:
Կանաչ ծառի տակ, զովասուն հովտում
Խըփում է նա իւր ծանրացած կոպեր...
Նա, աւազ, իրան խաբել է ջանում...
Խաբել,—թէ հասաւ կարօտած վալրեր:
Այդպէս երբեմըն ինքըս, խաբւելով,
Կարծում եմ, ահա հասած ենք ափին,
Երբ դու ինձ, ընկեր, ոգևորւելով,
Երգում ես սիրոյ, ճըշմարտի մասին:
Եւ ես, մի վալրկեան հանգիստ վընտռելով,
Ճամբորդի նըման փակում եմ աչքեր
Եւ, ազնիւ երգին ականջ դընելով,
Զանում եմ ցըրել մըուսիլ որատիերներ...

Օդեսսա, 9 սեպտեմբերի, 1889 թ.

ԱԶԳԱՅԻՆ ՎԵՊ

Մ. ԱԲԵՂԵԱՆԻ

(Հարունակութիւն 1)

«Սաստնցի Դաւիթ» կամ «Մհերի դուռ», Կ: Պօլիս, 1874, և «Դաւիթ և Մհեր», Շուշի, 1889, ժողովրդական պատումներն իբրև կէս-պատմական և կէս-դրւցագնական հին վէպ:

Ե.

Մենք չ'ունինք Արամելլիքի և Սանասարի անմիջական լաջորդների ճիւղերը, որ խմանալինք վէպի պատմութեան շարունակութիւնը և համեմատինք Աղձնեաց բղեշմերի և Արծրունեաց պատմութիւնների հետ²⁾:

1) Տե՛ս «ԱՌՈՒՋՆԵ-ի 10-րդ համարը»:

2) Հ. Սրուանձտեանի վարիանտով՝ Դաւիթն Արամելլիքի որդին է դուքս գալիս, որ վարիանտի անձշղութիւնն է, այն ինչ մեր վարիանտով՝ Դաւիթն Արամելլիքի զարմի վերջնանելքը է: Թէ Դաւիթն Արամելլիքի որդինն չէ, այդ երեսում է և նորանից, որ Զէնով Յովանը և Յուան Ա. Հրդան, որպէս Սրուանձտեանի վարիանտով Արամելլիքի որդիններն են, իսկ Դաւիթի վեղապնելքը, մեր վարիանտով, Դաւիթի հօրեղբայրներն են: Որպէս զի մեր վարիանտով՝ Դաւիթն Արամելլիքի որդինն լինէր, պէտք է որ Զէնով Յովանը և Յուան Ա. Հրդան Արամելլիքի եղբայրները լինէին, իսկ այդ հակասանկ է պատմութեան և վէպին, որոնք վկայում են թէ Հայաստան են եկել մեայն երկու եղբայր՝ Արամելլիքն և Սանասարը: Քեռի Թորոսը, որ հ. Սրուանձտեանի վարիանտով գործող անձնաւորութիւնն է ներկայանում Արամելլիքի և Դաւիթի ժամանակ, թերեւ և Դաւիթից յետոյ Մէկը ժամանակ, որովհետեւ Արամելլիքը ծերանում և մեռնում է, Դաւիթը սպանուում է, իսկ նա զեռ՝ կենթանի է և կոփ է մտնում, — ըլ կայ մեր վարիանտի մէջ, և այդ աւելի բնական է, որովհետեւ Քեռի Թորոսը չը կարող այդքան երկար ապրել: Քեռի Թորոսի մեր՝ վարիանտում չերկարն իսկ վիայում է, որ Դաւիթն Արամելլիքը ժամանակով շատ հեռու է, այն ինչ և Սրուանձտեանի վարիանտով, որովհետեւ Դաւիթն Արամելլիքի որդինն է, Քեռի Թորոսը նորա ժամանակ կարող էր կենդանի լինել: Մենք կարծում ենք, որ Թլօք Դաւիթը Թուլան Դաւիթ որդին պիտի լինի, ինչպէս որ պատմող մոկացին կամկածանքով ասում էր:

Աբամելիքի շառաւիղներից վերջինների՝ Դաւթի և Մհերի վեպի մէջ չէ երեսում ազգապին պատմութեան մէջ կիշասակւած Աղձնեաց կամ Արծրունեաց արարքների հետ նմանութիւն.—գոյցէ լինի էւ, բայց մեզ յայտնի չէ—միան թէ ուրիշ պատմական կէտեր երեսում են, և ազդ վերաբերում է աւելի մեր նոր ժամանակի, միջնադարեան պատմութեանը, երբ որ Աղձնեաց բգեշխներն ազ են չը կալին, իսկ Արծրունիք Վասպուրականում թագաւորութեան հասել և ընկել էին:

Յախտնի է, որ միջին, և աւելի նոր դարերում հայոց աշխարհը բաժանւած է եղել բաղմաթիւ մեծ և փոքր իշխանների մէջ. մեր երկիրը մի իշխանական միութիւն չէ կազմել և Բաղրամունեաց կարճատև թագաւորութեան ժամանակ իսկ, երբ որ միայն մի քանի իշխանութիւններ, ու եղի զօրացած լինելով, թագաւոր անուամբ անկախ զրութիւն էին ձևաք բերել չ'ունենալով իրանց վերաւ հին պարակական, կամ ցունական և արարական գերիշխանութիւնը և ոչ ենթարկելով Հալաստանի հաջկական թագաւորութիւններից մէկին կամ միւսին: Բագրամունեաց անկումից իւտով, երբ որ թուրքերն և թաթարները սկսում են արշաւել Հալաստան, ԺԱ. — ԺԶ. զարք, երբ որ երկիրը լածանւեցաւ օսմանցոց և պարսից մէջ, Հալաստանի քաղաքական բաժանական զրաւթիւնն աւելի ևս խառնում է. երկրում տիրում է զրեթէ կատարեալ անիշխանութիւն. շատանում են բազմաթիւ մանր իշխաններ, որոնք մասամբ հայոց հին նախարարական ուրների լաջորդութիւններն էին, մասամբ եկամուռ, օտար: Ազդ մանր իշխանները տիրելով մի գաւառի, քաղաքի կամ գիւղի, կազմում էին փոքրիկ ինքնալովի բռնակետութիւններ, որոնք մեծ մասամբ անկախ զիրք ունենալով, քիչ անգամ ենթարկւում էին լուսաց կալարներին կամ պարսից նոր կաղմաւած թագաւորութեանը: Ազդ մանր իշխանները շարունակ կուներ էին մզում: իրար դէմ և Հալաստանից զուրս նստող թագաւորների դէմ: իրարու երկիր ձեռքէ ձեռք խլում էին, որով և երկիրը զոնւում էր միշտ խռովացնդ գրութեան մէջ: ¹⁾ Հալաստանի հիւսիսային մասը միայն, մի առժամանակ վրաց թագաւորների ձեռքն անցնելով, խաղաղութիւն և ապահովութիւն էր վայելում:

Բագրամունեաց անկամումից լետով հարստավին Հալաստանի հայ իշխանութիւններից նշանաւոր է եղել Տօրոսնեան լեռների մէջ Սասուն իշխանութիւնը: Սասունում նստում էին Մամիկոննեանների սելունդ համարւող իշխաններ, որոնք միւսների պէս կախներ էին առաջի օտարների դէմ և, չնորհիւ երկրի ամուռ դիրքին ու իրանց անձնական քաջութեանը, պահպանում էին անկախութիւն, որով և Սասուն իւր շրջականներով ներ-

1) Հ. Ալեշանը «Ենոքհալի և Պաղագայ իւր» գրքում լաւ նկարագրած է Հալաստանի այս խառնաշփոթ դրութիւնը ԺԱ. և ԺՅ. դարերում:

կազանում էր իբրև միակ կենդրոն հայկական ազատ իշխանութեան, ԺԱ. դարում Սասնու իշխաններից նշանաւոր է եղել Թունիկ Մամիկոնեանը, որի պատմութիւնը աւելսրդ չի լինել գնել աջանել իբրև պատկեր սասունցոց վարած պատերազմների ընդէմ օտարներին և, եթէ ոչ իբրև պատմական հիմք Դաւթի վիպին, գեթ իբրև այն անձնաւորութիւններից մէկը, սրոնց արարքների ազգեցութեան տակ փոփոխութիւն է կրել Դաւթի վիպը, որ աւելի հին պէտք է լինի:

Մամիկոնեան Մուշեղի որդի քաջ իշխան Թունիկն իշխում էր Սասունին և Տարօնի մի մասին, նա նստում էր Սասնու գաւառի Աշմուշատ գիւղում, որ Սասուն քաղաքի մօտ է: 1055—1058 թվին ամբողջ Հայաստանը աւելրում է թաթարների և պարսից թագաւոր Տուղրիլ գօրքերի ձեռքով. միակ ասպահով տեղը հայերի համար Սասուն էր: Աւերիչ խմբերից մէկը գալիս է Տարօն և աւելրում է ո. Կարապետի վաճքը: «Ասեալ զայ իշխանին հայոց՝ զօրաւոր և քաջ որդին Մուշեղակ՝ Թունիկն և ժողով արարեալ զամինան Սասունս՝ հասանել ի վերաց զօրացն ալլազգեաց»: (Մ. Աւոհակեցի. Մասն թ. հատ. ԶԱ.): Թշնամիներն իրանց բազմութեամբ նեղում ևն սակաւաթիւ սաստէցիներին. բայց լսու Թունիկը կանչում է: «Գլակաէ վանք, ո. Կարապետ, հասի՛ր մեզ չօգնութիւն»: և հայերը զօրանը լաղթում ևն ալլազգիներին¹⁾:

1073 թ. ազգով հայ և կրօնքով լոյն Փիլառառու լունաց զօրավարը ապստամբում է լունաց կապրից և իւր զրօշակի տակ հաւաքելով հակերից և ուրիշ ազգերից, տիրում է Չորրորդ—Հակբին (Արածանու և Հիւսիսացին Եփրատի հովտում); Աղձնեաց արևմտուան մասին, Փոքր Հայստանից Երրորդ—Հակբին և ուրիշ կողմերի: Նա գալիս, բնակում է Մշար աւանում և աճնտեղից մարդ է ուղարկում Սասնու Թունիկ իշխանին, որ զայ, հնազանդի իրան: Թունիկը ծիծաղում և ասում է: «Ահաւոր բնաւ ես ոչ աեսանեմ զերեսս նորա»: Եւ ասեն ցԹունիկ կոչնականքն Փիլառառուին թէ: «Ահա զայ բազում զօրօք ի վերաց քո և տապալեալ աւելրեցէ զամնան գաւառս քո»: Ասէ Թունիկ. «Եւ քանի զօրք Փիլառառուին»: Ասեն արքն. «Իբրև քսան հազար»: Ասէ. «Են իմ հազար ձիաւոր»—Եւ զարձոց զհրեշտակսն ամօթով լետա:—Փիլառառուն սահպում է Գրիգոր Վկալասէր կաթուղիկոսին, որ գնաչ, համոզէ Թունիկին զալ իրան հնազանդել, ասպա թէ ոչ, ի սուր սուսերի մաշեմ զերկիր նորա: Բայց քաջն Թունիկ ոչինչ անսացեալ բանիցն, նստէր անշարժ ի տեղւոջ իւրում... Գիտացեալ Փիլառառեալ թէ ոչ զայ առ ինքն Թունիկ, էաւ զզօրս իւր և պատրաստեցաւ զնալ ի վերաց նորա: Փողովեալ և Թունկաէ զամնեան արս զառին Սասնոէ՝ լիսուն հազար հետեակաց և վեց հազար հեծելոց, եկն

1) Զամչեան, ևՊատ, հայոց, թ. Հատ. եր. 966. Ար, Լասա, ԽԱ. Գլ.

փութանակի ի ձապաղ—ջուր։ Եւ կացեալ անդ աւուրս ինչ՝ իբրև ետև, թէ լամէ գալ Փիլառտոսու, վարկաւ թէ գուցէ զարձեալ իցէ լիսս, և կամ տակաւին անաղանիւ Եւ զի չոճէր բաւական պաշար աճչափ զօրաց, դարձոց լեսս զբազմութիւն նոցա և ինքն հաղար ձիաւորօք միան չու արար զառնալ ի քաղաք իւր վԱշմուշատ. և ի զնալ նորա պատահեցան ի ճանապարհի զօրքն Փիլառտեալ ի Հանձիթ զաւառի... Զայն իբրև ետևս Թոռնիկ, զահի հարաւ լոյժ, զի ոչ կարէր խուսել չերեսաց նոցա և պատերազմէլ երկնչէր, զի սակաւ էին զօրք իւր. ապա չամենալն կողմանց անձարացեալ նորա, ապալինեցաւ վԱստուած և ի բարեխօսութիւն ո. Կարապիտին Յաշնաննու, և խրախուս բարձեալ չարձակեցաւ անհնարին սաստկութեամբ ի վերաց նոցա հանդերձ հաղարաւն... և ի քթթել ական ցիր և ցան կացոց զայնչափ բազմութիւն նոցա և կոսորեաց զբազումս ի նոցանէ... խակ Փիլառտոս սակաւ արամբք փախստեալ անկաւ ի Խարբերդ:

Սորանից լեսս Փիլառտոսին միանում է Ամիր—Քափր անունով մի պարսիկ իւր զօրքով, և նորա հետ խօսք կապելով, գալիս է Թոռնիկ սահմանները, մարդ է ուզարկում Թոռնիկին, խոստանում է զաշնիք կապել իւր և նորա մէջ, երդում է տալիս, և նորա ծառաներից մի քանիսին միծ տուրքերով հաւանեցնում է, որ նորան լորդորեն՝ գայ իւր մօտ. Թոռնիկը խաբւում է և երեք մարդով զնում է Քափրի մօտ, որ միծ ուրախութիւն է տալիս Թոռնիկի պատւին: ԱՅԵ լորժամ զուարձացեալ կալին ամննեքեան ի ինջոս անդ, լանկարծակի զիմնաց Քափրն ի վերաց Թոռնիկաց սրով սալանանել զնաւ: Խակ Թոռնիկ չունելով ինչ ի ձեռին, վանեաց աջու ձեռամբ զբազուկ նորա և ձախովն առեալ զփոքրիկ զանակ մի ի սեղանոց անտի՝ ենար ընդ փար նորա, և ի վաթել աղեաց նորին ի վազ՝ անդէն սապակեցաւ: Դիմեալ ապա ի վերաց ալլոց, որք կալին անդ՝ ձգեաց զձեռու իւր ի զլուխս նոցա, զրու և ընդհարեալ ընդ միմնանս ուժով սաստկութեան բազկաց իւրոց՝ խորտակեալ սատակեաց զնոսա. և ելեալ անտի փութազ գնալ ի քաղաք իւր վԱշմուշատ: Զայն տեսեալ զօրացն Քափրակ ցրուեցան և փախեան անտի. խակ մի ոնն ի նոցանէ թազուցեալ ի ծածուկ սեղւոյց՝ առ որով ունէր անցանել Թոռնիկ, ենար նետիւ ընդ սիրտ նորա և սպան զնաւ (Զամշեան Բ., 997—999 եր. Մ. Ուռհազեցի. մասն բ. հատւած ձԶ—ձԷ):

Զ.

Դաւթի և Մհերի վէսի մէջ պատկերանում է Հաղաստանի և մասնաւորապէս Աասնու սոյն միջնագարեան վիճակը. վէսի հիմնական նիսթը կազմում է Աասնու աէրերի պատմութիւնը: Դաւթը վէսի մէջ ներկազանում է իբրև ազատ, աղնւական տան ժառանդ. նա թէպէտե հորթարածն է, բայց աղնւական տան հորթարած է, այն ինչ նորա ընկեր հորթարածն

ասում է. «Ես լի քո պապու (հօր) գեղի հորթարածն եմ, ու իդա՞ ռատկաց (ռամիկների) հորթերն են», Դաւիթը տիրաբար է վարւում ռամիկների հետ. նա խանզութ խաթունին ասում է. «Ես լի Սասմաչ քաղքի տէրն եմ». նորա հօր տունը մեծ տուն է, և ոչ հասարակ մարդու տուն. մի խօսքով նա իշխան է, կաստել իշխան, ոչ թէ իւր ոքի համար, այլ նորա համար, որ նա ծագում է հին իշխանական տնից, որ Սասմու տէրերն են եղել».

Վէպի մէջ ամենից առաջ աչքի է ընկնում այն, որ Հայաստանը բաժանւած է բազմաթիւ մանր իշխանների մէջ: Ազգ բաժանումը կար ագգալին վէպի և առաջին ճիշդի մէջ, բայց աճտեղ պատկերանում էր չին դարերի բաժանումը նախարարների մէջ՝ մի թագաւորի իշխանութեան տակ, որովհետև երկրում կար մի թագաւոր, Կապուտկողի թագաւորը, որ բնիկ հայկական էր և Հայաստանում էր նստում,—իսկ Դաւթի և Մհերի վէպի մէջ ներկայանում է այն մանր բաժանումներն իրար թշնամի իշխանների մէջ, որ եղել է Հայաստանում Բագրատունեաց անկումից լետով: Սասմաչ քաղաքի, Մսրաչ քաղաքի տէրերը, Զմշկիկ-Սուլթանը, որ հաւանականօրէն Զմշկածագի (Հիւս. և Հար. Նփրատների խառնուրդին մօտիկ) տէրը պիտի լինի, Կաղզուանու ամիրան (Խանդութ խաթունի հալքը), Գոհար խաթուն, Խլաթեցիներ,—ամեն մէկը հանդիսանում է իրբն մի ինքնազդուկ տիրապետ, որ ոչ ոքի իշխանութեանը չէ ննիմարկւում: Երկրում չը կաէ մի թագաւոր, որին հնաղանդէին այդ մանր բոնականները, որի շուրջը խմբւէին նզօր գլուցազունները թագաւոր անունվ գուրս է գալիս միայն Հալէբաչ թագաւորը, որ Հայաստանից գուրս է նստում: Երկրի մէջ տիրում է ընդհանուր խառնակութիւն և անխխանութիւն, որովհետև այս մանր տիրապետները շարունակ կուի են անում իրար հետ և իրար երկիր տւերում: Մսրամելիքը Մարութաչ բանձրիկ Աստուարածինն է աւերում, Թուլան Դաւիթը՝ վրէմն առնելու համար՝ Մսրաչ քաղաքի վերջին կատան սպանում. մի ուրիշ Մսրամելիք ահեղ բանակով Սասմաչ քաղաքի վերակ է գալիս, որ աւերի, տանի, Մսրաչ քաղաքի մօտ նոր քաղաք շինի. Թօր Դաւիթն այդ Մսրամելիքին սպանում է և բանակը ցրւում: Մանր իշխանները Հալէբաչ թագաւորի առաջնորդութեամբ պաշարում են Կաղզուանը, Զմշկիկ Սուլթանը Դաւթի և Խանզութ խաթունի դէմն է գուրս զալիս կուի, Խլաթեցիները մինչև անդամ առանց պատճառի, իրբն ապատակաւորներ, Դաւթի ճանապարհը կորում են. Մհերը Խլաթ քաղաքն է աւերում. Գոհար խաթունն ու Մհերը աւերում են Հալէբաչ քաղաքը, որի թագաւորը հօթ տարի կուռում էր Գոհար խաթունի հետ,—մի խօսքով վէպի մէջ երկրում տիրում է ընդհանուր շփոթմունք, աւերմունք, և կեանքի անսապահովութիւն—նոյն զրութիւնը, որի մէջ էր Հայաստանը Բագրատունիներից լետով: Վէպի մէջ նոյն իսկ վիշատակւում է և վրացոց ափրապիտութիւնը Հայաստանի վերակ, Քաւոր Գորդիկը (վիրական անուն) վահ-

լուսնների զաւադրութիւնը Դաւթի դէմ Դաւթին խմացնելու համար առակի ձեռվ առում է. «Հոգի վնասառն է, Վրաստան չէ», որով ուզում է տառել, թէ ավատեղ Վրաստան չէ, ուր կարելի է կեանքի ապահովութիւն ունենալ, այլ վնասառն է, ամենայն բոսէ կարելի է վնասի, վտանգի սոլառիլ:

Վէպի մանր իշխաններից սմբնից զօրեզը Սասնու տէրերն են, ինչպէս և պատմութեան մէջ. նրանք բնիկ արգալին են, ժողովրդին սիրելի են, որովհետեւ աշխատաւմ են Սասնու անկախութեան համար և ժողովրդի օգուան են ցանկանում. այն ինչ միւս իշխաններն օտար են ժողովրդի հսմար. Պարզ ասւած չէ թէ Մորամելիքը, Զմշկիկ-Սուլթանը, Կարծիքով, ամիրան հա՞յ են, թէ օտարազգի բոնակալներ. Մեր կարծիքով, այդ բոլոր մանր իշխանները վէպի սկզբնական ձեր մէջ հայ պիտի եղած լինին, որով և Դաւթի վարած պատերազմները նրանց դէմ կը լինէին հին նախարարական տների. և թերևս աւելի հին, ուեպագրական ժամանակների իշխանութիւնների միմեանց զէմ ունեցած կո-խների պատկեր. Մորամելիքը վէպի. ներկաւ դրութեան մէջ ներկայանում է իրեն օտար տարր. մինչեւ անդամ Թուլան Դաւթի մի կտորի մէջ Մորակ քաղաքում վշտում է «նմիրէ» բառը, որ մահմեղականների մինարէն է. բայց և աճ-պէս Դաւթի մարդն իւր կամքով զնում է Մորամելիքին կնութեան, որ մեր կեանքի մէջ հաղւագիւառ երեսով կը լինէր, եթէ ընդունենք, որ Մորամե-լիքն օտար ազգի և հաւատի է պատկանում: Զէնով Յովանը Զմշկիկ-Սուլ-թանին ուզում է Դաւթի համար կին, որով և Զմշկիկ-Սուլթանը պիտի հայ լինի ազգով, ապա թէ ոչ, ինչպէս կարելի է ենթազրել, որ Դաւթիը, որի զօրութիւնը բանձրիկ Աստուարածնի միաբանների խաչ-պատարագն է, մի օտար ազգի աղջիկ ուզէր իրան կնութեան: Նան են-թագրութեամբ հայ պիտի լինին և Խանդութ խաթունն ու Գոհար խաթու-նը. անորոշ է մնում միան Հալէքաւ թագաւորի ազգութիւնը. հաւանա-կան է, որ նա օտար լինի, քանի որ միջին զարերում Հալէքի իշխողնե-կան է, որ նա օտար լինի, և նոր իսկ Հալէքաւ թագաւորն այն ժամանակի ազ-րըն օտար են եղել, և նոր իսկ Հալէքաւ թագաւորն այն ժամանակի աղ-ջիկ գեցութեան առակ պիտի վէպի մէջ մտած լինի, երբ որ հայերն սկսում են զեցութիւնն է վրէժ խնդրելու ու. Կարապետի աւերման համար. նոյն անում է և թուլան Դաւթիը, երբ որ Մորամելիքն աւերում է Մարութակ անձրիկ Աստուարածինը: Թունիկը սակաւաթիւ մարդկանցով է, իսկ

Սասնու իշխանների օտարների դէմ տւած կախներից մենք բերե-ցինք թոռնիկ Մամկիննեանի պատմութիւնը. հետաքրիւր է համեմատել թոռնիկի պատմութիւնը Դաւթի վէպի հետ:

Օտարներն աւերում են ո. Կարապետը. Թոռնիկը սակաւաթիւ մարդ-կանցով գնում է վրէժ խնդրելու ու. Կարապետի աւերման համար. նոյն անում է և թուլան Դաւթիը, երբ որ Մորամելիքն աւերում է Մարութակ անձրիկ Աստուարածինը: Թունիկը սակաւաթիւ մարդկանցով է, իսկ

Թուլան Գաւիթը մեծակ է վարում կուրուր. և սա բնակուն է, որովհեան այն պատմութիւն է, իսկ այս զիւցազնական վեպ. Թոռնիկն օգնութեան է կանչում ո. Կարաղեաժին, իսկ թլոր Գաւիթը՝ Մարտիակ բանձրիկ Աստուարածնին, իսաչ պատարապնին է ամեն անդամ ձան տալիս և ուժ ըստանում:

Թոռնիկի կուրուր Փիլառատոսի վէմ, որ նստում էր Մշարում¹⁾, արգեօք նոյն Գաւիթի կուրուր չէ Մորամելիքի՝ դէմ. Մ. Ռւռհապեցին²⁾ Փիլառատոսի համար ասում է. «Ի տղաքութեանն կացեալ... ի վաճք, որ կոչի Զօրվիր—Լոզեռն՝ ի Հարսն—Մորու գաւառին» (Ռւռ. Մո. Բ. եր. 248). Մորու բառը ալսանդ Եղիպտոս աշխարհը պիտի չը հասկանալ, որի համար Ռւռհապեցին անխստիր թէ Եգիպտոս և թէ Մորը է զործ ածում, որովհեան Հարսն—Մորու գաւառ է ասւած, և պիտի Հայաստանի գաւառներից մէկը լինի. իսկ Հարսն կամ պիտի Մորակ գաւառի մէջ մի գիւղ լինի, որի մէջ, կամ մօտ, գտնուում էր վաճքը, և կամ Հարսն—Մորու երկուսը միասին գաւառի անունը լինի, ինչպէս լինի, մեզ համար այն նշանակութիւնն ունի, որ Փիլառատոսը մեծացել է մի գաւառում, որի անունը նոյնանում է Մորամելիքի Մորաչ գաւառի, քաղաքի անուան հետ. Մորամելիքը կէս հայ, կէս օտար խառնուրդ է ներկայանում վէպի մէջ. Նոյնն է Փիլառատոսը, որի համար Ռւռհապեցին ասում է, ուչ հայ գիտելով զնա և ոչ հուում. Մորամելիքի բնաւրութիւնն իսկ՝ խորամանկ, խարդախ, նենգաւալը և ստոր մի բռնակալ, որի համար ոչ մի սրբութիւն չը կալ, նման է Փիլառատոսի բնաւրութեանը. Անօրէն և ամենաչար իշխան, անդրանիկ պալի սատանալի, այս չարաշանչ, նեռն դիւարնակ և ալշանդակ, կարապեա պղծոն... (Ռւռհ. եր. 248): Մորամելիքի բանակում կան հաներ, զուցէ և ամենքը հայ են (վէպի սկզբնական ձեռվ անշոշա և հայ եղած կը լինին), որ երեսում է ափաշու և «փուշտ» գաւառական բարբառների արտասանութեան տարբերութիւնից.—Փիլառատոսի զօրքերն ես մեծ մասամբ հաներ էին. Մորը, ինչպէս ասել ենք, Մծուրը պիտի լինի,—Փիլառատոսն ես տիրում էր Մծուրին և հէնց Մծուրի վրազով է գալիս Թոռնիկի դէմ կուրի, որովհեան Թոռնիկը նորան սպասում էր ձապաղ-ջրում, որ Մծուրի արևելեան կողմում է. — Վէպի մէջ ես Մորամելիքի բանակը Սեղան-սարի գօտում է. «Ահազին ասպար ժողվեր են ու նստեր Սեղան-սարու գօտին». իսկ Սեղան-սարի գօտին ձապաղ-ջրի սահմաններում է. Փիլառատոսը մարդ է ուղարկում Թոռնիկն, որ գայ, իրան հնապանզի, Թոռնիկը մերժում է²⁾. Մորամելիքն էլ Կողբադ-

1) Հ. Զամշեանը կարծում է, որ Մշարը Մարաշը պիտի լինի:

2) Հետաքրքիր է Փիլառատոսի պատգամաւորների և Թոռնիկի մէջ եղած խօսակցութիւնն, որ Թոռնիկի պատմութեան մէջ բերել ենք Ռւռհայեցուց հանելով. այդ խօսակցութիւնն իսկ վկայում է, որ Ռւռհայեցու ժամանակ Թոռնիկի վերայ ժողովը գէ մէջ շատ զբոցցներ են պատմելիս եղել:

նին է ուղարկում, որ հօթ տարւան խարջն առնի, ալսինքն՝ հարկի տակ դնի Սասունը. Դաւիթը մերժում է, և ոչ միան մերժում, ազ և Կողբաղնի գլխին հակածական խաղ խաղում. Փիլառտոսի մեծ բանակի դէմ Թոռնիկը կռւում է հաղար մարդով. Նա, երբ որ թշնամիների բազմութիւնը տեսաւ, «զահի հարաւ լոյժ, զի ոչ կարէր խուսել զերեւաց նոցա. պատերազմել երկնչէր, զի ուակաւ եին զօրք իւրո»—Նոցնը տեսնում ենք և Դաւիթի վէպի մէջ. Դաւիթը, երբ որ ելնում է սարի գլուխը և Մորամելիքի աստղերի թւով բանակը տեսնում է, սարսափում է և տառմ.

«Ենոնք էլնեն բամբակ,
Ես լէ էլնեմ կրակ,
Չեմ կարաչ զանոնք էրեցցի.
Ենոնք էլնեն զարնան մատղաշ զամներ,
Ես լէ էլնեմ զարնան քաղցած գէլեր,
Չեմ կարաչ զանոնք կտրեցցի»:

Բայց վերջն աստուածակին օգնութեանը ձանելով, բարձակում է բանակի վերաց և մեծ կոսորած անում, ինչպէս և Թոռնիկը, որ թէպէան սկզբում վախեցաւ, բայց չետու սուրբ Կարապետին օգնութեան կանչելով, զրեթէ մենակ «ի քթթել ական ցիր և ցան կացոց զանչափի բազմութիւն»:

Կռւից զետով Փիլառտոսի կողմից Քափրը խարում է Թոռնիկին և տառում է իւր մօտ. Նորան մեծ խնջուք է տալիս և ուզում է խորամանկութեամբ սպանել, բայց Թոռնիկն ազատում է մի քաջութեամբ, որ գիւղազնի է վակիլ Նոցն անում է և Մորամելիքը. Նա խորամանկութեամբ Դաւիթին իջեցնում է ձիու վրապից, իւր վրանն է մտցնում և առաջուց պատրաստած հորի մէջ ձկում. Բայց Դաւիթը հորից զուրս է զալիս և սպանում է Մորամելիքին, ինչպէս Թոռնիկը Քափրին: Հ. Սրուանձտեանի վարիանտի մէջ խնջուքն անդամ լիշւած է. Դաւիթը Մորամելիքի մօտ կանաչ-կարմիր վրանում հօթին օր բրինձ—գլաւ է ուտում և չետու ըսպանում Մորամելիքին: Դաւիթի և Թոռնիկի մահն անգամ միատեսակ է. Թոռնիկին, երբ Նա Քափրի զօրքերից վախչում էր, թագ կացած մի մարդ ծածուկ նետով խփում, սպանում է. Զմշկիկ-Առութանն ևս զութանի խովով ծածուկ խփում, սպանում է Դաւիթին: Հ. Սրուանձտեանի վարիանտի մէջ Դաւիթի մահն աւելի նման է Թոռնիկի մահին. «Նըմըմ խանմի աղջիկըն էր առեր մէկ նետ ու աղեղ, էկեր էր էղ աերու փլերու մէշ թափըւ սուեր էր: Դաւիթը ըդ Լօխօրաց ջրի մէջ կըլոզզնէր», Խլաթեցիների ձեռքից վախսած, որ ըլդ աղջիկ գողառուկ նետ մի զարկեց Դաւիթի պառիկու սպանեց:

Բայցի ալու նմանութիւններից, Դաւիթի իշխանութեան մէջ, բացի Սառունից, մանում էին և Մշու շրջակակքը և ձապաղ-ջուրը, որոնց մասին

լիչեցինք Արամելիքի ձիւղի մէջ, նոյնը տեսնում ենք և Թոռնկի ժամանակ, այն է որ Թոռնկի ձեռքին էր Սասունը և Տարօնի մի մասը, աճշուշ Մշու և Ճապաղ-Ճրի կողմերը, որդինեան սրանք են Սասունին սահմանակից:

Ազգակո մեծ նմանութիւն է երեսում Թոռնիկ Սամիկոնեանի պատմութեան և Դաւթի վէպի մէջ, այնպէս որ եթէ չասենք թէ Դաւթի մի և նոյն Թոռնիկն է, միան ժողովրդի բնբանում զիւցազնական հերոս զարձած, գոնէ հաւասառեաւ կարելի է ստել, թէ Դաւթի վէպը կազմել է Թոռնկի նման շատ հերոսների արարքներից, որ ունեցել է Սասունը միջն զարերում, և կամ ազդ արարքների աղղեցութեան տակ ժողովուրդը մացրել է առելի հմտ վէպի մէջ իւր նոր ժամանակի հերոսական կախները, որ տեկը է օտարների զէմ:

Ե.

Ազգակո վէպի մէջ եղած պատմական կէտերին մատնացուց անելուց ցետու, պէտք է մօտաւորապէս որոշել թէ ո՞րքան հնութիւն կարող է ունենալ վէպի սկզբը: Վէպի միւս կոչումն է և «Մհերի զուռ»: «Մհերի զուռ» անունով կոչում է և Վանակ բերդից գէպի արևելք ձգւած լիոնագոսու միջին մասը: Ազդ լիոնագոտին, որի արևելեան զլուխը կոչում է «Զըմիկըմի մաղարա», իոկ արևմտեան ծալը (Աղրիկ), վէպի մէջ կոչում է «Վանակ քար» կամ «Ծոսպան բլուր», և ծածկւած է ընեռագիր արձանագրութիւններով, և իւր մէջ ունի խորին հնութիւն ունեցող քանդակագործ շինութիւններ և անցքեր: «Մհերի զուռը» հէնց զրան ձևով տաշածած, սիրուն քառանկիւնի շրջանակով մի քար է, որ քրան ունի ուսուցիչներ: Ազդ զրան ետևում իրեն թէ կաէ մի ալբ, Մհերի ալբը, որի մէջ փակւած է Մհերը՝ թէ անդուկան աւանդութիւններով և թէ վէպի երկու վարիանտով: Որովհետեւ Մհերի վէպը կասւած է Տասպան բլրի աջ քանդակագործ շինքերի և սեպագիրների հատ, պէտք է կարծել թէ Մհերի վէպն ևս պիտի ունենալ նոյն հնութիւնը, ինչ հնութիւն որ ունին ազդ արձանագրութիւնները, աշխինքն՝ վէպի նվաթը ովէտք է վերցւած վնի սեպագրական ժամանակներից: Նթէ Վանակ և առ հասարակ Հայաստանի սեպագիրները կարգացւած վեճէին, խօսք ըլ կաէ, շատ բան կը պարզեր վէպի մէջ, միաւն ասորոց և սղարացի սեպագրութիւններից լազմնի է, որ Հայաստանի մէջ առնենահին ժամանակներում եղել են մի քանի իշխանութիւններ՝ Վանակ արևելեան կողմում Բիսաւմակ իշխանութիւնը, որի միջին մասը կոչւած է եղել Տաւովա, որ Տասպն է, երկու Տիգրիսի հովաններում Նարիրի իշխանութիւնը, իսկ Տօրոսիան լիոնների մէջ, ուր Նիբառը հանդիպում է Տօրոսին,—Մհելիստա: Ազդ երեք առևութիւնը ինչպէս և Սուսամի, որ Վանակ լձի հւորիսալին արևմտեան կողմում է եղել, զանւել ին Վարդարաղի:

(Արարատի) տէրութեան զերիշխանութեան ներքոց: Նրանք 500 տարւակ չափ կոխաներ են ունեցել, թէ առանձին առանձին և թէ միասին, ասորեստանցոյ հետ Դ—Ը. զարը Քրիստոսից առաջ: Այդ տէրութիւնները հարկաւ կ'ունենալին և ներքին կոխաներ, որոնք լուսնի պլատի լինէին նրանց ժամանակներից մնացած հաղկական սեպագիրներից, որ անընթեռնլի են: Արդեօք ազգային վեպը, իւր սկզբանականում, իրեւ նիւթ, համք չէ՝ ունեցել հէնց ազդ տէրութիւնների իրար հետ և ասորեստանցոյ հետ ունեցած չարաքերութիւնները: Այս ենթապրութիւնը թող ենք առաջ մեզ անել, ի նկատի ունենալով նախ առն, որ, ինչպէս ասացինք, Մհերի վեպը կապւած է Տասպան բլրի սեպագիրների հետ, և Նրանց մասին եղած աւանդութիւնները միանում են Մհերի վեպի հետ: Երկրորդ՝ ազգային վեպի իրողութիւնը հէնց կատարում է ազդ սեպագրական տէրութիւնների տեղում—Ամս (Տոսոյ), Տիգրիսի հովալ (Նախիրի), Արածանու և Հիւսիսային Նիգրատի հովալը (Մծուր, Միլիտոտա), Վանակ ծովի հիւսիսային-արևմտեան տիվը (Խլաթ) և աւելի հիւսիս՝ Արարատում՝ Կազզուան: Երրորդ՝ Արամելիքն և Սանտարը, ինչպէս և պատմական ցուցմոնքներից տեսանք, ասորեստանցոց Սինեքերիմ թագաւորի Աղրամելքը և Սանտատը որդիքը պլատի լինին, իսկ Սենեքերիմն ապրում էր նոյն ազդ սեպագրական տէրութիւնների ժամանակում, Քրիստոսից մօտ ութ դար առաջ: Չորրորդ՝ վեպի մէջ եղած Սանտարը, Արամելիքը, Մելքիսէթ, Յովան, Դաւիթ, Սատիա և ազն անուններն ել թերեւ ցոյց են տալիս ասորեստանցոց, սեմական տարրի հին ազգեցութիւնը, եթէ միան կարծելու չը լինինք, որ այդ անունները քրիստոնէութեան ազգեցութեան տակ փոխանակած են հին հաղկական անունների: Հինգերորդ՝ վեպը լի է անսպահի զրութիւններով և պարագաներով, որոնք զոյսաթիւն կարող էին ունենալ միաւն ազդ սեպագրական, դիւցադնական ժամանակներում, երբ որ ամենավն քաջութիւն և արարք վերադրում էին միան թագաւորութիւն:

Վէպի սկիզբը սեպագրական տէրութիւնների ժամանակից ենթապրելով, կարող ենք ասել, որ վեպի հնութիւնը համուռմ է մինչև Ը. զարը Քա, առաջ, երբ որ ասլրում էր Մհերի գրիմը, և մինչև երբ, ըստ ասորոց սեպագրութիւններին, Հայաստանի սեպագրական տէրութիւնները կուտ են աւել ասորեստանցոց վէմ: հէնց ազդ ժամանակներից, ազգային պատմութեամբ ես, Հայաստանի քաղաքական վիճակը փոխվում է, Հայաստանում կաղմը ւում է թագաւորութիւն:

Սական վեպի երեք ճիւղերն ես միասեսակ հնութիւն չեն վկասում: Արամելիքը և Մհերի ճիւղերն աւելի հին են երեսում, այն ինչ Դաւիթի ճիւղը համեմատաբար աւելի նոր: Առաջին ճիւղի մէջ իւշում է կռապաշտութիւն, թէպէտու ոչ հավի համար, իսկ Դաւիթի ճիւղում կռապաշտութիւնը բացական չէ երեսում, այլ զրեթէ ամերողջաղէս քրիստոնէութիւն:—Մարութակ բանձրիկ Աստուածածին, Խոչ-պատարագ, տէրտէր, ու Նշան, Մու-

խաչ, չուր Քրիստոս զայ դաստատան, և աղճ, սովորական են Դաւթի ճիւղում (աւելի հ. Սրուանձտեանի վարիանտում)։ բայց աղջ՝ Դաւթի վէպի մէջ, ինչպէս տեսանք, դուրս է դալիս աւելի միջնադարեան պատմական կեանքը,—այնպէս որ կարելի է կարծել, որ Դաւթի վէպը նոր ժամանակների ստեղծագործութիւն է և իրեն մի հատւած մասել է Աբամելիքի քիւրի աւելի հին վէպերի մէջ, որոնք սեպագրական ժամանակների հետ են կապւած թէ տեղով և թէ անուններով ու անցքով։ Մհերն խկ, որի անունը նոցնացնում են Միհր ստառծու անուան հետ¹⁾), իւր բնաւորութեամբ և արարքներով ներկայանում է ոչ իրեն քրիստոնեաց ժամանակի ծնունդ, այն ինչ Դաւթի մի բարեսիրա քրիստոնեաց մարդու ախաղ ունի Բայց և այնպէս, չէ կարելի ասել, որ Դաւթի վէպը բոլորովին նոր է. միան Դաւթիթը ժողովրդի համար աւելի սիրելի զիւցազն վիճելով, նորա վէպըն աւելի է ենթարկել նոր ժամանակի ազգեցութեան, և աւելի նոր է երեսում։ Դաւթի վէպն այնպէս զեղարւեսաօրէն կապւած է Աբամելիքի և մանաւանդ Մհերի վէպի հետ, որ չեր կարող նրանցից բաժանւած անկախ և նոր վէպ վիճել, ուրեմն պէտք է ունենաց նոր հնութիւնը, ինչ որ ունին առաջին և վերջին ճիւղիրը։

Դաւթի վէպի հնութեան ամենից գլխաւոր ապացոյցը հէնց այն է, որ նա իւր բոլոր մանրամասնութիւններով կատարեալ զիւցազներութիւն է, և ոչ զուտ պատմական վէպ։ խկ իւր կեանքի պատմական շրջանում, միջին դարերում, մեր ազգը չէր կարող ստեղծել զիւցազներութիւն, այլ միայն կարող էր հին զիւցազներութիւնն աւանդել բերնէ բերան և տալ նորան իւր ժամանակակից կեանքի երանդուն։

Բ.

Դիւցազնական վէպն ստեղծւում է մի ազգի մէջ այն շրջանում, երբ որ ազգը նոր է դուրս զալիս բնութեան իւր վերակ թողած անսուման ճընչման տակից, երբ որ նա սկսում է մաքառել բնութեան տարերական ոժերի դէմ, ոլոնք, ժողովրդի երեակացութեան մէջ մարդկավին կերպարանքի գծագրութիւն ստացած, արգելքներ են դնում նոր զարգանալ սկսող ազգի առաջ։ Ազգը, հետպհետէ չաղթելով ընութեան արգելքներին, նշմարում է իւր մէջ աժ ու զօրութիւն, և այդ ոժն ու զօրութիւնն ամփոփում է ոչ հասարակ մարդկանց մէջ, այլ այնպիսի անձնաւորութիւնների մէջ, որոնք ժողովրդի իղեալը—գաղափարն են կազմում. նրանք զիւցազներ՝ զից սերունդ են և ունին զերբնական ուժ, որ ստանում են կամ ասաւածներից

1) Материалы для изучения Ари, наркций, вып. II. յառաջալւանի մէջ եւը III.: Հ. Սրուանձտեանի հրատարակութիւնը չ'ունենալով, մենք ձեռքի տակ եւը ունեցել այ. Պատկանեանի հրատարակութիւնը:

և գերբնական արարածներից ժառանգարար, և կամ նրանց իրանց շնորհած զերմարդկային ստուքից. Դիւցաղները չեն կաւում հասարակ մարդկանց հետ, այլ իրանց նման նոկաների հետ, գերբնական արարածների, չար ովիների, հրէջների և վասարակար գաղաճների հետ, որոնցից դիւցաղնը աղատում է մարդկային աղը կամ խոր ժողովուրդը. Դիւցաղների այդ կոխը բնութեան տարմարական ովքը պատուիրացնող տարերական ախտանիների և հրէջների դէմ՝ ներկայանում է իրքի ժողովրդի կոխը բնութեան ձնչող ոչքերի դէմ:

Դիւցաղներպաթիւնը ժողովրդի խաչարածական կեանքի մասաւոր արտադրութիւնն է, երբ որ ժողովուրդը գեռ մաւար զարգացման և ինքնածանաչութեան ստոր աստիճանի վերակ է լինում. Քայց երբ որ ժողովուրդն սկսում է երկրագործութեամբ՝ պարապել, և երբ նորա միավն սկսում է չառաջաղիմել, բերանացի ուսման վտիսանակում է զրաւոր ուսումը, բերանացի վիշտաւակութեանը զրաւոր վիշտութիւնը, ալտինքն՝ ժողովուրդը պատմական կեանքի մէջ է մտնում, —նա այլ ևս չառ չէ հաւատում զերբնական հսկաների և դիւցաղների գորութեանը. նա ունենում է, որ հաւարակ, բայց խմասութեամբ և քաջութեամբ օժտւած մարդիկն ևս կարող են անել այն, ինչ որ առաջ զիւցաղն հսկաներն էին կատարում, և առնդում է պատմական սնձինք իրքի հերաները. Կական ժաղովրդի մէջ զես. երկար ժամանակ կենդանի ապրում են հին զիւցաղների արարքները, որնք սիրելի են զարձած նորան, երկար զես. պատմական անձինքների վէպի հետ ժաղովուրդն ախտրժով պատմում է իւր հին զիւցաղների քաջաղործութիւնները, միան թէ խառն պատմականի իրականի հետ, որովհետեւ ինքը պատմական չքանում է սպրում և պատմական կեանքի կնիքը սլոտի զրոշմէ և հին վէպերի վերակ—մինչև որ վերջապէս այդ կէս-զիւցաղնական և կէս-պատմական վէպերին վտիսանակում են զուտ պատմական վէպեր, խոկ հին զիւցաղնական վէպերը զառնում են հէքիաթ, որին ժողովուրդն այլ ևս չէ հաւատում թէ իրօք կատարել է մի ժամանակ, և որի մէջ զործող անձնականութիւնը, տեղն¹⁾ ու ժամանակն այլ ևս որոշ չին լինում:

Սասունցի Գաւթի և Մհերի վէպը ներկայանում է մի ալսպիսի կէս-զիւցաղնական և կէս-պատմական մէպ, որի մէջ զիւցաղնականը և պատմական—իրականը խառնւած են իրար հետ, թէ շատ հին ժամանակի պատմականը և թէ միջնադարեան ժամանակի պատմականը:

Մոկացոց և սասունցոց բերնից, բնական է, որ մինք լսենք հին զիւցաղնական վէպի մնացորդներ, բացի ուրիշ պատմասոներից, որոնց մատնացոց հնը եղել, և այն պատճառով, որ Հայաստանի այդ կողմէցի ժողո-

1) Ս. Պալատանեանի «Պատմութիւն գրականութեան հայոց»; Թ. Եղոլաւեկ «Очерки русской народной словесности».

վուրդը միակ ժողովուրդն է, որ առանձնացած ինքնուրուն կեանքով է ապրել, որի մէջ քաղաքակրթական զարգացումը ոչ միայն հնումը, այլ և նորումն զիս ուաք չէ կոխիւ. Հին ժամանակներից սկսած՝ այդ կողմերի հանքը համարւել են իրեն լեռնական կէու-վայրենի ժողովուրդ, որտեղ կեանքը նման չէ եղել միւս կողմերի հանքը կեանքին, և որոնք պահել են իրանց վարդը ու բարքի բրառթիւնը. Թովմա Արծրունին Փ. զարում արտմէս է Նկարագրում այդ լեռնականների կենցաղը. «Հնարաւորեալ լապրուստ անձանց (բնակիչք Սիմ լերինն), վճարեն վկարեսր պէտս իւրեանց լի աշխատութեամբ և սաստիկ առաւապանօք. և բնակութիւն նոցա ի խորածորս և ի փառարս լերանց, և ի պրակս մարտաց, ի զազաթունս լերանց. Եւ բնակեն առանձին ըստ առնս ազգաց, և անչափ ի բացեաց են միմեանց, մինչ թէ ոք չարանց զօրաւորաց ի բարձրաբերձ տեղեաց ուժգին խանչիցէ, հազիւ թէ ուրեմք կարիցէ առնուլ զբութիւն ձանին . . . Իւսք վրիսկեալք ի բնական հավենի լեզուէն, չազազս հեռաբնակ լինելոց և անհամբուրք միմեանց հանդիպեալք, և խօսս եղեալ կարկասուն մուրացածի բանիւք... Զարսո կերակրոց վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն... և զնոն ոստիկեալ ոտիւք ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փառատառվք սերմանեալ. և է զգեստ նոցա առափա ի ծածկութ մերկութեանն և օդ ոտիցն հնարաւորեն զծե կօշկաց, ի մորթու ալծից կադմեալ, և միուլ կերակրիւ և միուլ հանդերձիւ բաւականան զամառն և զմինան. և են առացեալ զինս աշունալս հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն զագանաց, որք ի լերինն բնակին. Ալ ես ի ժամանակս հասելոց թշնամնաց լերկիրն իւրեանց զան միաբան լիոնադինքն լոգնութիւն իշխանացն, զի են տիրասէրք... Եւ են զաղանաբարուք արիւնաբրուք, առ ոչինչ համարելով զսպանումն և զբարց հարազատաց, նաև զսնձանց ես... Սոքա են զուեանք ասորոց, ուր չոեցին զինի Ազրամելու և Աանաստրայ որբուու Սենեքերիմ արքակի թաղաւորի Աստրիստանի, և Նիմուէի, չորոց անուն ինքեանք Ս անասն աւք զինքեանս անուանենա (Փ. Արծրունի, թ. դպր., եր. 134—135):

Թովմա Արծրունու Նկարագրած սան նախնական պարզ և միանգաման բիբոտ կեանքով են ապրում և ցագմ ծօրոսի այդ կողմերի հանքը, որոնք, մինչզեռ ուրիշ կողմերի հանքը մի անսակ ծերացած ու մաշւած են, մեր ազգի առելի երիտասարդ ու թարմ մասն են կաղմում, ուստի և մինչեւ այժմ մոտ ացած չեն իրանց նախնու—Աանաստրի և նորա ժառանգների վէպը:

Թ.

Դաւթի և Սհերի դերնական ոժն ու զօրութիւնն իրանց նախնիքներից է զալիս. Դրանց նախնիքը՝ Աանաստրն և Աբամելիքը՝ հասարակ հողածիններ չեն—Ահապին ու քու քէֆու զըռ բըդը սա մարդ էն ըդ

երկու աղքէր»։ Աբամելիք ընդար զօրեղ էր, որ որ տասն տասն անգ կը փորէր, ու տասն տասն կը շինէր. ըն մէկէլ էլ զփէտեր կը բերէր, ու բանածքը երկուսով կը շնչէն... լնջան զօրեղ էն՝ որ քարէ սան քարէ սուն զարկեցին, ձաք թալիցին, թամամնցին զբերդու։ Ահա հսկաների ձեռքով կանդնած բերդերի (օգուզի բերդեր) շինութեան պարզ նկարագիր, ըերդերի, որոնք հավասարանի շատ կողմերում կան, որոնք աչժմ ևս զարմանք են պատճառում տեսնողին իրանց մունջ, անարձանագիր անուքով և իրանց մասին եղած մութ տւանդութիւններով։ Բաց ինչպէս եւ զօրեղ լինէին, Աբամելիքն ու Սանասարը չեն հանդիսանում իրբն կասարեալ հոկաներ և զիւցազներ։ Նրանք մարդ-հսկաներ են, որոնք իրանց ոչըլ ժառանդար մի աստուծուց կամ զերբնական արարածներից չեն տառացած։ Նրանք աւելի զօրեղ ու քաջ են, քան թէ հասարաւկ մարդիկ։ Աբամելիքի և Սանասարի բոլոր արարքները հասարակ մարդն ևս կարող է, անել, միան աւելի երկար ժամանակում, մեծ դժւարութիւններ ու խելքով. այն ինչ նրանք, իրբն ոչ սախարական մարդիկ, իրանց ուժովը կարճ միջոցում են անում։

Գուցէ ընթերցող հասարակութիւնը կարծէ թէ զպրոցական զբուանքներն ուսուցական առարկաների զասառութեան համար մեծ արժէք չ'ունին: Աական փորձը ցուց է տալիս, որ այդ զիտութիւնները և զըլիաւրապէս երկրաչափութիւնը զմւար է արմաս ձգում մանկան մուտքու շրջանի մէջ: Դորա սկզբնապատճուր կարելի է նորա մէջ զտնել, որ այդ տուարկաների զասառութիւնը սկսում է ասանց հիմնելու աշակերտակ փորձնական աշխարհի վերակ: Չը պէտք է երկրաչափութիւնը սկսել ըստ զիտուական սխոտեմի կէտի և ուղիղ գծի վերլուծումից, այլ տարածութիւն չափելու է զպրոցական երկրաչափութեան սկիզբն: Աական զասառնը չափելու նիստ շատ քիչ կայ և բացի գորանից, բոլոր աշակերտներն ել անկարող են մասնակցել, վասն զի զպրոցի տարածութիւնը փոքր է: Աւստի պէտք է նունը զպրոցից՝ դորա փորձել: Միթէ բնութիւնը քիչ նիւթ է տալիս մեզ չափելու համար: Անաւասի՛կ ուղիներ, շինութիւններու ծառեր, արտեր, մարզագետների նախ պէտք է չափել քայլերով, բայց որովհետեւ աշակերտների քայլերը տարբեր են, ուստի նոքա կը փափազին մի որոշ չափ ունենալու: Գործածութեան համար կարող ենք հետներս մի քանի որոշ չափեր վերասնել, օրինակի համար՝ մի սամէն երկարութեամբ ձաղ, մի քանի թուկեր, մէկն, դիցուք, մի սամէն, իսկ միւսն՝ հինգ: Աէդ վերջինի միջոցով, ամբողջ զասարանի մասնակցութեամբ, կարելի է մի վերաստարածութիւն չափել, որը նաև աշխարհադրութեան համար անհրաժեշտ է: Փորբիկ թուկով կարելի է ծառերի բունք չափել: Այս գէպքում պէտք է նախ վարժաւած աշակերտներին հարցնել նորա մօտաւորապէս որոշումն, ապա թէ թուկով չափել, որպէս զի ամրող զասառունը տեղեկանութիւնը պէտք է աշակերտները վարժւեն անկիւն չափելում, օրինակի պէտք է աշակերտները վարժւեն անկիւն չափելում:

Նակի համար՝ մեծ քարեր, արտերի սահմաններ և ալճն։ Գեռ երկրաչափութեան սիստեմատիկական գասառութիւնը չը սկսած, աշակերտները պէտք է նորա վերացական Փիզաբանները բնա թեան մէջ լամախ տեսած և քննած վնին, ըստ որում աշակերտը շատ անդամ երկրաչափական Փիզուրալի ներքոյ ալճ է կտրծում, ինչ որ կավեճով գրաստախակի վերաց կամ մատառով իր տեսրակի մէջ նկարուած է, սական թէ նա իւրաքանչիւր քայլափոխում եռանկիւնների, քառակուսինների, շրջանների է հանդիպում, նա չէ նկատում ալդ։ Չը պէտք է եռանկիւնու ընդհանուր վերլուծումն տւանդել, եթէ աշակերտն իրականութեան մէջ բազմաթիւ եռանկիւններ չէ տեսել։ Նողնը վերաբերում է նաև միստ երկրաչափական մարմններին։

Զբոսանքները կարող են լամախ թւաբանական խնդիրների վերլուծման ասիթ տալ։ Թող վիէ ընթերցողը, որ իւրաքանչիւր ժողովածուի հարիւրաւոր թւաբանական խնդիրների երկրաչափական նիւթի են պարունակում իրանց մէջ։

Է. ԳՃԱՂՔՈՒԹԻՒՆԻ

Յոլոր հեղինակութիւն ունեցող մանկավարժներն ալս առարկակի աւանդութեան մասին տարիեր կարծիքներ են արտաչափում։ Սական ցանկալի է, որ այն ուղղութիւնը դերիշող հանդիպանական որը Փիլօսֆալական մանկավարժութեան սկզբունքների վերաց է հիմնած։ Ըստ ալդ ուղղութեան, պէտք է ըսլոր սամնդելի առարկաներն իրար հետ կապւած լինին, որպէս զի իւրաքանչիւր դասարաններմ աւանդուղ առարկաներն միասին, որպէս ամբողջութիւն, համապատասխանեն մարդկութեան կինցազակրթութեան զարգացման մի պարբերութեան։ Զանազան տարածանքների առիթ չը ապալու համար՝ պարզենք մեր սամանական անցում է սամներն։ Իւրաքանչիւր անհատ իւր կեանքի զարգացման մէջ անցում է նողն պարբերութիւններն, ինչ որ ընդհանրապէս մարդկութիւնը։ Ինչպէս իւրաքանչիւր անհատ նախ անցել է իւր մանկութիւնը, նողնպէս էլ մարդկութիւնը անցել է իւր մանկական հասակն։ Մարդկութիւնն կեանքի առաջնական անցել է արդիւնքն է հերթամթը։ Հետեաբար, հիմնելով վերոշին պարբերութեան արդիւնքն է հերթամթները լինին մանկան առաջին տարւազ զասառութեան նիւթը, ըստ որում զա հոգեբանօրէն (psychologisch) ամենանօտն է մանկան մտաւոր շրջանին։ Իւրաքանչիւր դասաստան պէտք է, ըստ վերոշիւալին, մարդկութեան կենցազակրթութեան մի որ և իցէ պարբերութեան համապատասխանէ։ Խոկ գորա համար էլ իւրաքանչիւր դասաստանը պէտք է անսպիսի նիւթ աւանդւի, որ արդիւնք լինի մարդկութեան ալդ միջոցին համապատասխանող մտաւոր զարգացման¹⁾։ (Ալս Գի-

¹⁾ Համեմատի՛ր «Die Kulturhistorischen Stufen im Unterrichte der Volksschule».

լոսօֆալական մանկավարժութեան սկզբունքը կարելի է մասնաւորել՝ փոխանակութեան՝ իւրաքանչիւր ազգի վերաբերութեամբ։) Այդ գլխաւոր և կենցաղակրթական նշանակութիւն տնեցող նիւթն ներկազանում է մեզ բարովագլատութեան դասի մէջ (Gesinnungsunterricht)։ Այդ վերջինն է որոշում և մատակարարում միւս առարկաների դասաւութեան նիւթը։ Այժմ հասկանալի է, որ բոլոր առարկաներն իրար հետ սերտ լարաբերութեան մէջ գտնելով՝ պէտք է յարմարւին այն նպատակին ծառավելու, որ դասաւունը ընտրել է իրան համար։ Խնչպէս զանազան դոների դասաւորութիւնից յառաջանում է մի իւղանկար, ինչպէս իւրաքանչիւր գոյն օժանդակում է իւղանկարի մի որ և իցէ առարկանի հաւատարիմ պատճենը ընդօրինակելու, այնպէս էլ իւրաքանչիւր առարկան պէտք է իւր ոճին չափ աշխատի, որ դասաւունը կենցաղակրթական մի պատճական պարբերութիւն ներկայանաք։ Հետևաբար եթէ գծագրութիւնը նոյնպէս օժանդակող առարկաներից մէկն է, ապա զորա դասաւութեան համար կարենոր են դպրոցական զրոսանքներ։ Նորա նիւթը պէտք է այն առարկան լինի, ինչ որ մանուկն տեսնել, դիտել և նորան իւր հոգու մէջ ամուր տեղ է տևել Բնագիտութեան, պատմութեան, ուսողութեան և աշխարհագրութեան զրոսանքների միջնորդութեամբ զիտած ծննդավայրի նիւթերը կարող են զծագրութեան առարկաները լինել։

II.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԶԲՈՍԱՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆԻ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Դպրոցական դաստիարակչական ազգեցութիւնը նսեմանում է այն հանդամանքում, երբ ուսուցիչներն անձամբ աշակերտների հետ շատ քիչ են լարաբերութեան մէջ գտնեւում։ Դասի ժամանակ ուսուցիչը ծանօթանում է աշակերտների հետ միմիան միակողմանի կերպով, խակ դասամիջոցներն էլ կարճ լինելով՝ լսանդարտում են ուսուցչի դիտաւորութեան իրազործումն։ Ատկայն լարաբերութիւնը կարող է զարդարական զրոսանքների ժամանակ տեղի ունենալ, ուր աշակերտները ներկայանում են այնպէս, ինչպէս և իրապէս են։ Մանկական հոգին ճնշող նեղ դասարանին փոխարինում է անսահման բնութիւնը, ուր ուսուցիչն ոչ թէ խիստ կարգապահ է հանդիսանում, այլ առաջնորդ և մանկական ուրախ զբացումներին մասնակից։ Այժմ ուսուցիչն առիթ է ունենում զիտելու մանկան հոգու խորքերն, նա կարող է աւելի հեշտապես մօտենալ երբեմն սորան, երբեմն նորան և հետազօտել հետաքրքիր զբոցի օգնութեամբ սանիկի սիրութ, զբացումները և յանկութիւնները։ Այս դէպքից յետու վիրատի կարող է ուսուցիչն իւր սանիկին

ճանաչել և դասուել։ Առաջ նա լածախ կը խռոտավաճեի, որ այս կամ այն աշակերտի մասին սխալ կարծիք է կապմած եղել, որ սորան կամ նորան մինչև աչօր չէ ճանաչել։ Նա լածախ կը տեսնէ, որ այն աշակերտն, որին մինչև աչօր պարտաճանաչ է գտել, կոպիտ և ուղարկանութիւն ունի։ Դպրոցական զբոսանքների միջոցով կը տեսնէ նա բարի, գոհացուցիչ, խաղաղատեր, երախտապարա և ընդհակառակն երախտամոռ, չարամիա, դժգոհ մանակներ, քանից անգամ ուսուցիչն կը դիմէ, որ այս կամ այն մանուկը՝ կարծես թէ ճանապարհի նեղութիւնից ստիպւած՝ անզթաբար կոխելով անցնում է արտերի սահմանները։ Ոչ սակաւ կը տեսնէ նա և այնպիսի մանակներ, որոնք չեն կարսղ ճանապարհն հանգիստ դնալ, առանց ծառերին խփելու, ճիւղեր պուկելու և խալ սրաւազները գրալան լցնելու։ Յածախ նորա ականջին կը հառնեն աշակերտների իրար մէջ տեղի ունեցած խօսակցութիւններն, որոնց մէջ անթարռականութեան հետքեր կը գտնէ. նա պէտք է տարարազդաբար տեսնէ թէ ի՞նչպէս այս կամ այն աշակերտն անզթաբար սպանում է մի որ և իցէ կենդանի, թէ ի՞նչպէս միքանիսն ծաղրում են բեռն շալակած զիւղացաւն։ Արդար և ճշմարիտ դաստիարակն ավագիսի դէպքեր տեսնելիս կը վշանաւ։ սական միայն արդ ուսումնասիրութեան միջոցով կարելի է մաքրել աշակերտների արտերն, և հէնց աշդարձ կարող է նա աշակերտի լաւ և գտա կողմերն ճանաչել, նորա որտի մէջ արմատացած չարութիւնները զիւնենալ՝ այդ ամենը հիմնային արմատախիլ անելու մտքով։

Սորանալ չէ սահմանափակւամ զպրոցական զբոսանքի նշանակութիւնը զատափարակութեան գարծի մէջ։ Ուսուցչի և աշակերտի մէջ տեղի ունեցած լարաբերութիւնը կարող է բարեկամական բնաւորութիւն ստանալ, որի հետեւնքն այն կը լինի, որ աշակերտը կը սկսէ իւր ուսուցչին սիրել և լարգել, և աճունեան կը ճանաչէ նորան իւրեւ բարի խորհրդատու և ճշմարիտ բարեկամ։

Եթէ աշակերտներին լաջարւի զպրոցական զբոսանքների միջոցով ուսումնասիրել իրանց ծննդավայրը, այն ժամանակ կը վառւի նոցա սէրը զէպի իրանց երկիրն։ Ծննդավայրի առաւելութիւններն իմանալուց կը զարգանաւ նոցա մէջ պարտաճանաչութիւն զէպի այն կառոր հողն, որում նոքա ծնւել սնւել և մեծացնել են, և որից կապւած են մանկական կենաց ամենաքաղցր վշողութիւնները։ Նոքա կը սովորեն իրանց սրտին մօտեցած ավտ վալրը զիսուկցութեամբ ուրիշել և ձեռքից բաց չը թողնել։ Կարաքանչիւր բարձրաւանդակ և ձոր, իւրաքանչիւր անտառ և գաշտ, իւրաքանչիւր հովատ և մարզագետին, իւրաքանչիւր անկիւն, ուր նոքա իրանց մանկութեան սուրբ ժամերն են անցրել անզին կը լինի նոցա համար։ Եւ միթէ կարող է մոռացւել ամենաչն սուրբիկան անզամ, ևթէ նա մարինի ծանօթ երկրում զուգորդւելով քաղցրակիր սովաւորութիւնների հետ, մանկան մոտաւոր րջնիներում և զիսուկցութեամբ...

«Աշխարհիս մէջ ամենաարդար գործն և աճնկարագրելի ուրախութեանց աղբխարն է բնութեան հետ զբարամնո, առում է Գեօթին: Մեր սանիկները պէտք է զիտակից լինին այդ մշտին և համապետն, որ ոչինչ չը կա՛ աւելի ուրախացուցիչ, որքան բնութեան ուսումնասիրութիւնը, որի զարգոնքիքներն անկատակ խորավիթիւններ տնին և որ սակաւն մարդուս թույլ արւած է սուր հաւեացքներ նետել այդ խորավիթիւնց մէջ: Մեր զարգացները չեն ստեղծում, չառաջացնում աշակերտների մէջ այդ համոզմունքն: Յաճախ կը աւեսնէ ընթերցողը աշակերտներ, որոնց օապրոտի է բնութիւնը և որոնք կատարեալ սասնասրտութեամբ են նախում նորա զեղեցկութեան վերաբ Գեօթին աղբախինների համար առում է: «Ծոցա զպարանքները փակ են և սրանք մեռած»:

Մինչև անգամ չաճախ կը հաճդիպես հասակառոր աճճնաւուրութիւնների, որոնք մինչև անգամ իրանց ծննդեան տեղին շրջակակըում զանուղ սարերը, հովիանները, անցքերը, անտառները, զետերը, գետակները, կենդանինները և բայսերը չեն ձանաչում, չը նաև լուս որ խրաքտնչխր օր առիթ աճին դիսելու: Աբագիսինների մէջ չի զարգացած բնութեան ձաշակը, իսկ զրա զարգացումն կալուզ է տնիկի անենալ զորոցակիսն զբօսանքի միջոցավի նէն անուրանալի է, որ մի լաւ զասասութիւնն զասարանի մէջ շատ բան կարող է անել բնութեան ձաշակն զարգացնելու նպատակով, սակայն խօսքերը չեն կալուզ մարգուս վերաբ այն տպաւարութիւնը գործել, ինչ որ բնութիւնը աճմիջապէս զործում է: Ան զպացումներն, որոնք սասնում է աշակերտների թափասուղ խումբը մի անսաս մանելիս կամ ծաղկափթիթ մարգագետնների մօսուղ աճնդելիս, չէ կարող ամենաաջող զասասութիւնը զառաւաշացնել արտաքու զբօսանքի:

Եթէ զպացական զբօսանքներին չաջողում է զասասութիւն հետ ձեռքի տւած սանիկների մէջ զպացումներ չառաջացնել և նոցա տշապրութիւնը զրաւել բնութեան զեղեցկութեամբ, շապա չուսալի է, որ աշակերտի բնութեան հետ անեցած իւր էարաբերութիւնը ընդմիշտ կը պահպանէ: Կոնդակն չը մուանանք վշել որ մի ճշմարիտ զասափարակ պէտք է բնութեան զեղեցկութիւնից օգտած քաղել և աղողէ աշակերտի կրօնական զպացմանց միրաբ ժամանակ է վերջապէս թողնել կրօնական զազափարանների լոկ տեսական աւանդումն: Ո՞րն է ամելի լաւ միջոց բան բնութիւնը՝ Աստուծոյ զազափարն աշակերտների մէջ ամրացնելու:

Եթէ ձիշգ է, որ բնութիւնը մարգուս սրախ մէջ զպացումներ է չառաջացնում, ասլա պէտք է այդ զպացումներն արտակազուեն և չը խափանեւն: Այդ վերջինների ճնշողութիւնը զասափարակութեան սխերիմ թխամին է: Մարդ չի կարող հանգստութիւն զանել մինչև սրտի մէջ Աքն ըզ զպացումներն չը թափէ—չը թեթեանակ այդ բնուից: Ահաւասկի զպացմանց այդ արտակազութիւնն է: Երգը: Ակ վերջինը զպրոցական զրօսանքի աճքաման բարեկամն է: Ա՛յս ինչպէս թեթեանում է մարդուս սիրամն, երբ

բնութեան գեղեցկութիւնը զիստվո՞ գեղգեղում է իւր ձախը: Թէ ապրա-
բաղաբար քէչ հայկական երգեր ունինք, որոնց նիսթը բնութիւնից է
վերցրած, սական եղածից պէտք է օրաւել: Այս զիսպում, կարծես,
մեր բանասեղճները վարակւած են հայրենասիրական երգերի սանդառ-
գործութեամբ, թէ այս արդիւնք է միացն բանաստեղծական կեղծ հանձարի:

III.

ԱՅՆ ԱՐՑԱՔԻՆ ՊԱՅՄԱՆԵՐԻՆ, ԱՐՈՆՑԻՑ ԿԱԽՈՒՄԻՆ ՈՒՆԻ ԳՈՐՈՅԱԿԱՆ
ԶՅՈՍԱՆՔԻ ԱՐԴԻՒՆԱԽՈՐ ՀԵՏԵՎԱՆՔԻ:

Աւելորդ չի լինիլ թւել այն զլիստուր պատմաններն, որոնցից իսկա-
պէս կախած է զալոցցական զրօսանքի լաջողութիւնը, որովհետեւ ազդ
վերջինը չէ մի հասարակ զրօսանք, այլ զաս, որն ունի իւր սիստեմատի-
կական նպատակի:

Նաևս, ինչպէս բարեկիփոք ուսուցիչը դպրոցի զաստուութեան համար
մանրուման պատրաստում է, այնպէս էլ պէտք է զրօսանքի համար պատ-
րաստի: Մեր սատածներից հետեւում է, որ ուսուցիչն աշակերտի ծննդա-
վարը և նորա մերձակալ շրջականը, ըստ նորա աշխարհապրական, պատ-
մական, բնուդիտական տեսակէտից հիմնովին պէտք է ուսումնաաիրած լի-
նի: Աթէ աղդ ուսումնասիրութիւնն էլ աեզի է ունեցել, պահանջւում է
իւրաքանչիւր զրօսանքի համար մասնաւորապէս հիմնովին նախապատ-
րաստել: Ուսուցիչն պէտք է կատարեալ տեղեակ լինի այն ուեզին, ուր
պէտք է աշակերտները գնան, և այն ստարկաներին, որոնց վերակ աշա-
կերտների ուշադրութիւնն պէտք է դարձնել: Նա պէտք է սկզբից իրան
հաշիւ տուած և չտփած լինի այն տարածութիւնն, ուր զրօսանքը տեղի է
ունենալու, որպէս զի աշակերտները շը լուսնին ու շը վեսակն իրանց առող-
ջութիւնը: Մի խօսքով՝ ուսուցիչը պէտք է ամբողջ զրօսանքից պարզ զա-
զափար ունենալ, իսկ այց կարող է աեզի ունենալ, ևթէ նա միզրից աղ-
ցելէ այն աեղերն, ուր պէտք է իւր աշակերտներին իսուաչ առաջնորդէ:

Խւրաքանչիւր դպրոցական զրօսանք պէտք է մի մօսաւոր նպատակ
ունենալ, որը բալոր մանուկներին պէտք է ծանօթ լինի: Աննպատակ թա-
փառելն չէ կարելի զպրոցական զրօսանք անուանել, որովհետեւ զպրոցն է
կամքի զարգացման տաճար: Հետեւաբար, պէտք է աշակերտներին սկզբից
լավտնել, թէ մենք կսմինում ենք ակար այս ինչ դիւզն աւցելիլ և զիւ-
զացիների արտներում ցանած բոլորին ծանօթանալ կամ այն ինչ լճակի
մօտ շը նել և զիւնել այն բաներն, որոնք անում են նորա սիմերին և այն
կենդանիներն, որոնք ապրում են աղդ վաքրիկ լճակում: կամ ուզում ենք
տեսնել մի այլ զիւզի մէջ գտնւալ աւերակներն: Այսպէս՝ աշակերտներին
ծանօթացնելուց լիտով, պէտք է նոցանից պահանջել, որ նո-

քա այն բոլորն ասեն, ինչ որ այդ աւերակի մասին զիտեն՝ անոնել և լսել են:

Բոլոր աշակերտները պէտք է ունենան իրանց հետ քսակներ իրանց ուսանվագներով, բայցի այդ՝ ուսումնարան բերելու համար այն բացերն, կամ այն հանքերն և այլ առարկաներ, որոնք կարելի է քսակի մէջ դնել: Ուսուցիչն պէտք է որոշէ թէ ի՞նչ ժամերում պէտք է ուտել: Կարող է նույ պատահել, որ զիւզում մնան և կաթ ու մածուն պատվիրեն, ուսուցիչը չը պէտք է իւր համար աշակերտներից ջոկ աւելի բան պատւիրէ:

Դպրոցական զբօսանքի ժամանակ պէտք է խիստ կարգապահաթիւն լինի: Սորան կարող է օժանդակել մասամբ ուսուցչի և աշակերտի բարեկամական շարաբելութիւնը. սակայն պէտք է աչքի առաջ ունենալ մի քանի որոշ կարգապահական օրէնքներ, որոնք անհրաժեշտ են զբօսանքի ժամանակ: Նախ՝ այն աշակերտներն, որոնք այդ զբօսանքին մասնակցելու են, պէտք է զպրոցի բակում զայլ-զայլ կանգնեն զէմքերը զէպի ուսուցիչըն արած: Ազդ վերջնը բացատրում է, թէ մի որ և իցէ առարկայ զիտելիս, ինչպէս պէտք է իւր չորջը խմբւեն, որ իրար չը խանդաբարեն:

Ապա սկսում է զնացքն: Առանաւարտկ ուսուցչից է կախուած թէ աշակերտներն ինչպէս պէտք է ճանապարհին քավին. ևթէ տղուք են՝ պէտք է քիչ թէ շատ զինուորական խսառութեան հետեւն, ևթէ աղջկերք են՝ թաղնել իրանց կամքին: Գնացքի ժամանակ պէտք է ուսուցիչն երբեմն մէկին, երբեմն միւսին մօտենադ և զրուցէ: Հետեւաբար, սիսալ կը լինէր, ևթէ ուսուցիչն անխօս վետեից զնար: Եթէ ճանապարհին զիտելու մի որ և իցէ բան կազ, պէտք է ժամանակութեամբ կանգնելու նշան տալ: Դիտողութիւնից և խօսակցութիւնից մատու պէտք է կրկին զնացքն իւր աւելից շարժւիւ: Եթէ մի որ և իցէ զէսպատմ պէտք է աշակերտները կանգ առենեն հանգստանալու համար, կարելի է նոյս երգել տալ կամ խաղացնել, սակայն ուսուցիչն ինքը պէտք է որոշէ այդ խտղն, բայ որում եթէ աշակերտներն մնայ, ժամեր կը տեմ: մինչեւ որ համաձանւեն իրար հետ:

Դիտողութեան ժամանակ պէտք է աշակերտները զիտակից լինին, որ կարենու է լարած ուշագրսութեամբ զիտել առարկան, որից լինու պէտք է նոքա իրանց խօսքերով նկարագրմն այն, ինչ որ տեսնում են: Վերազանալիս անհրաժեշտ է երգեցողութիւնը, որպէս զի լողնածութիւնը մոռանան: Դպրոցական զբօսանքների թիւը չը պէտք է մի քանիսով վերջացնել. մի երկու զէսպեր չեն կարող զոհացոցիչ լինել իւր ալդ զործը հասկացող ուսուցչի համար:

Իսկ իւրաքանչխոր պարագանաչ ուսուցիչ, ևթէ նա զիտէ անձնւիրութեամբ կամ հաւատարմութեամբ ծառ տէնել իւր բարձր կոչման, նա կը հետագուէ իւր սուրբ նպատակին հասնելու բաշրու միջոցներն, բայ որում և ըմբանելով զբօսանքի կարևորութիւնը, կ'ուստմատիրէ, և նոլ անից ա-

ելի շատ օգոււել կը կարտղանաչ, քան մեր զրիչը ակսոեղ բացատրել կարողացաւ: Միայն այն ուսուցիչն, որ, իւր սուղ զիառթեամբ բաւականանալով, իւր համար օրէնք չէ դնում օրըստորէ լառաջաղիմելու, ապա և չէ օգոււում ամբողջ ուսումնական աշխարհում հաստատապէս ընդունւած դաստիարակչական միջոցներից և պավաններից և մուանում է մեր շեշտած կարեոր կէտերը՝ թո՛ղ նա անուշադիր թողնէ մեր լողւածն, որտինետե այդպիսիների համար չէ զրւած մեր մանկալարժական զրուցակցոթիւնը:

* * *

ԵՐՈՒԱՆԴ ՊԱԼԵԱՆԻ

Յուզեի'ր, դու իմ սի՛րտ, խոռվայոյզ ուժգին,
Յուզեի'ր դու անզուսալ վալըի ձայներով,
ինչպէս ամպերի որոտ լալագին
Տանջող արձագանք անվերջ կրկնելով:

Թմրած է հոգիս անյայտ բաղձանքով,
Դաժան խորհուրդներ ուղեղս են ոյրում...
Սոսկ արտասուքից հիւսւած երգելով
Դու պարգևեի'ր ինձ նոր երանութիւն:

Ցըրւի'ր անցածի գոռ լիշտակներ,
Ոյժ տուր անտըրտունջ ներկան կրելու,
Նոր ապագայի երջանիկ լոյսեր
Ծընեցրո՞ւ իմ մէջ կրկին ապօելու:

ՏԵՆՉ ՀԱՅՐԵՆԻՔԻ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԼԻԱՍԵԱՆՑԻ

Տւէ՛ք ինձ թևեր՝ թռչեմ սլանամ
Այն տաք երկիրը, ուր կանաչագեղ
Հողն է ծածկած, և անուշահամ
Ազրիւր կտրկաչում, որպէս պարզ բիւրեղ:

Ա՛խ, ինձ թողէ՛ք ազատ թռչելու
Կանաչ սարերի, ձորերի միջով,
Նազելի կոլսի գիրկը հանգչելու,
Պանծալի ժպիտ տեսնելու տենչով:

Ինձ թոյլ տըւէ՛ք զւարթ ճեմելու
Կապոյտ աստղազարդ երկնքի տակին,
Որ միշտ շողեցով ոսկի արևու
Ուրախ ցնծում է հեղի երեսին:

1889 թ. 31-ին մարտի:

ԸՆԿԵՐՈՒՅ

ՅՈՎԱՆՆԻԿՅ ՄԱԼԻՍՍԵՍՆՑԻ

Տո՛ւր ինձ քո ձեռքդ, ընկե՛ր թանկագին,
Սեղմեմ յուսաբեկ, ալեկոծ սրտիս,
Եւ նորա սիրոյ ուժով կաթոգին
Հնչեցնեմ լարերը ժանգոտ քնարիս:

Եւ սառ մատնելով զարկեմ թելերին՝
Նորից արձակել աւետիք սիրոյ,
Եւ նորից մարդկանց լքեալ սրտերին
Արծարծեմ ձայնը խեղդւած յուսոյ:

Եւ առհաւատչեալ սորա փոխարէն,
Գոչեմ բորբոքւած ձայնը հառաչի.
Տո՛ւր ինձ սփոփիլ մաշող ախտերէն,
Որ յայսը իմ մէջ նորից կանաչի:

Եւ ես ամոքւած ծանրաբեռ վշտից,
Բարձր կը հնչեմ եօթնազի քնար.
Ճմլւած սրտիս զիրաւոը խորքից
Մարած ձայն սիրոյ թո՛ղ լսէ աշխարհ:

Եւ գուցէ ձեռքդ քո ընկերական,
Լինի սփոփիչ իմ հեղձւած հոգուս,
Եւ գուցէ խօսքդ ազնիւ մարդկական
Տայ եռանդ հնչել հանգած լարերուս:

ԲԱՐԻ ՊՏՈՒՂ

Յ. ԳԱՐԵՑՅԱՆԻ

Ա.

Երկար ժամանակ ծառայում էր բիձայ Սարգիսը Դաւիթ աղայի դրանը և միշտ գոհ էր նորանից:

Նորա պաշտօնը շատ բարդ չէր: Դաւիթ աղայի բակն և դուռն էր աւելում առաւօտերեկոյ, բակի ներքին ծայրին շարունակ կասպած գամփոներին էր կերակրում և տան առաջի ծաղկանոցն էր ջրում:

Բացի բիձայ Սարգսից՝ Դաւիթ աղայի բակումը շատ ծառաներ կացին այլ և այլ պաշտօններով. խոհարար, կառավար, իրանց օգնականներ, լւացարար, ազալսին, սենեկապան, սպասուհիք և այլն: Բիձայ Սարգիսը նոցա ոչ մէկի հետ յարաբերութիւն չ'ունէր. ճաշւայ որոշ ժամանակը միայն իւր բաժին մի տեսակ պարզ արգանակը ստանում և բերում էր իւր փոքրիկ գոնապանական խցիկումն ուսում և մինչև միւս օրը սպասաւորներից ոչ մէկի հետ չէր տեսնում:

Նատ մաքրասէր էր բիձայ Սարգիսը, նա միայն իւր տիրոջ բակը չէր յստակ պահում. ողջ քաղաքումը ասելիք էր դառել Դաւիթ աղայենց փողոցի մաքրութիւնը. ասելը ձեռքին նա պատրաստ էր փողոցի ամենափոքրիկ ցեխն անգամ սրբելու:

Աղայական ինքնասիրութիւնը գոհ էր այդ բանից և բիձայ Սարգիսը երբեմնապէս արժանանում էր տիրոջ կողմից մի փոքրիկ չնորհքի: Դաւիթ աղան սովորութիւն էր արել կառքից իջնելու ամիսը մի երկու անդամ, կիւրակե օրերը, մի քանի կոտեկ սպիտակ փող նւիրել իւր գոնապանին, ասելով. քեզ արքայութիւն,

բիձայ Սարգի՛ս, լաւ ես զուլլուղ անում. էս մի քանի կոսդկը տա՛ր երեխաներիդ համար մրգեղին ա՛ռ:

Սուտ չեր ասում Դաւիթ աղան. բիձայ Սարգիսը մեծ ընտանիքի տէր էր և շատ աղքատ. իւր չնչին ոռնիկն էր նրանց միակ ապրուսոր: Նեշտ բան չէ եօթն աղջիկ և մի տղայ ունենալ, անդորձ անբան, քաղաքի հեռու թաղերից մէկում՝ մի էժանագին կիսաւեր բլբլացքի տակ ժողոված:

Եյժէ Սարգիս բիձայի պինդ կազմւածքը չը լինէր, դժւար էր նորան բազմաթիւ անմայր զաւակների հոգսի տակ չընկճւիլ. նորալծակից ամուսինը բաշխելով բիձայ Սարգիսն վերջին արու զաւակը, ինքը երկինք գնաց՝ մարդին տոկունութիւն մաղթելու անտանելի ցաւերը կրելու համար:

Բիձայ Սարգսի ընտանեկան զրութիւնը անյացտ չեր իւր տիրոջից և այդ պատճառով նորան իրաւունք էր տւել գիշերը շատ ուշ գնալ իւր զաւակների մօտ անցկացնել և առաւօտը շատ վաղ իւր գործին կինալ:

Բիձայ Սարգսի մաքրասիրութիւնը յագեցնում էր և տիկնոջ փառասիրութիւնը: Ինքնազոհ ժպիսով ծաղկահասակ տիկինը ներս էր կանչում բիձայ Սարգիսն սպարտէզ, երբ իւր բարեկամուհիների հետ ծաղկանոցի սեղանի վերայ, թէյի բաժակը ձեռքին, գովասանքներ էր լսում իւր սիրած սպարտիզի կանոնաւորութեան համար հաճոյախօս հիւրերից:

— Ըհը՛, բիձայ Սարգի՛ս, քեզ բաղնիսի փող, ասում էր քեզշահայեաց տիրուհին, իմ սիրելի հիւրերը հաւասնում են քո սպարտէզը:

Սարգիսը խոնարհութեամբ ստանում էր սպիսակ փողը և հեռանում:

— Միտս բերես, որ այս իրիկուն քո աղջիկների համար շորացու էլ տամ, ձայն էր տայիս ետևից տիկինը, և Սարգսի տան հանգամանքը հիւրերին պատմում, աւելացնելով՝ թէ ինքն է նրանց հագցընում և խնամում:

— Գիտենք, զիտենք, մենք ճանաչում ենք քո ողորմած բնութիւնը՝ միմեանց աչքով էին անում հիւրերը, պատասխանելով իրանց մեծարող տանտիկնոջը:

Նշանացի խօսակցութիւնն անտեղի չեր. շաբաթը մի երկու

անդամ լսում էին շարունակ Դաւիթ աղայի կնոջից բիձայ Սարգսի աղջկանցը շորացու ուղարկելը. ազգպիտով նրանք ծալքերով հագուստ պէտք է ունենացին, այն ինչ բոլորը կիսամերկ էին:

Տիկինը, խօսք չը կայ, մոռանում էր իւր խոստումը և տարին մի երկու անդամ իւր ապաստհու հնոտիները ուղարկում էր Սարգիս բիձի աղջիկներին:

Բ.

Դարնան գեղածիծաղ օրերից մէկումն Դաւիթ աղայի միակ որդի եօթը տարեկան Վասիլը ման էր գալիս իւր օտարազգի դաստիարակուհու հետ իրանց պարտիզում և ծաղիկներն անխնայ պոկտելով շաղ էր տալիս գետնին:

Յանկարծ պարտիզի երկաթեայ վանդակների արտաքին կողմից—բակից ցնցուիների մէջ փաթաթւած իւր հասակակից մի երեխաց թոյլ ձանով Վասիլի անունը տւեց:

Վասիլը յւո նայեց, տեսաւ օտար մանուկին, մի խորթ հայեացք ձգեց նորա վերայ և շփոթւեց. երեսի նա զգւանք կամ երկիւղ զգաց առաջին անդամը, որ շրթունքներն ուսւեցրեց և փաթաթւեց գաստիարակուհու հագուստի քղանցին. բայց նա կրկն սիրտ առաւ անձանօթ երեխայի քաղցր նայւածքից, մօտ զնաց վանդակին և հարցրեց.

—Ո՞վ ես գու։

—Բիձայ Սարգսի տղան եմ, անվատահ պատասխանեց մանուկը, անունս էլ Արտեմ է։

Վասիլը թէե յաճախ խաղում էր բակումը, կամ պարտիզումը, բայց նա երբէք տեղեկութիւն չ'ուներ Սարգիս կամ Մարկոս բիձաների գոյութիւնից։ Տանու ծառայք, արդարեւ, վլտում էին իրանց ներս ու դուրսը, բայց նորա ի՞նչ ցաւն էր ուշը դարձնել սոտր արարածների վերայ, կամ ո՞վ իրաւոնք կը տար միակ պաշտելի զաւակին՝ ծնողական աչքերի լոյսին՝ ծառաների կամ աղախինների հետ լնկնել։ Արդեւսէր ծնողը թոյլ ևս չէին տալիս Վասիլին խաղալ մինչեւ անդամիրանց շրջապատող դրացի մանուկների հետ Միակ խաղները և երեխայի հետ յարաբերութիւն ունեցողը իւր Փրանսիացի դաս-

տիարակչուհին էր, որի պարտքն էր կառարել երեխայի ամենատեսակ հաճոցը և խօսել նորա հետ Փրանսերէն և ոռւսերէն:

— Դու ո՞վ ես, կրինեց Վասիլլ հարցմունքը:

— Ձեր գոնապան բիձայ Սարգսի տղան եմ, միթէ դու իմ հօրս չես ճանաչում, ձեր պարտէզն իմ հացըն է ջրում, այդ ծաղիկները իմ հօր ցանածն են. ընչու ես կորտում և թափում, ափսոս են, շարունակեց Արտեմը. եթէ զրանք քեզ պէտք չեն, ինձ բաշխի՛ր, ես կը տանեմ իմ քոյլերին:

— Տուն արի՛, կանչեց Վասիլլ:

— Խ'նչ ես ասում, Վասեա՛, ընչի՞ պէտք է օտար աղքատ երեխէն առն դայ քեզ մօտ, նա քո ի՞նչ ընկերն է, յանդիմանեց դաստիարակչուհին և խոժոռ. դէմքով հրամացեց Արտեմին հեռանալ:

— Խ'նչպէս, ես կանչեմ, գու արգելե՞ս, ճչաց դաստիարակչուհու վերաց՝ հսասիրութիւնը վիրաւորւած Վասիլլ, ես կամենում եմ, որ Արտեմը ներս դայ, այն էլ գու ինքդ գուրս գնաս, նորա ձեռքից բռնած՝ ներս բերես. ես կամենում եմ, կրկնեց, նա, ապա թէ ո՞չ կը գլուխեմ գետին և ուաքերս քարեքար կը տամ: Այս ասելով՝ նա իւր գլուխը խփեց ծառերին և քարշեց պատառեց դաստիարակչուհու շըջազգեստը:

— Ախ, շարութիւն ես անում, Վասեա՛, տրանջաց քնքոյշ օրիորդը, ես ի՞նչպէս մաքուր ձեռքերով մօտենամ աղքատ երեխային:

— Ա՛չ, ոչ և ոչ, պնդեց Վասիլլ և այնպէս բարձր ծզրտաց, որ աղջիկն ստիպւեցաւ իւր սանի քմահամ պահանջը լցնել. զզւանքով, կնճռոս երեսով գուրս գնաց նա պարտիզից, բոնեց Արտեմի ձեռքը և ներս բերեց:

— Դիցուք, ես քո կամքդ կատարեցի, բացց ի՞նչ կ'ասեն քո ծնողը, երբ իմանան, թէ գու հայերէն ես խօսում սորա հետ, յանդիմանեց դաստիարակչուհին, զու ըս գիտե՞ս, որ նրանք ամենայն զօրութեամբ աշխատում են մոռացնել տալ քեզ հօրդ հանգուցեալ մօր փափագով սովորցրած մի քանի հայերէն խօսքերը:

— Ես Արտեմին կը սովորցնեմ Փրանսերէն, ես տրանից այսուհետեւ բաժանւողը չեմ, այնդեց Վասիլլ և սպահանջեց բիձայ Սարգսի որգու ընկերութիւնը:

— Այնու ամենայնիւ ես պարտք եմ համարում խկոյն մօրդ հա-

դորդել այս գէպքը, ասաց և մանուկներին միասին պարտիզում թռած՝ օրիորդն շուապեց տիկնոջը լուր տալու:

— Դո՛ւրս, դո՛ւրս, անպիտան լակո՛տ, կանացի սեռին անվայել կատաղութեամբ յարձակում դործեց անմեղ մանկան վերաց տիկին Մարիամը, կամ՝ իւր տովորական կոչումով աջուհետեւ մեծարենք՝ Մարիա Մինաեմնան:

(Փակագծում ասած՝ տիկնոյ դալալ Յականի աղջիկըն էր: Նորա հայրը, յաջոնի չէ, Սալմաստից, թէ Յամանցուի աշխարհքիցն էր եկել, մի քանի ժամանակ գոնէ գուռը մանդալով՝ հին շորեր ու կօշիկներ էր առել, ծախել, վերջը հիւանդանոցներից մէկի հին փոխարքները էժան գնելով՝ մի փոքրիկ զրամագլուխ էր կազմել իւր համար: Բաղզը նորան ժպտացել է, կապալներում մեծ գումարներ է ձեռ ք բերել, անուն է հանել պալատների տէր է դառնել և իւր Մաշօյն քաղաքի հին աղնաշկան՝ քանդւելու ճանապարհի վերաց կանգնած տների զաւակներից մէկի կինը շինել: Ահա այդ բաղզաւոր ամուսնութեան քանն տարիների մի հատիկ պառոզն էր մեր Վասենկըն: Մարիա Մինաեմնան տաներեք տարի պազում չէր փորձառու բժիշկները հօր պատանեկութեան հասակի մէջ ստացած հիւանդութեան հետեանքն էին համարում):

— Դուրս կորի՛ դու էլ, քո անպիտան ծեր հայրն էլ, խրստապով ներս մտաւ տիկինը պարտէզ, հետն էլ ճշաց. — Կիրի՛լ, Կիրի՛լ դու Կիրի՛լ, ո՞րուեղ ես, շտապի՛ր այս բոպէիս դուրս վրնդել չափը կորդրած գոնսապանին:

Կիրիլ Գաւիթ աղացի տան ընդհանուր կառավարին էր. Նորա ձեռքին էր Դաւիթ աղացի բոլոր կարողութիւնը, նա էր անշարժ կալածքի եկամուտները ժողովում, տան տնտեսութիւնը հոգում, ծառաներ վարձում և արձակում, առնում, տալիս, բերում, տանում. մի խօսքով՝ սոսկ Կիրիլը տիկնոջ և աղացի համար, իսկ Կիրիլ ծրիւֆիմիչը աղացի տան հետ յարաբերութիւն ունեցողների համար էր Դաւիթ աղացի տան լիակատար տէրը:

Դաւիթ աղան, կամ նոր կոշումով Դաւիթ Ֆէօգօրիչը, բոլորովին հաւատում էր Կիրիլին, իսկ Մարիա Մինաեմնացի մօտ, նա իւրաւունք ուներ առանց թովառութիւն խնդրելու ներս մտնել՝ երբ իւր, կամ տիկնոջ կամքը տալիս էր:

— Ե՞լ, Կիրիլ, ի՞նչ ես ուշանում, երկրորդ անգամ՝ ձայն տւեց տիրնը և ձեռքը բարձրացրած՝ կամենում էր խփել խեղճ Արտեմի զլլին:

— Խսկո՞յն, խսկոյն գալիս եմ, հաղիւ լուեցաւ Կիրիլի ձայնը. բայց թէ Կիրիլի գալն ի զուր անցաւ և թէ Մարիա Մինաքվնաչի սպառնալիքը:

— Ինչ կ'անե՞ս, ո՞նց թէ զուրս կը ձգես, վրաց պրծաւ Վասեօկը և կծեց մօր այտի ծացըք: Նորա առամները թաղւեցին փափուկ այտի մէջ և կապուտ սպիր թողին:

— Այ, ա՛յ, ա՛յ անոտանելի մանո՛ւկ, վշտացաւ մայրը և շտապեց նուրբ հոտաւետ թաշկինակով կապել խոյը. մի ամբողջ շաբաժ ափինոջ երեսը կապւած էր՝ անոտեղի կասկածանքներից ազատ լինելու համար:

— Հեռո՛ւ, Կիրիլ Տրիֆիմի՛չ, մօրը թողած՝ գէպի կառավարիչը վազեց Վասիլը, թէ չէ քարով զլուխոդ կը ճղեմ:

Պ.

— Այս ի՞նչ կը նշանակի, գոշեց Դաւիթ Ֆէօդօրիչը, երբ ներս մտաւ իւր առանձնասենեակը և տեսաւ պատառոսուն ցնցուիներով մանուկին իւր սիրասուն զաւակի հետ՝ իւր սեղանի զարգերը քրքրելիս. — Ե՞լ, ո՞վ կայ ացգանդը ձայն տւեց նա ծառաներին, զուրս ձգեցէ՛ք էս թափառաշրջիկին:

— Ո՞ւմ ընկերին ես զուրս ձգում, իւր հերոսութիւնը գործ դրեց Վասիլը և հօր սեղանի թանկադին իրեղէններից մի քանիսը յատակի վերաց փշտոեց: Լաւ էր, որ Դաւիթ աղան երեսը թեքեց, ապա թէ ոչ, թանաքամանի կտորոտանքն աչքն էին ցցւում:

Դաւիթ Ֆէօդօրիչի զարմացական բացականչութիւններին պատասխան եղաւ միւս սենեկից տանտիկնոջ ուրախ քրքչոցով ներկայութիւնը:

Միաբանական ընտանեկան խորհուրդը վճռեց՝ մի քանի օր թոյլ տալ Արտեմին խաղղնկեր լինելու Վասեօկին, մինչև ապագան անելիքը ցոյց կը տայ, առկայն ոչ ացլապէս, եթէ ոչ Վասեօկի աւելորդ հագուստներով երեխալին կերպարանափոխած:

Պ.

Սովորական գարձաւ այնուհետև բիձայ Սարդսին առաւառոքը իւր հետ Արտեմին Դաւիթ աղայենց տուն բերելլը և զիշերը, Վասեօփի քնելուց յետոց, իրանց տուն տանելլը:

Փոքրիկ մանկան համեստ և քաջցը ընտորութիւնը օր ըստ օրէ քաղցրացրեց իւր վերայ տանակիրուհուն: Դաւիթ աղայի աստղը նոյնպէս բանեց Արտեմի հետ. ամենքը սիրեցին նորան և սկսեցին ուռսերէն թոթովել հետը. օրիորդ գաստիարակչուհին այլ ևս չեր զգւում կոկիկ և մաքուր հագնւած «արջուկին» քաղաքակրթելու և ծաղկանոցուելը հետը պատեցնելու. օրիորդը, ի սէր որդու, սկսեց մինչև անգամ բիձայ Սարդսին մարդաստեղ զնել և նորա երեսին ժպտալով՝ որպու մասին գովասանքներ խօսել:

Միակ գժւարութիւնը և ընտանիքի հոգածութեան առարկան Արտեմի սկզբնական վարժութիւնն էր և լեզուն կոորելլը: Արտեմի ասիական կոշտ հնչիւններն առաջին անգամը շատ էին աղճասում և ծռմասում Փրանսիական փափուկ սալօնական խօսքերը, բայց վնաս չ'ունէր, երեխայի ընդունակութիւնը ամեն բան հարթում էր:

Ճառ չ'անցաւ, Արտեմը կամ մոռացաւ, կամ հօր խրատովը մոռանալ ձեւացրեց մայրենի լեզուն. կարծ միջոցում գռնապանի տղան Վասեօփից աւելի յառաջադիմութիւն ցոյց տւեց և այդ մեծ ցաւ պատճառեց թէ օրիորդ գաստիարակչուհուն և թէ շքեղ ասլարանքի գերազնիւ տէրերին:

Ե.

Ամեն բան չափու սահման ունի. ամեն ինչ սովորական գառնալով՝ կորցնում է իւր նշանակութիւնը, մանաւանդ նորասէր մասնուկների համար, եթէ այդ հին սիրելին այսօր նորա եսականութիւնն է զրգուել:

Խորին վիշտ պատճառեց, պէտք է խոստովանենք, Դաւիթ աղային և իւր կնոջը, երբ մի օր վոքրիկ Վասեան հօր կապարեայ ձեռնապայտովն այնպէս խփեց իւր խաղընկերին, որ երեխան շնչառապա-

տարածւեց յատակի վերայ: Աւելի դառն հետևանքի կը հասցնէր մանուկ բռնակալը, եթէ մացըն ու դաստիարակչուհին չը խլէին ձեռքից գաւազանը և չը հրամայէին ծառաներին հեռացնել կիսամեռ Արտեմին:

—Կորցրէ՛ք աչքիցս, գոչեց Վասիլը, էլ չեմ կամենու՞ դորան տեսնել. դա ի՞նչ կը համարձակի ինձանից լաւ ուսանիլ: —Կորցրին, հեռացրին, բայց երկու ժամում հազիւ ուշքի բերին:

Ծերունի բիձայ Սարգիսը՝ եղան նման բառանչելով՝ գետինը ճանգաստում էր. նա անիծում էր իւր որդուն աղայի տունը բերելու օրը:

Լաւ էր, որ բժիշկը շուտ վրայ հասաւ, կարելի միջոցները գործ պրեց և երեխային ուշքի բերեց, ապա թէ ոչ իրան Դաւիթ աղային մեծ հոգածութեան պատճառ պիտի դառնար այս արկածքը:

2.

—Բիձայ Սարգիս, կանչեց մի օր Դաւիթ աղան. տիկնոջդ և իմ կամքն է, որ քո Արտեմիդ տրւի Հայոց Աւտոմնարանը և մեծանայ, քահանայ դառնայ, մեր տանու տէրոտէրը լինի: Կիսս թէալէտե շատ էր պնդում, որ արքունի ուտամնարան տանք, բայց ես նորան համոզեցի, որ աղքատ մարդի զաւակին Հայոց Աւտոմնարանի կրթութիւնից աւելին անվայել է, որ զոնապանի որդու ամենայարմար պաշտօնը քահանայութիւնն է, ուրեմն՝ վաղը այս տոմսակովը կը դիմես Հայոց Աւտոմնարանի տեսչին և քո որդիդ կը մոնի աշակերտ:

—Բայց ես անկարող եմ կատարել դպրոցի պահանջները, կմկըմաց բիձայ Սարգիսը:

—Իմ տոմսակս կը պատրաստէ քո որդու համար փափուկ անկողին, մաքուր հագուստ և անուշահամ ուտելիք. մեծ բան չի լինիլ դպրոցական վարչութեան համար ի պատիւ իմ՝ բնիկ քաղաքացուս և ազնւազարմութեան՝ որ և է եկաւոր զազախեցու կամ շան ճրագի փոխարէն, իմ ծառացի որդուն ընդունել:

—Աստուած կեանք տա՛ց, տէ՛ր իմ, խոնարհ երկրպագութիւն ուեց բիձայ Սարգիսը:

Հետեւալ օրը դպրոցական վարչութիւնը երեք չորս խնդրագրի

վերայ մակադրեց. «Թողուլ առանց հետեանաց, իսկ Արտեմ Սարգը սեանին, ի յարգանս ազնւատոհմ Ա...եանցի, գրել ի շարս ձրիավարժ որդեղրաց՝ կոչելով նորան Յարութիւն Դունապանեանց»:

Է.

Ասիլ մի՛ ասիլ, մի կրակ ու պատիժ ասա. ամբողջ տունը դեռահաս գաղանի քոթոթի ձեռքին դողում էր. քանի մեծանում էր, այնքան գաստիարակւուհիքը յաճախ էին փոփոխում. մէկը գեղեցիկ էր, միւսի հասակին էր շատ բարձր, երրորդի քիթն էր ծուռը, շորրորդը յանդգնեց իրան նկատողութիւն անել և այն և այն. ամեն մէկին մի մի պատճառ բերելով ճանապարհ էր գնել տալիս. Այն տեղը հասաւ, որ մի անգամ էլ յանդգնեց պահանջել մօրից՝ հեռանասլ իրանց տանից, ինքը, ըստ իւր ասութեան, խնդրելու է հօրը ուրիշ մայր գտնել իւր համար:

Գուցէ շատ հաճոյ թւեցաւ Դաւիթի աղային որդու առաջարկութիւնը, բայց խելացի տիկինը կարողացաւ անհշան խաղալիքներով կակղացնել իրասածի զաւակի սիրով և գրկախառն համբուրով ամեն բան կարգի գնել:

Այդ դէպքը բազմիցս կրկնում էր սեղանի վերաց Դաւիթ աղայի կողմից՝ իբրև համեմիչ աղ ախորժակ քաղցրացնելու համար:

Ը.

Ո՞ւ վարժապետ, ոչ վարժուհի չեն մնում Դաւիթ աղայի տանը. ամենաշատը երկու շաբաթ, երեք շաբաթ և ահա կամ իրանք են զգուում թողնում, կամ Վասիլին է վիրաւորական խօսքերով ճանապարհ գնում. մէկի վերայ մինչև անգամ շունը զրգուեց: Ծնողները շատ էլ չեն հոգում, ըստ որում ժամանակ չէին ունենում. աղան կառքը լծել տած՝ մինչև ժամը երկուուր այցելութիւններով էր պարապած. այսուհեաւ զնում էր մի ժամանդրեալ տեղ ճաշելու, կամ իւր որոշեալ օրերի պաշտօնական ճաշերն էր տալիս. գիշերներն էլ կլուքներում կամ թատրոնական դեղաղեց, շնկուհիր, խարտիաշ, քաղցրաձան երգուհիների շրջաններում էր գւարճանում, նրանց համար թանկապին սկսակներ էր հիւսում. իսկ տիկինը նոյնպէս ցորեկները

փոխադարձ այցելութիւնների և նորածւական եւրոպացուհիների ընդունելութիւնների մէջ էր խառնւած, իսկ գիշերները, Վասիլին քնացնելուց յետոց, մի ժամաշափ Կիրիլ Տրիֆիմիչի հետ փակւած՝ որպէս թէ միւս օրւան անտեսական հոգսերն էր մասմում, կարգազրում և ապա աղախնի ձեռքով իւր գզզուած մազերը կարգի բերում, հագնը ւում, զուգւում, կառք էր նստում և զնում՝ լոտօնների զլիսին բազմում մինչեւ խորին մշջիշեր:

Այսպէս թէ աճնպէս, հարկաւոր էր Վասիլի համար լրջօրէն խորհել, մանսաւանդ որ այցելունների քաղաքավարական հարցերից միննէլ միշա Վասիլի առողջութիւնից և ուստանելուց տեղեկանալն էր լիլում: Առաջին հարցին հետևում էր. — վառք Վասուծոյ, իսկ երկրորդին՝ խօսքը բերաններում խեղբառմ էր. խարել չէր լինիւ բոլորեքեան զիտէին, որ հոդառար ծնողաց սիրելի զաւակը ոչ ուսուցիչ ունի և ոչ որ և է անդ ուսանում է:

Հարկազրւեցաւ Դաւիթ աղան Կիրիլի ձեռքով քաղաքական գպրոց ուղարկել Վասիլին, բայց այնուղից մերժում ստացաւ. — գիտութիւնը և տարինները չեն ներում հասակին համապատասխան դասաւառն մտնել:

— Ե՛հ, թո՛ղ սպառասաւի, յետոյ մանի, փողի բան չի՞, վճռեց Դաւիթ աղան և հէնց նոյն օրը մի մասնաւոր պանսիօն տեց, կրկնապատիկը վճարելով և տարեկանը սկզբից տալով:

— Դուք փողի մասին մի՛ հոգաք, պասուիրեց նա պանսիօնի տիրոջը, եթէ նկատէք որպուս թուլութիւնը, կամ ծուլութիւնը, թանկազին ուսուցիչներ վարձեցէք, կարևոր ծախսերն արէք, միան Վասիլիս ուսում տւէք:

Դպրոցի տէրը հէնց առաջին շաբաթումը հաւասարի եղաւ, որ Վասիլից ոչինչ չէ զուրս զալու, բայց և այնպէս՝ շահաւէտ էր շոցելով, հաճոցախօսութիւններով, զիւրագին պարզեներով որսը ձեռքից չը փախցել. գար գպրոց, չը գար, ուսանէր, կամ ոչ, գաս համար տար, թէ ուղղակի դուրս գնար և բակումը վազէ վազ անէր, ամենքն աշք պէտք է փակէին և իրանց դործը շարունակէին:

Անկարծիք, այսպիսի բարեխիզգճ գպրոց հաճելի եղաւ և իրան արիածան Վասիլին. տանից ձանձրացած ժամանակ՝ իրան համար ամենալաւ խաղալու և զւարձանալու տեղն էր. ի՞նչ վեաս, թէ շատ

անդամ՝ քիթն ու պռունգն էր ջարդում մարզարանից վայր ընկերով, կամ իրանից ուժեղ ընկերակիցների բռունցքներն էր անուշ անում:

Կարիք էլ չունեին Դաւիթ աղան կամ կինը տեղեկանալ իրանց խելօք Վասիլի մասին. ամիսը մի անգամ երեխան ինքն ուրախ ուրախ ցոյց էր տալիս հօրն ու մօրը իւր յառաջադիմական թւանշանները, բոլոր առարկաներից հինգ էր, վարքն էլ գերազանց, էլ ընչի՞ պէտք է վշտանային Կիրիլ Տրիֆիմիչի ներկայացրած դպրոցական մեծամեծ ծախքերի համար:

Քանի անդամ Կիրիլլ յայտնելէ իւր զարմանքը դպրոցի տիրոջ խոշոր պահանջների համար, բայց միշտ իրաւունք է ստացել ուրախութեամբ վճարելու:

— Բարեհաճեցէք լսել այս թուղթը, ներս եկաւ մի օր Կիրիլլ և կարդաց դպրոցատիրոջ հետեւալ հաշիւը.

Աղջուական Վասիլ Աստովի վերայ այս ամսութ եղած արդարությունները.

| | | |
|---|-----|--------|
| Արտաքոյ կարգի ուսուցչաց վարձ | 175 | բուրլի |
| Նկարչական գործիքներ | 25 | " |
| Դասարանական սլիտոյքներ | 15 | |
| Դասական տետրակներ | 10 | |
| Մարմնամարզական կարեւոր իրեր | 30 | |
| Իւր ծեծած ընկերին բաւականութիւն տալու | | |
| Համար ընծայք | 15 | |
| Նախաճաշիկի համար քաղցրեղէններ | 7 | |
| Իւր կոտրտած անօթների վճարք | 30 | |

Ընդ ամենը . . . 307 բուրլի:

— Հա՛, հա՛, հա՛, միաժամանակ կշկչացին որդեսէր ծնողները, տեսնում ես մեր Վասեօնի ի՞նչ քաջ է եղել, որ ընկերի էլ ծեծել է:

Մայրը զրիեց իսկոյն և համբոցըներ շուայլեց, իբրև խրախու ասնք, իւր «փոքրիկ չարին» (այսպէս էր կոչում նա որդուն փաղաքշական լեզուով), իսկ հայրը հրամայեց փոխանակ 307 մանէթի, 500 կամ կրկնապատիկը վճարել հանդերձ շնորհակալութեամբ, իւր կողմից

ևս պատուիրեց անձամբ տամնել խելօք Վասիլին վրանսիացու մադաղինը և աչքի հաւանած խաղալիքները դնել:

— Միթէ մենք տարեկան մի որոշեալ մեծ դումար չենք վճարում ուսման վարձ, կամ վերև նշանակւած պիտոյքները չենք գնում, այս կրկնակի վճարքն ի՞նչ կը նշանակէ, իւր կողմից փաստաբանեց Կիրիլ Տրիֆիմիչը յօդուտ տիրոջ քասակի:

— Մեր որդին ուրիշ հասարակ քաղաքացիներից այլ ևս ընչո՞վ պէտք է զանազանուի, պարծանոք կշտամբեցին կառավարչի անգիտութիւնը միաժամանակ հայրն ու մայրը:

Կիրիլի պատասխանը մի բազմանշան լուռ ժպիտ եղաւ, նա մուածեց իսկոյն իւր հաշէմատեանում դրեւիք թւերի քանակութիւնը:

Նորա տօմարում գրւեցաւ նոյն թւով՝

— Վասենոկի ուսուցչին արտաքոյ կարդի ծախս՝ 997 մանէթ:

Թ.

Այլ ևս անհնար էր Վասիլին սպանսիօնում պահել. դպրոցը տարրական էր, իսկ Վասիլի տարիները 18-ից անց է: Խելացի զպրոցատէրը բարւոք գատեց ուրախ ուրախ Դաւիթ Ֆէօդօրիչին ացցելել նորա ուսումնաւարտ որդու հետ. նա շնորհաւորեց ազնւազարմ պարնին զաւակի յառաջադէմ և յաջող գասաւարտութիւնը՝ պարզելով հօր սեղանի վերայ մի ոսկէտառ վկացական գերազանց թւանշաններով:

— Զեր որդին իրաւունք ունի վաղւանից գիմնազիացի բարձր դասարաններում շարունակել, պարծանոք շեշտեց զպրոցատէրը, բայց իմ սրուալիր խորհուրդս է՝ ավստալ ձեր աշխատանքը և որդուդ միանգամացն ազտուել այս տղէտ քաղաքի անկիրթ երեխանների ընկերակցութիւնից և հասարակական ուսումնարաններից. ձեր ազնըւութեան պատւոյն վայել է՝ միակ զաւակիդ մեծ քաղաքի մասնաւոր բարձր դասրնիթացով պանսիօններից մէկում տեղաւորել, կամ քաղաքակիրթ աշխարհի գիմնազիօնները տալ, որով մի քանի տարւայ ձեր և իմ աշխատանքը լիովին կը պսակւի:

Դպրոցատէրն իւր անկեղծ խորհրդի համար մի ծալք թղթագրամ պարզեւ ստացաւ Դաւիթ Ֆէօդօրիչից:

Փ.

Ոչինչ բանով այն տարին Վասիլը չը համաձայնւեց ոտքը քաղաքից դուրս գնել կամ ուսանել:

—Հոգիս դուրս եկաւ աշխատելով, իրաւացի նկատեց Վասիլը, մի տարի գոնի, հանգառանամ:

—Ֆնա՛, եթէ կամենաս, ուրիշ քաղաքում հանգստացիր, խլնդրեցին, աղաչեցին ծնողքը կարճ միջոցից յետոյ, այլ ևս չը կարողանալով տանել որդու ապիրատութիւնը և զեղիս կեանքը:

Կարելի է արհամարհէր Վասիլը ծնողաց ցանկութիւնը, եթէ աշխարհատեսութեան և մեծամեծ քաղաքների գրաւիչ փափկութիւնը :ը զբդէին նորան:

Այդ պատճառով մի օր ճեպակառքը Կիրիլ Տրիֆիմիչի ուղեկցութեամբ թոցրեց նորան զէսի առաւել նշանաւոր մեծ քաղաք:

Անտարակոյս, ոչ մի կանոնաւոր զպրոց իւր պատերից ներս չէր կարող ընդունել Վասիլի նման անլինդունակ և մոլի պատանւոյն. մի շաբաթւայ մէջ երեք տեղից արձակւեցաւ:

Ստիպւեց Կիրիլը մեծ վարձատրութեամբ մի մասնաւոր զպրոց տալ Վասիլին և քսակը փողով լցրած՝ վերադառնալ:

—Խեձ նայի՛ր, հրամազողաբար մատը շարժեց Կիրիլի վերայ Վասիլը վերջին հրաժարական րոպէին. վա՛յ քեզ, եթէ մի օր իմ փողը պակասել է. կայծակի արագութեամբ կը սլանամ մեր քաղաքը և կրնիցդ բռնած՝ դուրս կը շպրաւեմ:

—Ծախսի՛ր, որքան կամքդ կը բարեհամի, ասաց Կիրիլն և ճանապարհ լնկաւ. այդ խօսքերով, ժապաց նա իւր միջումը. դու իմ ճրադը վառում ես, ձերը հանդցնում:

ՓԱ.

Որչափ ևս մեծ էր պանսիօնատիրոջ սուացած վարձատրութիւնը, բայց անկարող եղաւ մի տարուց առաւել զսպել անկասպ աշակերտին. մի օր դուռը բաց արեց և պարզ ի պարզոյ կօշիկներն առաջը դրեց:

Բացւեցաւ այնուհետև մեր նորահաս երիտասարդի համար առ զատ ասպարէզ:

Անպիտան ընկերները շրջապատեցին Վասիլին. Հիւրանոցներն իրանց անմիջական հիւրն էին առևտում, պարուհիներն ու երկրորդական դերասանուհիները միմեւանց դէմ խնարիզներ էին լարում. իսկ փողը ջրի պէս առու էր եղել գնում քսակից:

Այդ քաղաքում Վասիլը փող առանում էր մի վաճառականից Կիրիլ Տրիֆիլիչի յանձնարարութեամբ: Կիրիլը բարեխիղճ պարոնի հետ ծածուկ շինւել էր, երկուստեք պայմանը ձեռնառու էր. որոշած էր՝ այլապէս փող դուրս չը թողնել, մինչեւ կրկնապատիկ ստորագրութիւն չ'առնի:

Վաճառականի գործ զրած հնարքն առաւել՝ գործնական էր: Ազգբներումն անխնայ և անհաշիւ շւայրում՝ էր, տալիս էր առանց ինչ ստորագրութեան. փոքր առ փոքր սկսեց մասնաւոր նկատողութիւններ անել, հետզհետէ դժկամակութիւն և տրտունջ յացնեց. մի օր էլ կտրականապէս մերժեց՝ պատճառելով, որ նա իւր զրամարկղի փողերը կարեց:

Նատ աղաչեց, թախանձագին պաղատեց Վասիլը, բաց մինչեւ եռապատիկ ստորագրութիւն չը տւեց բոլոր վերցրածի համար, տոկոսն էլ վերան բարդելով, ոչինչ չը դուրս տարաւ:

Մի տարւայ մէջ այլպիտով մի սարսափելի գումարի ստորագրութիւն տւեց:

Փորձառու վաճառականը յարմար դատեց պարտքի ցուցաին ուղարկել Կիրիլ Տրիֆիլիչին և փողերը պահանջել:

Վերջինս իւր զլիսի մազերը քաղեց. պարտքի գումարը աիրոջ եկամտից շատ աւելի էր. տէրը շատ էլ համաձայնէր վճարելու, հնար չ'ունէր, այս դէպքը կարող էր, դուցէ, իւր զրութիւնն էլ խախտելու, իսկ այդ իւր համար վաղահաս էր. դեռ բաւականին անշարժ կալւածներ կացին, որոնք Կիրիլի հաշով իրան էին մնալու, սակայն դեռ շուտ էր:

Կիրիլը լաւ համարեց դրել վաճառականին՝ Վասիլի պարտքը կիսով չափ պակաս ցոյց տալու:

Քարն ապառաժին էր հանդիպել. խորագէտ վաճառականը մի նամակով վճռաբար յացնեց Կիրիլին, որ եթէ իւր պահանջը լրիւ չի բաւականացնիլ, ինքն ուղղակի կը ներկայացնի Դաւիթ Ֆէօդորիչին՝ նորա յանձնարարական զրի հետ միասին:

ԺԲ.

Յօղ վոխաղարձ բանակցութիւնները շարունակւին Կիրիլ Տրի-
ֆիմիչի և իւղ հաւասարմատարի մէջ, իսկ մենք հեաւենք Վասիլ
Դաւիթիչի նիստ ու կացին՝ մի երկու պատկեր իրրեւ նմուշ յառաջ
բերելով:

—Այսօր ճաշին ո՞ր տեղ ենք, նշանացի էին անում մեր Վասի-
լի մշտական լնկերները:

—Խնձ մօտ, պատասխանում էր մէկը:

—Ե՛հ, զու քաղցած ճաշին ես քնում, զնա՞նք ինձ մօտ:

—Դու էլ մի հիւրանոցում երկու բաժին կիւրակուր մի շիշ գի-
նով փորներս պէտք է ածես ու ճանապարհ զնես:

—Խ՞նչ էք խաղերով հասկացնում, ես արգէն մեր չորս պարու-
հիներին ժամ եմ որոշել մեր սիրած հիւրանոցումը, Վալոդեան
նոյնտէս դալու է, ահա և եղանք չորս:

Տղազքը վաղուց է սպասում են. ժամը շատունց լրացել է, քա-
նի մի գինու շիշեր յատակին գատարկ գլորւած են, տրամադրութիւ-
նը գագաթնակէտին է հասել, բայց պարուհիները չը կան:

—Այս ի՞նչ է նշանակում, Վասիլ, յանդիմանում են լնկերները,
վիրաւորել հօ չե՞ս:

—Ոչինչ բանով:

—Կառքի փող չե՞ս վճարել:

—Մի քսան և հինգամոց:

—Ուրեմն:

—Ուրեմն...ը՛...ը՛... Վասիլը մասը կծեց... հասկացաց, ան-
պատճառ Յօնեան ինձանից վշտացած է, միւսներին էլ նա է արգելք
եղել: Երեկ երեկոյ նորա համար ուղարկած փունջս Յաշացի վնջից
փոքր էր. ես կլամամբ անսպէս էի պատիրել, և շատ իրաւացի՛.
նա լնչի՞ պէտք է; իմ Յաշացի հետ ոտք ձգի:

—Ո՛...օ՛...օ՛..., անսպիտա՞ն, զու իմ Յօնեացի սիրաը կոտրել
ես, մեղաւո՞ր ես, մեղաւո՞ր, զոչումնեն միւս լնկերները իրար ակ-
նարկելով. զնա՞նք, զնա՞նք, Յօնեացի ձեռքը համբուրի՛ր, ներողու-
թիւն խնդրի՛ր. բայց առաջ մանենք քաղցրավաճառի մօտ, անու-
շեղէնով բերանը քաղցրացրո՞ւ:

—Անուշեղէ՞ն և ոսկեղէ՞ն, զրայ է բերում մէկը:

—Այո՛, և աղամանդեայ քորոց:

—Եւ աղամանդեայ քորոց, անգիտակցաբար կրկնում է Վասիլլ:

—Կեցցէ՛, ուրեմն, Սօնեան, բաժակը բարձրացրեց մինը:

—Ոչ միայն Սօնեան, այլ և՛ Սաշան և՛ Տանեան և՛ Վարեան:

—Չո՛րսն էլ, չո՛րսն էլ, չո՛րսն էլ:

—Չո՛րսն էլ, ասպուշի ոլէս կրկնում է Վասիլլ:

—Չորսին էլ պարզել՛, չորսին էլ, թո՛ղ ոչ մէկի սիրոը չը մնայ:

—Ես իմ Տանեայի համար կ'առնեմ, ասում է մէկը:

—Ես իմ Վարեայի համար:

—Ես կ'առնեմ քո Սաշայի համար, Վասիլլ:

—Իսկ ես՝ քո Սօնեայի համար:

—Նա՛տ լաւ, շատ գեղեցիկ, ուրեմն գնանք:

Սեղանը զրած մնաց. Վասիլլ մի 25-նոց ձգեց հիւրանոցի ծառայի առաջ, հրամայեց սեղանը փուած թողնել մինչեւ իրանց վերադարձը:

Չորս թանկագին գոհարեղէն գնահատեցին:

Ընկերներից մէկը ձեռքը գրալանը տարաւ:

—Այս... անբազբութիւն... քսակս տանին եմ մոռացել:

—Իսկ ես բոլորովին կորցրել եմ:

—Այս բոսկիս կամենում էի ձեզանից մէկից պարա խնդրել, մօտս փող չ'ունիմ, հաւատացնել է կամենում երբորդը:

—Գնացէ՛ք, կորէ՛ք, սլարծենկունե՛ր, ձեզանից ճրագ չի կըպ-չիլ, յանդիմանելով քսակը հանեց մեր Վասիլլ և սակարկած բոլոր գոհարների վճարքը տուց:

Մի և նոյն գործողութիւնը կատարւեց քաղցրավաճառի խանութում:

Կառքերը կանգ առան սլարուհիների դրանը, մեր հերոսները վեր բարձրացան:

—Օրիորդներն այսօր փոքր ինչ տկար են, հարթուխ ունին, ընդունել չեն կարող, յայտնեց ծառան:

—Խոչ ես վշտմ, անսպիտա՞ն, գոչեց Վասիլլ, հասա ո՞ւմ տանենք այս գոհարներն ու անուշները:

Ծառալի աչքերը շւեցին գրապաններից հանած աղամանդների
փայլերից:

—Նորհ բերե՛ք—բառի հետ պարզները տուն ընկան:

Երկար չեմ ու չումից յետոյ՝ վերջապէս Սօնեալի սիրութ տեղն
ընկառ, ժղաց Վասիլի երեսին, ընդունեց նորա պարզելը, թոյլ
աւեց նորան իւր ձեռքով հանել կրծքից հին քորոցը և տեղը ցցել
այս նոր բերածը ու փոխարէնը մօտեցրեց իւր երկու մատը նորա
շրթունքին:

Վասիլն ինքն իրան երջանկութեան եօթներորդ երկնքումն էր
համարում:

—Աւրեմն քո ձեռքով մի ծխախոտ ոլորի՛ ինձ համար և բե-
րան գի՛ր, շնորհ արեց զթասիրս Սօնեան:

Տասը մանեթանոց թղթաղրամը մօտեցրեց Վասիլը լուցկիքին,
որ նորա ծիրանի բոցով վառէ զիցուհին իւր ծխախոտը:

—Այս մի ուրիշ տեղ պէտք կ'ածենք, խլեց քնքշութեամբ նա-
զիկ օրիորդը թղթաղրամը Վասիլի ձեռքից և արհամարհանօք
շաղրաց գէպի ընկերուհին, այժմ լուցկին աւելի լաւ կը ծառացի:

Ի նշան սրտալիր գոհունակութեան՝ Սօնեան ցուցամատով Վասիլի
քթին երեք անդամ խփեց ու ծխի քուլաները երեսին փչեց:

—Կեցցէ՛, կեցցէ՛ հաշտութիւնը, աղաղակեցին տղայքը և ա-
մեն մէկը մի օրիորդի թևանցուկ կառքի մէջ նստեցրին ու վերա-
դարձան հիւրանոց:

ԺՊ.

—Նը՛, բարե՛, ի՞նչ կաց:

—Գնանք:

—Ա՞ւր:

—Զը գիտե՞ս, վող է պէտք:

—Աւրեմն տուացե՞լ է:

—Երեկ երեկոց քսակումը մի քանի հաս հարիւրանոցներ տեսաց:

—Զե՞նք ուշացել:

—Ա՛, Վալօդեան սորանից մի ժամ յառաջ քսակը լիքն է
տեսել:

—Մօուդ վող ունի՞ս:

— Տասը մանեթի չափի:

— Բաւական է, երբ կը մանենք հիւրանոց, դու խօփն խմիք-ների շիշերը գարսել տուր և յետոց թղթի սեղանը բաց արա՛:

— Եսկ դու մի՛ մնու անալ նշանացի հասկացնել ինձ նորա թղթերը:

— Վիսես էլի՛, թէ աջ ականջս քորելն ի՞նչ նշան է, ձախն ի՞նչ, քիթս ո՛ր թուղթն է, յօնքս ո՛րը:

— Ների՛ք է, հերիք, գասերս հաստատ ենք սերտել, սատանան կը մոռացնի, մեր զրապանի թշնամին հօ չե՞նք:

— Դու ինձ ասա՛, լաւ չե՞ր լինիլ, եթէ մեզանից մեկն ալաօր նորան տարւեր:

— Գժեկ՞լ ես, այսօր ի՞նչ ժամանակն է, ացդ կ'անենք մի ուրիշ օր՝ նորա քաղցած միջոցը. դու չը դիտե՞ս, որ միայն մենք չենք. թիվլիդեցի Միլսակին մոռացել ե՞ս, վազի հոտն առաւ թէ չէ, ձեռաց քարշ կը տայ իրանց ոռւկու խորովածն ուտեցնելու, երկումն էլ հայ են, մի հող ու ջրի մարդ են, նրանց համար մի կոոր խանձւած, միխրի մէջ շաղախւած միաը մեր բիտկին երից ու կօտեաներից զերազանց է:

— Որպէս թէ Միլսակի մեծ հոգոն էր, թէ նա խորոված չի ուտիլ:

— Գէ՛, ի հարկէ՛, միտքը զրապանը գաստարկելն է:

— Հապա նազինկանե՞րը, և առեանե՞րը եթէ խմանան, կը դրգլու և կը պլուին:

— Կառապարսն Խվանը հօ՛, երբ խմանայ, երկու հատ 100-նոց գուրս կը խլի, նա ամեն օր արտնչում է, որ Վասիլն իրան փող չի ուալիս:

— Մի խօսքով, ամեն կողմից քաղցած դաշերի նման կը ժողով-ւին ու ով չուստ, նա կուշտ:

— Եթէ ացդակէ՞ս է:

— Եթէ ացդպէս է՝ շտափե՞նք:

Կարծեմ անհասկանալի չը մնաց, որ այս խօսակցութիւնը լինում էր մեր Վասիլի հաշւին. խօսակիցները նորա երկու ամեն-օրեալ յնիկերներիցն էին, որոնք անքուն պահապանի նման հսկո-ղութիւն էին անում՝ հերթով, թէ ե՞րբ պէտք է Վասիլը վաճառա-կոնից փող սատար, որ գուրս ծծելին:

— Բայց, բարեկամ, կասկած յայտնեց ճանապարհին ընկերներից մեկը, մենք անխոհեմութիւն ենք անում ազգաէս անխողճաբար կողովանելով Վասիլին, մի օր էլ կարող ենք զրկել մեր հաստատուն եկամարդց. անցեալ օրը Վալոդեալին շատ հասկացրի նշանացի, որ մի քանի մանէթ յետ տարւի Վասիլին, նու ուշադրութիւն անդամ դարձնել չուզեց:

— Եւ ի՞նչ վեաս:

— Նա կարող է քաղցած ֆեալ, յուսահատւիլ, մեզանից զզւել. չէք միշում, մի քանի անգամ նորան փող աւող վաճառականը մերժել էր:

— Նը, մի՞թէ պատճառը չիմացար. վաճառականը ացգալիսով կրկնադատիկ սորբազրութիւն է առել, Վասիլին ինձ սպասեց. և երանի թէ յաճախ կրկներ իւր արարքը:

— Մեզ ի՞նչ օգուտ:

— Շա՛տ օգուտ. այն ժամանակը մենք Վասիլին մի քանի կոպէկներ կը տայինք, ճաշի կը հրաւիրէինք, թզթախազում մէկս կը տանէինք, միւսս, որպէս թէ կարեկցաբար, պարոք կը տայինք և այդպիսով մեր որսն ուրիշի ճանողը չէինք ձզիլ:

ԺԴ.

— Պատրաստւի՛ր այսօր իսկ զնալ մեր վուշ կենդանու եռելից, ապա թէ ոչ, մի օր մեր պոչը սառցի կը կասկի, մւալոս գէմքով հրամացից Դաւիթ աղան Կիրիլ Տրիֆիմիչին:

Աերջինս լուռ էր:

— Քեզ եմ ասում, չե՞ս հասկանում, ինչպէս տարել ես, զնա՛, յետ քարշ տո՛ւր, եթէ չես հաւասում, առ կարդա՛: Կրկու նամակ անդանի վերայ ընկած էին, Դաւիթ աղան շպրտեց Կիրիլի առաջը:

Մէկի ձեռքը ճանաչեց կառավարիչն և զունատւեց: Եւր համախհ վաճառականիցն էր:

— Այս է, որ ես կարայ, մտածեց Կիրիլը, տնաքանդն անսպասնառ մեր գաղանիքը զուրս է տւել:

Բարեբազրաբար, ոչինչ ացգալիսի բան չը կար, լոկ հաշիւների ցուցակն էր կցած հետք:

Երկրորդ նամակը Դաւիթ աղայի ծանօթներից մէկիցն էր. Նա ախտում էր այդպիսի մեծ և անուանի տան սբառեմն, խորհուրդ էր տոլիս կորառեան կես ճանապարհից յետ խելու իւր մոլորած որդուն:

—Երաւունք չ'ունի վաճառականն այսքան մեծ պահանջ անել, արտաքուստ իւր տիրոջ մօտ տհաճութիւն յաբնեց Կիրիլը, և նորան արտօնութիւն չեմ տել այսչափ մեծ գումար բաց թողնելու Վասիլ Դաւիթիչին, այլ ապրելու չափ միացն. օրէնքը մեզ նպաստաւոր է, թօ'զ գանդառուի, մեր փաստաբանը նորան կը սեւցնէ:

—Աւելորդ զատարկաբանութիւններ պէտք չեն, ինձ ամեն բան յայտնի է, եղածն եղիլ, անցածն անցել է, այսօր իսկ զրաւ զի՞ր մի շարք խանութներ, տար մարդի պարտքը վճարի՛ր և փուշ որդուս ա՛ռ արի՛:

—Իսկ եթէ չը գայ Վասիլ Դաւիթիչը՞:

—Այդ գէպքում՝ ահա այս ստորագրութիւնը, ա՛ռ, Հրատարակի՛ր քաղաքական իշխանութեան ձեռքսկի:

Դրութեան բովանդակութիւնն էր. —յայտնում իմ իլուր ամենքի, որ այսուհետեւ իմ որդի Վասիլ Ա...ովին պարաք տւողը կորցնում է իւր փողը. իմ բոլոր կարողութիւնս զրաւ է զրւած, կարճ միջոցում ի վաճառ կը հանւին և որդուս համար վճարելիք չի մնալ:

—Յետոյ այս ի՞նչովէս Հրատարակենք, ասաց կատավարիչը, ձեր անունը, ձեր պատիւը, ձեր վարկը...

—Տա՛ր, զառն ժպիտով արհամարհանք ու զգւանք արտապատեց Դաւիթ աղան՝ ձեռքը օդում ճօճելով, տա՛ր, եթէ կամենաս, այսօր իսկ Հրատարակի՛ր, ես հաշուել եմ իմ լիմար անհեռատեսութեան հետ:

Դաւիթ աղան ծխախտար բերանին սենեկում՝ սկսեց զլխակոր ման գալ:

—Գնա՛, կատարի՛ր Հրամանս, ասաց նա յանկարծ կանգ առնելով, մի՛ մոռանար նոյնպէս տանը ծախսելու համար փող թողնել:

ԺԵ.

Ոի կողմից Վասիլն է փշացնում, միւս կողմից ինքն՝ անհոգ Դաւիթ աղան ու կինն են շապալում:

Կուրքներում հայրն է թղթախաղի մէջ հարիւրանոցները ձեռնաթող անում, հիւրանոցներում որդին է զեղլսութիւններ անում. իսկ տիկինը նորաձեռնութեանց է հետևում և լուսի վերաց այժմ քիթը ցցած երեկոյթներ է սարքում և կարտի սեղաններ է բացանում: Այժմ քաղաքակիրթ ընտանիքների մէջ էլ ո՞վ է լուս խաղում. զլուխը կապածներն արժան չեն տեսնում լուս խաղալու, Մարիա Մինասելիսա՞ն պէտք է հին մնար. նա քանի տարի է, որ եւրոպական զլուխ է պահում, ամենաթանկագին փետրաւոր վեղոցներն է ծածկում: նորա զլուխ մաղը ամիսը մի անգամ, քաղաքի նշանաւոր վարսաւիրի ձեռքոնին է խուզւում և օծւում:

— Ելի՞ դուք տարւեցաք, թանկագի՞ն Մարիա Մինասելիսա՝ մեր սիրելի տանտիրուհի, միշտ պատրաստակամ հետաքրքրութեամբ հարցնում են ընթրիքից յետոց հիւրերը:

— Այլապէս ամօթ էր ինձ, իմ տանս, իմ պատւելի հիւրերիս կողոպաել, մի կոտր հաց էի ուտեցնում, որ գրստանե՞րը դատարկեմ:

— Որքա՞ն տարւեցաք այս երեկոյ:

— Յիշելն անգամ չ'արժէ, հազարաւորների չի համիլ, տասնաւորներ, հարիւրաւորներ:

— Ոչի՞նչ, շուտով ես եմ մոտագիր մի խնջոցք կազմել, յուսադը րում էին այս ու այն ոք, մեր տանը ես կը տարւիմ ձեզ, փոխարէնը դուրս կը գաց:

— Իմ քաղաքալարութեանն ի՞նչ է եկել, որ թոյլ տամ ձեզ նման բազմաթիւ զաւակների տիրոջը ծախքի վերաց ծախք էլ աւելացնել, այն ժամանակն էլ ինքս եմ խոստանում տարւել, ճանապարհ է դնում քաղցր խօսքերով իւր հիւրերին Մարիա Մինասելիսն:

— Եատ էլ կամենաս տանել, շնորհիք չ'ունիս, անխելք արարա՛ծ, հեղնելով՝ պատասխանում էին ճանապարհին Մարիա Մենասելիսայի հասցէին նորա հիւրերը. լաւ կթի կով ես մեզ համար, բաց ափա՛ս, որ մեր այս եկամտի առատարուղիս աղբիւրը շուտ չը չորանայ, հօրդ թողած սարերը ցամաքել են:

Ժ. 2.

— Վասիլ Դաւիթիչն երեկ երեկոյ 1500 մանէթ է տարւել,

այժմ պահանջում են, ի՞նչ էք հրամացում, առևն մասւ կառավարիչ
կիրիլ Դաւիթ աղայի մօտ:

— Ինձ ևս նոյնչափ հարկաւոր է այսօր ճաշից յետոց:

— Հինգ կողէկ չը կայ:

— Պարագ վերցրո՞ւ:

— Տեղ չը կայ:

— Մեծ տոկոս տո՛ւր:

— Այլ ևս ոչ ոք չի հաւատում առանց զրաւականի:

— Գրաւ դի՛ր:

— Ի՞նչ բան:

— Մի կալւածք:

— Բոլորը գնացած են երեկւան աճուրդումի:

— Ի՞նչպէս, ո՞ւմ կայքն է աճուրդի զրւում:

— Զեր:

— Ո՞վ համարձակւեց ծախել:

— Ես:

— Առանց իմ գիտութեա՞ն:

— Նախ՝ որ բանկերում զրաւ զրւած և ժամանակին փողը
տուն չը ապրած կալւածքի մասին ոչ ոքի չեն հարցնում աճուրդի
գնելու համար, և երկրորդ՝ որ մէկը կար, որ ազատ իրաւունք ու-
նէր, առանց ձեր կամքը հարցնելու, ծախել տալու:

— Եւ այդ մէ՞կը:

— Ես էի, ինչպէս յայանեցի ձեզ:

— Ո՞ր իրաւունքով ես արել:

— Զեր և Մարիա Միհնակնայի հաւատարմաթուղթն է իւր ա-
նելիքն արել:

— Լո՛ր, անպիտա՞ն, բարկանալով և առամները կրծտելով վեր
թուաւ տեղիցը Դաւիթ Ֆէուրիչը:

— Ես կը լուեմ, բայց արդէն կայքերիդ նոր և օրինաւոր տէրն
եկել պահանջում է, որ թողնէք և հեռանաք իւր սեպհականու-
թիւնից, սառնութեամբ պատասխանեց Կիրիլ Տրիֆիլի՛ը:

— Ո՞վ է այդ մարդի:

— Ո՞մն Պետրոս Պօղոսով, որ երեկ աճուրդի մէջ գնեց ձեր բոլոր
կայքերը:

—Ուր է նա:

—Խւր զան աւելորդ համարեց, նա ուղարկել է իւր ընդհանուր կառավարչին:

—Ուր է այն մարդը:

—Չեր առաջին խոնարհաբար կանգնած:

Եւ Կիրիլ Տրիֆիսիւր ցոցց տեց մի հաւասարմաթուղթ մի անդայտ Պօղոսովից, որով ինքը լիակատար իրաւունք էր առանում կառավարելու նորա նոր կալւածքները:

—Աւրեմն խսկաղէս ինքդ ես տէրը, ինքդ ես ներս տարել անհնշան մարդուն, աճուրդում կանգնացրել. քո վողերովն է նա աճուրդ մնել:

—Կարող էք և այդպահէս հասկանալ:

—Խրաւո՛ւնք ունիս, ասաց հաւաչելով Դաւիթ աղան, իրաւո՛ւնք ունիս, իրաւո՛ւնք ուն...

Վերջին բառը մի սուր ճշիւնով պէտք է գուրս թռչէր Դաւիթ աղացի բերանից, բայց թերի մնաց. նա յանկարծական ցնցումով գետին տասկալւեց:

ՓԵ.

—Այս ի՞նչ ճիշ և զզրդոց էր, շտապաւ դուրս վազեց Մարիամինականան կրծքաբաց իւր առանձնասենեակից:

Նա զարդարւում էր իննճոյք գնալու:

—Ոչի՞նչ, Դաւիթ Ֆէօլորիշի ուշքը գնաց:

—Զուր, չուր, աղաղակեց տիկինը:

Զրի կարիք չը մնաց, ինքը Դաւիթ աղան աչքերը բայց արեց և վեր կացաւ:

—Դէ՛չ, ա՛յ կին, հետեւիր ինձ, կարող ես ինձ զտնել տէր Վեռնովի տանը:

ՓԲ.

Քաղաքի մի հեռաւոր թաղում մի փոքրիկ երկայարկ տնակ արտաքուստ սակաւ է զանազանուում իւր շորքի շինութիւններից,

իսկ ներսը վերնայարկումը երեք պարզ կահաւորւած սենեակներ ա-
խորժելի տակաւորութիւն են թողնում այցելուի վերաց:

Յաւալի է միայն շարունակ տեսնել սենեակներից մէկի մէջ ան-
կողնում պառկած ծերունի հիւսնդին:

Հիւանդի մօտ պտղա պտղա է անում մի չափահաս կին: Տի-
կինը, բատ երևութին, հիւանդի ամուսինն է. բայց երկու ամոլների
մէջ, կարծես, մի աեսակ սառնութիւն է տիրում: մի աղէտ նրանց
երկուսի երեսին իւր անդառնալի գծագրութիւնն է թողել:

Կինն անտարբեր է դէպի հիւսնդը. նա թէպէտ կոտրւած,
ընկճւած է, բայց չի դադարում ողջ օրը պարապել իւր սենեակների
մաքրութեամբ և իւր աժանագին պաճուճանքները կարգի դնելով.
կարծես բոպէ առ բոպէ սպասում է ժամադրեալ հիւրերի:

—Մի պատանի ծառայ ներս ու գուրսէ անում: նա է հիւանդի
անհրաժեշտ պահանջները լրացնողը. նա տուն է գալիս մի փոքրիկ
պղնձեայ ձեռնազանդի զօղանջիւնով. նա է կերակուր ովատրասոողը:

Երկու այցելուներ ժամանակ առ ժամանակ բաց են անում
անծանօթ ընտանիքի դուռը: Նոցանից մէկը պատառոսուն ցնցոտի-
ների մէջ կոլոլւած մի երիտասարդ է, միւսը մի համեստ հագնւած
հոգեւորական՝ նոյնպէս միջին հասակում:

Երիտասարդն երբէք լուրջ չի տուն մտնում: նորա փոս ընկած
աչքերը շարունակ ուռած են, երեսը փքւած, քթի ծայրը կարմիր
և ձայնը խոպոտ:

—Փող չ'ունիմ, մացրիկ, զիմում է տանտիկնոջը զինեաների
մշտակայ այցելուն:

—Քա՛րը զլուխտ, թէ չ'ունիս. ես շատ ունի՞մ:

—Չես ուզում, մի տալ, զօր չեմ անում, բայց ահա՛ քո
պերիկ (շրջազգեստ), երկու շիշ զինի կը տան մի կտոր սե
հացով ու սոխով, ասում է գառնաժպիս անառակ որդին և վագում
մօր սենեակից գերիկն գուրս թրեւում:

—Դէն ձգի՛ր մօրդ հագուստը, ա՛ռ ահա քեզ մի բուբլի, յետ
է կանչում հիւսնդն արբեցողին և բարձի տակից թղթադրամը
շպրտում նորա սոգերի տակ:

Թափառաշրջիկը նոյն հեգնական ժամանով վերցնում է փողը և
անյաբուանում:

—Մեռնի՛ս, փչւի՛ս, Վասի՛լ, գետինը խորտակեի՛ս, որ միւս անդամ այս տունը ոտք չը կոխես, մեր արիւնը չը պղտորես, մեր ցաւերը չը նորոգես, որդու քամակից անէծքներ է ուղարկում Մարիա Մինակվան:

—Հերիք է, ա'յ կին, մեղաւորը մենք ենք, մեր մեղքն է, պէտք է կրենք և կրում ենք, զլուխը շարժելով հանդարտութեամբ ասում է Դաւիթ Ֆէոդորիչը:

—Քեզ ո՞վ էր ասում մի օտարազդի կառավարչի հաւատ ընծայէիր, որդուդ անծանօթ աշխարհում անխնամ ձեռնաթող անէիր, որ այսօր թէ որդիդ փչանար, թէ հօրս դառը քրտինքը շներոց ու գալիքրոց լինէր:

—Ե՛հ, ա'յ կին, շա'տ ենք ասել, շա'տ ենք լսել, երկուսս էլ կախաղանի ենք արժանի. քանի՛ց սրտացաւ ազգակիցների խորհրդով կամեցել եմ ես հալածել այն օտարին մեր դռնից, բաց դումիշտ սլաշտպան ես դուրս եկել, ասելով, թէ դու կը զզւես տեսնելով նորա տեղն եկող հոտած հայի ժանդոս երեսը:

—Սուտ ես ասում, վերջերումը Կիրիլն ինձ ես ատելի էր դարձել, յանդզնութեանը սահման չէր մնացել, ես միշտ կամենում էի դուրս անել, բաց դու արդելք էիր լինում:

—Լա՛ւ, լա՛ւ, դու ուղիղ ես, անցածի վերաց խօսելը ջուր ծեծել կը նշանակի, ասում էր Դաւիթ աղան և երեսը դէպի պատը շրջում, թողնելով, որ կինը ժամերով իւր կահ կարասիքը կարգիքերէ և ժամերով շարունակէ իւր տրտունջները:

ԺԹ.

—Քարի ողջո՛յն, հայրի՛կ, ներս է գալիս սովորաբար երեկոյեան ժանդառքից յետոց երխասարդ քահանան:

—Օրհնեա՛, տէ՛ր:

—Խնչպէս է այսօր ձեր առողջութիւնը:

—Ենորհակալ եմ:

Քահանան նստում է հիւանդի բարձի մօտ:

—Եկա՞ր, տէրատէր ջա՞ն, ներս է գալիս հանդարտ քայլւածքով տիկին Մարիամը:

Տէրտէրը տէղից վեր կենալով.

— Աղջո՞յն ձեզ, մայրի՛կ:
 Քահանան հանում է վերարկուի առկից թաշկինակում կա-
 պած մի թղթեաց սպարկի:
 — Աչա՛, մայրի՛կ, ձեզ համար մրգեղէն եմ բերել:
 — Մի՛ անիլ, տէրտի՛ք, խնդրեմ, այդ բանը:
 — Այս վերցրէ՛ք, միւս անդամ չեմ անիլ:
 — Ամեն օր առում ես, ամեն օր էլ անում ես:
 — Վեաս չունիր:
 — Խնչակս մեաս չ'ունի, աշխատանքիդ կէսը մեր վերայ ես ծախ-
 սում, հացիդ կէսը մեզ ես ուսացնում:
 — Եմ հացը չէ ձերն է, մայրի՛կ, այս հացը զուք էք ինձ տւել:
 — Մի՛ մուանալ, որ զու ընտանիքի տէր ես, նրանց ես սպար-
 տական պահելու, մենք էլ քո վզին մի աւելորդ ծանրութիւն ենք:
 — Ազատում եմ, մայրի՛կ, զբանով ինձ վիրաւորում էք. որդին
 իւր ծնողացը պարտական է, զուք իմ հողեսր ծնողքն էք:
 — Իաց զու մեծ եկամուաներ չ'ունիս:
 — Ասուուած ժողովուրդը հաստատ պահի, իւր քահանացին
 քաղցած չի թողնիլ. չ'ք լսել առածը. — տէրտուր արա՛, զիւլը
 ձգի՛ր, եթէ չ'ապրի, զեալը ձգի՛ր:

Քահանան նստում է հիւանդի մօտ ժամերով. երբեմն միսիթա-
 րական զբոցներ են լինում նորա խօսակցութիւնները և երբեմն
 Սուրբ Գրքի կամ ուրիշ բարոյսական պատմութիւնների ընթերցումն:
 Նուրբ Գիրքը քահանան իւր ձեռքսկն է զրել հիւանդի զիւա-
 վերելը, իսկ միւս գրքերը հետն է բերում:

Տէրաէրը խօսում է համեասութեամբ, կարդում է պարզ և
 զիւրլմբունելի արտասանութեամբ, նորա զէմքը շարունակ ժպտա-
 ծիծաղ է, նորա խօսքերը հոգեզգաց են:

Դաւիթ աղան զոհ է իւր սանից և նա տէրտէրին այլապէս չի
 կոչում, եթէ ոչ իմ պահապան հրեշտակս. նա երբեք մաքից
 չի ձգում այն երջանիկ բոսդէն, երբ ինքը հանգուցեալ բիձաց Աարդ-
 ոին կանչեց և ձեռքը յանձնարարական տոմակ տալով՝ ուզարկեց
 փոքրիկ Արտեմի հետ հացոց Աւառումնարանը:

Աչա՛ այն Արտեմին է, որ այսօր տէր Աւենդ է զարձել և իւր երախ-
 տագիտական պարտականութիւնը սրբութեամբ կատարում դէպի իւր

բարերարները։ Նա ինքն է վարձել Դաւիթ աղայի համար այս տնակը, ինքն է կերակրում և սնուցանում բաղդի գառն հարւածի թշւառ զոհերին, տէրտէրի դուռն է դնում Դաւիթ աղայի ծառան առաջունները և ծախքի վող առանում, տէր Աւոնդն է, որ անպակաս է անում աղայի բարձի տակից առ ձեռն ծախքերի համար փողը՝ հստած տէղից թղթադրամի ծրաբն աննկանելի կերպիւ բարձի տակը կոխելով. այդ դրամներիցն է տանում մօր շրջազգեստի փոխարէն Վաւիթ աղան։

— Ես օր է՛լի եկել էր մեր բարի պառուղը. է՛լի տարաւ մօր շրջազգեստի փոխարէն բուրլին, ովասմում է սրտարեկ որդու արկածքը տէրտէրին Դաւիթ աղան։

— Խողբեմ, հայրիկ, ուե՛ք անարտանչ, մի՛ խնայեք, քաղցր գէմք ցոց ուե՛ք, զուցէ հայրական զժալիր արտացայտութիւնը ներշնչի նորա սրտի խորքը, զարթացնի նորա մէջ ինքնազդացութեան իմացականութիւնը և մի օր բաղդ ունենանք անառակ որդու հօր վաեմ խօսքերն ասելու. Փիմ այս որդին մեռած էր և կեանք առաւ, կորած էր և դանւեցաւ։

— Նորա համար անառակ որդու հօր արժանաւ որութիւնը սկիզբ է ունենալ, ցաւագին ասում էր Դաւիթ աղան. ես զգում եմ, որ ինքս չեմ տեսնիլ. ցանկալի էր և հողիս միմիթարւած կը լինէր, եթէ իր և իցէ դու և մացը տեսնէիք անբազդ որդուս զղջումը։

— Նաս ցաւում եմ, հայրիկ, որ մինչեւ այսօր անկարող եմ գտնել ազգի Ատամիլի վերայ. երբէք լուրջ չը հանդիպեցի, որ լազողեցնեմ բան հասկացնել նորան, ովասաշշելուս էլ միշտ փախուստ է տալիս ինձանից, այնու ամենայնիւ, յոյս իսպառ չեմ կորել նորանից։

— Ասուած սրտինդ կատարի, հասաչալից և արտասելով պատասխանն էր լինում վշտացած ծերունու։

¶

Քաղաքի մութ փողոցներից մէկում, մի նկուղի մէջ, մի աղտասու սեղանի շուրջը երկու-երեք հողի են նատած։ Արրեցողի կատարելառիսն են երեքն ևս. Երեք կանաչ չարեքանոց գաւեր շարած են. մի կառը չոր հաց և մի սոխ սեղանի համաղամբն են. հացի կեսը զինոս է։

—Գինի՛, է՛յ, զինի՛ բեր, վերջացաւ, ձեռքով սեղանը բաղլսե-
լով՝ դոչում է նատողներից մէկը:

—Նուա, զինի հասցրո՛ւ, մեզանից բազդաւորների կենացը պէտք
է խմենք, պահանջում է երկրորդը:

—Ել փող չ'ունիք, խմաճներդ այսօր բաւական է, վեր կացէ՛ք
դուրս կորէ՛ք, թէ չէ հիմի շան նման կը սատկացնեմ, սպառնում է
գինեվաճառը:

—Նատ մի՛ խօսիլ, զինի բե՛ր, ես ուզում եմ այս անվիշտակ
մևսելի հոգու բաժակը խմել ու գնալ քեզ համար մանեթ բերել
ասաց երրորդը և վեր թուաւ, վազեց գէպի շարւած շշերը՝ աչքը
յառած փողոցով այն բուլին անցրած ննջեցէլքի կողմը:

Բաքոսի երկրպագուն մի ձեռքն արդէն հասցրել էր շին, բայց
նա յանկարծ ձեռքը յետ քաշեց, կանգնած տեղը երերաց և սար-
ափելի ծւոցով աղաղակեց՝ ա՛խ:

Ծնկերները վեր թուան, յառած վազեցին, բայց մինչ նոքա
մօս կը գալին իրանց ընկերին, վերջինս խելագարի նման դուրս վա-
զեց գինետանից:

—Սպասի՛ր, սպասի՛ր, զոչեցին գնացողի ընկերները և կամեցան
վազել իրանց ընկերի ետևից, բայց տեղն ու տեղը վայր ընկան գի-
նոլութիւնից:

—Այ զարմանք, բացականչեց գինեվաճառը, Վասիլը սրանցից
աւելի արբած էր ու չը գիտեմ ընչից նա բոլորովին ուշքի եկա-
ու լրջացաւ, ի՞նչպէս հաստատ քայլերով վազում էր:

ԻԱ.

Եկեղեցումը պատարագ է, գինետան առջեկից անցրած ննջե-
ցելքը դրւած է ամբիոնի վերաց. պատարագիցը տէր Վեռնդն է, նա
շատ յուզւած էր. նա ժամից յետոյ վերջին Հոգւոյն ասաց ծերու-
նի մեսելի վերաց, չոքեց, համբուրեց նորա չորացած ձեռքը և ան-
դորր հոգւով ու զւարթ դէմքով տեղիցը կանգնեց:

Դաղաղի վերաց ընկած լալիս էր մի սւակոլով չափահաս տա-
րիներով կին և չը ուզում վեր կենալ:

Տէր Վեռնդը բարձրացնելով կնոջն՝ ասաց.

— Միմիթարւի՛ր, մայրի՛կ, հայրիկը քաւեց իւր ջահէլութեան սխալանքները:

— Եթէ առ իւր երկարատեւ հիւանդութիւնովը կրեց իւր ապաշխարանքը, ի՞նչ պէտք է անեմ ես՝ սորա մեղասկիցս. մեր յիմարութեան պառուղը փշի պէս ցցւած է աչքիս առաջին:

— Աստուած ողորմած է, մայրի՛կ, Վասիլը կ'ուզզւի, յուսադրեց և իւր տունն ուղարկեց տիկին Մարիամին տէր Վեռնդը ու ինքը գնաց վերջին հրաժարականը տալու իւր բարերարին:

— Այս հողն էլ օրհնեցէ՛ք, տէրտէ՛ր, դուրս եկաւ սակաւաթիւ յուղարկաւորողների միջից մի ճղճդոտւած հազուստով երիտասարդ՝ մի բուռը հող գետնից վերցնելով և նախապէս իւր երեսը նոյն հողովը արորելով:

Ամենքը զարմացած անձանօթին նայեցին:

Տէր Վեռնդը, կարծես, ոգևորւեց. նա ինքն օրհնեց հողը:

Երիտասարդը հողը ձգեց ննջեցելքի երեսին և չոքեց, զլուխը դրեց նորա կրծքին և սկսաւ երկար ժամանակ հեկեկալ անմռունչ:

— Բաւական է, ո՞վ ես, վեր կա՛ց, ժող զազաղը փոսն իջեցնեն, կրկնեցին մի քանի ձայներ, արդէն ժամանակ է:

Տէր Վեռնդը նբանց կանգնեցրեց.

— Համբերեցէ՛ք, ասաց նա, թո՛ղ մարդն իւր փափազն առնի:

Երիտասարդը վերջապէս երկիւղածութեամբ մի համբոց տւեց ծերի աջին ու ինքը, առանց զլուխը բարձրացնելու, երկու ձեռքով երեսը ծածկեց ու շատակ քայլերով հեռացաւ դէպի գերեզմանատան կից բլուրը:

Տէր Վեռնդը քամակիցը վազեց, բայց չը հասաւ:

— Վասիլ, Վասիլ, կանգնի՛ր, դոչեց տէրտէրը:

Վասիլը կամ չը լսեց, կամ չը լսելու տւեց. լեռը ծածկեց նորան տէրտէրի տեսութիւնից:

ԻԲ.

Տիկին Մարիամը տէր Վեռնդի տան մի անդամն է. նա այժմ բոլորովին կերպարանափոխւել է. նա տէրտէրի տան ամրապինդ սիւնը և նորա սիրատուն զաւակների սիրող և բարեհամբոց տանտիկինն է. ափիկնոջ ձեռքին է քահանայի տան տնտեսութիւնը, նորան է նա-

յում՝ ողջ տունը. տերուհին մօր ակս սիրում՝ է տիկին Մարիամին:

Տիկին Մարիամը գոհ է իւր վիճակից, բացց միշտ ախուր է. Վասիլին է նորա տրտութեան պատճառը:

Տէր Դեռնդին ամեն հնարք զործ է զնում մուայնել պառաւի վշտերը, միսիթարական գէտքեր է պատճում; բացց ափիկինը միշտ կրկնում է.

—Այդ ամենը շատ լաւ, տէրտէր ջա՞ն, բացց մեր բարի պըտուղը չը կայ. Հօր մահւան օրից նորա երեսը ոչ ոք չի անեւը:

—Ազօթի՛ր և յայսկ Աստուածանից մի՛ կտրելի, սիրելի մայրի՛կ, միսիթարում է նորան քահանան, իմ հասուս հաւասս ինձ թելատրում է, որ Վասիլը կենդանի է և ուղղւած. իմ ներքին ձայնն ինձ ասում է, որ այսօրւայ հեղնութեամբ ասածդ բարի պառուղ խօսքը մի օր լիովին տէռք է յարմարի Վասիլին և դու ուրախանաս:

—Փա՛ռք իմ Աստուն, եթէ մոլորեալ որդուս ծաղրելով ենք կոչում բարի պառուղ, հոգեոր որդիս միանգամայն արժանի է այդ անուանը, տէրտէր ջա՞ն, պատասխանում էր տիկին Մարիամը և զոյգ ձեռքերով բունում քահանայի զլուխը, մի քանի անդամ կաթոգին համբորներ էր զրոշմում նորա ճակատին, աչքերին, այսերին, մօրուքին և ձեռներին. հեան էլ աչքերն երկինք սկսուած ջերմ սրսով ազօթք էր մրմնջում զէտի Վերին Տեսչութիւնը և ապա թողած քահանային, շուրջ էր ածում աչքերը զէտի նորա զաւակները և արտասանում:

—Դու պահես, Աստուա՛ծ, իմ բարի պառուղ տէրտէրին իւր բարի պառուղ զաւակներով ու ընտանիքով և, ի յարդանս սրանց, դարձ ու զզջումն տաս իմ անդարձ որդուս:

ԻՓ.

Տէրտէրի յայսը հաստատուն և աներկբազ էր. տիկնոջ ազօթքն Աստուած լսել էր:

Տէր Դեռնդի ստացած այսօրւայ նամակի ծրարից մի ուրիշ նամակ ևս գուրս եկաւ: Երկրորդը տիկին Մարիամ Ա...-ովին էր պատկանում:

Նամակը Վասիլիցն էր:

Նա այժմ մի լեռ ընկած գիւղերից մէկի բնակիչ է. Նա գեղ-
ջուկ է, ռանչպար է, ունի իւր չորս լուծք եզր, երկու կթի կովե-
րը, իւր արօրն և տնտեսութիւնը:

Գիւղական նախրորդի աղջիկը նորա աշխատանքները բաժանող
ամուսինն է: Երկու գեւահաս երեխայք երջանիկ տան զարդն են.
Նոքա մանկական թոթովանքով հանգիստ արքայութիւն են խընդ-
րում իրանց պապ Դաւթին և ցանկանումեն համբուրել իրանց
տատի ձեռքը:

—Այս ամեն բարութիւնները, զրում է Վասիլը, իմ դառն աշ-
խատանքի, իմ ճակատի քրտնքի գինն են, իմ կոշտացած մատների
արգիւնքն են, բոլորը մշակութիւնով եմ ձեռք բերել:

Ի՞՞.

—«Երի՛ր ինձ, սիրելի տէրտէր ջա՛ն, ասաց տիկին Մարիամը,
թոյլ տուր ինձ կեանքիս վերջին օրերն անցկացնել Վասիլիս մօտ և
ազօթել իմ հոգեւոր և մարմնաւոր զաւակների՝ իմ երկու բարի
պտուղների երջանկութեան համար:

Տիկինը տէր Վեռնդի և իւր ընտանեաց քաղցր զգւանքով ճա-
նապարհ ընկաւ դէպի հեռու երկիր. Հոյլ նորան քաշեց դէպի
իւր նախնեաց շիրիմները:

ԱՐԴԻՒՆԱՅԱՆԴԻՍԻՑ

ՀՄԱՑԵԱԿ ՍՈՂՈՄՈՆԵԱՆՑԻ

ՉՈՐ ՄՐԳԵՐ

Կովկասեան ներկայ Սրդիւնահանդիսի հետաքրքրական բաժինն ներից մինն էր՝ «մրգեր և բանջարներ չորացնելու» բաժինը, որը հաստատւած էր արքունի կալւածների մինխտորութեան ձեռնարկութիւնով և նպատակ ունէր ցոց տալու և քարոզելու կովկասցիներիս նորագոյն եղանակով մրգեր և բանջարներ չորացնելու առաւելութիւնը մեր մինչև հիմա դործածած նահապետական ձևերի առաջ:

Սոյն յօդւածի նպատակն է՝ արծարծել մեր տպաւորութիւնը և առհասարակ մի գաղափար տալ հեռաւոր անտեսներին յիշեալ արհեստի կարևորութեան վերաբերութեամբ:

Մրգեր կամ բանջարներ չորացնել՝ նշանակում է պարտէզների և բանջարանոցների հում բերքերից գոլորշիացնել ջուրը, որը, մնալով նրանց մէջ, օգնում է սլողի ֆերմէնտացիացին (եռալուն) և շուտով փչանալուն: Միրզը ազատւելով ջրից՝ կորցնում է իւր քաշի 90 տոկոսը, այսինքն՝ հարիւր փութ հում մրգից մնում է միայն 10 փութ չոր միրզ, ուստի՝ հեռու հրապարակ ուղարկելու համար՝ արդիւնաբերողը կը վճարէ ճանապարհալարձ միայն 10 փութի համար փոխանակ հարիւր փութի վճարելու: Հում միրզը շուտով փչանում է, իսկ չոր միրզը կարող է երկար մնալ առանց վնասի: Լաւ չորացրած միրզը պահում է մինչև վերջը հում մրգի գոյնը, հոտը և համը: Քաւական է նորան թրջել հասարակ ջրի մէջ և նա կը դառնայ իբրև թարմ միրզ, այն զանազանութիւնով, որ աւելի քաղցր կը լինի,

որովհետև չորանալու միջոցին շաքարի մասը աւելանում է տաքութիւնից:

Չոր մրգերի այս առաւելութիւնները իրաւոնք են տւել մասաւանդ հրապարակներից հեռու գտնող անտեմներին՝ արտադրել չոր մրգեր ու բանջարներ ոչ միայն իրանց սեղհական գործածութեան համար իբրև ձմեռան պաշար, այլ և մեծ քանակութիւնով վաճառահանելու նրանց՝ իբրև շահաւետ ապրանք:

Ամերիկացի և եւրոպացի տնտեսները չոր մրգերի արտադրութիւնից ստանում են արդիւնք հարիւրաւոր միլիոններով։ Նորա առևտուրը այդ ազգերի մէջ կազմում է ժողովրդի տնտեսական ապահովութեան աղբիւներից մինք:

Անգրկովկասը ևս, օժտւած լինելով մրգեր արդիւնաբերելու չաջող հանգամանքներով, կարող էր մեծ զեր խաղալ չոր մրգերի առևտորի մէջ։ Նա կարող էր ոչ միայն բաւականութիւն տալ իւր ներքին գործածութեանը, այլ և արտահանել դէպի Խուսիա և այլ տեղեր նշանաւոր քանակութիւն չոր մրգերէնների։ Կովկասի վերայով դէպի Խուսիա գնացած չոր մրգերն, մեծ մասամբ, գալիս են Պարսկաստանից։ Նոյն Պարսկաստանը լցնում է և Կովկասի հրապարակները իւր մրգերով և նրանցից պատրաստուած կոնսերվերով։ Ֆրանսիան ունի իւր բաժինը այդ ապրանքի ներմուծութեան մէջ Կովկասի հրապարակում։ Պարսկաստանի մրգերն մէր մէջ մուտք են գործում իրանց էժանութեան պատճառով, բայց նոքա իրանց ազնուութեան և մաքրութեան կողմից շատ ստոր են։ միւչդեռ ֆրանսիական կոնսերվերն և մրգերն գործածում են ունենոր դասակարգից իրանց ազնուութեան համար, թէև նրանց զինը անհամեմատ բարձր է։ Կովկասը երբ կ'արտազրէ էժան և ազնիւ միրգ, այն ժամանակ միայն կարող կը լինի զիմադրել Պարսկաստանի և Ֆրանսիայի մրգերէնների հոսանքին։

Բայց առ այժմ մեզանում մրգեր չորացնելու գործը կատարւում է նահապետական ձեւրով, և բայց մի քանի բացաւիկ տեղերից՝ պարահները իրանց փոքր տարածութիւնով և կազմութիւնով ծառայում են աւելի հում մրգեր վաճառահանելու մօտիկ հրապարակներում և չորացնելու նրանց միայն տնտեսի ներքին գործածութեան համար, քան թէ արդիւնագործելու նրանցից վաճառահանութեան որ և է ապրանք։ Պարզենք ասածներս։

Մեզանում մրգեր չորացնելու համար առհասարակ ոչինչ նաև խաղաղաստութիւններ չեն տեսնում թարմ մրգերը մաքրելու կեղծաից կամ վեաւած մասերից, հապա անխոտիր չորացնում են միամին թէ առողջները և թէ որդնոտները կամ վեաւածները, թէ հասածները և թէ ահաները, թէ խոշորը և թէ մանրը, թէ այս տեսակը և թէ այն տեսակը. և այդ բոլորը միասին կամ ամբողջ կամ ջարդւած փոռում են արևի տակ՝ փալաների և այլ գործւածքների վերաց, իսկ երբեմն ծառից վացր ընկած միրզը մնում է ծառի տակ և չորանում ամենաանխնամ կերպով. մի քանի մրգեր ևս շարում են թելերի վերաց և կախ տալիս արևի տակ. Այդպիսի հանգամանքում մրգերն չորանում են բաւական երկար ժամանակ. օդի խոնաւութիւնից մրգերի մէջ գոյանում է մի տեսակ վերմենոտացիա, որը նրանց թթու համ է տալիս, նրանք փոխում են իրանց բնական գոյնը. թռչուններն և ճանձերը բազմութիւնով հաւաքրում են մրգեղինների վերաց և բացի ուտելուց, մանաւանդ միջատները, կեղուուում են բերքը իրանց արտաթորութիւններով, և ճւեր ածում. աւելացրէք գորա վերաց և այն փոշին, որ նատում է մեծ քանակութիւնով պտուղների վերաց. Այդ տեսակ պատրաստած չոր մրգերն կորցնում են իրանց համը, հոսք և գոյնը, նրանց անկարելի է ուղղակի գործածելլ, հապա պէտք է նախապէս ջրով լւանալ, որի ժամանակ ևս կորչում է պտղի քաղցրութեան մի մասը. նրանց երկար պահել առանց խնամքի՝ դլ թէ անկարելի է, որովհետեւ նրանց մէջ գոյանում են որգեր, որոնք խապառ վշացնում են ապրանքը. Այս կերպ նահապետական ձւով պատրաստած ապրանքը հաւանական է, որ մեծ հրապարակ չի կարող ունենալ:

Մենք մատնացոյց արինք նոյնպէս և պարտէզների աննպաստ կազմութեան վերաց. և իրաւ, մեզանում պարտէզները չեն համապատասխանում որ և է տեխնիքական արդիւնաբերութեան. բացառութիւն մասսմբ կազմում են խաղողի ազգիները, որոնք նշանակւած են գինեշինութեան համար. նացածները, ըլ նացած իրանց փոքր տարածութեանը, լիքն են մրգերի անհամար տեսակներով. Օրինակ՝ մի պարտէզ մի զեսեատին մեծութիւնով պարունակում է իւր մէջ և տանձենի, և խնձորենի, և սալորենի, և ծիրանի, և զեղձենի, և վազներ, և սերկենի, և թթենի.

և այլն և այլն. բացի գորանից տանձենիները այնտեղ ջոկ ջոկ տեսակներ են ներկայացնում, ինձորենիները նոյնաէս. մինչեւ անգամ միւնոյն ծառի վերաց դուք կը նկատէք երբեմն երկու կամ մի քանի տեսակ պատուղներ: Այդ բոլոր տեսակ մրգերն, առանձին առանձին վեր առած, կազմում են աննշան քանակութիւն կանոնաւոր արդիւնագործութեան նիւթ լինելու. այլ և նրանք հասնում են տարւաց զանազան առինսերում, նրանցից մի քանի տեսակներ յարմար են, իսկ միւնիները՝ անզարմար արդիւնագործուելու: Ամեն տեսակ մրգաբեր ծառ իւր առանձնական խնամքն ունի, հետեւաբար՝ բազմատեսակ ծառեր ունեցող պարտէզը դժւար է կանոնաւոր մշակելլ, և նորան խնամքը մեծ ծախքեր է պահանջում: Այս կերպ կազմութիւն ունեցող պարտէզը, հաւանական է, որ չի կարող ծառացել չոր մրգերի արդիւնագործութեան համար:

Աւրեմն, որպէս զի չոր մրգերը մեզանում ունենան արտահանութիւն և հետզհետէ հրապարակ վաստակին և հալածեն օտարամուտներին, հարկաւոր է, որ մենք նախ՝ կատարելագործենք մրգեր չորացնելու եղանակը, և երկրորդ՝ յարմարեցնենք այդ արդիւնագործութեանը պարտէզների ներկայ կազմութիւնը:

Մրգեր և բանջարներ չորացնելու արւեստը աւելի կատարելագործած է ամերիկացոյ մէջ, որոնցից մենք պէտք է օրինակ առնենք: Ամերիկացիք սպարապում են նորանով լնդարձակ դիրքով, և արտապրում են հարիւրաւոր միլլիոնների սպրանք: Նրանք մրգերը և բանջարները չորացնում են կրակի զօրութիւնով. դորա համար հնարած են զանազան տեսակ հնոցներ: Հնոցը կազմւած է երկու մասից՝ վառարանից և չորանոցից: Չորանոցը մի պահարան է կամ արկզ, որը հաստատած է վառարանի վերաց ուղղահայեաց կերպով, կամ նորա հետ կազմում է ուղիղ կամ բութ անկիւններ: Չորանոցում գարսում են մրգերն շրջանակներով, որոնք հիւած են լինում երկաթի թեկերից: Կրսի օդը մոնելով վառարանի պատերի մէջ տաքանում է և բարձրանում դէպի չորանոցը. այնտեղ անցնելով շրջանակների միջով տաքացնում է պատուղները, և նրանց գոլորշիները ծծելով դուրս գալիս չորանոցից: Այսպէս տաքացած օդը շարունակաբար շրջում է և չորացնում պատուղները: Չորանոցը ունի երկու դուռ, մինը՝ որտեղից դարսում են շրջանակները նոր մրգեղին-

ներով, և միւսը՝ որտեղից գուրս են բերում արդէն չորացածներլու Վառարանը վառում են փայտով, քարածուխով կամ այլ նիւթերով։ Նա պէտք է յարմար լինի կանոնաւորելու ջերմութեան աստիճանը, որովհետև ամեն տեսակ միրդ չօրանում է որոշ աստիճան տաքութեան մէջ, որի շատութիւնը կամ քչութիւնը կարող է ազդել սլուղների յատկութեան վերաց։ Առհասարակ պահանջւում է խիստ հսկողութիւն որոշելու մրգերի չորանալու աստիճանը։ չափազանց կամ թերի չորացած մրգերն միակերպ ընդունակ են փչանալու։ Մրգերը, նախ քան հնոցը մտնելը, լւացւում են սառը ջրում, մաքըր-ւում քոսերից և վնասած մասերից, կճպում և զատում մի-ջուկից։ մի քանի մրգեր կտրատում են որոշ ձեւերով, ուրիշները ամ-ջողջ գործածւում։ Այս նախապարապութիւնները կատարւում են մեծ մասամբ մի շարք մեքենաների միջոցով, որը բաւական հեշ-տացնում է ձեռքի աշխատանքը։ Այն մրգերը, որոնք օդի ազդե-ցութեան տակ փոխում են իրանց գոյնը՝ մասնաւոր խաշում են եռ եկած ջրում, կամ նորա գոլորշների մէջ, կամ ծխում են ծծմբով։ Այդ եղանակով նրանք ստանում են իրանց բնական գոյնը, որից յետոյ գարսում են շրջանակների վերաց և զբւում չորանոցի մէջ։ Մրգերը չորանում են, ոմանք շուտ և ոմանք աւելի ուշ, այդ պատճառով կարեւոր է միաժամանակ չորացնել միայն մի տեսակ միրդ, իսկ զանազան տեսակները դժւարացնում են գործը։ Մրգերը, չորա-նալուց յետոյ, գարսում են արկղների մէջ և ձնշում մեքենայի։ Այդ զբութիւնով նրանք ուղարկում են հրապարակ։ Այս եղանակ չո-րացնելիս պահանջւում է՝ 1) սաստիկ մաքրասիրութիւն, որի համար այն սենեակը, որտեղ չորացնում են մրգերը, պէտք է լաւ օդափոխութիւն ունենայ, մեքենաները և ուրիշ գործիքները միշտ պէտք է մաքր-ւին, բանւորների ձեռքերը և հանդերձները միշտ մաքուր պէտք է լի-նին, ճանճերից ազատելու համար՝ սենեակի պատուհանները պէտք է վանդակապատ լինին կամ ցանցառ կտաւով ծածկւած։ 2) պտուղ-ների թարմութիւն։ նրանք պէտք է չափաւոր հասած լինին, պէտք է նրանց տեսակները ջոկել և երբէք չը խառնել միմեանց հետ։ Ամենասիրած հսկողութիւնով կարելի է չորացնել շատ ազնիւ մրգեր, որոնք պահեին իրանց բնական գոյնը, համը և հոտը, և այդ չափ-կութիւններով մի տեսակը զանազանուէր միւսից։ Այս կերպ պատ-

րաստւած մրգեղինները կարող են աւելի երկար պահւել առանց փչանալու, իսկ գործածութեան ժամանակ, երբ հարկաւոր է նրանցից որ և է կերակուր պատրաստել, բաւական է մի քանի ժամ թրջել նրանց սառը ջրում, և նրանք կը ստանան իրանց բնական կազմութիւնը. միայն կերակրի մէջ պէտք է ածել և այն ջուրը, որի մէջ նրանք թրջւած են, որովհեաւ միրգը թրջւելիս ջրին տալիս է մասամբ իւր հոտը (արօնաթ): Որ և է դէպքում կարիք չը կայ լւանալ չոր միրգը, ինչպէս այդ անհրաժեշտ է արելի տակ չորացածների համար: Այս կերպ չորացած սովորանքը թէւ աւելի ծախքեր ունի, բայց այդ ծախքերն աւելորդով կը վարձատրւեն հրապարակում նոցա արժէքի առաւելութիւնով:

Գալով այժմ պարտէզների կազմութեանը, պէտք է ցանկանալ, որ մեր պարտէզներն լո ճ ո զ ւ ա ծ չը լինեին բազմատեսակ պիտանի և անպէտք մրգեղիններով, հապա նոցա մէջ մշակւելին աւելի քիչ տեսակ մրգեր, և այն՝ այն տեսակներից, որոնք աւելի պիտանի են որոշ արդիւնագործութեան: Համար ազնիւ նիւթ տալու: Պէտք է ցանկանալ, որ նրանք դուրս գային իրանց նեղ սահմանից, այսինքն սեղանի համար թարմ միրգ միայն մատակարարելու շրջանից, և ընդգարձակւելով՝ կազմէին ամբողջ պլանուացիաներ ու դաշտացին մշակութեան ձև ընդունէին, և երբ միայն նրանք կարող կը լինին բաւարարութիւն տալ որ և է արդիւնագործութեան, իսկ ներկայ դէպքում՝ մրգեր չորացնելու զարգացմանը: Յայտնի է՝ որ պարտէզը որոշեալ տարածութեան վերաց կրկնակի արդիւնք է տալիս հացաբոցների համեմատութիւնով, ուստի որոնք հնարաւոր է այդ, պարտէզները կարող են փոխարինել հացաբոցների՝ կրկնապատկելով դաշտերի արդիւնաբերութիւնը: Ամերիկայում պարտէզները կազմում են ահազին պլանուացիաներ. հարիւրաւոր գեսեատին հողեր աընկւած են լինում մի կամ մի քանի տեսակ մրգատու ծառերով, և այդ հանգամանքը ամերիկացոց իրաւունք է տալիս բերքերի լայն արդիւնագործութիւնով զրադւելու: Թրանսիայում՝ բացի «verger» կոչւած անտառատեսակ պարտէզներից՝ շատ տեղերում՝ մրգաբեր ծառերն շրջապատում են ընդաբոցների արտերը և արտադրում ահազին քանակութիւն էժան մրգերի: Այնուղ առհասարակ խիստ զարգացած է չոր մրգերի և կոնսերվների առևտուրը: Հաշւած է, որ

միայն «Lot-et-Garonne» նահանգը տարեկան արտադրում է սալոր (pruneau) աւելի քան 50 միլիօն ֆրանկի. իսկ ամբողջ Ֆրանսիայի արտադրութիւնը հասնում է ահազին զումարներից հարաւային Ռուսիայում ևս, ինչպէս Բեռարաբիայում և Խրիմում, վերջին ժամանակներս սկսել են կազմել ընդարձակ պարտէզներ մինչև 30 դեսետին տարածութիւնով, որոնք իրանց տէրերին տալիս են տասնեւակ հազարներով արդիւնքների առևտուրը: Կովկասը, հետեւելով նրանց օրինակին, ունի յարմարութիւն ընդարձակելու իւր պարտէզները և լայնացնելու վերջիններիս արդիւնքների առևտուրը: Մրգերի չորացնելու կանոնաւոր եղանակը զարգանալով մեր երկրում ի թիւս միւս արդիւնագործութիւնների՝ կարող է սկահանջ յարուցանել պարտէզների ընդարձակ մշակութեան: Կովկասի այն զաւառները, որոնք չ'ունին յարմար ձանապարհներ հաղորդակցելու մեծ հրապարակների հետ, և որոնք, տեղափոխելու միջոցների վատութեան պատճառով, անկարող են օգտւել թարմ մրգերի արտօհանութիւնից, նրանք չորացնելով իրանց մրգերը, գիւրաւ կարող կը լինին արդիւնաբերել իրանց պարտէզները: Վերջապէս լաւ պատրաստուած չոր մրգերն արժանապէս վարձաարելով արդիւնաբերողների աշխատանքը, կը կազմեն մեր ժողովրդի տնտեսական ապահովութեան աղբիւրներից մինչ Ուստի, Կովկասեան ներկայ Արդիւնահանդիսում մրգեր չորացնելու ձեռնարկութիւնը՝ արքունի կալածների մինիսարութեան ձեռներէցութիւնով և ազդ բաժնի կառավարիչ պ. Վ. Ա. Զերնեայեվի աշխատութիւնը արժանի են կովկասցիներիս ջերմ շնորհակալութեանը:

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԵՅՅ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ), արտասուզած «Մուրճ» ամսագրից. Թիֆ-
լիս. տպարան Մ. Խօսինեանցի. 1889 թ., փոքր քառածալ, 168
հրես, տառ. № 12: Գինն է 50 կոպէկ:

Աչօ'ի ալս նորագոյն վէպը, իւր թեմակով, մի բան քաղաքի ծալքերից մի-
թեմակով, մի նոր երևոյթ է մեր վիպագրութեան մէջ: Հեղինակը նիւ-
թը քաղել է գաւառական մի քա-
ղաքի, և անկասկած հուշի քա-
ղաքի ամենասատր խաւերի կեան-
քից: «Արդամներ»-ի մէջ աչքի են
ընկնում մի բնանակիր մշակի շուտով
ացրիցած կին Աննան, որը վերջաց-
նում է իւր կեանքը անառակ կա-
նանց վիճակում. Սառան, նորա փոքր
աղջիկը, որը մատնում է մուրաց-
կանութեան. Բարեեղ մուրացկանը և
մի վերին աստիճանի տիսական կին՝
Քարուշկան, ալս ամեն բանի վար-
պետուհին և ամենից առաջ անա-
ռակների մայրը:

Արժէ, որ բովանդակութիւնը կար-
ճառօտ կերպով սպատմեի:

Բեռնակիր մշակ Մարտութը մեռ-
նելով, թողնում է կնոջը քսան տա-
րեկան հասակում և մի աղջիկ՝ Մա-
ռային, չորս տարեկան: Մարտութը
ինքն իւր ձեռքով շինել էր տան-

նման մի բան քաղաքի ծալքերից մի-
նում, որ և մնաց միակ ժառանգու-
թիւն իւր կնոջ և աղջկան: Աննան
մնաց բոլորովին զուրկ ասլրուստի
աղքիւրներից. բաց որպէս մէկը, որը
ոչ մի անկախ աշխատանքի սովոր
չէ, քաշում էր պարզ կերպով աշ-
խատաւոր լինելուց քաղաքի ընտա-
նիքներում, և իթէ սկզբում էլի մի
գործով պարապում էր, այդ էլ ոչ
ողջակի կերպով: Աննան գեղջկու-
չի էր, բոլորովին անզարզացած.
մինչ 15 տարեկան հասակը մեծա-
ցել էր իւր հօրեղբօր մօտ, որին, սա-
կան, ընտանիքի ծանրութիւնը զրդեց
նորան դուրս անել տանից: Աննան
մարդու գնաց Մարտութիւն, որը նրան
բերաւ քաղաք, որի կեանքից, սա-
կան, բոլորովին անտեղիակ մնաց
Աննան մինչ իւր մարդու մահը: Թա-
ղի մէջ նա ճանաչւեց աղքատ, որին
հարեանները ալսպէս կամ ալսպէս
օգնում էին: Նա մինչև անգամ ոկսեց
հաց ստանալ մի փողոցավին մուրաց.

կանից՝ Բարսեղից, մինչև որ վեր-
ջնս հաստատւեց նորա տաճը, գի-
շերները այդ տաճը օթևաներու հա-
մար։ Այդ օրից՝ Բարսեղն էր Ան-
նալին ու Սառավին կերակրողը։
Բարսեղը և կաղ էր և կուրծքը
դուրս ցցւած և մէջքը փոս։ Բաց ա-
մենահասարակ մուրացկաններից չէր՝
ունէր խելք և հետաքրքրութիւն քա-
ղաքի անցքերի համար, ունէր և սիրու,
որը անդգանցած չէր գէպի կնոջ
սէրը։ Նա էլ զիւղացիներից էր և եկած
էր քաղաքը մուրացկանութեան, կըռ-
ւելով իւր եղբայրների հետ, որոնց
համար նա անպէտք էր։

Իսկ Աննան, թէ մաշւած և ազ-
քասի ցնցոտիների մէջ, բաց պահ-
պանած էր իւր մեռի գծազրութիւն-
ների գրաւչութիւնը։ Նորա տաճը
մնալով և տունը պահպանելով, Բար-
սեղի և Աննալի մէջ սկսեց մտերմու-
թիւն, որը գնալով աճեց։ Աքսեղ
զգացաւ Բարսեղի մէջ միտք՝ ամուս-
նանալ Աննալի հետ և արսալիսով
աջախ հաստատել իւր համար։ Բար-
սեղի համար կեանքը սկսեց ստա-
նալ մի նոր հրապար, նոր ինտերես։

Բարսեղը այն աղքատներից էր,
որոնց չաղողուում է ժողովրդականու-
թիւն ստանալ և ապահով լինել շատ
թէ քիչ լաւ ընդունելութեան՝ մի
տուն մտած ժամանակ։ Ազգպէս է,
որ նա մի անգամ էլ մտաւ մի կնոջ
տուն, որին ամբողջ քաղաքը հոչա-
կում էր Բարտւշկա անունով։ Եա ամեն
բան էր՝ հիւանդի վերաց աղօթք ա-
սող, մանկաբարձուհի, տատմէր, խոր-
հրդատու։ Ամենքի տան դուռը նորա
համար բաց էր։ Բաց բարի չէր նա
և ունէր սարդի հնարագիտութիւն։

Նաս գաղտնիքներ զիտեր և դրա-
նից զիտեր օգտատներ քաղել։ Ինքն
էլ հիւրասէր էր, բաց իւր հիւրե-
րից նոյն օգուտը զիտեր քաղել։ և
նոյն իսկ կաղ Փարսի՛ից (Բարսեղ),
որը միամտաբար լաւանեց այդ կնոջը
իւր զիտաւորութիւնը Աննալի նկատ-
մամբ։ Ազգքանը արդէն բաւական էր.
Բարտւշկան հաշեց Աննալին իւր զո-
ների թւում։ Իւր բազմաթիւ լաճա-
խողներից մինի համար Բարտւշկան
խոստացաւ Աննալին, գնաց սորան
գտաւ, լապոնեց թէ Բարսեղիցն է
եկել խնամախօսութեան։ բայց ծաղ-
րեց վերջինիս և նկարազբեց Աննա-
լին այն գեղեցիկ կեանքը, որ ինքը
նորա համար պատրաստում է։ Վեր-
ջապէս համոզեց ընդունել իւր հետ
բերած հինգ բուրլին։ Բարսեղը, որը
եկաւ Բարտւշկալի մօտ հետեանքը ի-
մանալու, իմացաւ միան, որ Աննան
այդ գիշերը տանը չէ, ուր որ պիտի
գնար։ Բարսեղը մանաւանդ շրւտով
հաւատաց այդ իւր համար սարսափե-
լի լուրին, որովհետու օր առաջ Ան-
նալի զվարին տեսել էր մի կարմիր
աղլուխ, որի առիթով կասկածանք-
ների մէջ էր ընկել։

Աննալի համար աղջալիսով սկսուում
է անառակութեան ճանապարհը։ Նա
աչմու միջոց է գտնում հագնեւելու,
պճնեւելու, և այդ աւելի էլ խրում է նո-
րան անբարուչկանութեան անդուն-
դը, բաց և զցում պարտքերի մէջ։
Աչմու նա միան ցերեկներով է կա-
րողանում տաճը լինել։ Սառավին
տեսնել Վերջինս, մոլորած, տնէ-
տուն է ընկնում և սովորում աղքա-
տութեան։ Մաղքը քանի զնում, աւե-
լի է աչքից զցում իւր զաւակին։

որի գոլութիւնն իսկ աշխատում է ծածկել իւր ծանօթներից, Բաբուշկան միայն Աննավին չ'ունէր, ալ և Մաշալին, Հերիքնավին և գուցէ ուրիշներին, որոնք դիշերները միտան մէջ էին լինում, սպասելով Բարբուշկայի պատուերներին:

Աննան վերջապէս սկսեց օրիրով անկայտանալ. Սառավին զանձնել էր մի տնդամալոց կնոջ, խոստանալով օգնել սրան դորա փոխարէնց: Տան վերապանալիս, նա տեսնում է իւր շորերը և փողը գոլացւած: Նա մեղադրում է ինչ որ երկու լօթիների, որոնք պատասխանում են նրան չարգելով մինչ ուշաթափանթիւն: Դորանից նա հիւանդանում է: Աչ Մաշան և ոչ Հերիքնավը չեն ուզում հիւանդին խնամել, Փոքրիկ Սառան վրայ է հասնում, մարը ջուր է ուզում: Վասան զնում է փողոցը ջուր ճարելու, բայց մտաքերում է, որ շաբաթ օր է, և որ այդ օրը մի հարուստ ազակի թագումն է լինելու: Սառան վազում է խանւելու մուրացկանների բազմութեան մէջ իւր բաժինը սահանալու համար:

Իսկ մալը: Նա երեխ ծարաւից տապակւեց, բայց հաստատ է, որ մեռաւ:

Ահա վէպի բովանդակութիւնը: Նիւթը տեղիք է ապիս շատ հոգեբան դիտողութիւնների և հե-

զինակը իմացել է զոյա համար հարկաւոր զիրգերը ստեղծել: Ամենադրամական տեղը, անշուշտ, պէտք է ընդունել Բարսեղի խաբակլը Բարտուշկայից: Սակայն վէպը շատ գրամական չէ, զա մի ուսւածք է, որտեղ կ ամքը քիչ տեղ է բռնում: մարդիկ զործում են սովորական հսանքով, և հենց այդ է, որ այդ փոքրիկ վէպին տալիս է բնական պատկեր: Գորանով հետաքրքրութիւնը չի նւազում, իսկ դորա մեղը՝ հեղինակի տաղանդն է: Մեկ վերաց ամենից շատ տապաւորութիւն զործեց մուրացկան կաղ Փարաու ցանկութիւնը «օջախ» ունենալ և մահան անկողնում պառկած մօրն իսպաս մոռանալը փոքրիկ Սառավի կողմից: Մէրը դէպի մաքրը խսպառ մարել էր ոչ միայն հացի խնդրի պատճառով, ալ և մօր բարուական ոչնչութեան պատճառով:

Վէպը, իւր բովանդակութիւնով և նկարագրական զոյներով, ազսպէս ասած, զօլազական է՝ բռնելով Զօլակի «Assommoir» և «Nana» վէպերի մէջ տեղը: Բայց միայն մի լավանի չափով իսկ այդ չափը շատ լաւ պահպանւած է: Ակզբի նկարագրութիւնները՝ Աննավի և Սառավի տան ու կենցաղի վերաբերեալ, մի փոքր ձգձգած են թւում զործողութեան սակաւութեան պատճառով:

Ա. Ա.

ԵԽՊՊԵՅ, դ-ր Ի., պրօֆեսօր անգլիական գրականութեան Վիեննացի
Համալսարանում՝ ՇԵՔՈՊԻԲ—ԲԱԿՈՒԵԱՆ ԽՆԴԻՐԸ:

Հայ հասարակութեան անգալու չը պիտի լինի ան կասկածը, որ սկսում են տարածել Շեքսպիրի գրւածքների խսկական հեղինակի անձնաւորութեան վերաբ կատկածը, սրայս բարենի է, նորանում է, իբր թէ Շեքսպիրը ոչ միայն հեղինակը չէ իւր անունով աւտոնի համարեղ ողբերգութիւնների և դրամաների (Համէտո, Օտելլօ, Թաղաւոր Լիր և ազն), այլ նա իւր թէ ոկի ան մարզն էլ չի եղել, որ կարողանար ազդ տեսակ գրւածքների հեղինակը վիճել Ալլպիսի կատկածներ բարուցւած են զանգան ժամանակներում, բայց ոչ ոք այնքան մեծ ազմուկ չ'սուաջացրեց, որքան ամերիկացի Գոննելլի (Donnelly), որը, իւր մի քանի տարի առաջ հրատարակած գրքով, ուզեց ասպացուցանել, որ Շեքսպիրի անունով չափնի դրածքների խսկական հեղինակն է չափնի Ֆիլոսօփակ և Շեքսպիրի ժամանակակից Բակօն Վելուլամցին, որը ապրում էր 16-րդ դարում և 17-րդի սկզբներում. Գոննելլի, ի միջի ազ հանգամանքների, ցիշատակում էր նաև ան, որ, հին հեղինակների սովորութեան համաձայն, Շեքսպիրն ես իւր անունով չափնի դրածքների զանգան աեղերում խօսքեր ունի գրած, որոնց միասին դասաւորելովը զուանում է մօտաւորապէս մի ալտովիս նախտասութիւն, իբր թէ առ Շեքսպիրս, չափնում եմ, որ իմ անունով գըր-

ւածքները սլատկանում են Բակօն Վելուլամցուն»: Բայց, որ զլսաւորն է, Գոննելլիի ասելով, Շեքսպիրը չ'ուներ այն բարձր մատասր կրթութիւնը, որ նրան թով տար անգամ խորիմաստ զրամաներ զրելու, զրամաներ, որոնք ենթազրում են խորին տեղեկութիւններ աղղերի պատմութեան, աշխարհագրութեան, բարձր շրջանների կենցաղավարութեան, Փրւոսօփակութեան մասին և ազն: Գոննելլիի ասելով, ալզպիսի զործեր զրելու միայն Բակօնն էր ընդունակ:

Ազդ ինդդրի ասիթով Շեքսպիրի և Բակօնի մասին վերջին տարիներումն լոյս տեսան բազմաթիւ զըրւածքներ: Ընդհանրապէս պէտք է ասած, որ ընդհանուր կարծիքը լոգուս Շեքսպիրի չի խախուել, բայց և անպէս, Գոննելլիի ողնումները լուրջ ուշապրութեան արժանացան. բայց սկզ մասին վրոշները մեծ մասումք Գոննելլիի հակառակորդներն են: Նորերումն չէ ուսւը բը մի չօղւածով Բակօնի մասին նկատ ան հեղակացութեան, որ Բակօնի դրւածքների ողին այնպէս է, որ չառ անհաւանիան է, որ նա մեծ բանաստեղծ եղած լինէր: Ալժմ զ-ր Շեքսպիրն է, որը Շեքսպիր-Բակօննեան խնդիրը քննական հետազօտութեան է ենթարկում: Նա ի նկատի է առնում ազդ ինդդրի ասիթով լոյս տեսած բազմաթիւ զրւածքներ, առաջ է ըերում ժամանակակից մարդկանց

խօսքերի մի շարք իրանց անձնապէս ժանօթվլլիւամ Շեքսպիրի մասին և դալիս է այս եղբակացութեան, թէ նեքսպիր դերասանը նոյն զրամակական բանասանեղծն է: Գոնճնելլի՛ խօսքին, թէ Շեքսպիրը եղած է զարեջրագործ, որտիշնան նա մասս է ծախսէլ, Շիպուկերը պատասխանում է. «Մի պատական գրքի մէջ Ս. Ստոպէս (C. Stopes) Լօնդոնում պատցուցեց, որ չառ աւելի շուտով Քա-

կօնի համար կարելի է առել թէ զարեջրագործութիւնով է պարապել, քան Շեքսպիրի համար, որովհետեւ Բակոնը իւր գրւածների մի քանի տեղերում ընդուրածութիւն և զործը հասկացողի նման խօսում է զարեջուր շինելու մասին, մինչդեռ Շեքըսպիրը մատոնում է իւր ծանօթութիւնը զարեջրի հետ միմիալն նրանով, որ խօսում է զարեջրի և նորա ազգեցւեթեան մասին»:

Ա. Ա.

ՄիՄէՕՆ ՀԱՅՈՒՄԵԱՆ. — «ՄԱՆԻԿ», (Ժամանակակից վէպ): Նուշի, տպարան Հայոց Հոգևոր Տեսչութեան, 1889 թ., մեծ քառածալ, 76 էրես, տառ № 12: Գինն է՝ 40 կուգէկ:

Երեակաէեցէք Զեկ, ընթերցո՞ղ, տպատերազմի ժամանակ՝ արհեստական կամ կերպով նոր կաղմակերպւած մի քաղաքում, ուր խմբւած են բացի զինւորական և սովորական անձերից աշնալիախներ, որոնց նպատակն է գծւել իւզոս պատառներ, զիշատել միանգամբից հարստանալ: Զախումնանի դիրքը սկսւում է այդ աեսակ զիշատիչների, չաղացած սարդերի մի զգւելի խնճուքի նկարագրութիւնով: Դոքա անամօթ են, աներես, զոքա անպատկառ կերպով և անվախ սանակով են անում ամեն սրբութիւն, զոքա հաւատացած են, որ փախն է միակ զարգելի ստքը աշխարհում, որ նա է մարդու գնահատելու չափը, որ նորանով կարելի է զնել առմնն բան:

Նրկրորդ գլուխը նկարագրում է միւնոց քաղաքում մի լարդելի բժշկի առունելիւանում, ուր ան է մարդու գնահատելու չափը, որ

տեղական աղաներ՝ հաշիւ տալու զաղթականների համար հաւաքած մթերքների գործադրութեան մասին: Այսուհեղ լուսարանում է մեր հաստակական գործերի մէջ ցածախս տեղի տնեցող ան երեսութը, որ հասարակական գումարները ուստում, անհետանում են, թազցւում ևն կամ ծախսում են ըստ գործադրների ձաշակի:

Երրորդ գլուխը՝ Թիֆլսի փողոցափն անհոգ կեանքի, մեր անտպանով հայ ուսուցչի և մոտաւոր աշխատանք ներկալացնող զասակարգի դրութեան նկարագրութիւնն է:

Չորրորդ և հինգերորդ գլուխները նկարադրում են Թիֆլսի կիսաերթուղարցած հարուստ Տօկոսովի կեանքի մի քանի զծերը, Տօկոսովի, աչքի առաջ ունենալով մօտալուս ընտրութիւնները, սորքում է նաշ,

որով նա անհկատելի կերպով աղդում է ընտրողների արամագրութեան վերաբեր Տօկոսով հաշւելով, որ հարուստ բարեկամների հետ կապ ունենալը նորան շատ շահաւէտ կարող է լինել—ծուռն է նայում իւր քոյ Նունէի սիրոց վերաբ դէպի մի Ասրգսեան անունով հաստարակ երիտասարդ: Տօկոսով, հաւանելով մի ալքատ զաղթականի Մանիկ աղջլկաց երեսը, համաձանում է բարերար զառնալ ալդ աղջկաց համար, նորան ընդունում է իրանց սունը և ձգտում է հասնել իւր ցած նպատակին:

Պատկերները հետաքրքրական են, նկարւած են խոշոր գծերով, որոշ գոյներով, թանձր ստերներով: Նորա իրանց իրական միակողմանի հարազատութիւնով հասնում են մինչև անգամ կոպտութեան: Գիտած, լուսաբանած երևութեանը—մեր կեանքի, մեր զարդացումի բացասական կողմի արդիւնքն են:

Պ. Հախումեանը իւր գրւածքը անուանելէ ժամանակակից վիպ և աւել է նորան «Մանիկ» վերնագիրը: Նիւթը, վիրաւի, ժամանակակից է. բաց ամբողջ գրւածքը ամենեին վեպ չէ, ալ վերև վիշած պատկերների մի ժողովածու: Ազդ պատկերները ոչ միմեանց հետ, ոչ էլ վիպի հերոսուհի Մանիկի հետ՝ սերս կապից, որ նորա տանին միմեանց հետ իբրև մեր կեանքի արգասիքներ և լուսաբանութիւններ:

Առանձին պատուիերները կարելի կը լիներ միմեանց հետ կապել, եթէ հեղինակը նեղութիւն կրէր իւր Մանիկին, իրուն փորձաքար մտցնե-

լու ամեն աեղ և նորա միջոցով կը սէր զանազան զառակարգերի վարաբերութիւնները դէպի հասարակական գործը, գուցէ այն ժամանակ գրւածքը ընդարձակւէր, մեծանար, —բաց նա լիտատար վէպի ձև կը սանանար և աշմանան (Մանիկի) նիւթը կը հալեցնէր իւր մէջ և կ'իւրացնէր...

«Մանիկ» վեպը ազպիսով, կարծես, գեռ. չէ գրւած—ալ դրւելու է և մեր առաջ գրւած է նորա համար հարկաւոր նիւթերը: Վերև վիշած պատկերի մէջ ներսուուհի Մանիկը երեսում է մի երկու տեղում, և ահա նորա գերը ամբողջ գրւածքի մէջ:

Ալաշկերտցի զաղթական Հարօն կորցնում է իւր որդուն և, լսելով, որ նա թիվլիսումն է, ճանապարհ է ընկնում ալդ քաղաքը նորան որտեսու: Առնում է հետը կնոջը և իւր աղջիկ Մանիկին: Դոքա թիվլիս են զալիս աղքատ և անփող: Դոցա առաջին ծանօթները լինում են ուսուցիչները, որոնք, պաշտոն չ'ունենալով, զժւարանում են հոգալ զոցա ապրուսոք: Բարի մարդիկ միջնորդում են և աւել են զտնում զոցա համար: Մանիկին տեղաւորում են վերև վիշած Տօկոսով հարստի տանը, որտեղ նա ենթարկում է անարգանքի և ստիպում է հեռանալ իւր զժրազդ ծնողների հետ, որոնք վճռում են դառնալ իրանց հայրինիքը. բաց տեղը չը հասած, մեռնում են:

Պ. Ս. Հախումեանի երկը, իրուն վվագտանի գրւածք, ունի մի քանի առանձնութիւններ, որոնց մասին արժէ ասել երկու խօսք:

Հեղինակը չափաղանց շտապում

է ամեն բան ասել, բոլոր զղացածը և իմացածը միանգամից թափել, և ազգպիսով մի փոքրիկ գրւածքի մէջ ինքն իրան սպառում է։ Զը մոռանալով իւր համակրութիւնները և հակակրութիւնները, նաև չէ կարտզանում հանդարտ պատմել, այլ միջամտում է իւր վէպի մէջ։ Ազգայիշով «Մանմկը» գաղափար է տալիս ոչ միայն հերոսների, այլ և նոյն իսկ հեղինակի համակրութիւնների մասին։

Նկարագրութեան մէջ ես հեղինակը իրան գործող ահճն է երեակացում և, հերոսներին ներկացացնելու ժամանակ, իւր ճաշակը և կարծիքները առաջ բերելով՝ մի տեսակ միջամտում է ընթերցողի գործի մէջ։

Հեղինակը մատցնում է սրախօսութիւն, որ կաղմում է գրքի լաւ

արժանաւորութիւններից մէկը. սական սրախօսութիւնը, իրբե աղ, պէտք է մի չափունի սահմանից դուրս չը գաց և արհեստականութեան կամ անպատճառ. սրախօսելու յանկութեան կնիք չը կրի։

Աւելորդ եմ համարում կանգ առնել նկարագրութիւնների մի քանի անկատարութիւնների և չափազանցութիւնների վերակ (զրորինակ), բժշկի անձնաւորութեան, զգումանման երես ունեցողի նկարագրութիւնները)։

Աչքի առաջ ունենալով, որ պ, Հախումեանը թեթև կերպով կարողանում է նկարել կեանքի առանձին պատկերները, ցանկալի է, որ նա, զգալով իւր այդ արժանաւորութիւնը, առ այժմ բաւականանար միայն ուրոշն պատկերներ դուրս բերելով։

Ա. Ք.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԱԴԵԱՆ. — «ՔԱՆԴԱԾ ՕՉԱԽ». անցեալից մի յիշողութիւն. Հրատարակեց Յովհաննէս Ս. Գրիգորեան. Ախալցխա. Մկրտիչ Ղալամքարեանի տպարան. 1889 թ., փոքր քառածալ, 64 երես, տառ № 10։ Արտասազած «Նոր-Դար» ամենօրեալ թերթից։ Գինն է 20 կոպէկ։

Պ. Մարաղեանը հարկաւոր է համարել ծանօթացնել հայ հասարակութիւնը մի եղելութեան հետ, որ տեղի է ունեցել Թիֆլիսում։ Եղելութիւնը, իւր տխուր վախճանով, սարսափեցնում է մարդու և գործում է տառափիկ տպաւորութիւն։ Ահա ինչպէս է պ. Մարաղեանը պատմում գորա մանրամասութիւնները։

Սոլոմոն Պետրովիչ վաճառականը,

մի սաստիկ հիւանդութիւնից լետով, վճռում է թողնել իւր զրկանքով լի, զծուծ կեանքը և պսակել։ Նորակին՝ բարեսփոր և զեղեցիկ Քեթեանը ճոխացնում է և բարեկարգում նորակեանքը և ընծայում է աշխարհին կատարինէ անռւնով մի աղջիկ, որ դառնում է ծնողների հոգսերի և ինամքի առարկան։

Սոլոմոն Պետրովիչը մտքում դնում

է՝ աղջկան հարանութեան տալ իւր վաղեմի ծանօթ վաճառական խսայի վաղեմի թագավորական իշխանութեան տալ իւր հակումներին, սիրահարում է ուսուցիչ՝ նորաւարտ համալսարանական Սարգսի վերաբ և սկըսում է հօր ցանկութեան դէմ գնալ: — Հայրը, բարկանալով աղջկակ վերան՝ «դուքս է հրում կատարինեին տնից դուքս և զուռը փակում վերան»:

Դուքսը մթնում է. իսկ տան դուռը չի բացւած: Յանկարծ «չորս անձանօթ ձեռքեր լափշակում են նորան» և տանում դիմանում:

Կատարինէն երեք օրից ինուու մեռնում է: Յօլօմն Պետրովիչը՝ չը կարողանալով տանել աղջկակ մահը և իւր սնանկութիւնը՝ կաթւած է ստանում: Գեթեանը վկորչում է ամենօրեակ կեանքի անչափանութեան մէջ: Սարգիսը՝ մի քանիսի առելով՝ խելագարում է, իսկ միւսների հա-

ւատացնելով՝ թողնում է Թիֆլիսը և քաշում է արտասահման:

Պ. Մարաղեանը պատմում է թէ ինչպէս պատրաստուեց ալդ սարսափելի արկածքը: Նա նեղութիւն է տալիս իրան նկարագրելու Սարգսի և Կատարինէի սիրահարութիւնը, Յօլօմն Պետրովիչի և խսայի Մինէիշի առևարական քաղաքականութիւնը և ալլ:

Ծշմարիս է, գրքովկում վիշտակւած անցքերը նկարագրուած են շատ սովորական ձեռվ, բնաւորութիւնները նկարուած են թով կերպով, պատմութեան զիմաւոր լմաստը շատ ծամեմած է... Բայց զոնէ անհամուածները կարող են վերջապէս համուլել ամենաակներն կերպով, որ ծնողները չը պէտք է իրանց զաւակների ամուսնացնելու խնդրում ինքնիշտան վարւեն:

Ա. Ք. Վ.

Ն Ո Ր Ս Տ Ա Յ Ի Ա Շ Գ Ր Ք Ե Բ

1) Տէր-Գրիգորեանց Գրիգոր բժշկապետ (Ղղլարեցի), «ՄԱՆՈՒԿ-ՆԵՐԻ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԲԱՆՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ-ՆԵՐԻ» Արտասապած «Մուրճ» ամուսագրից, Թիֆլիս, տպարան Մ. Ռոտինեանցի, 1889 թ., գինն է 5 կոպ.: (Արդիւնքը հեղինակի կողմից լատկացրած է «Մուրճ»-ի Փոխատու-Խնապողական Գանձարանին):

2) ԶՄՇԿԵԱՆ ՄԱԿԱՐ՝ «ԾՈՑԻ ՕՐԱՅՈՅՅ» 1890 թւականին Քրիստո-սի. Թիֆլիս, տպարան Մ. Ռոտինեանցի, 1889 թ.: Գինն է 15 կոպէկ.

3) «ՍՈԿՐԱՏԵԱՆ», թարգմանութիւն օր. Թէկդի ՍՏԵՓՈՅԵԱՆԻ, հրատարակութիւն Թիֆլիսի Ընկեր. Հայերէն Գրքերի հրատարակութեան, Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի, 1889 թ. գինն է 10 կոպ. ամեն տեղ:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԵՐ ԱՐՏԱՍԱՐՄԱՆԻՑ

ՊԱՐԻԶ, 26 հոկտեմբերի: (Պարիզի կօնդրես կիրառեալ աշակերտաց հանգստութեան առիթով): Այս շաբաթ կազացաւ Պարիզում նաև մի կօնդրես՝ կիրակնօրեաց հանգստութեան խնդրի մասին խորհուրդ տեսնելու համար: Դորա նախադանն էր Լէօն Ալ, ֆինանսական և քաղաքական բայտնի գործիչը Ֆրանսիակամ, հռչակաւոր «Ժուրնալ դէ Գլեբա»-ի գլխաւոր խմբագիրը: Բացման նիստում կարդացւեցին նամակներ, տապահած Հիւսիսավիմ Ամերիկացի Միացեալ Նահանգների նախադան Հերիսոնից և պ. Գլաւտոնից: Այդ երկուսն էլ խօսում էին յօդուա կիրակնօրեաց հանգստութեան՝ կրօնական թէ ոչ կրօնական դիտումով: Մի ըժիշկ և Փիլոսօֆացութեան մի պրօֆեսօր կարդացին զեկուցումներ խնդիրը լուսաբանելու համար, որից վետով մի գործարանատէր հարց զրեց, թէ արդեօք կիրակնօրեաց հանգստութիւնը ո՞ր չափով գործնական է, մանաւանդ այն մեծ բանւորական կենդրոններում, ուր անընդհատ աշխատութիւնը անհրաժեշտ է, որովհետեւ մեքենայի շարժուղութեան ամեն մի ընդհատման հետ կապած են նշանաւոր ծախքեր: Այդ հարցին պատասխանեց պ. Պալնի, Շրիւսելի գործարանատէրից մէկը: Սա կարծիք չափանից, թէ կիրակնօրեաց հանգստութիւնը կարելի է առանց վեասի գործադրել բոլոր գործարաններում: Բայց կավին խօսողներ, որոնք այդ կարծիքը ոչ բոլորումներում էին, կօնդրեսը, որը կարծեց, թէ իւր կարծիքը ըլ պէտք է բոլորովին բացարձակ կերպով արտազատէ, ի վերջու եկաւ հետեւալ վճիռներին: 1) Կիրակնօրեաց հանգստութիւնը, զանազան աստիճաններով, կարելի է բոլոր գործարաններում: Կիրակին այն օրն է, որը ամենից չարմարն է թէ գործատիրոջ և թէ բանւորի համար, թէ անհասական և թէ ընտանեկան կեանքի տեսակէտից: Լաւ է, որ հանգստութեան օրը ամենքի համար նոյնը լինի: 2) Եթէ կարևորագուն թէ տեխնիկական կառմ այլ հիմունքներով՝ կիրակնօրեաց հանգստութիւնը անկարելի դասւի, այն ժամանակ պէտք է այդ օրւաւ տեղը նշանակւի մի այլ օր, այնպէս որ բանւորը աղաս ունենալ 52 օր, կարելին չափ հաւասարապէս բաժանած տարւու ընթացքում: Այդ հանգստութիւնը կարելիութիւն է տալիս մարդուս՝ թէ աւելի շատ և

թէ աւելի լաւ կատարել գործը, նորա ֆիզիքական ուժը կազդուրելով:
Բացի զորանից, կօնդրեսը խորհուրդ տևեց բանւորների վարձը բա-
ժանել ոչ թէ շաբաթ կամ կիրակի օրերը, այլ մի այլ օր, օրինակ՝ ուր-
բաթ օրերը:

ՔԵՐԻՒՆ, 26 հոկտ. (Ելեքտրական գործը Գերմանիակում): Ելեքտրօ-տեխ-
նիկական Ընկերութիւնը, ամառաւաչ արձակուրդներից լիսով, ամսիս 22-ին վե-
րասկսեց իւր ընդհանուածնիստերը: Ընկերութեան պատւառը նախաղահ, պե-
տական քարտուզար դ-ր Փօն Ստեփան ողջունեց բազմաթիւ ներկաւ եղող ան-
դամներին և, հին սովորութեան հետեւելով, ակնարկ գցեց անցած տարւաչ
վերաչ, որից մնաք հետեւեալը քաղեցինք:—Միւնիւնից գրդւած խնդրի համար՝
100 տարի մեղնից առաջ էրլանդէնում ծնւած Փիզիկոս Գէորգ Օհմ'ին (Ohm)
արձան կանգնեցնելու, որը էլեքտրական հոսանքի օրէնքների գըտ-
նողն է՝ էլեքտրօ-տեխնիկական ընկերութիւնը հաւաքել է 2131 մարկ, որ
և լանձնեած է արձան կանգնեցնելու մասնաժողովին:

Երկրի միջն կատարւող հոսանքների էռթեան մասին հետազօտու-
թիւնները շարունակւեցին, որպէս նաև կայծակի վտանգների վերաբերու-
թեամբ: Վերջինիս վերաբերեալ մի մասնաժողով հանձն էր առել գաղի և
ջրի գործերի ներկայացուցիչներին համոզել, որ շանթարդեները միացնւին
գաղի և ջրի խողովակների հետ:

Հեռագրական ասպարիզի միրայ Գերմանիակում նոր քաղեր արւե-
ցին, որ առանձին նպատակների համար և որուղ պահանջը ամենամեծն
է, ինքնաշարժ արագագիր առարատոներ (գործիքներ) ներմուծեն:

Աչմ Գերմանիայի հեռագրական թեկրի ցանցը ունի 80.537 կի-
լոմետր (գրեթէ նույնքան վերստ) գիծ 284.945 կիլոմետր թեկրով և 15.631
կալարաններով:

Հեռախոսական գործը հոկայական քալեր է արել: Գերմանիան ունի
200 քաղաքներ ընդհանուր հեռախոսական հասաստութիւններով, ո-
րոնք միասին 39.000 արօնեաններ ունին: Հեռախոսական թեկրը ներկա-
յացնում էն 62.610 կիլոմետր երկարութիւն: 79 հեռախոսական կալա-
րաններ կան, որոնք հարեան քաղաքները իրար հետ միացնում են. ա-
ժամ շնուռում էն զարձեալ 15 ազգիսի կալարաններ: Միմիան Բերլինը
ունի 11.200 աբօնեաններ, Համբուրգը՝ 4.900:

Էլեքտրական լուսաւորութիւնը նմանապէս ընդհանուր ծաւալումն է
ստանում: այդ վկալում են նորակառուց կենդրոնական կալա-
րանները՝ էլեկրֆելզ, Դարմշտադա, Միւլհաուզէն (Ելզասում), Լիւբեկ,
Նիւրնբերգ և այլ քաղաքներում: Նուաուլ բացւելու է Բերլինում երրորդ
կենդրոնական կալարանը, իսկ չորրորդը արդէն շինուած է:

Յիշատակելու է նաև ձեռնարկութիւնը՝ Հռենոս և Նեկար գետերի
ջրալին ուժը էլեքտրական նպատակների գործ դնելու համար:

Վերջապէս, էլեքտրականութեան էութիւնը հասկանալու համար, վերին աստիճանի հետաքրքրական փորձեր արեց պրօֆեսոր դ-ր Հերց (Hertz) Բօննի համալսարանում: Այդ փորձերով ասլացուցում է, որ կազ կատ լուսային (օպտիկական) և էլեքտրական երեսովների մէջ, որովհետեւ լուսական եթերը, որի չարժումով լուսի ծագումն է բացատրւում, նաև էլեքտրական հոսանքների միջնորդ է հանդիսանալում, համաձան ալիքանման շարժման օրինքների:

Այս ակնարկից լետու՝ անցեալ տարւակ գործունէութեան վերակ՝ տեղի ունեցաւ պրօֆեսոր Բելլից պարոն Տենաների հետ միասին հնարած ձանապիր գործիքի ցուց տալը անդլիական «Գրաձալն Ընկերութեան» (Graphophon Company) ներկալացուցիչների կողմից: Գործիքը, որը, որպէս նաև էպիտոնի ֆօնօգրաՓը, ծառադում է խօսքերի հնչիւնները և առանապակ ձաները պահպանելու և վերաբռազրելու, արտաքին ձևավ նուան է կարէմեքենայի: Զանհերի վերաբռազրելը կատարեց նուն ձևով և նունպէս որոշակի, որքան և ֆօնօգրաՓով: Գրաձանի (գրաֆօֆոնի) առաւելութիւնը էպիտոնի ֆօնօգրաՓից կաչանում է նորանում, որ առաջինը աւելի լարմար է գործածում, որովհետեւ նա չի պահանջում էլեքտրական ոժ:

Գորանից լետու խօսեց որ. Ալեքսանդր Բերնշտամն, Համբուրգից, «Էլեքտրական էներգիաի բաշխման մասին մշական հոսանքի մէջ» (Ueber die Vertheilung elektrischer Energie durch constanten Strom): Դաստիուութեան առարկան կարեոր նշանակութիւն ունի էլեքտրական լուսառութեան գործի համար:

ՊԼԹԻԶ, 23 հոկտեմբ.՝ (Ֆրանսիական մամուլը): Որպէս չար լեզուները պնդում են, թէ հանրապետութեան ամենակատար զի թշնամիները իրանք հանրապետականներն են, նունպէս և, Ժիւլ Ալմօնի կարծիքով, լրագրական գործի ամենալատ թշնամիները լրագրական դրողներն են, Ժիւլ Ալմօնը իւր չողւածը տպել է «Matin» լրագրում և ահա թէ ինչ է ասում. «Ճերջին ընտրութիւնների արշաւանքից լետու կարելի է ասել, որ Փրանսիական մամուլը, մի քանի գովելի բացառութիւնից գորս, վաս դրութեան մէջ է»: Հռչակաւոր ակադեմիկոսը խորհուրդ է տալիս մամուլն, որ իւր պակասառթիւնները ինքը ուզգէ, որպէս զի նորանու չը զբաղւէ պարլամենտը, որը ոչ մի դէպքում իւր օպաին չի վնիլ: Մամուլի դէմ երեք անուակ միջոցներ կան, ասում է Ժիւլ Ալմօնը. 1) կառավարչական հակողութիւն և ցենզուր. 2) իրաւական բացառիկ գասարաններ. 3) Փիսկալական՝ դրաւականը և լրագրումն որոշմը:

Ինստաւրացիալի ժամանակ, 1819-ին գեռ ևս քիչ լրագիրներ կային. համարներ ծախելը անծանօթ էր, բաժանորդագիրը 80 Փրանկ արժէր:

Եմիլ զը Ժիրարդէնը առաջինն էր, որ լրագրութիւնը աժանացրեց: Ընդհանուր ձախատութեան իրաւունքի ներմուծումը առաջացրեց մեծագոյն պահանջ՝ քաղաքական հանգամտնքների մասին տեղեկանալ: Այդ ժամանակից դէսը համարով ծախուլը մի սու՛ով (2 կոպէկ) սկսեց երևան զալ: Նապօլէօն Ա-ը համոզւած էր մամուլի ոչի մասին, և այդ պատճառով նա ուզեց ոչ թէ նորան ճնշել, այլ նորա վերաէ իշխել: Այժմ կան մի սու՛անոց լաւ թերթեր, բայց կան և զղւելները: Սոքա կարող են աւելի մեծ վնասներ հասցնել, քան երեք սու՛անոցները, որովհետև առաջինների ընթերցողները և՛ աւելի բազմաթիւ են և՛ աւելի անդարձացած: «Journal des Debats»-ի ընթերցողը վլստէ դատու իւր թերթը, մինչդեռ «Petit journal»-ի ընթերցողը ենթարկւած է նորա աղջեցութեան: Մի սու՛անոց վաս թերթերը աւելի բաղմաթիւ են, քան լաւերը և այն էլ անքան վաս են, որքան միայն կարելի է: Գոքա իրանց ձեռվ են հասկանում մամուլի երեք տեսակ կոչումը. 1) լուրեր տալ. բայց ամեն մի լուր նրանց համար լաւէ, որը հակառակորդին վնասում է. 2) խորհուրդ տալ. բայց նոցա սկըզբունքները կազմում են միայն դրաբարութիւնների մէջ և ամենալաւ խորհուրդը թւում է նրանց այն, որը անիշխանութեան է տանում. 3) դատողութիւն տալ. բայց նորա ամեն բանի մէջ միայն ամենավատ կողմն են տեսնում, չափազանցնում են և հնարում, նաևած հարկաւորութեան: Նոքա ուզում են կառավարութիւնը գետին տապալել: Եթէ այդ նրանց լաջողւէր, նոր կառավարութեան դէմ էլ կը լինէին և նորա թշնամինները, Նոյն եւանդով նոքա գարձակում են և կապիտալի վերաէ և քաղաքացու վերաէ և ընտանիքի վերաէ և կրօնի վերաէ և ամեն ազնիւ ու մեծ բանի վերաէ: Նոցա միակ նախատակին է՝ բաժանորդները շատացնել: Պորա համար նոքա դրդում են սատրին ժողովրդի մէջ սորա ամենաաղնիւ կրքերը և վչացնում նորան, և նորա խեղճութիւնը աւելի էլ զգաւ տալիս իրան:

Մամուլի մի մեծ պակասութիւնը, ըստ Ժիւլ Սիմոնի, նորա ձգատումն է լուրեր հաղորդելու մէջ առաջնը լինել: Մի լուրի անժամանակինաչ հրատարակութիւնը կարող է երբեմն քաղաքական մեծ վնասներ հասցնել, մինչդեռ շատերը միջոց չեն խնայում լուրեր հաւաքելու:

Ի վերջու Ժիւլ Սիմոնը գիմում է մամուլի իւր ընկերակիցներին: «Մենք ունինք, ասում է նա, շատ սրամատութիւն (esprit), բայց քիչ խոհեմութիւն. —մենք պէտք է լարենք մեր ոչերը, որ մեր տխմարութիւն. Ների հետքերը ջնջենք և կրկին ձեռք բերենք այն հողը, որ մենք կորցրել ենք»:

ՊԱՐԻԶ, 27 հոկ. (Լ միլ 0 ժ կ'է լ մահը): Եմիլ Օժիկ'ի մահը, որը ամեն հանգամանքներում մեծ ցաւակցութիւն դարթեցրած կը լինէր, ակտմ, երբ քա-

զաքակուն լուրերի սակաւութիւն է, տեղական մամուլի համար մեծ խօսակցութեան առարկայ է՝ Սիւնեակ սիւնեակների վերաէ տպում ևն լրագիրները վշողութիւններ և ակնարկներ Օժիէ՛ի զբամալական գործունէութեան անցեալի վերաց «Գուլուա» (Gaullois) Արագիրը դիմել է նշանաւոր անձնաւորութիւններին, ինզրելով զբաւոր չափունել իրանց կարծիքը հանգուցեալի մասին, և այժմ հրատարակում է ստացած պատասխանները՝ ֆրանսիական Ակադէմիայի մշտական քարտուղար ակադեմիկոս Կամիլ Դուսէ՛ի, վիպասան Վիկոր Շերիւլէ՛ի, պուբլիցիստ, վիպասան և «Ֆրանսիական Կոմեղիտսլու» ամֆմեան կառավարիչ Ժիւլ Կարլըտի՛ի, պատմաբան և աղգալին լուսաւորութեան նախկին մինիստր Վիկոր Դիւրիւ՛, Օկան Ֆուլէ՛ի, Էլնեստ Ռընան՛ի, Սարա Բենար՛ի, վիպասան Ալֆօնս Դոզէ՛ի, անգլիական դեսպան Լորդ Լիստոն՛ի (որ իբր զրող սառրապրում է Օւեն Մերեդիթ), Էմիլ Զօլայի, Թէօֆիլ Գոթիէ՛ի (որդու նոյն անուն բանաստեղծի):

Բոլոնգակութիւնով ամենից հետաքրքրականն է Էմիլ Զօլայի պատասխանը, որ և ահա. «Ֆրանսիական բեմի աշխանական վարպետների մէջ Էմիլ Օժիէ՛ն նա է, որը ամենազարատու և ամենից լամառ կերպով իւր նպատակին էր գիմում: Յիշեցէ՛ք միայն րօմանտիկունների¹⁾ չարձակումները: Սորա անուանում էին նորան «առողջ գատողութեան» (ուրիմ՝ իբր թէ զգացմունքից զուրկ) բանաստեղծ: Նորա ծաղրում էին Օժիէ՛ի ստանաւորները, որովհետև չէին կարող Մոլիեր՛ի տոպանաւորները ծաղրել: Բայց խիամը և Օժիէ՛ն խանգարում էր րօմանտիկուններին, որովհետև նորա տեսան նորա մէջ վտանգաւոր թշնամի, մի բնական զրող, որը 1830 թւականի զրօշակի վվատում անցաւ և ֆրանսիական աւանդութեանը կրկին կպաւ: Նոր ֆօրմուլը մեծացաւ նորա հետ՝ ճիշդ գիտողութիւնը, իսկական կեանքի տեղափոխումը բեմի վերաբէ հաւատարիմ նկարագրութիւնը մեր հասարակութեան պարզ և ճշգրիտ լեզուով: Խմ կարծիքը միշտ եղել է՝ որ մեր պագան բեմը լինելու է կլասիկական ֆօրմունների գործադրութիւնը մեր հասարակական կեանքի շրջանակի մէջ»:

Դիմումը երէկ զմռաւեց և տարեց բանաստեղծի բնակարանը, վողոց Ալլիչի: Հոգեհանգստից լետու կը կատարի թաղումը մի գիւղական հանգստամում, աղջ է՝ Լա Սէլ Սէն-Ալու գիւղում:

ՊԱԲԻԶ, 15 հոկտեմբ. (Եւրոպաէի Քրագարական և Աղջական գրադարանի) զլիստու կառավարի կառավարական գլխաւոր կառավարիչը հրատարակեց մի զեկու-

1) Բաման տէկոսն եւ կոչեցին գրականութեան այն ուղղութեան կետեղները, որը գարուս քսանական թւականներց սկսած ֆրանսիայում յաղթող հանդիսացաւ կեղծ կլասիկականութեան վերաբէ Ամենահաջուշաւոր ըոմանտիկում և պարագլուխը այդ գորոցի միասոր Հիւգոն էր, 1830 թւականից սկսած:

ցում, որի համաձայն աղդ հիմնարկութիւնը ունի ակտմ՝ 2.078.000 հասոր զիրք, մինչդեռ «British Museum» նմանապէս հոչակառը անդլիական զրադարձնը հազիւ 1 միլիոն հասոր ունի. Միւնիւնի գրադարձնը ունի մօտ 800.000, բնութիւնը՝ 700.000, Գրեգորիոնը՝ 500.000 և Վինենավինը՝ 300.000 հասոր զիրք. Վաստիկանի զրադարձնում կան միայն 30.000 հասոր զիրք, բայց և 25.000 շատ կարենոր ձեռագիրներ:

ԶիւցերիԱ. 13 հոկտեմբերի. (Գրականական կեղծիք):
Մի լուր հաղորդեմ ձեզ, որը անշուշտ, հետաքրքրական ովտութիւնի վնի բուլոր զրասէրներին. Աարառու քաղաքում հրատարակուում է «Fernschaau» անունով մի «Ամսագիր միջն-գլուցերիական-աշխարհագրական առևտուրական ընկերութեան Աարառուում»: Այդ ամսագրի մէջ տպւում էր դ-ր Կմիլ Հասլէրի մի ճանապարհորդութիւնը, որի մասին ամսագիրը կարծիք էապանեց, թէ աղդ գործը նաև գիտնական կողմից շատ նշանաւոր է: Գորա զէմ զուրս եկաւուր-կարլ Փօն դէն Շտանէն պնդումով, թէ ան աշխատութիւնը միմիան երեսկայտութեան գործ է և թէ դ-ր Հասլէրը երբէք ան ճանապարհորդութիւնը արած չէ, որ այնքան մանրամանարար նա նկարագրում է: Ընկերութեան վարչութիւնը պատասխանեց զօգուտ Հասլէրի, Գ-ր Փօն դէն Շտանէն կրկին պատասխանեց, որով ընթերցողների մեծագոյն մասին համոզից, որ իւր մեղադրանքը, աւանդ, միանդաման հիմնավին է եղած: Բայց ընկերութեան վարչութիւնը գետ եռ համոզւած չէր և կարծում էր, թէ Հասլէրը կը պաշտպանի իրան: Ազդ համզամանքը, որպէս նաև մի քանի ուրիշ տհաճ դէսքեր, ուշացրին աշխատութեան երրորդ հասորի լուս տեսնելը, որը զրեթէ ամբողջապէս տպած պատրաստ էր: Մինչ այս, մինչ ան, վարչութիւնը փոխւեց: Ինչ վերաբերում է Հասլէրի գործին, բանից գորս եկաւ, որ, իրաւ, նորա ճանապարհորդական գեկուցումը զրականութեան մէջ զեռ եռ չը լուած մի կեղծիք է:

Նիւ-Եօրի, 25 սեպտեմբեր. (Համա-Ամերիկան կանգ գրես):
Համա-Ամերիկական կօնդրեսի պատգամաւորները ահա արդէն զրեթէ ամենքը եկել, հասել են Միացիալ Նահանգները: Եռքա ընդունւեցին Նիւ-Եօրկի նահանգապառում գորա համար կազմւած մի լատուկ մասնաժողովից: Հոկտեմբ. 2-ին կը դումարւի աղդ կօնդրեսը՝ լատուկ գորա համար վարձւած մի շինութեան մէջ, լատուկ in corpore կը ներկայացնէի նախապատին, որից լատուկ պաշտօնական ուղեկցութեամբ կը սկսեն եօթ շաբաթւաց մի ճանապարհորդութիւն Միացնալ Նահանգների մէջ: Օտար հիւրերին ուղում են ոչ միայն դարմացնել երկրի վիթխարի ընութեան հրաշալիքներով, որպէս Նիւակարակի ջրվէժը, Մամութի քարալը և հենատութիւնը, Խելօւստօնի

Ազգային-պարկը (աղջի) և հօսեմիտ վալէէ կալիֆօրնիացւամ, աղ և աչքի անցկացնել Միացեալ Նահանգների մեծ արդիւնադործութիւնները և հարստութեան մեծ աղբիւրները: Նոքա պիտի տեսնեն Ալեկանդրի վիթխարի քարածուիլի և երկաթի հանքերը, Պիտոսբուրգի հալելու գործարանները և Պենսիլվանիական նաւթահորները. Նոքա պիտի հիանան երկրագին զաղի աղբիւրների վերաց Օհօն'ում, Պուլմանի վազօնների գործարանի և հսկայական սպանդանցների վերաց Զիկագօնում և հարիւրաւոր ցորենի էլ և տուրների վերաց հիւսիս-արևմտեան երկաթուղինների մօս. Նոքա կը վագելին ամերիկական հաղարեցուը Միլառուկեէրի հսկայական զարեջրադործարաններում, և Մին-դարեցուը Միլառուկեէրի հսկայական զարեջրադործարաններում, և Մին-դարեցուը գաղաքում մի զաղափար կը ստանան ամերիկական ցորենացաց ինդուստրիալի մասին: Նոքա կ'ացցելին Դակոտա՛ի ցորենի հսկայական աղարակների հանգին շնութիւնները, իսկ ճանապարհորդութեան ժամանակ միջնամյա միջնամյա մանութեան ամենամեծ պահանջներին բաւականացնեն աւոզ ամերիկական երկաթուղինների հետ: Նոքա կ'ացցելին կալիֆօրնիան, Ամերիկակայի աղջ աղջին, Կոլորադօ՛ի ոսկու և արծաթի հանգերը, իսկ իսուոյ նաև Արևելեան նահանգների մեծամեծ գործարանները, Արևալիսով նոքա, երկրի մեծասրանչ հրաշավիքների ահագնութեան ճշող տպաւորութեան ներքու, կը սկսեն կօնդրեսի իսկական աշխատանքները:

Միացեալ Նահանգները կամենում են զարմացնել իրանց հիւրերին և հասնեն էլ աղջ նապատակին, որովհետեւ ինչ նոքա տեսնելու հն, իսկապէս մեծ են և տեսնելու արժանի:

Պատգամաւորների բաղդից, սոքա մեծ մասամբ աշխարհք տեսած մարդիկ են, որովհետեւ իրանց երկրի զիւանագիտական ծառալութեան մէջ առիթ են ունեցած ուրիշ երկիրների և հանգամանքների հետ ծանօթանալու:

Ամերիկակայի բոլոր տերութիւնները, բայց Հախտի՛լց և Սանտո-Ռո-մինզօ՛լց, ուղարկել են պատգամաւորներ և միտղ Արգենտինեան հանրապետութեան պատգամաւորները զես ևս եկած-հասած չեն: Պատգամաւորները հետեւալ երկիրներից են՝ Արգենտինեան հանրապետութիւնից, Բուլիա՛լց, Բրազիլիա՛լց, Գրանչմալա՛լց, Կոլումբիայի միացեալ նորհանդներից, Էկվատոր'լց, Կոստա Ռիկա՛լց, Ճանդուրաս'լց, Մեկսիկա՛լց, Նիկարագւա'լց, Չիլի՛լց, Պերու'լց, Սան Խաւագուէլա՛լց:

ՊԱՐԴ, 27 հոկտեմբերի: Ծիամկութիւնը Ֆրանսիայի մին լուտ գիտէք, թէ մամուլը ինչ ազատութիւն է վագելում ֆրանսիակում: Լաւ գիտէք նաև, թէ աղջ աղատութիւնից ֆոււչ թերթերը ինչ օգուտներ են քաղում: Գիտէք նաև, որ մի թերթին ոչինչ չէ նատում, երբ վաւրահաւ կերպով բարձակում է այս կամ ան մինիստրի զէմ: Միջոցներից մէկը մի մինիստրի անպատւելու, նորաշատակութեան վերաց կառած գցելն է, իբր թէ նա փող է կերել. չէ թէ մի մինիստրի ձեռքի տակ շատ միւլիօններ են պտտում:

Մի աղպիսի փորձ արւեց ներկայ կառավարութեան անդամ՝ Փինանսների մինիստր Ռուբէ՛ի հետ Յակոնի է, թէ այդ մարզը որքան բարձրացաւ, երբ քանի տարի առաջ ընդունեց մինիստրների նախագահի, միանգամացն և Փինանսների մինիստրի պաշտօնները։ Աչժմ էլ նա այս վերջին պաշտօնը ունի Տիրար'ի մինիստրութեան մէջ։ Արդ, նորա վերական պաշտօնը կակած գցել, իբր, մինիստրութեան պաշտօնում նա հարստացել է։ Ռուբէ՛ն բռնեց պաշտպանողական դիրք և անքան փայլուն կերպով ապացուցւեց նորա վերական արած մնաղագրանքների դրագարտող բնաւորութիւնը, որ նա աւելի ևս միծ անունով զուրս եկաւ այդ արշաւանքից։

Մի աղպիսի արդարադասութիւն եղաւ այժմ, ի հարկէ շատ և շատ ուշ, Նոր-Պարիզի շինողի նկատմամբ։ Դա է բարօն Հառուման, որը, Նայուէօն Ռ-ի ժամանակ, Պարիզի նախանգապեան էր և որին պարտական է Պարիզը իւր այժմեան շքեղ բուլարներով։ Դորա համար նա զործ ածեց հինգ միլլիարդ, ասել է թէ՝ հինգ հազար միլլիոն ֆրանկ, սանզծեց շատ միլիոնատէրեր և ինքը, այժմ, իւր անսուր մեծ հասակում, չ'ունի անգամ որ և է կարողութիւն։ Բարօն Հառումանը կամ ֆրանսներէն արտասանութեամբ՝ Համան, պատրաստում է այժմ հրատարակել իւր վիշտութիւնները։ — Ես, ասում է նա, զործ դրեցի 5 միլլիարդ, որից երկուսը Պարիզքաղաքինը երեքը՝ տէրութեան գանձարանից՝ Պարիզը վերանորոգելու համար և այժմ խրոխտ կերպով թափ ևմ տալիս իմ դասարկ գրպանները։ Իմ մասին բամբասեցին, թէ ևս 40 միլլիոն կարողութիւն դիվեցի։ Ճշմարտութիւնը, սական, այն է, որ Աէնի (որի մակարաղաքն Պարիզը) պրեֆեկտի (Նահանգպակեանի) պաշտօնում ևս իմ սեպհական գրպանից էլ փող ևմ վեր դրել և ինձ մնում է միան իմ կնոջ կարողութիւնը։ Ես, շարունակում է նա, ոչ մի խօսքի չեմ հաւատում ան բոլորից, ինչ ասում ու խօսում է հանրապետութեան մինիստրների և ծառալողների դէմ։ Հարստութիւն դիվելու աւելիթ ոճեցողները ոչ թէ նոքա ևն, որոնց ձեռքին է կառավարութիւնը, այլ նոցա շրջապատղներն են։ — Բարօն Հառումանը վկաչաթղթերակ ապացուցանելու է, թէ ինչի՞ վերակ գնաց 5 միլլիարդը։

Ամենքին ագմ բացնի է, որ Ռուբէն, երկու անգամ մինիստր, չետոյ մինիստրների նախագահ, ելեւմուաքի մասնաժողովի ղեկուցանող և նախագահ լինելուց հետո՝ հաղիւ տարեկան 5.000 ֆրանկ առկոս է ստանում իւր անձնական կարողութիւնից, Յակոնի է, որ Ֆլօքէն, իբրև պատզամառների ժողովի նախագահ և մինիստրներինախագահ, իւր կնոջ կարողութիւն ամենամեծ մասը մոխոց։ և որ ներկայ համաշխարհակին հանդէսը հանրապետութեան նախագահ Կարճո՛ին կը սնանկացներ, եթէ նա և կինը միլլիոններ չը վիճէին բերած Ալիսէկեան պալատը։ Սպիւլէրը, որ այժմ արտաքին գործերի մինիստր է, ազգային լուսաւորութեան մինիստրի և այլ ազգեցիկ բարձր պաշտօններ վարեկուց լետո՛ չէր կարողացել այնքան

առաջանալ, որ թողնէր իւր երխուսաբղական բնակարանը՝ 5-երորդ լարկում (Ալոմիկական Յովերակի) տղմ արւած շինութեան ետելը:

ՊԱՐԻԶ, 7 նուեմբ.: (Համաշխարհական հանդիսի վերջըն:) Երէկ վերջացաւ համաշխարհական հանդէսը. և այդ վերջը վեցամսեալ տօնի գեղեցիկ ընթացքին կատարելապէս արժանի էր: Մինչև անգամ արեգակի պարզ չողը նորից երեկոց մի քանի տիսուր անձրեսպէն օրերից ցեառ և մեծացրեց ուրախ տրամադրութիւնը հարիւր հաղարաւորների, որանք մինչ վերջին լուսին անտեկ էին ուզում լինել: Շրջակալքի գիւղական բնակիչները վաղորդեան գնացքներավ եկել, աշխատել էին շտապել. մինչև անգամ զւարձութեան առանձին դիմացքները բերել էին հիւսիսից և հարավից հաղարաւոր անձիր, իսկ պարիզեցիների մասսան անցկացրեց օրը խոկապէս տենդի մէջ. զորա հետեանքն էր, որ շատ խանութներ կէսօրին փակեցին և անթիւ ընտանիքներ շատացան միան մի պատահական ճաշով, իրանց ծառաներից վայելչութիւնը չը խցելու համար: Եթէ հանդիսի վեցամսեալ ընթացքում կառքերի սակաւութեան վերաբ լաճախ գանգատ կար, երէկ խօ կրկնակի և եռապատիկ աւելի մեծ էր այդ պակասութիւնը: Ոչ միան գործի մէջ էին բոլոր օմնիքուսները, ձիաքաները, կառքերը, հացթուխների, բանջարավաճառների, տրանսպորտի ագենտութիւնների սալերը ու կառքերը, մի խօսքով՝ բոլորը ինչ անիւ ունի, այլ զեռ հաղարաւոր մարդ ու կանագը ստիպւած էին ոտով գնալ: Բոլոր ճաշարանները ճաշի ժամին բունւած էին. մթերավաճառների վերաբ և շատ թէ քիչ լարմարաւոր բաց տեղերում վերջին անգամ բացողեալ նախաճաշեցին. և անքան էր մեծ թէ քաղաքացիների և թէ շրջականների եռանդը, որ նոցն ձեռի երեկոյեան ճաշը վայելեցին: Միծ պակասութիւն էր հացի և զինու՝ աղդքան մեծ բաղմութիւն չէր սպասում: Շատրւանների շուրջը գտնող լուսը աթոռները արդէն ժամը 4-ից բռնւած մնացին մինչ երեկոյեան ժամը 10-ը, չը նայած Սէն գետից մօտեցող մշտչին և միշտ աւելի և աւելի աճող ցրտին. գոցնզգուն շատրւանների վերջին անդամակ («երկարացման» ներկայ լինելը դրեթէ պատիւ էր համարում:

Արդէն ժամը 3-ին, կէսօրից լետով, անքան նեղւածք էր ներս ու դուրսը, որ առաջ գնալը հաղիւ կարելի էր լինում և հանրապետութեան նախադանը, որը Տրօկադերօ՛ի պալատից դէսը, իբր պարզ ճեմող, Անալ կամուրջի վրալից Մարսեան զաշտն էր ուզում անցնել, կրկին իստ քաշւեց: Խուռն բաղմութեան մէջ նա ճանաչւեց և խնդութեան ճաներով պղունեց:

Դիշերակին տօնը, չնորհիւ լաւ հղանակին, անքան լաջող անցաւ,

որպէս ոչ մէկը դորանից առաջ: Ամբողջ Պարիզի վերայ արևմուտքից տարածւեց մի փալուն շող և էլեքտրական ճառագալիքները էջֆելի աշտարակի ծակրից վեր էին թռչում զէպի սպարզ աստեղազարդ երկինքը:

Հանդիսի փակումը պէտք է լինէր գիշերակ ժամը 11-ին: Թմբկահարները աւետցին ժամը, բայց հարիւրատոր հազարներ միան կէս գիշերին կարողացան անցնել Աշխարհահանդիսի դաշտի 40 գարպատներից և ոսով հասնել կամ իրանց բնակարանները և կամ երկաթուղու կայարանները, ուր նրանց սպասում էին գլարձութեան գնացքները:

Այդ վերջին օրւայ լաճախողների թիւը հաշւում են 400,000:

«Գոլուա» (Gaulois) լրագիրը խոր ակօրւայ համարի չորս սիւնեակները նւիրում է Աշխարհահանդիսի ստատիստիկին: Վերջինս հիմնը-ում է մի կողմից ոստիկանութեան և միւս կողմից հանդիսի վարչութեան տեղեկութիւնների վերայ: Կարեռագոյն թւերը սոքա են, որ պէտք է հաղորդել «Մուլճ»-ի ընթերցողներին:

Հաշւում են, որ Աշխարհահանդիսի համար Պարիզ են եկած 5 միլլիոն գաւառացիք: Եթէ ընդունենք, որ նոցանից ամեն մէկը միջին թւով 100 ֆրանկ (25 ոսկի րուբլ) է մոխել, Պարիզում նրանց թողածը կը լինի 500 միլիոն ֆրանկ:

Օտարներ եղած են թւով մի միլիոն ու կէս (1.500.000): Ամեն մէկը միջին հաշւով 500 ֆրանկ մախած լինի, այդ կ'անէ 750 միլիոն ֆրանկ:

Աչդ օտարները այսպէս են բաժանում:

| | | |
|---------------------------------|---------|-------|
| Անգլիացի | 380.000 | հոգի: |
| Բելգիացի | 225.000 | — |
| Գերմանացի | 160.000 | — |
| Ամերիկացի՝ հիւսիսից | 90.000 | — |
| Ամերիկացի՝ հարաւից | 25.000 | — |
| Իսպանիացի | 56.000 | — |
| Զւլիցերիացի | 52.000 | — |
| Իտալացի | 38.000 | — |
| Աւստրիացի—Ռւնդարացի | 32.000 | — |
| Ռուսիացի | 7.000 | — |
| Յոն | | |
| Ռումանացի | 5.000 | — |
| Թուրք | | |
| Պորտուգալացի | 3.500 | — |
| Աֆրիկացի (միծ մասով Ալֆիրիակից) | 12.000 | — |

Ասիակի ազգութիւններ 8.250 հոգի։
Աւտորալիակից, Եաւակից և այլն. 3.000 —

Պարիպի երկու ամինամնեմ հիւրանոցները՝ Grand Hôtel (Գրանդ-Օտել)
և Hôtel Continental (Օտել-Կօնտինենտալ) ընդունել են ամեն մէկը
75—80.000 հոգի։

Աշխարհահանդէսը վճարած այցելուների թիւը, սկսած 5 մայսիակց
(սկիզբ) մինչ 5 նոյեմբերի (վերջին օրը), եղած է 25.028.254, որոնց վե-
րակ պէտք է աւելացնել երեկուակ 400.000-ը, ընդամենը ուրեմն մօտ 25¹/₂
միլիոն։ Զրի տոմսակները արւած էին էքսպունենուներին, ժուրնալիստնե-
րին, բնաւորանների ծառաներին 28—30.000։ Եթէ ընդունենք, որ դոցա-
նից 25.000 հոգի ամեն օր ներս ու դուրս էին անում, կը ստանանք
վեց ամսւակ համար 4 միլիոն։ Վճարող և ձրի այցելուների թիւը,
ուրեմն, եղած է մօտ 29¹/₂ միլիոն։

Աշխարհահանդիսի փակման առիթով՝ ֆրանսիս Մայնար նւիրում է
«Ֆիգարօ» թերթում հետևեալ խորհրդածութիւնը.

«Էլի՛ մի երկու ժամ, և մեծ հրախաղութիւնը վիրշացաւ։ Ալլ, ան-
կասկած, մի անչափ մեծ լաջողութիւն էր։ Աւ ևս խօսում եմ Աշխարհա-
հանդիսի ոչ միայն աչք լայնող իրերի վերակ, որովհետև բացի զոցանից
կար ուսմանելի և հետաքրքրական իրերի մեծ քանակութիւն։ Ազատ ար-
ևստոների (արդիւնապործութեան) գալիքէը բոլոր միւսներից առաջ ներ-
կալացնում էր հրաշալիքների և տեղեկութիւնների, իւր տեսակում, միակ
միակումարում, որ ոչ մի ավագ գտնել չի կարելի։ Ասկան և այնպէս
բոլորը լաջողած էր, բացի միայն ճաշարաններից, ուր չափազանց փոք-
րիկ սեղանների վերակ վաստէր ուսուում, սպասաւորած ծառաներով, որոնք
իրանց ժամանակաւոր կարենութիւնով չափոց դուրս երեակացում էին։
Զարմանալի շատ նեղածք լինելը, որը սիբարիսոններին և քնքուն
ծացածներին վիրաւորում էր, լաջողութեան մի նոր ապացուց էր։ Սկզ-
բում գորա վերակ խօժոռ զէմք ցոց աւելն, բաց աչդ երեխականու-
թիւնը ձեռքից թողին լաւ տրամադրութիւնն հոսանքին հետևելու համար,
որը վեց ամսից գէս Պարիզը ամեն ինչ իւր հետ տարաւ, իւր մէջ պար-
ածել աալով բուրվները ամբողջ նւրողագից։

«Այժմ, երբ աչդ ամենը դաշտարում է, սկսւելու են գանգատները և
ջիգրւած մարգիկ հարցնելու են, թէ աչդ ամենը ի՞նչ օգնեց։ Ի հարկէ, շատ
լաւ կը լինէր, եթէ Աշխարհահանդէսը կարողացած լինէր միջազգակին ա-
լաւ և ուսութիւնը և ուսութիւնը կազմակերպութիւնները հան-
տելութիւնը և ուսութիւնները և ներքին երկպատակութիւնները հան-
դարտացնել, Ակտոն'ս, որ աչդ անկարելի եղաւ։ Արդէն մի միսիթարու-
թիւն կը լինէր խմանալ, որ հանդիսի այցելուները իրանց հետ մեծ գու-
մարներ բերին ֆրանսիա և ալյունու թողին։ Բաց աչդ լոկ նիւթական
հետանքից վեր բան ձեռք բերեց։ Մենք ապացուցեցինք Նւրողակին,

որ մենք աւելի լաւ ենք, քան ինչ մենք ինքներս ենք ասում, աւելի լաւ, քան ինչ մարդ կը կարծէր, կարդալով մեր լրագիրները և լսելով մեր ձառները:

«Եւ իսկապէս, ով լողւածները և ճառերը բառ առ բառ է ընդունում, պէտք է մեզ սրբիկաների և խառնակիչների աեղ ընդունէր: Բայց աչքից անցնելը ան բոլորի, ինչ մենք իրադործել ենք, համաշխարհապին հանգիսի բոլոր հրաշալիքները ահսնելը պէտք է փախէր ան կարծիքը, որ մեր մասին տարածւած է: Այդ պատճառով հենց մեզ աւելի չեն սիրելու եւրազում: Ես կարծում եմ անզամ, որ մեզ մի փոքր էլ աւելի են նախանձելու:—Ե մեր ազգային ինքնաճանաչութեան համար զա միննոնը չէ—աչժմ ազ ես անկարելի է, այս վեցամինակ փառաբանութիւնից հետո, Ֆրանսիան ընդունել անկման մէջ ընկվածած երկրի աեղ, որը քաղաքականութիւնով անդունզն է գլուխում (1) և վեղափոխութիւնով կրծուռում: Դեմազօղիալի ծաւալւելը տնչուշտ մեզ վերակ կացըրել է մի քանի պակասութիւններ, բայց մենք անկասկած պահպանել ենք այն չառկութիւնները, որոնք մեր գեղարւեստին և մեր արդիւնազործութեան տալիս են մի փալուն գերազանցութիւն: Ազնակող, ուր հնարը նորանումն է, որ չտառի շինուի և էժան ծափուի, ուրիշները կարող են մեզ գերազանցել: Բայց մենք մետք ենք վարպետներ՝ խորիմաստ հնարագիտութեան և աշխատանքի ծալքագոն կատարելութեան».

Վ Ի Հ Ե Լ Մ Կ Ա Ց Ս Ր Ը Կ. Պ Օ Լ Ս Ո Ւ Ի Մ

Կ. Պոլիս, 2 նոյեմբերի:

Որպէս բազմի է, լուսաց թագաժառանդը պասկւեց գերմանացոց ազմինան կաչար Վիլհելմ Ռ. քրոն⁸ իշխանուհի Սօֆիայի հետ, որը գուստոն է Ֆրիդրիխ կալսեր, որի վշատակը, չը նախանրա կարծ թագաժառանդեան, անմոռաց կը մնաչ դեռ ևս շատ տարիներ: Հարսանիքի տօնախմբութիւնը կատարւեց մեծ շքեղութեամբ, և դորա համար լատկապէս եկած էին Աթէնք Նորահարսի մայրը, գերմանացոց կաչար Վիլհելմ Ռ. և շատ իշխաններ, որոնց թուռմ և ուսւաց թագաժառնու Ցեսարեիչը:

Բայց այն, ինչ այդ ճանապարհորդութեանը առանձին նշանակութիւն պիտի տար, պէտք է լինէր Վիլհելմ Ռ. ացեղութիւնը թիւքաց սուլթանին, Կ. Պոլսում: Գերմանացոց կաչարը, գահը բարձրանալու ժամանակից զէս, որ ընդ ամենը տարի ու կէս է, անձամբ ացելեց Ներոպակի գրեթէ բոլոր նշանաւոր միապետներին, սկսելով ուսւաց թագաւոր Կապրից: Ազա նա ացելեց Շևեղիա, Գանիա, Աւստրիա, Խոտավիա, Անգլիա և աչժմ Յունաստան և ի վերջո՞ւ Թիւրքիանի մակարազաք Կ. Պոլիս:

Ակամ մէկ բանում ամենքը համաձայն են, որ գերմանացոց կալսեր ալցելութիւնները բուն քաղաքական բնաւորութիւն են կրում. ամեն տեղ նա որոնում է կամ տարածալութիւնները հեռացնել և կամ ուղղակի միութեան դաշնակցութիւններ կապել:

Նուն քաղաքական և ոչ տուրիստի հետաքրքրութեան համար նա ալժմ գալլու է թիւրքաց մալրաքաղաքը, որին անքան ուսկաւ է վիճակ-ւած օտար միապետներին իւր մօտ ընդունել Որդան ևս լիշում եմ, մինչև ալժմ սուլթաններին հիւր եղած են միապետներից՝ միայն Աւստրօ-Ռւսզարիալի աշխանան կալսր Ֆրանց-Յովանի 1869 թւականին, և գորանից առաջ, Փրանսիացոց կալսրունի Եօժենի՝ Նապօլէօն Ա.ի ամենակարողութեան յամանակի: Վիլհելմ Ա.ը, ուրիմն, երկրարդ միապետն է, որ սուլթանների պալատը ուոք է կոփում:

Ընդունելութիւնը եղաւ շատ փառաւոր, աճապէս, որպէս երթեք մի պոլսեցի տեսած չէ իւր կեանքում: Եւ իրօք, «Հաղար ու մի գիշեր»-ի հէքիաթական տեսարանները ակսօր իրանց բոլոր շացնող փազով և զոյների խաղերով զառան իրականութիւն. սորանից աւելի փազուն և մեծաշուք ընդունելութիւն չի կարելի երեակացնել: Ամենավառ երեակացութիւնով անզամ անկարելի էր ներկազացնել այն բեմականութիւնը, որը Սոմանեան կալսերութեան մալրաքաղաքը ներկացնում էր առ դէպքի առկթով: Գերմանական ընկերութիւնը (Verein) սարքել էր մի մեծաշուք ալցելութեան գնացք, որի համար Լուզի նաւերից երկուուը վարձւած էին՝ մինչ շոդենաւը լրցւած էր գերմանացի աշակերտներով, որոնք իրանց կալսեր պէտք է բարձրագուչ ուռան երով ողջունէին: Բացի այդ, մի թիւրքաց շոգենաւ և բազմաթիւ մասնաւոր նաւեր գնացին գերմանական նաւատորմին հանդիպելու Մարմարեալ ծովում խակնեղջիւրից դէպի Դոլմա-բաղչէ հարիւրաւոր մանր նաւակներ խլրտում էին: Մենք հանդիպեցինք գերմանական նաւատորմին դրեթէ Ան-Ստեֆանօ՛ի մօտ, ուր կապւեց, 12 տարի առաջ, լաւտնի ուռու-թիւրքական խաղաղութեան դաշնը: Ակրում գալիս էր «Լորելաչ» շոգենաւը, լետոյ Ականարոյ, որի մէջ կամի վերապից ծածանում էր ոսկէ-դեղին կալսերական դրօշակը. նրան հետեւում էին «Հոհենցոլլերն», որ ձանաչւում էր կալսրունուդրոշակով, թիւրքաց եախտը «Առութանիէ», որ իւր վերակ էր տանում ամենաբարձր աստիճանաւորներին, որոնք գերմանական նաւատորմին Դարդանելի մօտ սպասում էին. լետոյ գալիս էր մի թիւրքաց զրահակիր պատերազմական նաւ («Պղղիղին»), որի վերակ թիւրքաց մարշալը ընդ առաջ էր գնացնել կալսեր մինչ Յունաստանի Պիրէջ նաւահանդիխաւը: Դա մի ցուց էր լոճների ցուցէմ: (Փղղիղինը) այն նաւն է, որը 1865-ին, երբ կրեակցիների ապստամբութիւնը պաշտպանւում էր գեռ ևս (Արկադիա) լոճնական նաւով, Կրետէի առաջն երեսց, «Արկադիան» դէն զցեց, և աղպէս մի հարւածով ապստամբութեանը վերջ դրեց. աղդ «Արկադիան» ցածմ էլ ընկած է

Ա. Պօլսում: Հասկանալի է, թէ ի՞նչ խառն զգացումներով անսահ լոյները նոյն «Թպղեղին» նաւը իրանց ջրերում:

Ծովում, գերմանական նաւատրումին հանդիպելիս, ընդ առաջ գնացող գերմանացիք հնչեցրին գերմանական ազգակին հիմնը, որին սաջորդեց «Հուենուի պահնորդը» (Die Wacht am Rhein), մինչդեռ խացուցիչ ուռաները օգը թնդացրին և կատարը Գոլց փաշափի հետ կօմանդօրի կամուրջի վերակ երեւց: Ել վերջ չը կար խնդութեան ձաներին, մանաւանդ աշակերտների կողմից: Արեգակը սկսեց փալւել, ճեղքելով ամսերի խաւերը և իւր բոլոր խաղաքաղչա գոյներով երեաց Ստամբուլը. ուկորում զա մի պաս էր ցցւած ծովի մեջ և ցինկով վերը ծածկւած. դորա վեսելից սկսում էն, բլուրի վերակ մեղմ բարձրանալով, պարտէզներ և տներ, պալատներ և մշկիթներ. զոյս միջից զուրա է պրծնում հոչակաւոր Ալա-Սօֆիա, որը այս քաղաքի և կաչակրութեան, կարելի է ասել, քարացած ժամանակագրութիւնն է սկսած հազար հինգ հարիւր տարիներից: Եւ նորա մօսից դէպի Ռակեղջիւրը, դէպի հին Սէրապը իւր սքանչելի կամարակապ ծառերի մացառուաքալ, որի վրայից բարձրանում են երկար սև նոճիները և որից երեւում էն, հաղւագիւս նկարչական անկարգ զասաւորութեան մեջ, կիսածածկ սպիտակ զւարձաղղեակները և կեօշիերը (սպալատ): Յեսոպ՝ Ռոկեղջիւրը, աչ ծովը, որ ամբողջ քաղաքը ալիքներով ծփում է, և նորա նաւահանգիստն է կազմում, իւր նաւերի խուլ աղմուկով, անտեղ՝ Գալաթա իւր զօրեղ աշտարակով, որի վրայից երկու ծովիւրի և երկու ցամաքների ամենազիւթական տեսարանն է երեւում. աւելի հնուու, Բօսֆօրի վերակ, Գօլմա-բաղչէ քաղաքամասնը, պատիս կոչւած երկար ձգւած, փակչուն՝ սպիտակ և հէքիաթական զգեակի անունով, որը ուղղակի մեր առջե շողշող ալիքներից զուրա է բարձրանում, պատած ստերախիտ պարսէզներով, որոնց լեռնում ծածկւած է Խըլիդ-Կեօշքը, աչ պալատը, ուր պիտի վազր իշնէ գերմանացոց կաչակրական զուգը. Ամբողջ Բօսֆօրը կենդանացած է փոքրիկ նաւակներով, որոնք պատել են գերմանական պատերազմական նաւերի շորջը, մինչդեռ բլուրների վերակ, որ անդից կարելի է տեսնել Գօլմա-բաղչէն, բոլոր աղատ տեղերը բոնւած են ամեն դասակարգի իրար խունած տաճիկներով և նոյն իսկ հարեմը ալսօր զատարի է, որովհետեւ բոլոր կանաչը կտուրներն են բարձրացել՝ հզօր միապետի և նորա ամուսնու գալուստին ակմանատես լինելու համար:

Երբ «Ալակը» պատերազմական նաւը ժամը 11^{3/4}-ին Ալա-Սօֆիակ մօսով անցաւ, Գօլմա-բաղչէի մօս կանգ առած թիւրքաց պատերազմական նաւերից որոտաց առաջին ողջունի ումբածգութիւնը. «Ալակը» էաս ողջունեց, և իսկոն դորանից էասու Ռակեղջիւրի հին պարիսպի մօս շարած ումբերը սկսեցին իրանց որոտենուաս կանցերար, որի ձաների տակ գերմանական պատերազմական նաւատորմը կամաց-կամաց առաջ:

Ծովափից 500 մետր հեռու, կալսերական երկու նաւերը խարիսխ գցեցին. շուտով դորանից էտու «Կալսրի» վերաց փողիողաց կալսերական դեղին դրօշակը, Վիլհելմ Ռ. նստեց մի նաւակ և բազմամբով ժողովրդի ողջոններով ուղեկցւած, առաջ գնաց դէմլի «Հոնենցովերն», որ արտեղից արդէն կալսրուն հետ ցամաքը իջնէ, Սուլթանը այդ միջոցին երեսց կարմիր մահուղով փուած սանգուղքի վերը, որը պալատից տանում է կարմիր մահուղով փուած սանգուղքի վերը, որը չափաղանց իրար խոնած նախոսփորը և ինքը հրաման տեսց, որ չափաղանց իրար խոնած նախուածները հեռանան: Կալսերական զույլը իջաւ ցամաք և կասարւեց նորա և Սուլթանի փոխադարձ բարևելլ:

Առաջին հանդէսը, որ կատարւեց Վիլհելմ Ռ. համար, զօրախաղն էր լատուկի գորա համար շինած մի պալիլիօնի առջն, սքանչելի տեսարանով թօսփօրի, քաղաքի և Պրօպոնդիսի վերաց, Խլիփ-կեօչքի օդանցուկ բարձրութիւնների վերաց: Առաջ էին բերւած 15 բատալիօն ինֆանտերիա (կանոնաւոր զօրք զոււաներ և նեղրներ), 4 բնելեմնետ հեծալաղօր և 4 բատարէա ուժքաձիգ զօրք (արտիլերիա): Ժամ ու կէս տեսց կալսրի մօտից անցնելը, կալսրը մի քանի անգամ արտապատճեց իւր հիացմունքը զօրքերի պատերազմական տեսքի վերաց: Ամենից շատ լաւ ցուց տվին իրանց երկու նեղր-բատալիօններ, կանաչ առլրբանով (գլխածածկ), կապուտ պինչակներով, կարմիր լան ծունկ-վարտիքներով և սպիտակ կամաչներով, որպէս նաև երկու բունէական վաշտերը (կօմպանի) իրանց ազդակին զգեստներով, ծովալին բատալիօնը և երկու ուղան-շւարդոններ, մի բաժանմունք հրդեհաշէջ զնդի:

Երեկոնքան տրւեց հանդիսաւոր ճաշ, որին կանչւած էին 120 հիւր: Սեղանը կազմւոծ էր երկու պատանման իրար դէմ զրած բաժանմունքներից: Առաջնի մէջտեղում տեղ գրաւեց սուլթանը, նորանից աջ՝ կալսրուհին, ձախ՝ կալսր Վիլհելմ Ռ. կալսրունու կշտին՝ պրինց Հէնրիին (կամ սեր եղբարյը): Երկրորդ բաժանմունքում նախազահում էր մեծ-վիզիրը, որի կողքին՝ գուքս Մեկլեմբուրգ-Նեքրին, նախկին մեծ-վիզիր Սախտ փաշա, Եղիսեմ փաշա, աւստրիական զեսպանը իւր ամուսնով, վերմանացոց շապանը իւր ամուսնով և աղջիկներով, և միւս զեսպանները: Մնացած տեղապանը իւր ամուսնով և աղջիկներով, և միւս զեսպանները: Մնացած տեղերը բռնած էին մինիստրները, թիւրքաց ծառազութեան մէջ գտնւող գերմանացի ծառազողները, պատերազմական նաւերի հրամազողները և գերմանական դեսպանութեան պերանալը: Սուլթանը անձամբ տարաւ կալսրման դեսպանութեան պետք մօտ և խօսակցում էր իւր հիւրերի հետ միջնորդութեամբ ցերեւոնիսապետ Մունիր փաշաի: Մանաւանդ կենդանի էր խօսակցութիւնը կալսր հետո, ձաշից լետով սուլթանը տարաւ կալսրական զույլը և պրինց Հէնրիին մի կողմիակի դահլիճ, ուր խօսակցութիւնը շարունակւ մեց մինչ ժամը 10-ը: Նկատեց, որ կալսրը մանաւանդ քաղցր էր Փրւեց մինչ ժամը 10-ը:

րանսիական դեսպան Մոնտեբելլօ՛ի հետ, որին չափոնեց իւր մեծ գոհունակութիւնը կ. Պօլսում արած ընդունելութեան համար:

Երկրորդ օրը կախորը նվիրեց գերմանական դաշտականութեան, այցելութիւն արեց գերմանական եկեղեցուն և հիւանդանոցին: Բողոքական եկեղեցին գտանւում է Պերազում, Ալնալի Թիեռոմէ թաղում: Ազնունդ տանող փողոցը, որ խղճուկ զրութեան մէջ էր, առաջուց մաքրեց և շնուց, անապէս որ կառքով կարելի լինի անցնել. տները մասամբ միայն դրօշակներով զարդարւոցին: Պերազի զլիսաւոր փողոցը փակւեց՝ զժբաղդութիւնների դէմն առնելու համար, ծիչդ ժամը 11-ին կախերական դուզը իւր ուխտաւով եկաւ եկեղեցի, ուր նա բռնեց տեղ դեսպանական օթեակում: Ազ օրը, 2 նուեմբերի (նոր ստիլով), բողոքական բնֆորմացիալի տօնն էր: Քարողիչը խօսեց աւետարանի զլ. 13, 8 բնադրի վերաբ: Յարմար համարեց քարողիչը վերաբչել Պօլսու առաքեալի ճանապարհորդութիւնը Տրուա, Մակեդոնիա և Աթէնք, և նոյն իսկ վերակենդանացը Յովհաննէս Ուսկեբերանի ուրականը,

Պատարադից լետոց կախերական դուզը ուղևորւեց դեսպանասունը: Նախածաշից լետու զերմանական դաշտականութեան մի պատգամաւորութիւն ներկալացրեց մի ուղերձ: Կախորուհին գնաց գերմանական հիւանդանոցը, որը 44 տարւաչ հիմնւած հաստատութիւն է, և որը, համեստ հանգամանքներից դուրս գալով, ակսօր դառել է մի օրինակելի հաստատութիւն բոլոր ազգերի համար, չնորհիւ անձւէր գործունէութեան երէցկին կազերովերթի: Կանանց ընկերութիւնը ներկալացրեց մի գործւած վարագոր: Կախորուհին իւր անունը գրեց ալբոնի մէջ, աւելցնելով օրւակ բնաբանը, որ քարողի հիմքն էր կազմել:

Երրորդ օրւակ մի մասը անցկացրին հիւրերը այցելելով կ. Պօլսի զլիսաւոր կէտերը՝ բազարը, հին-սերապը, Աչա-Սօֆիան, պարիսպները, մուզեւը (թանգարան), ուր պահւած է Ալեքսանդր Մեծի (Մակեդոնացու) հրաշալի դագաղը: Կախորը սուլթանի տւած սպիտակ ձիռւ վերաբ էր, որին ուղեկցում է Հօրէ և Ֆօն դեր Գոլց փաշաները: Կախորուհին՝ ուղեկցութեամբ հազարզի Արթին փաշալի երկու աղջիկների և Ֆօն Հօրէ փաշալի կնոջ՝ այցելեց նաև Սուլթանի հարևմը, ուր նա սուլթանի երկու աղջիկներին գրկեց և նոյսա երաժշտութիւնը լսեց: Ճաշից լետու կախերական դուզը դնացին դէպի Սև ծովը, վերադան լուսնեակ երեկոյեան, Բօսֆորի ճրագալուցի միջով: Լաւ լուսաւորւած էր նաև Պերազի զլիսաւոր փողոցը: Նաւազին մարդկանց համար սուլթանը ուղարկել էր ամեն տեսակ մթերք: Երեկոյեան եղաւ սուլթանի մօտ վերջին հանդիսաւոր ճաշը: Հետեւեալ չորրորդ օրը կախորը այցելեց Ասիալի ափում գտնւող Հայդար-փաշալի կաչարանը, որ շինում են գերմանացիները և որը պէտք է ճանապարհ բացէ Անաստօլիալի մէջ:

Ասիալի կողմում հայոց հոգևորականութիւնը առիթ գտաւ ողջունելու կափրին, քանի որ հայոց Պատրիարքի խնդիրը Բ. Դուան՝ կափրին ներկայանալու թույլաւութիւնը ուզելու, առանց հետևանքի մնաց, պատասխան ստանալով, որ ծրագրում ազդ չէր նախատեսած:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական մմժնոլորտը այժմ շատ աւելի պարզել է, քան
այդ կարելի էր ասել մի քանի ամիս առաջ։ Ոռուսաց Թագաւոր
կայսեր այցելութիւնը գերմանական Կայսր Վիլհելմ Ռին Բերլի-
նում սպասածից աւելի նպաստեց խաղաղութեան յօներին։ Միւս
կողմից Ֆրանսիական ընտրութիւնները Պատգամաւորների ժողովի
համար նմանապէս սպասածից աւելի բարեյաջող ելք ունեցան և,
արդէն փակւած՝ բայց վերին աստիճանի յաջողած աշխարհահան-
դիսի սպասարութեան ներքոյ, Ֆրանսիան, դատիրած կուսակցական
կամաց կամաց մի առանձին սիրով ընդգրկում է կառավարութիւնից
առաջարկած պարլամենտական աշխատանքի ծրագիրը՝ բոլոր ոչերը
նւիրել տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման։ Լորդ Սա-
լլիսբերի նորերումն արտասանած մի ճառում գրականապէս յայտ-
նում է, որ խաղաղութեան խանգարման ոչինչ առիթներ չը կան։

Տայց այն բոլորը, ինչ մենք այս ամբողջ տարին ասել ենք
եւրոպական քաղաքականութեան ֆակտորների մասին, պահպանում
են իրանց ոչքը նաև այսօր. միջին-եւրոպական և ապետական դաշ-
նակցութիւնը մնում է նոյն ոչքի մէջ։ Ան չանքը, որ գործ է ածում
Գերմանիան այդ միութեան հետ միւս տէրութիւններին հաշաեց-
նելու կամ բարեկամացնելու համար, շարունակեց նաև անցեալ
ամիսները. Գերմանական-Աւստրօ-Ռւնդարական-Խոտական դաշնակցու-
թեան զիմաց բարեկամական զիրք են բռնած մէկ կողմից Անգլիան,
միւս կողմից՝ Թիւրքիան, որոնց երկուսին էլ այցելեց երիտասարդ՝
Վիլհելմ Կայսրը։

Ոչքերի զրաւած տեղերը չը կրեցին փոփոխութիւններ. զերիշ-
խողը կրկնելու մնում է եռապետական դաշնակցութիւնը. միայն թէ

այժմեան և քանի ամիս առաջ եղած դրութեան մէջ կայ այս զա-
նագանութիւնը, որ տէրութիւնների մէջ եղած յարաբերութիւնները
այն աստիճանի սպառնալի չեն:

Բայց ահա ընդհանուր քաղաքական հանգամանքների մէջ այժմ
ուղում է աւելանալ մի նոր ֆակտօր: Եւ այդ ֆակտօրը աւելանում
է արդէն դրսից: Դա՝ ընդհանուր ամերիկական մաքսային միութեան
խնդիրն է, որի նշանակութիւնը կարող ենք անուանել տիեզերական,
եթէ նա միայն իրագործւի:

Հիւսիսային Միացեալ Նահանգները առաջարկումեն բոլոր ա-
մերիկական տէրութիւններին միանալ ոչ քաղաքականապէս, այլ
անտեսապէս, որպէս զի իրանց առուտուրը իրար հետ լինի միայն
փակելով Ամերիկայի գոները եւրոպական առուտուրի համար:

Բայց որովհետև բոլոր եւրոպական տէրութիւնների համար զա-
գրեթէ հաւասարապէս զարհուրելի է, քանի որ նրանք ամենքը
Ամերիկայի հետ տնտեսական կապեր ունին, այդ պատճառով այդ
կարելիութեան առջև եւրոպական տէրութիւնների քաղաքական և
անտեսական թշնամական յարաբերութիւնները շատ թէ քիչ պէտք
է կակղեն, որ կարողանան ընդհանուր ոյժերով մի ազգայի հսկայա-
կան նախագծի իրագործման դէմք առնել:

Ահա՝ ինչու ամերիկական մաքսային միութեան խնդիրը վերին
աստիճանի քաղաքական խնդիր ենք հսկարում և հոչակում իրը
մի նոր ֆակտօր եւրոպական քաղաքականութեան:

Այժմ գտնանք այս վերջին ժամանակներում յարուցած ամե-
նուկարեոր խնդրին, որի մասին, փակագծում ասենք, մեր լրագրու-
թեան մէջ ցիշատակրութիւն անդամ չը կայ: Սակայն այսուղ յառա-
ջաբան է հարկաւոր: Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները,
որոնք մի անկախ հանրապետական տէրութիւն են կազմում սկսած
1774 թւականից և որոնց առաջին նախագահը ամենքին յայտնի
վաշինգտոնն էր, ի սկզբանէ պրինցիպ են ունեցել՝ չը թուլ տալ,
որ եւրոպայի տէրութիւնները միջամտեն, խառնւեն Ամերիկայի տէ-
րութիւնների քաղաքական գործերի մէջ: Թող ամերիկացիք իրանք
անօրինեն իրանց գործերը այնպէս, ինչպէս իրանք ուղում են — ա-
հա՝ այդ պրինցիպի իմաստը: Այդ սկզբունքը զանազան դէպքերում
յայտնել են Գէորգ Վաշինգտօն և Թոմաս Ֆեփերսօն: Այդ սկզբունքը

Միացեալ Նահանգներին քաղաքականութեան հիմք էր ծառայում մինչև որ 1823 թւականին, գեկտեմբերի 2-ին, նախադահ Մօնրօէ նոյն այդ սկզբունքը կրկնեց իւր նախագահական սլատդամաւորութեան մէջ՝ կարդացւած Վաշինգտօնի կօնզրեսում (Նահանգների ներկայացուցիչների ժողով):

Որպէս տեսնում է ընթերցողը, այդ սկզբունքը առաջ էլ կարբաց նա երբէք չէր յայտնւած այն վճռական խօսքերով, ինչպէս Մօնրօէի բերանից:

Ահա այդ սկզբունքն է, որը յայտնի է անունով՝ Մօնրօէի սկզբունք, Մօնրօէի գօքտրին, և որի մասին այնքան ու այնքան խօսացւել է և վիճւել թէ Ամերիկացում և թէ Եւրոպացում:

Դա մի օրէնք չէ, այլ միայն մի հայեացք է, բայց մի հայեացք, որը օրէնքի չափ զօրութիւն է ունեցել Միացեալ Նահանգների քաղաքականութեան համար:

Այժմեան քաղաքական ուղղութիւնների մէջ մենք գտնում ենք մի որոշ շափով նմանութիւն Մօնրօէի գօքտրինի հետ— Խուսիալում քարողւած և ոյժ ունեցող այն շփոլայի մէջ, որի հեղինակաւոր հիմնադիրներիցն էր հանգուցեալ Ակսակովը: Մենք ուղում ենք ասել զորանով միայն այն, որ Մօնրօէի գօքտրինի հիմքը նոյն պահանջն է Ամերիկայի համար, ինչ որ է և Ակսակովինը Խուսիայի համար, այն է, որ Ամերիկայի քաղաքական և կուլտուրական զարգացումը կառարկի Եւրոպական տէրութիւնների միջամտութիւնից անկախ կերպով, որ Ամերիկայի տէրութիւնները թէ առևտրական և թէ քաղաքական դաշինքներով այնպէս չը կապւեն Եւրոպայի տէրութիւնների հետ, որ Ամերիկան որ և իցէ կերպով ազգւի Եւրոպայի շահերից, որ Եւրոպան մի տեսակ զօրով մտցնէ Ամերիկայի մէջ իւր տեսակէտները և այն: Մօնրօէի գօքտրինի հիմքը առհասարակ ամեն տեսակ ևսամօքըինիկաների վարդապեսութեան հիմքն է:

Այն հռչակը, որը ստացել է Մօնրօէի գօքտրինը, հարկ է գնում մեզ վերայ ծանօթացնել բնագրի խկական խօսքերի հետ, թէպէտ և Մօնրօէի գօքտրինի այժմեան հետեղները իրանց կապւած չեն զգում այդ խօսքերի հետ: Մօնրօէի այդ խօսքերը ընդհանրապէս յայտնի չեն ոչ միայն մեզանում՝ և Եւրոպացում, այլ

նոյն իսկ Ամերիկայում՝ որովհետեւ, որպէս արդէն ասացինք, Մօն-
րուի անունով յայտնի սկզբունքը նրան սեպհական չէ, այլ ի բնէ
ամերիկական է այն օրից, երբ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ
Նահանգները անկախութիւն ձեռք բերին:

Մօնրօէ նախադահի սպատգամաւորութիւնը, որ կարդացւեց 1823
թ. գեկումբերի 2-ին, Վաշինգտոնի պետական ժողովում, բաժանուում է
երկու մասի, որոնցից առաջնի մէջ յայտնուում է թէ՝ «Ամերիկական
կոնտինենտաները իրանց անկախ զրութեան պատճառով», որ նրանք
ձեռք են բերել և պահպանուում են, այժմեանից այլ եւս չը պիտի
նկատուեն որպէս բայց զաղթականութեան համար՝ Եւրոպայի որ և
է պետութեան կողմից»։ Երկրորդ մասում Մօնրօէ շարունակուում է
այսպէս. «Այն սպարզութիւնը և բարեկամական յարաբերութիւնները,
որ դոյութիւն ունին Միացեալ Նահանգների և Եւրոպական պետու-
թիւնների մէջ, պարագ են զնում մեզ վերայ յայտնելու, որ ամեն
մի փորձ, որ նրանք կ'անեն իրանց սիստեմը մեր կոնտինենտի մի որ
և իցէ մասում տարածելու համար մեղնից կը նկատուի իբր մեր
խաղաղութիւնը և ապահովութիւնը խանգարող։ Գոյութիւն ունե-
ցող զաղթականութիւնների կամ Եւրոպական պետութիւններից կա-
խումն ունեցող աերութիւնների գործերի մէջ մենք չենք խառնել
և այդ չենք անելու։ Բայց երբ մի Եւրոպական պետութիւն փորձ
փորձի խեղգել և կամ որ և իցէ կերպով ճակատագիրը որոշել այն
տէրութիւնների, որոնք իրանց անկախութիւնը յայտնել են և որոնց
անկախութիւնը մենք, լուրջ խորհելուց յետոց, արդար սկզբունքների
հիման վերայ ընդունել ենք, —մենք այդ փորձի մէջ կը նկատենք
միայն Միացեալ Նահանգների գէմ ունեցած անբարեկամական գի-
տաւորութիւնների ապացոյց»։

Մօնրօէն այդ խօսքերը արտասանուում էր կրիտիքական բոպէին։
Դա այն ժամանակն էր, երբ Նապոլէօն Լին վայր զցելուց յետոց
կազմւած Արբազան-Միութեան անդամները (Անդիան, Իուսիան,
Աւտորիան և Պրուսիան) ձեւ էին ցոյց տալիս, իբր ուզում են խառնը-
ւել հարաւային Ամերիկայի նորակազմ պետութիւնների գործերի
մէջ։ Դեռ ևս զորանից առաջ, 1820 թւականին, Իուսիան առա-
ջարկեց Միացեալ Նահանգներին միանալ Արբազան-Միութեան հետ。
բայց առաջարկութիւնը մերժեց այս խօսքերով, թէ Միացեալ Նա-

Հանդների քաղաքական սխոտեմը եւրոպական շահերից զուրս է, և որ իրանք ամեն կերպ աշխատում էն եւրոպական պետութիւնների հետ խառնւելուց իրանց հեռու պահել:

